ՀՊՏՀ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՄԲԵՐԴ
ՀՊՏՀ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«ԱՄԲԵՐԴ» ՄԱՏԵՆԱՇԱՐ 83

Դ. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
Հ. ԳԱԼՍՏՅԱՆ
Գ. ԲԱԴԱԴՅԱՆ
Վ. ԱԹՈՅԱՆ
Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ
Գ. ԳՈՒՐՈՒՐՅԱՆ
Կ. ԾԱՏՐՅԱՆ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Գ. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Շ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ա. ԹՈՐՈՍՅԱՆ
Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ն ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ԱՂԱԲԵԿՅԱՆ
Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Վ. ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ
Ա. ՓԱԽԼՅԱՆ
Տ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆ. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2025

32
Հ-72
Մ.



ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ *(պ.գ.դ., պրոֆեսոր)*
ՀԱՄԱՋԱՍՊ ԳԱԼՍՏՅԱՆ *(պ.գ.թ.)*
ԳԱԳԻԿ ԲԱԴԱԴՅԱՆ *(պ.գ.թ.)*
ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ *(բ.գ.դ., դոցենտ)*
ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ *(պ.գ.թ., դոցենտ)*
ԱՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ *(պ.գ.թ.)*
ԳՐԵՏԱ ԳՈՒՐՈՒՐՅԱՆ
ԿԱՏՐԻՆ ԾԱՏՐՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ *(պ.գ.դ., պրոֆեսոր)*
ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ *(պ.գ.թ., դոցենտ)*
ՇՈՒՇԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱԼԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ *(պ.գ.թ.)*
ՆԱՐԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ *(պ.գ.թ.)*
ՆԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԷԴԳԱՐ ԱՂԱԲԵԿՅԱՆ *(պ.գ.թ., դոցենտ)*
ՌՈՒԶԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ *(պ.գ.թ.)*
ՎԱՀԵ ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ *(պ.գ.թ., դոցենտ)*
ԱՆՆԱ ՓԱԽԼՅԱՆ *(պ.գ.թ., դոցենտ)*
ՏԱԹԵՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ *(պ.գ.թ.)*

6944

ՀՆԴԿԱՍՏԱՆ. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

DOI: 10.52174/978-9939-61-319-2

ԵՐԵՎԱՆ
«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025



ՀՏԴ 339.9
ԳՄԴ 65.5
Հ 721

Հրապարակության է երաշխավորել
ՀՊՏՀ գիտական խորհուրդը

Մասնագիտական խմբագիր՝
Տ. Մարտիրոսյան
տ.գ.դ., պրոֆեսոր

Գրախոսներ՝
Ա. Մարկոսյան
տ.գ.դ., պրոֆեսոր
Բ. Գաբրիելյան
տ.գ.թ., դոցենտ

Խմբագրական խորհուրդ՝
Դ. Հախվերդյան
տ.գ.դ., պրոֆեսոր
Թ. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆեսոր
Գ. Նազարյան
տ.գ.թ., պրոֆեսոր
Է. Մաթևոսյան
տ.գ.թ., դոցենտ

Հ 721 Հնդկաստան. պետություն, տնտեսություն, Հայաստանի հետ հարաբերությունների հեռանկարներ / Դ. Հախվերդյան և ուրիշներ.- Եր.: Տնտեսագետ, 2025. 288 էջ («Ամբերդ» մատենաշար 83):

Սույն հետազոտությունը համալիր և համակարգված ուսումնասիրություն է՝ նվիրված Հնդկաստանի պետական, տնտեսական և սոցիալական համակարգերի խորքային առանձնահատկությունների, դրանց զարգացման դինամիկայի ներկայացմանը, ինչպես նաև Հայաստան–Հնդկաստան երկկողմ համագործակցության իրատեսական հնարավորությունների բացահայտմանը: Գիրքը միավորում է կառավարման, մակրոտնտեսության, ժողովրդագրության, անվտանգության, արտաքին քաղաքականության և լոգիստիկ ենթակառուցվածքների վերաբերյալ բազմաշերտ վերլուծություններ՝ ապահովելով թեմայի ամբողջական ընկալումը:

Հետազոտության կարևորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հնդկաստանը համաշխարհային տնտեսական և քաղաքական համակարգում հանդես է գա ս որպես արագ զարգացող, մեծամասշտաբ և ազդեցիկ դերակատար, ինչն իր ազդեցությունն թողնում է ինչպես տարածաշրջանային անվտանգային միջավայրի, այնպես էլ գլոբալ տնտեսական օրակարգի վրա: Երկրորդ՝ վերջին տարիներին նկատվող Հայաստանի և Հնդկաստանի հարաբերությունների ակտիվացումը նոր հարթություններ է բացում՝ սկսած պաշտպանական համագործակցությունից մինչև տեղեկատվական տեխնոլոգիաներ, առաքսորսինգ, լոգիստիկա և կրթական փոխանակումներ: Այս աշխատությունը հենց այդ զարգացող միջավայրի համապարփակ գնահատման փորձ է՝ ակադեմիական և կիրառական դիտանկյունների համադրումով:

ՀՏԴ 339.9
ԳՄԴ 65.5

ISBN 978-9939-61-319-2

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2025
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
Ներածություն 5

ԳԼՈՒԽ 1. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ 9

ՀԱՄԱՋԱՍՊ ԳԱԼՍՏՅԱՆ, ԳԱԳԻԿ ԲԱԴԱԳՅԱՆ
1.1. Պետական կառավարման համակարգը 9

ՀԱՄԱՋԱՍՊ ԳԱԼՍՏՅԱՆ, ԳԱԳԻԿ ԲԱԴԱԳՅԱՆ
1.2. Վարչատարածքային բաժանումը 15

ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ
1.3. Արտաքին քաղաքականությունը 23

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
1.4. Անվտանգային համակարգը 49
1.4.1. Զինված ուժերը 50
1.4.2. Ռազմարդյունաբերությունը 65

ԳԼՈՒԽ 2. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 75

ԱՆԻ ԽԼԱՉԱՏՐՅԱՆ
2.1. Տնտեսության առկա վիճակը. մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոփոխման միտումները 75

ԱՆԻ ԽԼԱՉԱՏՐՅԱՆ, ԳՐԵՏԱ ԳՈՒՐՈՒՐՅԱՆ, ԿԱՏՐԻՆ ԾԱՏՐՅԱՆ
2.2. Տնտեսության հիմնական ոլորտների զարգացման պատկերը և հեռանկարները 85
2.2.1. Արդյունաբերությունը 85

ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
2.2.2. Ագրոպարենային համակարգը 99

ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ, ՇՈՒՇԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ԱԼԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ
2.2.3. Ծառայությունների ոլորտը 108

ՆԱՐԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՆԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
2.3. Հարկաբյուջետային քաղաքականության նկարագիրը 118

ԷԴԳԱՐ ԱԶԱԲԵԿՅԱՆ
2.4. Ֆինանսական համակարգը և հիմնական զարգացումները 127

ՌՈՒԶԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
2.5. Թվայնացումը և նորարարական համակարգերը 151

ԳԼՈՒԽ 3. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 161

ՎԱՀԵ ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ

3.1. Ժողովրդագրական պատկերը 161

3.2. Գործազրկության և աղքատության հիմնախնդիրները: Սոցիալական պատկերը 172

ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ

3.3. Գիտությունը, կրթությունը, մշակույթը 182

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 196

ԱՆՆԱ ՓԱԽԼՅԱՆ, ՏՈՒՉԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

4.1. Հնդկաստանի հետ Հայաստանի հիմնական առևտրային ուղղությունները. հեռանկարներ 196

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4.2. Հայաստան–Հնդկաստան ռազմատեխնիկական համագործակցությունը 206

ԱՆՆԱ ՓԱԽԼՅԱՆ, ՏԱԹԵՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

4.3. Լոգիստիկ ենթակառուցվածքներում Հայաստանի և Հնդկաստանի համագործակցության հնարավորությունները 210

ՏՈՒՉԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ԱԼԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ

4.4. Ծառայությունների ոլորտում համագործակցություն (աութսորսինգ) 227

ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ

4.5. Գիտության, կրթության և մշակույթի ոլորտներում համագործակցության հեռանկարները 238

ՌՈՒԶԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

4.6. Հնդկաստանի հետ համագործակցությունը բարձր տեխնոլոգիաների ոլորտում 243

ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ, ՏԱԹԵՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

4.7. Հնդկաստանից միգրացիոն հոսքը դեպի ՀՀ 247

ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Եզրակացություն 253

Օգտագործված գրականություն 257

Համառոտագրեր 279

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հնդկաստանը 21-րդ դարի միջազգային քաղաքականության և տնտեսության առանցքային դերակատարներից է: Այն իր աշխարհագրական դիրքով, ժողովրդագրական ներուժով, տնտեսական աճի տեմպերով և ռազմավարական նախաձեռնություններով դարձել է ոչ միայն Ասիայի, այլև ամբողջ աշխարհի զարգացումների կարևոր կենտրոններից մեկը: Հնդկաստանի պետական կառավարման յուրահատկությունները, վարչատարածքային բազմաշերտ կառուցվածքը, արտաքին քաղաքականության հավասարակշռված մոտեցումները և անվտանգային համակարգի զարգացումը թույլ են տալիս երկրին հանդես գալ որպես կայունության և նորարարության խոշոր կենտրոն: Այս իրողությունները Հնդկաստանը դարձնում են բացառիկ հետազոտական հետաքրքրություն ներկայացնող օբյեկտ հատկապես այն պետությունների համար, որոնք ձգտում են նոր գործընկերային հարթակներ ստեղծել և զարգացնել փոխշահավետ համագործակցություն:

Հայաստանի համար Հնդկաստանը հետաքրքրություն է ներկայացնում ըստ մի քանի հանգամանքների: Նախ՝ Հնդկաստանը համաշխարհային տնտե-սության ամենաարագ զարգացող խոշոր տնտեսություններից մեկն է. ընդգրկում է արդյունաբերության, գյուղատնտեսության, ծառայությունների և բարձր տեխնոլոգիաների լայն ոլորտներ: Երկրորդ՝ Հայաստանը, լինելով աշխարհագրական տեսանկյունից Արևելքի և Արևմուտքի միջանցք, կարող է հանդես գալ որպես կապող օղակ Հնդկաստանի և Եվրասիական տարածաշրջանի միջև: Երրորդ՝ աշխարհաքաղաքական ներկա պայմաններում Հայաստանի համար կենսական նշանակություն ունեն արտաքին նոր գործընկերների որոնումը, դրանց բազմազանեցումը, ինչը կարող է լրացուցիչ տնտեսական և քաղաքական կայունություն ապահովել:

Հնդկաստանի և Հայաստանի հարաբերությունների խորացման հնարավորությունները բազմակողմանի են: Առևտրատնտեսական համագործակցությունից բացի, մեծ հեռանկարներ կան լոգիստիկ ենթակառուցվածքների զարգացման, ռազմական ոլորտում համագործակցության, բարձր տեխնոլոգիաների, կրթության, գիտության և մշակույթի ոլորտներում: Բացի այդ, հաշխարհային ինտեգրման գործընթացներում Հայաստանի և Հնդկաստանի կապերը կարող են ծառայել որպես նոր հարթակ Ասիա–Եվրոպա տրանսպորտային և տնտեսական միջանցքների զարգացման համատեքստում:

Հնդկաստանի միջազգային դերի աճը հատկապես ընդգծվում է գլոբալ տնտեսության նոր ուղղությունների զարգացման առումով: Թվայնացումը, նո-

րարարական էկոհամակարգերի ձևավորումը, բարձր տեխնոլոգիաների և ծառայությունների հատվածի արագ ընդլայնումը Հնդկաստանին դարձնում են ոչ միայն արտադրական հզոր կենտրոն, այլև գիտատեխնոլոգիական առաջատար: Այս գործընթացներում Հայաստանի ներգրավվածությունը կարող է խթանել սեփական թվային և բարձր տեխնոլոգիական ներուժի զարգացումը՝ ապահովելով միջազգային շուկաների հետ ինտեգրման նոր հնարավորություններ:

Ներկայիս աշխարհաքաղաքական վերաձևումները, էներգետիկ և լոգիստիկ նոր միջանցքների ձևավորումը Հնդկաստանին տալիս են աննախադեպ նշանակություն Ասիա–Եվրոպա կապի ապահովման գործում: Հայաստանի աշխարհագրական դիրքը, որը համընկնում է այս միջանցքների որոշ հնարավոր երթուղիների հետ, հնարավորություն է տալիս երկիրը դիտարկելու որպես ռազմավարական գործընկեր Հնդկաստանի համար՝ Հայաստանի և Հնդկաստանի հարաբերություններին հաղորդելով ոչ միայն երկկողմ, այլև տարածաշրջանային և նույնիսկ գլոբալ նշանակություն:

Հայաստանի համար արդիական է նաև համագործակցության սոցիալ-մշակութային բաղադրիչը: Հնդկաստանի հարուստ կրթամշակութային ներուժը, գիտության և բարձրագույն կրթության ոլորտում ունեցած հաջողությունները կարող են հիմք ծառայել երկկողմ կրթական ծրագրերի, ակադեմիական փոխանակումների և գիտահետազոտական համագործակցության զարգացման համար: Այսպիսի կապերը կարող են նպաստել Հայաստանի մարդկային կապիտալի հզորացմանը և գիտակրթական համակարգի արդիականացմանը:

Վերջապես՝ Հայաստանի և Հնդկաստանի հարաբերությունների զարգացումը պետք է դիտարկել նաև որպես փոքր պետության արտաքին քաղաքականության բազմավեկտոր ռազմավարության բաղկացուցիչ: Նոր գործընկերների ներգրավումը, առևտրատնտեսական հարաբերությունների բազմազանեցումը և բազմաբևեռ համագործակցության ձևավորումը Հայաստանի համար կենսական նշանակություն ունեն ոչ միայն տնտեսական, այլև անվտանգային տեսանկյունից: Այս համատեքստում Հնդկաստանի հետ հարաբերությունների խորացումը հարկ է դիտարկել որպես հնարավորություն՝ [illegible] օրինակ պատուհան՝ ամրապնդելու Հայաստանի դիրքը միջազգային համակարգում:

Այսպիսով՝ թեմայի արդիականությունը պայմանավորված է երեք հիմնական գործոններով. առաջին՝ Հնդկաստանի աճող ազդեցությունը համաշխարհային քաղաքական և տնտեսական գործընթացներում, երկրորդ՝ Հայաստանի համար տնտեսական և քաղաքական նոր գործընկերային ուղղությունների բացահայտման անհրաժեշտությունը, երրորդ՝ տարածաշրջանային և գլոբալ ինտեգրման գործընթացներում նոր հնարավորությունների բացահայտումն ու օգտագործումը:

Հետազոտության նպատակն է բազմակողմանիորեն ուսումնասիրել Հնդկաստանի պետական կառավարման, արտաքին քաղաքականության և տնտեսական համակարգի առանձնահատկությունները, վերլուծել երկրի սոցիալական համատեքստը և, ըստ այդմ՝ բացահայտել Հայաստանի և Հնդկաստանի միջև համագործակցության առավել հեռանկարային ուղղությունները:

Հետազոտության խնդիրներն են՝

- ուրվագծել Հնդկաստանի պետական կառավարման համակարգի և արտաքին քաղաքականության առանձնահատկությունները,
- վերլուծել Հնդկաստանի մակրոտնտեսական իրավիճակը՝ ընդգծելով արդյունաբերության, գյուղատնտեսության, ծառայությունների և ֆինանսական համակարգի զարգացումները,
- դիտարկել Հնդկաստանի սոցիալական համատեքստը՝ ժողովրդագրություն, զբաղվածություն, աղքատության խնդիրներ, կրթություն և մշակույթ,
- ուսումնասիրել Հայաստանի և Հնդկաստանի միջև առևտրատնտեսական, ռազմավարական, լոգիստիկ, բարձր տեխնոլոգիական և մշակութային համագործակցության հիմնական ուղղությունները,
- մատնանշել այն հնարավորությունները, որոնք կարող են Հայաստանի համար ապահովել տնտեսական բազմազանեցում և քաղաքական նոր հավասարակշռություն՝ Հնդկաստանի հետ հարաբերությունների խորացման միջոցով:

Ուսումնասիրության շրջանակներում ոչ միայն ներկայացվել է Հնդկաստանի տնտեսական, քաղաքական և սոցիալական պատկերը, այլև վերլուծվել են այն հնարավորությունները, որոնք բացվում են Հայաստանի համար՝ Հնդկաստանի հետ հարաբերությունների ակտիվացման պարագայում: Արդյունքում՝ մենագրությունը կարող է ծառայել որպես տեսական և գործնական ուղեցույց ինչպես գիտական համայնքի, այնպես էլ պետական մարմինների և գործարար շրջանակների համար:

Սույն ուսումնասիրության գիտական արժեքն ու նորարարությունը պայմանավորված են մի քանի հանգամանքով: Նախևառաջ՝ հայերենով Հնդկաստանի վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություններ՝ պետական կառավարման, մակրոտնտեսական և սոցիալական համակարգերի ամբողջական վերլուծության ընդգրկմամբ, գրեթե չկան: Բացի այդ, Հայաստանի և Հնդկաստանի միջև համագործակցության հեռանկարները մինչ այժմ ուսումնասիրվել են մասնակի և հատվածական, մինչդեռ այս աշխատանքում դրանք դիտարկվում են համակարգային և փոխկապակցված մոտեցմամբ: Ավելին՝ ուսումնասիրությունը ոչ միայն հիմնվում է միջազգային փորձագիտական աղբյուրների և վիճակագրական տվյալների վրա, այլև ուղղված է գործնական

կիրառմանը՝ որոշակի ուղենիշներ առաջարկելով քաղաքականության մշակման, տնտեսական բազմազանեցման և միջազգային համագործակցության համար:

Հեղինակներն ու խմբագրակազմը լիահույս են, որ նմանօրինակ մոտեցումը հնարավորություն կտա ոչ միայն հարստացնելու հայաստանյան գիտական բանավեճը Հնդկաստանի մասին, այլև կստեղծի գիտակիրառական հիմք Հայաստանի և Հնդկաստանի հարաբերությունների զարգացման համար:

ԳԼՈՒԽ 1
ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ

1.1 Պետական կառավարման համակարգը

Երկրագնդի վրա իր զբաղեցրած 3287000 քառ. կմ տարածքով յոթերորդը համարվող, իսկ 01.04.2024 թ. դրությամբ 1 մլրդ 449 մլն բնակչության թվով մինչև տարեվերջ և այդուհետ աշխարհում առաջին հորիզոնականը զբաղեցնող Հնդկաստանի Հանրապետության (այսուհետ՝ Հնդկաստան) պետական կառավարման համակարգն աչքի է ընկնում բարդությամբ և բազմաստիճանակարգությամբ:

Հնդկաստանի պետական կառավարման ներկայիս համակարգն արդյունք է պետության կենսընթացքի բազմադարյա ժամանակահատվածում ամենատարբեր փոփոխությունների շղթայի, որի ներկայիս հիմնական ձգտումն է լինել համահունչ բնակչությամբ աշխարհի խոշորագույն պետություններից մեկի սեփական կարիքներն ու պահանջմունքները բավարարելուն՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով կայուն զարգացման ու առաջընթացի համար: Այդ առումով, Հնդկաստանի պետական կառավարման համակարգի ուսումնասիրությունն անհրաժեշտ է սկսել վերջինիս պատմական էվոլյուցիայի հետահայաց վերլուծությամբ:

Հնդկաստանի պետական կառավարման համակարգի հիմքերը գտնվում են հնագույն ժամանակներում, երբ տարբեր դինաստիաներ և կայսրություններ, ինչպիսիք են Մաուրիաներն ու Մուղալները, մեծածավալ տարածքների ու թվաշատ բնակչության կառավարման նպատակով ստեղծեցին ինքնատիպ և բարդ վարչական համակարգեր: Մասնավորապես՝ Մաուրիայի կայսր Աշոկայի օրոք պետական կառավարման հիմքում դրվեցին երկիրը նահանգների բաժանելու և դրանց կառավարման, ինչպես նաև սոցիալական բարեկեցության խթանման մոտեցումները, իսկ մուղալների օրոք երկրում տեղի ունեցավ բյուրոկրատիայի կենտրոնացում, երբ գյուղերը ձևավորեցին գավառներ, որոնք ղեկավարվում էին կառավարիչների կողմից: Հենց այս համակարգերն էին, որ հիմք դրեցին Հնդկաստանի պետական կառավարման վարչական համակարգի կայացման ու հետագա զարգացման գործընթացին[1]:

Դարերով ստեղծված ու կայացած համակարգերն էական փոփոխությունների ենթարկվեցին բրիտանական գաղութատիրության շրջանում, երբ վերջիններիս կողմից երկիրը բաժանվեց նախագահությունների, գավառների և շրջանների՝ այդկերպ դյուրացնելով գաղութային կառավարումը և արդյունավետ դարձնելով եկամուտների հավաքագրումը: Բրիտանացիները ստեղծեցին կառավարման բյուրոկրատական մոդել, որը բնութագրվում էր աստիճանակարգությամբ, մասնագիտացված կառույցներով՝ դրանց ֆորմալ կանոն-

[1] Indian Administration, Padmalaya Mahapatra, Utkal University, Bhubaneswar, 2023, 244 pages, pp. 1-15, https://ddceutkal.ac.in/Syllabus/MA_PUB_ADD/Indian_Administration.pdf

ներով և ընթացակարգերով, որոնք երկարաժամկետ կտրվածքով էական ազդեցություն թողեցին Հնդկաստանի պետական կառավարման մշակույթի վրա:

Հենց բրիտանական գաղութային կառավարման սկզբունքն է, որ որպես հիմնական բաղադրիչ շարունակում է ձևավորել Հնդկաստանի պետական կառավարման ներկայիս համակարգը: Բրիտանացիների կողմից ներդրված աստիճանակարգման կանոններով սահմանափակված բյուրոկրատիան ձևավորեց այն «բազիսը», որի վրա Հնդկաստանի անկախացումից[2] հետո կառուցվեց կառավարման համակարգի «վերնաշենքը»[3], և սկսվեց որպես ժառանգություն ստացած գաղութային վարչահամակարգը ժողովրդավարական պետության կառավարման համակարգերին վերափոխելու գործընթացը:

Հնդկաստանի Սահմանադրությունը, որն ընդունվել է 1949 թվականին, ապահովում է Հնդկաստանի պետական կառավարման համակարգի իրավական հիմքը՝ ամրագրելով արդարության, ազատության, հավասարության և եղբայրության սկզբունքները, շեշտադրելով ժողովրդավարությունը, ֆեդերալիզմը և օրենքի գերակայությունը[4]:

Խոսելով Հնդկաստանի պետական կառավարման համակարգի էվոլյուցիայի և սահմանադրական հիմքերի մասին՝ անհրաժեշտություն է առաջանում դիտարկելու դրա կառուցվածքի հիմնական առանձնահատկություններն ու յուրահատկությունները, որոնք ամփոփ կերպով կարող ենք ներկայացնել հետևյալ դրույթներով.

1. **Կառավարման մակարդակները:** Հնդկաստանում պետական կառավարման մակարդակները երեքն են՝ միության, նահանգային և տեղական: Միության կառավարումը ենթադրում է պետության ամբողջական կառավարում՝ ի դեմս երկրի օրենսդիր, գործադիր և դատական մարմինների: Նահանգային կառավարումը Հնդկաստանի նահանգներում իրականացվող ղեկավարման գործընթացն է, որը որոշակիորեն պետական կառավարումից անկախ է: Տեղական կառավարումը նահանգներում ընդգրկված տարածքային միավորներում տեղական ինքնակառավարման գործընթացն է[5]:

2. **Միության գործադիր կառավարումը:** Հնդկաստանում գործադիր կառավարման գերագույն մարմինը երկրի նախագահն է, վերջինս ուղղակի- որեն կամ միջնորդավորված իրականացնում է կառավարում՝ ի՝ նվելով Սահմանադրության վրա: Նախագահն ընտրվում է խորհրդարանի կայացուցիչների կողմից: Նախագահը Հնդկաստանում պաշտոնավարու 5 տա-

[2] Indian Independence Act, 1947, https://www.legislation.gov.uk/ukpga/1947/30/pdfs/ukpga_19470030_en.pdf

[3] Indian Administration, Dr.A.Joseph, MBA, M.A. M.Phil., Ph.D.(JNU), Bharahthidasan University, 307 pages, pp. 27-46, https://www.bdu.ac.in/cde/SLM/M.A.%20Public%20Administration/I%20Year/Paper%20-%203%20%20Indian%20Administration.pdf

[4] The Constitution of India, 11/26/1949, https://www.indiacode.nic.in/bitstream/123456789/15240/1/constitution_of_india.pdf, 4/16/2024.

[5] The Constitution of India, As on May, 2022, Part V, VI, IX, X, https://cdnbbsr.s3waas.gov.in/s380537a945c7aaa788ccfcdf1b99b5d8f/uploads/2023/05/2023050195.pdf

րի ժամկետով: Նրա կողմից նշանակվում է երկրի վարչապետը, իսկ վերջինիս առաջարկությամբ և նախագահի հաստատմամբ ձևավորում է կառավարությունը: Կառավարությունը Հնդկաստանում անվանվում է Նախարարների խորհուրդ, որի հիմնական դերակատարումը մասնագիտորեն օժանդակելն է Նախագահին՝ իրականացնելու իր գործառույթները[6]:

3. **Միության օրենսդիր կառավարումը:** Հնդկաստանի օրենսդիր կառավարման մարմինը խորհրդարանն է, որն ունի նախագահ և կազմված է երկու պալատներից՝ Նահանգների խորհուրդ և Ժողովրդական պալատ: Նահանգների խորհրդում խորհրդարանի նախագահի առաջարկով ընդգրկված են 12 ներկայացուցիչ և նահանգների մինչև 238 ներկայացուցիչ: Ժողովրդական պալատում ընդգրկված են տարածքային միավորներում անցկացվող ուղղակի ընտրություններով ընտրված մինչև 530 ներկայացուցիչ և խորհրդարանի սահմանած օրենքով՝ միության տարածքները ներկայացնող մինչև 20 ներկայացուցիչ: Նահանգների խորհրդի կազմը թարմացվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ՝ ներկայացուցիչների 1/3-ի փոփոխությամբ, իսկ ժողովրդական պալատն ընտրվում է 5 տարի ժամկետով[7]:

4. **Միության դատական համակարգը:** Հնդկաստանի դատական համակարգի բարձրագույն մարմինը Գերագույն դատարանն է, որը կազմված է ոչ ավելի, քան 7 գլխավոր դատավորներից, եթե այլ թիվ չի սահմանվում խորհրդարանի կողմից: Դատավորների նշանակման համար Հնդկաստանում գործում է դատավորների նշանակումների ազգային հանձնաժողով[8]:

5. **Նահանգների կառավարումը:** Հնդկաստանում նահանգների կառավարման բարձրագույն մարմինը նահանգի կառավարիչն է: Նահանգի կառավարիչը նշանակվում է նախագահի կողմից: Կառավարիչը պաշտոնավարում է նախագահի սահմանած ժամկետով: Նահանգի կառավարչին կից գործում է նահանգի նախարարների խորհուրդ, որի ղեկավարը նահանգի գլխավոր նախարարն է: Այս խորհուրդը նահանգի գործադիր մարմինն է: Յուրաքանչյուր նահանգի կառավարիչ նշանակում է մեկ անձի, որը որակավորված է Բարձր դատարանի դատավոր նշանակվելու համար՝ որպես նահանգի փասուրաքանչյուր նահանգ ունի նաև օրենսդիր մարմին, որում ընդգրկված է նահանգի կառավարիչը: Նահանգները, կախված չափերից, ունեն մեկ կամ երկու օրենսդիր պալատ: Բոլոր նահանգներն ունեն օրենսդիր ժողովով, իսկ դրանց մի մասը՝ նաև օրենսդիր խորհուրդ: Օրենսդիր ժողովը կազմված է 60–500 ներկայացուցիչներից՝ ընտրված ուղղակի ընտրություններով, իսկ օրենսդիր խորհուրդը ներառում է օրենսդիր ժողովի ներկայացուցիչների թվի 1/3-ի չափով ներկայացուցչի, բայց ոչ պակաս, քան 40 անձի: Յուրաքան-

[6] The Constitution of India, As on May, 2022, Part V, Chapter I, https://cdnbbsr.s3waas.gov.in/s380537a945c7aaa788ccfcdf1b99b5d8f/uploads/2023/05/2023050195.pdf

[7] The Constitution of India, As on May, 2022, Part V, Chapter II, https://cdnbbsr.s3waas.gov.in/s380537a945c7aaa788ccfcdf1b99b5d8f/uploads/2023/05/2023050195.pdf

[8] The Constitution of India, As on May, 2022, Part V, Chapter IV, https://cdnbbsr.s3waas.gov.in/s380537a945c7aaa788ccfcdf1b99b5d8f/uploads/2023/05/2023050195.pdf

յուր նահանգ ունի նաև բարձր դատարան: Վերոթվարկյալները հաշվի առնելով՝ կարող ենք արձանագրել, որ յուրաքանչյուր նահանգ Հնդկաստանում պետության փոքրիկ արտապատկերումն է՝ իր գործադիր, օրենսդիր և դատական մարմիններով: Բացի նահանգներից, Հնդկաստանում առկա են նաև միության տարածքներ, որոնք չունեն նահանգի կարգավիճակ, սակայն, որոշակի փոփոխություններով հանդերձ, դրանց կառավարման համակարգը մոտ է նահանգային կառավարմանը[9]:

6. **Փանչայաթների միջոցով կառավարումը:** Հնդկաստանում նահանգային կառավարմանը հաջորդում է փանչայաթների միջոցով կառավարումը, որը կարող է նույնացվել գյուղական համայնքներում տեղական ինքնակառավարման հետ, իսկ փանչայաթները՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Յուրաքանչյուր նահանգում ստեղծվում են փանչայաթներ գյուղական, միջանկյալ և շրջանային մակարդակներում: Փանչայաթների ստեղծման հիմքը տարածքային միավորների բնակչության թիվն է: Փանչայաթում ներառված ներկայացուցիչների թվի և տվյալ փանչայաթի տարածքի բնակչության հարաբերակցությունը պետք է նույնը լինի ողջ նահանգում: Փանչայաթները համալրվում են դրանց տարածքում կազմակերպվող ուղղակի ընտրությունների միջոցով: Ըստ մակարդակների՝ փանչայաթների ներկայացուցիչները կարող են որպես ներկայացուցիչ հանդես գալ նաև մեկ աստիճան բարձր փանչայաթներում: Փանչայաթները գործում են 5 տարի ժամկետով և համարվում են տվյալ տարածքի կառավարման բարձրագույն մարմինը[10]:

7. **Քաղաքապետարանների միջոցով կառավարում:** Հնդկաստանում տեղական ինքնակառավարումը, բացի փանչայաթներից (որը նախատեսված է գյուղական համայնքների համար), քաղաքային բնակավայրերում իրականացվում է նաև քաղաքապետարանների միջոցով: Գյուղականից քաղաքային բնակավայրի անցում կատարող համայնքներում, որպես տեղական ինքնակառավարման մարմին, գործում են նագար փանչայաթներ, փոքր քաղաքային համայնքներում՝ քաղաքային խորհուրդներ, իսկ խոշոր քաղաքներում՝ քաղաքային կորպորացիաներ: Ինչպես փանչայաթների դեպքում, այս դեպքում ևս այդ կառույցների անդամներն ընտրվում են ուղղակի ընտրությունների միջոցով և գործում են 5 տարի ժամկետով:

8. **Քաղաքացիական ծառայության համակարգը:** Հնդկաստանում պետական կառավարման համակարգն էականորեն կախման մեջ է Հնդկաստանի վարչական ծառայությունից (Indian Administrative Service (IAS)): Վերջինս Հնդկաստանի գլխավոր քաղաքացիական ծառայությունն է, իսկ այդ կառույցի ներկայացուցիչները ծառայում են երկրի տարբեր վարչական մարմիններում՝ կենտրոնական, նահանգային և տեղական մակարդակներում: Քաղաքացիական ծառայության այլ ուղղությունները ներառում են Հնդկաստանի ոստիկանական ծառայությունը (Indian Police Service (IPS)), Հնդկաստանի արտաքին ծառայությունը (Indian Foreign Service (IFS)) և Հնդկաստանի եկամուտների ծառայությունը (Indian Revenue Service (IRS)): Քաղաքացիական ծառայողները ընտրվում են Միության հանրային ծառայության հանձնաժողովի (Union Public Service Commission (UPSC)) կողմից՝ մրցութային քննությունների միջոցով[11]:

9. **Հանրային հատվածի ձեռնարկությունները**: Հնդկաստանում առկա են հանրային հատվածի զգալի թվով ձեռնարկություններ՝ ներկայացված տարբեր ոլորտներում, ներառյալ էներգետիկան, հեռահաղորդակցությունը, տրանսպորտը և բանկային գործունեությունը: Դրանք վճռորոշ դեր են խաղում Հնդկաստանի տնտեսական զարգացման մեջ և նպաստում են աշխատատեղերի ստեղծմանը, արդյունաբերական աճին և ենթակառուցվածքների զարգացմանը[12]:

10. **Սոցիալական ապահովության ծրագրեր**: Հնդկաստանում իրականացվում են սոցիալական զարգացման բազմաթիվ ծրագրեր, որոնք ուղղված են աղքատության, անհավասարության և սոցիալական ցածր ներառականության վերացմանը: Նախաձեռնությունները, որոնցից են Մահաթմա Գանդիի գյուղական զբաղվածության երաշխիքի ազգային ակտը (MGNREGA)[13], Գյուղական առողջապահական ազգային առաքելությունը (NRHM)[14] և Սննդի անվտանգության ազգային օրենքը (NFSA)[15], նպատակ ունեն խոցելի բնակչության համար ապահովելու աշխատանքի հնարավորություններ, առողջապահական ծառայություններ և սննդի անվտանգություն:


11. **Հասարակական կազմակերպություններ և քաղաքացիական հասարակություն**: Հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը կենսական դեր են խաղում Հնդկաստանի պետական կառավարման համակարգում՝ լրացնելով կառավարության ջանքերը, պաշտպանելով սոցիալական արդարությունը և խթանելով քաղաքացիների ներգրավվածությունը: Հասարակական կազմակերպությունները գործում են տարբեր ոլորտներում, ներառյալ՝ կրթությունը, առողջապահությունը, շրջակա միջավայրը, մարդու իրավունքները, և դրանց դերակատարումն ուղղված է սոցիալական ու զարգացման տարբեր մարտահրավերների լուծմանը: Պետական մարմինների և քաղաքացիական հասարակության միջև արդյունավետ համագործակցությունը հանրային քաղաքականության և ծրագրերի ար-

[9] The Constitution of India, As on May, 2022, Part VI, https://cdnbbsr.s3waas.gov.in/s380537a945c7aaa788ccfcdf1b99b5d8f/uploads/2023/05/2023050195.pdf
[10] The Constitution of India, As on May, 2022, Part IX, https://cdnbbsr.s3waas.gov.in/s380537a945c7aaa788ccfcdf1b99b5d8f/uploads/2023/05/2023050195.pdf

[11] Union Public Service Commission (UPSC), https://upsc.gov.in/
[12] Public Sector in India, Structure of Indian Economy, https://egyankosh.ac.in/bitstream/123456789/7105/1/Unit-6.pdf
[13] Mahatma Gandhi National Rural Employment Guarantee Act, India, https://rural.gov.in/sites/default/files/02%20_CIC_PartII_MG_NREGA%28F%29_0.pdf
[14] National Health Mission, Ministry of Health and Family Welfare, Government of India, https://nhm.gov.in/index1.php?lang=1&level=1&lid=49&sublinkid=969
[15] National Food Security Act, India, https://nfsa.gov.in/portal/nfsa-act

դյունավետությունն ու ներառականությունն ապահովող կարևոր օղակներից մեկն է[16]:

Ելնելով վերոնշյալ դրույթներից՝ կարող ենք արձանագրել, որ Հնդկաստանը դաշնային, սահմանադրական, խորհրդարանական և ժողովրդավարական պետություն է, որն ունի կառավարման բարձրաստիճան՝ եռամակարդակ համակարգ: Միությունը գլխավորում է նախագահը, իսկ կառավարման գործընթացում էական նշանակություն ունեն քաղաքացիական ծառայության ինստիտուտը, հանրային հատվածի ձեռնարկությունները, սոցիալական ապահովության ծրագրերը և քաղաքացիական հասարակությունը: Նշյալ դիտարկումների հիման վրա Հնդկաստանի պետական կառավարման համակարգի ամփոփ նկարագիրը ներկայացված է գծապատկեր 1.1-ում:



Գծապատկեր 1.1 **Հնդկաստանի պետական կառավարման համակարգը[17]**

[16] NGOs, Civil Society and Social Reconstruction in Contemporary India, Biswajit Ghosh, University of Burdwan, Journal of Developing Societies 25, 2 (2009), 229–252, https://www.researchgate.net/-publication/235560873_NGOs_Civil_Society_and_Social_Reconstruction_in_Contemporary_India

[17] Գծապատկերը կառուցել են հեղինակները:

1.2 Վարչատարածքային բաժանումը

Հնդկաստանի վարչատարածքային բաժանումը հիմնված է պետական կառավարման համակարգի աստիճանակարգության վրա, որի բնութագրական մանրամասները ներկայացվել են նախորդիվ: Հնդկաստանի վարչատարածքային բաժանման հիմքում երկրի տարածքային զարգացման, վարչական համակարգի հարմարավետության, աշխարհագրական դիրքերի, լեզվական տարբերությունների և ցեղային բնակչության իրավունքների պաշտպանության սկզբունքներն են: Երկրում վարչատարածքային բաժանման հիմքը սահմանադրությունն է, համաձայն որի՝ Հնդկաստանը բաժանվում է 28 նահանգի և միության 8 տարածքի[18]: Նահանգների և միության տարածքների կազմը ևս սահմանված է սահմանադրությամբ: Հարկ է նաև արձանագրել, որ այդ 36 տարածքային միավորներն իրենց հերթին բաժանված են 640 շրջանի[19]: Տարածքային միավորները խմբավորվում են 5 հիմնական գոտիներում՝ կենտրոնական, հարավային, հյուսիսային, արևմտյան և արևելյան, որոնք ոչ թե վարչատարածքային միավորներ են, այլ տարածքային միավորների խմբավորումներ՝ ելնելով աշխարհագրական դիրքից[20]: Բացի աշխարհագրական գոտիականացումից, որն առավելապես հիմնված է բնակչության մշակութային առանձնահատկությունների վրա, երկիրը՝ միությունը, բաժանվում է նաև 7 մշակութային գոտիների՝ հյուսիս-արևելյան, հյուսիս-կենտրոնական, հյուսիսային, արևելյան, հարավային, հարավ-կենտրոնական և արևմտյան:

Այդուհանդերձ, չնայած այդ յուրօրինակ բաժանման սկզբունքին ու տարաբնույթ գոտիների առկայությանը, Հնդկաստանը սկզբունքորեն հանդես է գալիս որպես դաշնային պետություն, որի բարձրագույն տարածքային միավորները նահանգներն ու միության տարածքներն են, որոնք բաժանվում են շրջանների, որոնք էլ իրենց հերթին՝ խոշոր քաղաքների, փոքր քաղաքների, գյուղականից քաղաքային բնակավայրի անցում կատարող տարածքային միավորների և գյուղական բնակավայրերի:

Հետազոտության այս հատվածում հարկ ենք համարում անդրադառնալ Հնդկաստանի 28 նահանգների և 8 տարածքային միավորների հիմնական առանձնահատկություններին (աղյուսակ 1.1):

[18] The Constitution of India, As on May, 2022, First Schedule, https://cdnbbsr.s3waas.gov.in/s380537a945c7aaa788ccfcdf1b99b5d8f/uploads/2023/05/2023050195.pdf

[19] Office of the Registrar General and Census Commissioner, India, Ministry of Home Affairs, Government of India, https://censusindia.gov.in/census.website/data/census-tables

[20] State Recognition Act, India, 1956.

Աղյուսակ 1.1

Հնդկաստանի նահանգների և միության տարածքների հիմնական առանձնահատկությունները [21] [22] [23]



1. **Andhra Pradesh**: Նահանգը տեղակայված է Հնդկաստանի հարավ-արևելքում, աչքի է ընկնում հարուստ մշակութային ժառանգությամբ, պատմական հուշարձաններով և առաինյա բազում քաղաքներով, ընդգրկում է 23 շրջան, ընդհանուր մակերեսը 162,968 քառ. կմ է:



2. **Arunachal Pradesh**: Նահանգը գտնվում է Հնդկաստանի հյուսիս-արևելքում, ունի բազմաթիվ տեսարժան լանդշաֆտներ, կրում է բազում ցեղային մշակույթներ, ինչպես նաև ունի ռազմավարական բնույթի սահման Չինաստանի հետ, ընդգրկում է 16 շրջան, ընդհանուր մակերեսը 83,743 քառ. կմ է:



3. **Assam**: Գտնվելով Հնդկաստանի հյուսիս-արևելքում՝ նահանգը հայտնի է իր թեյի պլանտացիաներով, վայրի բնության արգելավայրերով և Բրահմապուտրա գետով, ընդգրկում է 27 շրջան, ընդհանուր մակերեսը 78,438 քառ. կմ է:



4. **Bihar**: Նահանգը գտնվում է Հնդկաստանի արևելքում, հայտնի է պատմական անցյալով և բերրի հարթավայրերով, ընդգրկում է 38 շրջան, ընդհանուր մակերեսը 94,163 քառ. կմ է:

[21] Geographical area of India, by state and union territory, https://www.statista.com/statistics/616241/area-by-state-and-union-territory india/#:~:text=Land%20area%20in%20India%202021%2C%20by%20state%20and%-20union%20territory&text=Central%20Madhya%20Pradesh%20and%20south,about%203.3%20million%20square%20kilometers.

[22] Number of districts in India in 2012, by state and union territory, https://www.statista.com/statistics/615686/number-of-districts-by-state-and-union-territory-india/

[23] Administrative Divisions of India – Regional Administration, https://byjusexamprep.com/upsc-exam/administrative-divisions-of-india#:~:text=There%20are%2028%20states%20and,convenience%2C%20spoken%20languages%2C%20etc.



5. **Chhattisgarh**: Կենտրոնական Հնդկաստանում գտնվող նահանգը հայտնի է իր խիտ անտառներով, ցեղային մշակույթով և հարուստ հանքային պաշարներով, ընդգրկում է 27 շրջան, ընդհանուր մակերեսը 135,192 քառ. կմ է:



6. **Goa**: Գտնվելով Հնդկաստանի արևմտյան ափին՝ նահանգը աչքի ընկնում է իր գեղեցիկ լողափերով, պորտուգալական գաղութային ճարտարապետությամբ և աշխույժ գիշերային կյանքով, ընդգրկում է ընդամենը 2 շրջան, ընդհանուր մակերեսը 3,702 քառ. կմ է:



7. **Gujarat**: Նահանգը գտնվում է Հնդկաստանի արևմուտքում, ունի բազում հնագիտապատմական վայրեր, այստեղ բավականաչափ ակտիվ է ձեռնարկատիրությունը, ընդգրկում է 26 շրջան, ընդհանուր մակերեսը 196,244 քառ. կմ է:



8. **Haryana**: Նահանգը տեղակայված է Հնդկաստանի հյուսիսում, հայտնի է զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մայրաքաղաք Դելիի հարևանությամբ գտնվելը դրական է անդրադառնում նահանգի սոցիալ-տնտեսական զարգացման վրա, ընդգրկում է 21 շրջան, ընդհանուր մակերեսը 44,212 քառ. կմ է:



9. **Himachal Pradesh**: Հիմալայներում տեղակայված նահանգը հայտնի է իր գեղատեսիլ լեռնային վայրերով, արշավային արահետներով և խոշոր հոգևոր կենտրոններով, ընդգրկում է 12 շրջան, ընդհանուր մակերեսը 55,673 քառ. կմ է:



10. Jharkhand: Նահանգը գտնվում է Հնդկաստանի արևելքում: Այն հայտնի է իր հանքային ռեսուրսների հարստությամբ, ցեղային հարուստ մշակույթով և արդյունաբերական խոշոր քաղաքներով, ընդգրկում է 24 շրջան, ընդհանուր մակերեսը 79,716 քառ. կմ է:



11. Karnataka: Գտնվելով Հնդկաստանի հարավ-արևմուտքում՝ նահանգը հայտնի է հարուստ պատմական ժառանգությամբ, աշխարհագրական միջավայրի բաղադրիչների բազմազանությամբ և բարձր տեխնոլոգիաների մայրաքաղաք Բենգալուրուով, ընդգրկում է 30 շրջան, ընդհանուր մակերեսը 191,791 քառ. կմ է:



12. Kerala: Գտնվում է Հնդկաստանի հարավարևմտյան ծայրամասում, հայտնի է իր հետնախորշերով, փարթամ անտառներով, ավանդական բուժական կենտրոններով և մշակութային բազմազան ավանդույթներով, ընդգրկում է 14 շրջան, ընդհանուր մակերեսը 38,852 քառ. կմ է:



13. Madhya Pradesh: Կենտրոնական Հնդկաստանում գտնվող նահանգը հայտնի է իր վայրի բնության արգելոցներով և պատմական վայրերով, բավականաչափ մեծ է. ընդգրկում է 50 շրջան, ընդհանուր մակերեսը 308,252 քառ. կմ է:



14. Maharashtra: Արևմտյան Հնդկաստանում գտնվող այս նահանգը հայտնի է իր կոսմոպոլիտ մայրաքաղաք Մումբայով, ինչպես նաև այնպիսի տեսարժան վայրերով, ինչպիսիք են Աջանտա և Էլլորա քարանձավները: Նահանգն ընդգրկում է 35 շրջան, ընդհանուր մակերեսը 307,713 քառ. կմ է:



15. Manipur: Հյուսիսարևելյան Հնդկաստանում գտնվող նահանգը հայտնի է իր բնական գեղեցկությամբ, աշխույժ փառատոներով և հարուստ մշակութային ժառանգությամբ, ընդգրկում է 9 շրջան, ընդհանուր մակերեսը 22,327 քառ. կմ է:



16. Meghalaya: Գտնվելով Հնդկաստանի հյուսիսարևելյան մասում՝ նահանգը հայտնի է իր գեղատեսիլ բնությամբ և երկրագնդի ամենախոնավ տեղով՝ Չերապունջիով, ընդգրկում է 7 շրջան, ընդհանուր մակերեսը 22,429 քառ. կմ է:



17. Mizoram: Հնդկաստանի հյուսիս-արևելքում գտնվող նահանգը հայտնի է իր փարթամ անտառներով, ցեղային հարուստ մշակույթով և յուրահատուկ խոհանոցով, ընդգրկում է 8 շրջան, ընդհանուր մակերեսը 21,081 քառ. կմ է:



18. Nagaland: Հյուսիսարևելյան Հնդկաստանում գտնվող նահանգը հայտնի է իր աշխույժ ցեղային փառատոներով, տեսարժան գեղեցկությամբ և ավանդական ձեռագործ աշխատանքներով, ընդգրկում է 11 շրջան, ընդհանուր մակերեսը 16,579 քառ. կմ է:



19. Odisha: Հնդկաստանի արևելյան ափին գտնվող այս նահանգը հայտնի է իր հնագույն տաճարներով, մաքուր լողափերով, վառ արվեստներով ու արհեստներով, ընդգրկում է 30 շրջան, ընդհանուր մակերեսը 155,707 քառ. կմ է:



20. Punjab: Հյուսիսային Հնդկաստանում գտնվող նահանգը հայտնի է իր բերրի հարթավայրերով, սիկհերի ժառանգությամբ և կենսունակ մշակույթով, ընդգրկում է 21 շրջան, ընդհանուր մակերեսը 50,362 քառ. կմ է:



21. Rajasthan: Գտնվելով Հնդկաստանի հյուսիս-արևմուտքում՝ նահանգը հայտնի է իր հոյակերտ ամրոցներով, պալատներով, անապատային լանդշաֆտներով և աշխույժ փառատոներով: Նահանգն ընդգրկում է 33 շրջան, ընդհանուր մակերեսը 342,239 քառ. կմ է:



22. Sikkim: Գտնվելով Հիմալայներում՝ տարածքային միավորը հայտնի է իր բնական գեղեցկությամբ, բուդդայական վանքերով և արշավային արահետներով, ընդգրկում է 4 շրջան, ընդհանուր մակերեսը 7,096 քառ. կմ է:



23. Tamil Nadu: Գտնվում է Հնդկաստանի հարավում, հայտնի է իր դրավիդյան տաճարներով, դասական պարերով և կենսունակ մշակութային ավանդույթներով, ընդգրկում է 32 շրջան, ընդհանուր մակերեսը 130,060 քառ. կմ է:



24. Telangana: Հնդկաստանի հարավում գտնվող ա ւ նահանգը հայտնի է իր հարուստ պատմությամբ և ճարտարապետությամբ, ընդգրկում է 33 շրջան, ընդհանուր մակերեսը 112,077 քառ. կմ է:



25. Tripura: Գտնվելով Հնդկաստանի հյուսիս-արևելքում՝ հայտնի է իր գեղեցկությամբ, տարբեր ցեղային մշակույթներով և պատմական վայրերով, ընդգրկում է 4 շրջան, ընդհանուր մակերեսը 10,486 քառ. կմ է:



26. Uttar Pradesh: Հնդկաստանի հյուսիսում գտնվող նահանգը հայտնի է իր պատմական և մշակութային ժառանգությամբ, ներառյալ՝ Թաջ Մահալը, ընդգրկում է 72 շրջան, ընդհանուր մակերեսը 240,928 քառ. կմ է:



27. Uttarakhand: Հիմալայներում տեղակայված այս նահանգը հայտնի է իր ուխտագնացության վայրերով, արշավային արահետներով և գեղատեսիլ բարձունքներով, ինչպիսին է Մուսուրին, ընդգրկում է 13 շրջան, ընդհանուր մակերեսը 53,483 քառ. կմ է:



28. West Bengal: Հնդկաստանի արևելքում գտնվող նահանգը հայտնի է իր հարուստ մշակույթով, ինտելեկտուալ ժառանգությամբ և հանրահայտ Կալկաթա քաղաքով, ընդգրկում է 19 շրջան, ընդհանուր մակերեսը 88,752 քառ. կմ է:



29. Andaman and Nicobar Islands: Գտնվելով Բենգալյան ծոցում՝ այս կղզիները հայտնի են իրենց մաքուր լողափերով և պատմական նշանակությամբ: Միության տարածքը կազմված է 3 շրջանից, ընդհանուր մակերեսը 8,249 քառ. կմ է:



30. Chandigarh: Միության տարածքը հայտնի է իր ժամանակակից ճարտարապետությամբ, լավ նախագծված հատակագծով և այգիներով: Տարածքում կա 1 շրջան, ընդհանուր մակերեսը 114 քառ. կմ է:



31. Dadra and Nagar Haveli and Daman and Diu: Այս միության տարածքը ներառում է նախկին պորտուգալական Դադրա և Նագար Հավելի գաղութները, ինչպես նաև Դամանը և Դիուն, որոնք հայտնի են իրենց գեղեցկությամբ և գաղութային ժառանգությամբ: Տարածքում կա 3 շրջան, ընդհանուր մակերեսը 603 քառ. կմ է:



32. Lakshadweep: Արաբական ծովում տեղակայված այս կղզիների խումբը հայտնի է իր կորալային խութերով, մաքուր ջրերով և հանգիստ ապրելակերպով: Տարածքում կա 1 շրջան, ընդհանուր մակերեսը 32 քառ. կմ է:



33. Delhi (National Capital Territory of Delhi): Դելին (ներառում է Հնդկաստանի մայրաքաղաք Նյու-Դելին) հայտնի է իր պատմական հուշարձաններով, աշխույժ շուկաներով և խոհարարական բազմազանությամբ: Միության այս տարածքն ունի 9 շրջան, ընդհանուր մակերեսը 1,483 քառ. կմ է:



34. Puducherry: Հնդկաստանի հարավ[illegible]յան ափին գտնվող այս միության տարածքը հայտնի է [illegible]րանսիական գաղութային ճարտարապետությամբ, հոգևոր կենտրոններով և հանգիստ լողափերով, ընդգրկում է 4 շրջան, ընդհանուր մակերեսը 490 քառ. կմ է:



35. Ladakh: Հնդկաստանի հյուսիսային մասում գտնվող այս տարածքը հայտնի է իր լանդշաֆտներով, բուդդայական վանքերով և արկածային արշավային երթուղիներով: Չնայած տարածքի խոշոր չափերին՝ 59,146 քառ. կմ, ընդգրկում է ընդամենը 2 շրջան:



36. Jammu and Kashmir: Միության այս տարածքը գտնվում է Հնդկական թերակղզու հյուսիսային մասում: Jammu-ն հայտնի է իր հարթավայրերով, տաճարներով և սրբավայրերով, իսկ Kashmir-ի հովիտն աչքի է ընկնում իր բնական գեղեցկությամբ, ներառյալ Դալ լիճը և Մուղալի այգիները: Տարածքն ընդգրկում է 20 շրջան, ընդհանուր մակերեսը 42,241 քառ. կմ է:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ Հնդկաստանը, լինելով խոշոր դաշնային երկիր, ունի 28 նահանգ և միության 8 տարածք, որոնք ինչպես չափերով, այնպես էլ ներքին բաժանումներով, սոցիալական, բնաաշխարհագրական և պատմամշակութային առումներով բավականաչափ դիֆերենցված են, ինչն էլ Հնդկաստանի միաժամանակ ամենաուժեղ և ամենաթույլ կողմն է:

1.3 Արտաքին քաղաքականությունը

Ընդհանուր ակնարկ: Հնդկաստանն անկախացել է 1947 թվականին: Ունենալով խոր պատմական արմատներ, հարուստ մշակութային ավանդույթներ և յուրօրինակ ռազմավարական դիրք՝ Հնդկաստանը մշակել է ուրույն արտաքին քաղաքականություն, որը նախորդ տասնամյակներում նշանակալի փոփոխություններ է կրել՝ արտացոլելով երկրի հավակնություններն ու ծառացած մարտահրավերները[24]: Ներկայումս Հնդկաստանը վերածվել է աշխարհաքաղաքական կարևոր դերակատարի, որը ձգտում է ռազմավարական գործընկերության, տնտեսական զարգացման և տարածաշրջանային կայունության:

Հատկանշական է, որ իր պատմության ընթացքում Հնդկաստանը մշտապես հատուկ տեղ է զբաղեցրել համաշխարհային քաղաքականության մեջ՝ սկսած Չմիավորման շարժման[25] ժամանակաշրջանից, երբ երկիրը ձգտում էր կամրջի դեր խաղալ հավաքական Արևմուտքի և ԽՍՀՄ-ի միջև, մինչև արդի

[24] Lunev, S.I., & Shavlay, E.P. (2021). India as a Global Power: The Strategic Culture Problems. *India Quarterly*, *77*(4), 525-541, https://doi.org/10.1177/09749284211047750

[25] Չմիավորման շարժումը (Non-Aligned Movement) միջազգային կազմակերպություն է, որում ընդգրկված են այն երկրները, որոնք չեն ցանկանում միանալ ռազմաքաղաքական դաշինքներից որևէ

ժամանակներ, երբ անդամակցում և տարբեր ձևաչափերով ակտիվորեն մասնակցում է միջազգային բազմաթիվ կառույցների աշխատանքներին:

Վերջին տասնամյակներում Հնդկաստանը կենտրոնացել է իր ռազմավարական և տնտեսական կապերի ամրապնդման վրա, ինչպես Արևմուտքի, այնպես էլ՝ Ասիայի և Աֆրիկայի երկրների հետ: Այդ համատեքստում կարելի է դիտարկել ԱՄՆ-ի և Եվրամիության հետ հարաբերությունների խորացումը, Ռուսաստանի հետ իր ավանդական կապերի պահպանումը, ինչպես նաև տարածաշրջանային նախաձեռնություններին ակտիվ մասնակցությունը: Այս առումով, երկրի դիվանագիտական ջանքերն ուղղված են տնտեսական աճի համար առավել բարենպաստ պայմանների ձևավորմանը, ազգային անվտանգության ապահովմանը և համաշխարհային ասպարեզում որպես գլոբալ տերության դերի ամրապնդմանը[26]: Պատահական չէ, որ Հնդկաստանի նշանակությունը համաշխարհային քաղաքականության մեջ հետզհետե մեծանում է, ինչը պայմանավորված է նաև երկրի տնտեսական ներուժով[27], ռազմավարական դիրքով և ակտիվ դիվանագիտական գործունեությամբ: Երկիրը շարունակում է կայանալ որպես առանցքային գլոբալ խաղացող, որն ի զորու է ազդել միջազգային գործընթացների վրա և նպաստել բազմաբևեռ աշխարհակարգի զարգացմանը[28]:

Հնդկաստանի տնտեսական կարողությունների աստիճանական ընդլայնումը և գրեթե մեկուկես միլիարդի հասնող բնակչությունը երկիրը դարձնում են աշխարհի առաջատար շուկաներից մեկը: Աշխարհի ամենաարագ աճող տնտեսություններից մեկով Հնդկաստանը ներկայացնում է միջազգային առևտրի և ներդրումների նշանակալի շուկա, ինչը բարձրացնում է երկրի աշխարհատնտեսական նշանակությունը: Այս առումով, Հնդկաստանի նշանակալի մեծության տարածքը (3.287 մլն կմ²) և ռազմավարական դիրքը, որը Մերձավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի և Հարավարևելյան Ասիայի միջև է, թույլ է տալիս այդ երկրին կամրջել Ասիայի արևելյան և արևմտյան հատվածները: Այս գործոնն ամրապնդում է նրա կարևորությունն ու կարողությունը տարածաշրջանային անվտանգության և համագործակցության հարցերում, հատկապես Հնդկախաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համատեքստում:

Միաժամանակ, Հնդկաստանի ակտիվ մասնակցությունը միջազգային կազմակերպություններին, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ը, ԱՀԿ-ն, Քսանի խումբը (G20), ԲՐԻԿՍ-ը և այլն, ընդգծում է նրա հանձնառությունը համաշխարհային

մեկին: Այն հիմնադրվել է 1961 թվականին Բելգրադի կոնֆերանսում՝ նպատակ ունենալով միջազգային հարաբերություններում պահպանել չեզոքություն և անկախություն:

[26] Kukreja, V. (2020). India in the emergent multipolar world order: Dynamics and strategic challenges. *India Quarterly*, *76*(1), 8-23, https://doi.org/10.1177/0974928419901187

[27] Անվանական ՀՆԱ (ավելի քան 4.1 տրիլիոն ԱՄՆ դոլար) մեծությամբ Հնդկաստանն աշխարհում հինգերորդն է: Իրական ՀՆԱ աճը 6.3% է: Տե՛ս World Economic Outlook, October 2023. International Monetary Fund, https://www.imf.org/external/datamapper/NGDPD@WEO/OEMDC/ADVEC/WEOWORLD

[28] Տե՛ս Wojczewski, T. (2017). India's vision of world order: multi-alignment, exceptionalism and peaceful co-existence. *Global Affairs*, *3*, 111 – 123, https://doi.org/10.1080/23340460.2017.1331512

մակարդակով բազմակողմ համագործակցությանը և գլոբալ ազդեցության ձեռքբերմանը: Պատահական չէ, որ համաշխարհային քաղաքականության և տնտեսության փոփոխվող շարժընթացին համահունչ լինելու համար Հնդկաստանը պարբերաբար հանդես է գալիս նաև միջազգային ֆինանսական և քաղաքական ինստիտուտների բարեփոխման օգտին[29]:

Հատկանշական է նաև Հնդկաստանի ներդրումը խաղաղության և զարգացման գործում, ինչը դրսևորվում է նրա ակտիվ մասնակցությամբ ՄԱԿ-ի խաղաղապահ գործողություններին[30] և կլիմայի փոփոխության նախաձեռնություններին: Ավելորդ չէ նշել, որ Հնդկաստանը ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությունների ամենամեծ ներդրողներից մեկն է, ինչն ընդգծում է խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու իր հանձնառությունը: Բացի այդ, երկիրն ակտիվորեն մասնակցում է կլիմայի փոփոխության դեմ պայքարի միջազգային ջանքերին, ներառյալ՝ Միջազգային արևային դաշինքի[31] շրջանակներում, որն ընդգծում է նրա դերը գլոբալ բնապահպանական մարտահրավերներին դիմակայելու գործում:

Այնուամենայնիվ, Հնդկաստանի արտաքին քաղաքականությունը բախվում է նաև մի շարք մարտահրավերների: Դրանց թվում կարելի է առանձնացնել ռազմավարական լարվածությունը տարածաշրջանում՝ հատկապես Պակիստանի և Չինաստանի հետ, ինչպես նաև բնապահպանական և միջազգային առևտրի ոլորտներում ծագող հիմնախնդիրները: Ի պատասխան նշված մարտահրավերների՝ Հնդկաստանը խաղաղության և համագործակցության խթանման նպատակով փորձում է արդյունավետ հավասարակշռություն պահպանել իր ռազմավարական շահերի ամրապնդման և միջազգային հանրույթի հետ ակտիվ երկխոսության ապահովման միջև:

Այսպիսով՝ Հնդկաստանը ցուցադրում է իր կարողությունն ու պատրաստակամությունը՝ կառուցողական դեր խաղալու գլոբալ քաղաքականության մեջ և պաշտպանելու բազմաբևեռ աշխարհի գաղափարը՝ միաժամանակ ձգտելով ավելի արդար համաշխարհային կարգի հաստատմանը: Միջազգային գործերին նրա ակտիվ մասնակցությունն ու գլոբալ նախաձեռնություններին ներգրավվածությունը, ռազմավարական գործընկերությունները, մշակու-

[29] Տե՛ս, օրինակ, Joint Statement on the Eighth U.S.-India Economic and Financial Partnership. (2021, October 14). U.S. Department of The Treasury, https://home.treasury.gov/news/press-releases/jy0409

[30] India and the UN: Celebrating 70 years of invaluable service to the cause of peace. (2018, August 10). UN News, https://news.un.org/en/story/2018/08/1016322

[31] Միջազգային արևային դաշինքը հիմնադրվել է Հնդկաստանի և Ֆրանսիայի համատեղ ջանքերով՝ կլիմայի փոփոխության դեմ աշխատանքները մեկտեղելու և արևային էներգիայի ռեսուրսները լայնորեն կիրառելու նպատակով: Դաշինքի հայեցակարգը մշակվել է 2015 թ. Փարիզում կայացած Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի 21-րդ համաժողովի (COP21) շրջանակներում: 2023 թ. նոյեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետությունը նույնպես ստորագրել է «Միջազգային արևային դաշինքի հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագիրը: Տե՛ս «ՀՀ ԱԳՆ-ում ստորագրվել է Հայաստանի կողմից «Միջազգային արևային դաշինքի հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագիրը» // ՀՀ արտաքին գործերի նախարարություն, 16.11.2023, https://www.mfa.am/hy/press-releases/2023/11/16/solar_alliance/12340

թային ազդեցության և «փափուկ ուժի» պրոյեկտման հնարավորությունները, ինչպես նաև աշխարհագրական դիրքը, մարդկային ռեսուրսները, տնտեսական, տեխնոլոգիական, ռազմական ներուժը, այդ թվում՝ «միջուկային ակումբի» անդամ լինելու հանգամանքը, ընդգծում են Հնդկաստանի հզորությունը և կարևոր դերակատարությունը ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներում:

Հնդկաստանի արտաքին քաղաքականության ուրվագծերն ու հիմնական մոտեցումները: Ժամանակակից Հնդկաստանի դիվանագետների պատրաստման մշակույթի հիմքերը ձևավորվել են դեռևս մինչև 1947 թվականին երկրի անկախության ձեռքբերումը: Ինչպես երիտասարդ հանրապետության մյուս պետական կառույցները, այնպես էլ Հնդկաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունը ժառանգել են Բրիտանական Հնդկաստանի արտաքին քաղաքական հարցերի դեպարտամենտի կառուցվածքը, կազմակերպումը և աշխատանքի հիմնական սկզբունքները[32]: Այնուամենայնիվ, անկախանալուց ի վեր, Հնդկաստանի արտաքին քաղաքականությունը հիմնված է եղել խաղաղության, հակագաղութատիրության և միջազգային հարաբերություններում ինքնավարության մոտեցումների վրա: Հիմնարար ռազմավարությունը Չմիավորման շարժումն էր, որը կոչված էր ամրապնդելու երկրի ինքնիշխանությունը միջազգային ասպարեզում, նվազագույնի հասցնելու կախվածությունը սառը պատերազմի ընթացքում ձևավորված ռազմաքաղաքական որևէ դաշինքից և նպաստելու միջազգային հարաբերությունների խաղաղ զարգացմանը: Առաջին վարչապետ Ջավահարլալ Ներուի գլխավորությամբ երկիրը ձգտում էր ստեղծել բազմաբևեռ աշխարհ, որտեղ յուրաքանչյուր պետություն կարող էր պահպանել իր անկախությունն ու յուրօրինակությունը[33]:

Սառը պատերազմի տարիներին Հնդկաստանի արտաքին քաղաքականությունն անցել է մի շարք փորձությունների և ճշգրտումների միջով: ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև գլոբալ մրցավազքի և ռազմավարական առճակատման պայմաններում Հնդկաստանը փորձեց հավասարակշռված դիրք գրավել՝ ձգտելով համագործակցության թե՛ Արևմուտքի, թե՛ Արևելքի հետ: Այնուամենայնիվ, 1962 թվականին Չինաստանի հետ սահմանային հակամարտությունից և Պակիստանի հետ հետագա զինված բախումներից հետո Հնդկաստանը ստիպված եղավ վերանայել իր ռազմական և ռազմավարական առաջնահերթությունները, ինչը նույնպես ազդեցություն ունեցավ Նյու Դելիի հետագա

[32] Адрианов, А., Гладышева, А., Давыдов, С., Даниленко, А., Дьячков, И., Ионова, А., Киселева, И., Неклюдов, Н., Руденко, Е., Спирин, Е., Сушенцов, А., Хлудов, И., Щербунов, В. (2024). В поиске национальных интересов: как дипломатическая подготовка влияет на суверенитет стран мира // под. ред. А.А. Сушенцова, Н.Я. Неклюдова, *Доклад Международного дискуссионного клуба «Валдай»*, с. 9, https://ru.valdaiclub.com/files/47838/?utm_source=newsletter&utm_campaign=417&utm_medium=email

[33] Տե՛ս Noorani, A. (1979). India's Foreign Policy. *Asian Affairs: An American Review, 6*(4), 231-242, https://doi.org/10.1080/00927678.1979.10553960

արտաքին քաղաքականության վրա[34]:

1990-ականների սկզբին Հնդկաստանը իրականացրեց մի շարք տնտեսական բարեփոխումներ, որոնք ուղղված էին երկրի տնտեսության ազատականացմանն ու համաշխարհային շուկայի առջև առավել բաց քաղաքականության իրագործմանը: Այս փոփոխությունները նշանակալի ազդեցություն ունեցան երկրի արտաքին քաղաքականության վրա: Արտաքին աշխարհի հետ հարաբերություններում առավելապես շեշտադրվում էր տնտեսական կապերի ամրապնդումը, օտարերկրյա ներդրումների ներգրավումը և արտահանման ընդլայնումը: Վերոնշյալի համատեքստում հատկանշական է նաև, որ տնտեսական ազատականացումը էականորեն նպաստեց միջազգային տնտեսական կազմակերպություններում և, ընդհանուր առմամբ, համաշխարհային տնտեսությունում Հնդկաստանի դերի ամրապնդմանը:

Նյու Դելիի արձանագրած հաջողությունների գործում նկատելի դեր է խաղացել նաև պետություն-փորձագիտական հանրույթ համագործակցությունը: Բազմաթիվ երկրների փորձից հայտնի է, որ նման մշակույթի առկայությունը, փաստերի և փորձագիտության վրա հիմնված որոշումների կայացման մոտեցումը որակապես բարելավում են երկրի արտաքին և ներքին քաղաքականությունը[35]: Այս առումով, դեռևս նախորդ դարի կեսերից Հնդկաստանի կառավարության հատկապես տնտեսության ոլորտի պատասխանատուների, որոշում կայացնողների, իսկ մյուս կողմից՝ ակադեմիական հաստատությունների և ուղեղային կենտրոնների միջև ձևավորված սերտ փոխգործակցությունը նպաստեց քաղաքականության արդյունավետությունը[36]: Այս համատեքստում հիմնավորված է որոշ հետազոտողների պնդումն առ այն, որ տնտեսական ազատականացումը հետագայում դրական ազդեցություն ունեցավ նաև Հնդկաստանի արտաքին քաղաքականության մշակման գործում ուղեղային կենտրոնների դերակատարության ընդլայնման վրա, ինչը, մասնավորապես, դրսևորվում էր Քաշմիրի շուրջ հակամարտության պարագայում, երբ Իսլամաբադի հետ խաղաղ կարգավորման և երկխոսության հաստատման գործընթացում Նյու Դելին մեծապես խթանում էր երկրի ուղեղային կենտրոնների մասնակցությունը[37]:

Սառը պատերազմի ավարտից հետո Հնդկաստանը կանգնած էր իր արտաքին քաղաքականությունը նոր աշխարհաքաղաքական իրողություններին

[34] Keenleyside, T.A. (1987). Diplomatic Apprenticeship: Pre-Independence Origins of Indian Diplomacy and Its Relevance for the Post-Independence Foreign Policy. *India Quarterly, 43*(2), 97-120, https://doi.org/10.1177/097492848704300202

[35] Տե՛ս Աթոյան, Վ. (2019), Ուղեղային կենտրոններ. ռազմավարական գաղափարների դարբնոցները // Եր., «Զանգակ» հրատ., 216 էջ:

[36] Hasan, M.R. (2012). *Foreign Policy and Strategic Issues: Think Tanks in US and South Asia (India, Pakistan, Afghanistan, Bangladesh, Nepal, and Sri Lanka).* New Delhi: New Century Publications. P. 78.

[37] Bhatnagar, S., & Chacko, P. (2020). Peacebuilding think tanks, Indian foreign policy and the Kashmir conflict. In *Rising Powers and State Transformation* (pp. 100-119). London: Routledge.

հարմարեցնելու անհրաժեշտության առաջ: Այս ընթացքում Հնդկաստանը ակտիվորեն աշխատել է երկկողմ հարաբերություններն ամրապնդելու ուղղությամբ, այդ թվում՝ ԱՄՆ-ի և Եվրամիության երկրների հետ, ինչպես նաև շարունակել է զարգացնել ավանդական կապերը Ռուսաստանի և ԱՊՀ երկրների հետ[38]: Բացի այդ, մասնակցությունը տարածաշրջանային նախաձեռնություններին, ինչպիսին է Հարավային Ասիայի տարածաշրջանային համագործակցության ընկերակցությունը, նույնպես կարևորվում և արտացոլում է Հնդկաստանի՝ տարածաշրջանային և գլոբալ քաղաքականության մեջ ակտիվ դեր խաղալու ցանկությունը[39]՝ ուղղված տնտեսական համագործակցության ամրապնդմանը, տարածաշրջանային հակամարտությունների լուծմանն ու ինտեգրմանը, ինչպես նաև զարգացմանը միտված նախաձեռնությունների խթանմանը:

Որոշ փորձագիտական գնահատականների համաձայն՝ Հնդկաստանի արտաքին քաղաքականության փոփոխությունները տեղի են ունեցել միջազգային համակարգի փոփոխության արդյունքում: Ի պատասխան միաբևեռ աշխարհակարգի՝ Հնդկաստանը 1990-ականներին ընդունեց «ռազմավարական ինքնավարությունը»՝ որպես առավել նախընտրելի ռազմավարություն: 20-րդ դարավերջում, երբ աշխարհում սկսեցին ի հայտ գալ ուժային այլ կենտրոններ, առաջացավ նոր ռազմավարության անհրաժեշտություն: Այսպիսով՝ միջազգային համակարգում դեպի իշխանության ապակենտրոնացման դրաշրջան անցումը պայմաններ ստեղծեց ռազմավարական ինքնավարությունը «ռազմավարական գործընկերության» մոտեցմամբ փոխարինելու համար[40]:

Հատկանշական է, որ Հնդկաստանը մշտապես փորձում է ակտիվորեն հարմարվել գլոբալ տեղաշարժերին, ներառյալ Չինաստանի աննախադեպ աշխարհաքաղաքական վերելքին և Հնդկախաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ռազմավարական նշանակության մեծացման իրողությանը: Չինաստանի ազդեցությունը հավասարակշռելու համար Հնդկաստանը խորացնում է իր ռազմավարական գործընկերությունն այլ խոշոր տերությունների հետ և ակտիվորեն մասնակցում է տարածաշրջանային նախաձեռնություններին, որոնք ուղղված են Հնդկախաղաղօվկիանոսյան տարածաշրջանում անվտանգության և տնտեսական համագործակցության ամրապնդմանը: ԵՒս արտացոլում է Հնդկաստանի ցանկությունը՝ ավելի ակտիվ դեր խաղալ տարածաշրջանային անվտանգության և համագործակցության ճարտարապետության ձևավորման գործում[41]:

[38] Assanbayev, M. (2023). Central Asia in the Foreign Policy Strategy of India. *Central Asia's Affairs. Quarterly Analytical Review, 1*(89), 32-40, https://doi.org/10.52536/2788-5909.2023-2.03

[39] Տե՛ս Shaumian, T. (1988). India's Foreign Policy: Interaction of Global and Regional Aspects. *Asian Survey, 28*(11), 1161-1169, https://doi.org/10.2307/2644506; Hall, I. (2016). Multialignment and Indian foreign policy under Narendra Modi. *The Round Table, 105*(3), 271-286, https://doi.org/10.1080/00358533.2016.1180760

[40] Chandra, V. (2017). Modi Government and Changing Patterns in Indian Foreign Policy. *Jadavpur Journal of International Relations, 21*(2), p. 113, https://doi.org/10.1177/0973598417731241

[41] Alam, A. (2017). India, Non-alignment and Emerging Global Governance. *India Quarterly, 73*(3), 273-291, https://doi.org/10.1177/0974928417716210



Գծապատկեր 1.2

Հյուսիս-հարավ միջազգային տրանսպորտային միջանցք

Վերոնշյալի համատեքստում պետք է դիտարկել նաև Հնդկաստանի ակտիվ նախաձեռնողականությունը գլոբալ առևտրատնտեսական նախագծերի առաջմղման հարցում, ինչը ևս խոսում է երկրի աճող աշխարհատնտեսական նշանակության մասին: Այս առումով, պետք է առանձնացնել հատկապես Հյուսիս-հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի (ՀՀՄՏՄ) և Հնդկաստան-Միջին Արևելք-Եվրոպա (ՀՄԱԵ) մեգանախագծերը: Հարկ է նշել, որ ՀՀՄՏՄ-ն (գծապատկեր 1.2.) ծովային, երկաթուղային և ավտոմոբիլային երթուղիների բազմագործառութային ցանց է, որը նախատեսված է Հնդկաստանի, Ռուսաստանի, Իրանի, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջև բեռնափոխադրումների համար: Վերջինս նախագծված է՝ դյուրացնելու առևտուրը և բարելավելու կապը այդ տարածաշրջանների խոշոր քաղաքների և նավահանգիստների միջև: ՀՀՄՏՄ հիմնական նպատակն է նվազեցնել տրանսպորտային ծախսերը և մասնակից երկրների միջև տարանցման ժամանակը՝ առաջարկելով ավանդական ծովային ուղիների համեմատությամբ առավել մրցունակ և էապես ավելի կարճ տրանսպորտային ճանապարհ: Այսպես՝ նախատեսվում է, որ նոր միջանցքը կլինի 30%-ով նվազ ծախսատար և 40%-ով ավելի կարճ[42]:

[42] Raju, J.J. (2023, November 19). International North–South Transport Corridor (INSTC). *ClearIAS*, https://www.clearias.com/international-north-south-transport-corridor-instc/



Գծապատկեր 1.3 **Հնդկաստան-Միջին Արևելք-Եվրոպա տրանսպորտային միջանցք**

Ինչ վերաբերում է ՀՄԱԵ նախագծին (գծապատկեր 1.3), նշենք, որ այդ միջանցքի նպատակն է Ասիայի, Պարսից ծոցի և Եվրոպայի միջև ինտեգրման միջոցով խթանել տնտեսական զարգացումը: Դրա շրջանակներում նախատեսվում է երկաթգծային և ծովային ցանցերի միջոցով ամրապնդել տրանսպորտային և հաղորդակցական կապերը Եվրոպայի և Ասիայի միջև: ՀՄԱԵ-ն կապահովի տարածաշրջանային մատակարարման շղթաների զործառնումը, կմեծացնի առևտրի հասանելիությունը, կբարելավի առևտրի դյուրացումը՝ շեշտադրելով բնապահպանական, սոցիալական և կառավարչական ազդեցությունների հարցերը, որոնք համահունչ են կայուն զարգացման նպատակներին[43]: Պատահական չէ, որ այս նախագիծը նույնպես հաճախ դիտարկվում է որպես ռազմավարական պատասխան Չինաստանի «Գոտի և ճանապարհ» մեգանախագծին[44]:

Հարկ է նշել, որ Հնդկաստանի և ԱՄՆ-ի հարաբերությունները զգալիորեն ամրապնդվել են վերջին տասնամյակների ընթացքում՝ վերածվելով ռազմավարական գործընկերության, որն ընդգրկում է պաշտպանական ոլորտում համագործակցությունը, առևտուրը, ներդրումները և գլոբալ մարտահրավերներին դիմագրավմանն ուղղված համատեղ ջանքերը: Այս համատեքստում հատրին դիմագրավմանն ուղղված համատեղ ջանքերը: Այս համատեքստում հատկանշական է, որ դեռևս երեք տասնամյակ առաջ այս երկու տերությունների

[43] *New economic corridor to connect Asia, Europe & US.* (2023, September 10). The New Indian Express, https://www.newindianexpress.com/thesundaystandard/2023/Sep/10/new-economic-corridor-to-connect-asia-europe-us-2613322.html

[44] Siddiqui, H. (2023, September 10). World leaders launch India-Middle East-Europe Economic Corridor seen as counter to China's BRI. *Financial Express*, https://www.financialexpress.com/business/defence-world-leaders-launch-india-middle-east-europe-economic-corridor-seen-as-counter-to-chinas-bri-3238862/

հնարավոր մերձեցման մասին իր նշանավոր աշխատությունում նշել էր նաև ամերիկացի հայտնի քաղաքագետ Սամուել Հանթինգտոնը: Նրա խոսքով՝ ժամանակի ընթացքում ամերիկա-պակիստանյան հարաբերություններում սառեցումը և Չինաստանին զսպելու գործում ընդհանուր հետաքրքրությունը, ամենայն հավանականությամբ, կմոտեցնեն Հնդկաստանին և ԱՄՆ-ին[45]:

Հնդկաստանի և ԱՄՆ-ի հարաբերությունները հատկապես նոր թափ ստացան 2005 թվականին երկու երկրների միջև քաղաքացիական միջուկային համաձայնագրի ստորագրմամբ[46] և պաշտպանական ոլորտում կապերի ընդլայնմամբ: Այս առումով, հետաքրքրական է ակադեմիական շրջանակներում առկա այն կարծիքը, ըստ որի՝ երկու երկրների միջև քաղաքացիական միջուկային համաձայնագրի ստորագրմամբ Հնդկաստանը հրաժարվեց իր նախկին «չմիավորվող» կեցվածքից, ինչին Նյու Դելին ստիպված էր գնալ Իսլամաբադի և Պեկինի մերձեցումը հակակշռելու համար[47]:

Խնդրի քննարկման համատեքստում ուշագրավ է նաև ամերիկացի մեկ այլ հայտնի քաղաքագետ, ԱՄՆ-ի նախագահի ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական (1977-1981) Զբիգնև Բժեզինսկու դիտարկումը, ըստ որի Հնդկաստանի քաղաքական վերնախավին առաջնորդում են ռազմավարական հավակնությունները, որոնք հանգում են համաշխարհային ազդեցության ընդլայնմանը և իրենց տարածաշրջանում գերիշխանության ապահովմանը: 21-րդ դարի առաջին տասնամյակում հնդկա-ամերիկյան հարաբերությունների աստիճանական բարելավումը նույնպես ամրապնդեց Հնդկաստանի համաշխարհային կարգավիճակը՝ բավարարելով նրա հավակնությունները: Այնուամենայնիվ, առավել ընդարձակ աշխարհաքաղաքական ձգտումներից նրան զսպում է Պակիստանի հետ չմարող հակամարտությունը, որի մասն է Աֆղանստանում ազդեցության համար պայքարը[48]:

Ինչևէ, ԱՄՆ-Հնդկաստան հարաբերություններում առկա են նաև որոշ խնդիրներ: Մասնավորապես՝ ԱՄՆ-ում մտահոգություններ են առաջանում վարչապետ Մոդիի կառավարման օրոք Հնդկաստանի ժողովրդավարական հետընթացի կապակցությամբ, որոնք պայմանավորված են փոքրամասնությունների իրավունքների ճնշման, մարդու իրավունքների առումով ոչ միանշանակ ընկալվող օրենքների ընդունման և ենթադրյալ արտադատական գործունեության հետ: Չնայած այս մարտահրավերներին, աշխարհաքաղաքական նկատառումներով պայմանավորված՝ ռազմավարական գործընկերությունը երկու երկրների հարաբերություններում պահպանվում է և ունի ա-

[45] Хантингтон, С. (2003). *Столкновение цивилизаций.* Пер. с англ. Т. Велимеева, Ю. Новикова. М.: ООО «Издательство АСТ», с. 394.

[46] Տե՛ս Joint statement between President George W. Bush and Prime Minister Manmohan Singh. (2005, July 20). *The White House*, https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2005/07/20050718-6.html

[47] Ասսել, Ֆ. (2024). *Ուժի ուղիները. աշխարհաքաղաքականությունը 21-րդ դարում*// Թարգմ.՝ Լ. Բեյանի, Եր., Newmag, էջ 219:

[48] Бжезинский, Зб. (2013). *Стратегический взгляд: Америка и глобальный кризис.* Пер. с англ. М. Десятовой. М.: АСТ, с. 32-33.

ռանցքային աշխարհաքաղաքական նշանակություն[49]:

Հնդկաստանը ակտիվորեն համագործակցում է նաև Եվրամիության հետ: Վերջիններս փոխգործակցում են այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առևտուրը, ներդրումները, կրթությունը և կլիմայի փուխոխությունը՝ ձգտելով խորացնել իրենց ռազմավարական գործընկերությունը: Միաժամանակ, Ռուսաստանը շարունակում է մնալ Հնդկաստանի հիմնական ռազմավարական գործընկերներից մեկը[50], հատկապես պաշտպանության, միջուկային էներգիայի և տիեզերքի ոլորտներում: Պատահական չէ, որ Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի տվյալներով ներկայումս Նյու Դելիի զենքի գլխավոր մատակարարը Մոսկվան է՝ Հնդկաստանի զենքի ներմուծման 36% մասնաբաժնով[51]: Այս հարաբերությունները հիմնված են երկու տերությունների միջև դեռևս Խորհրդային Միության ժամանակներից ձևավորված սերտ և բազմոլորտ համագործակցության ավանդույթների վրա ու շարունակում են զարգանալ ժամանակակից միջազգային իրադրության պայմաններում:

Բարդ, բայց միաժամանակ բազմակողմանի են մնում Հնդկաստան-Չինաստան հարաբերությունները, ներառյալ՝ տնտեսական համագործակցությունը, տարածաշրջանային ռազմավարական մրցակցությունը և տարածքային վեճերը: Այս առումով, Հնդկաստանի ռազմավարական գործընկերությունն այլ երկրների, այդ թվում՝ ԱՄՆ-ի և Ճապոնիայի հետ, մասամբ պայմանավորված է տարածաշրջանում Չինաստանի ազդեցությունը հավասարակշռելու ցանկությամբ: Հնդկաստանը փորձում է կանխել Չինաստանի գերիշխանությունը նաև Հնդկական օվկիանոսում և թույլ չտալ, որ Պեկինը ամրապնդի գործընկերությունն իր հակառակորդ Իսլամաբադի հետ: Այս նպատակով Հնդկաստանը ԱՄՆ-ի, Ավստրալիայի և Սինգապուրի հետ զարգացնում է բազմակողմանի ռազմածովային համագործակցությունը, մասնակցում զորավարժությունների, միաժամանակ տարբեր երկրներից, մասնավորապես՝ Իսրայելից և Ֆրանսիայից ձեռք է բերում զգալի քանակությամբ նոր սարքավորումներ[52]:

Հնդկաստանը հատուկ կարևորություն է տալիս նաև Հարավարևելյան Ասիայի պետությունների ընկերակցության հետ հարաբերությունների ամրապնդմանը, այդ թվում՝ «Գործել Արևելքում» քաղաքականության միջոցով, որն ուղղված է այդ տարածաշրջանում տնտեսական և ռազմավարական համագործակցության ընդլայնմանը: Մյուս կողմից՝ Հնդկաստանի ռազմավարական գործընկերությունը Մերձավոր Արևելքի երկրների հետ ներառում է էներգետիկ համագործակցությունը, առևտուրը և ներդրումները, ինչպես նաև համագործակցությունը անվտանգության ոլորտում:

Հատկանշական է, որ 20-րդ դարի վերջին քառորդից և հատկապես սառը պատերազմի ավարտից հետո միջազգային հարաբերություններում «կոշտ» ուժին ապավինելու հարացույցը աստիճանաբար փոխակերպվում է՝ խնդիրները կարգավորելու և ազգային շահերն ու արտաքին քաղաքական նպատակները «փափուկ» և «խելացի» ուժի գործիքակազմերով առաջ մղելու նախապատվությամբ: Ավելորդ չէ նշել, որ ամերիկացի հայտնի քաղաքագետ Ջոզեֆ Նայը դա սահմանում է որպես «կոշտ» և «փափուկ» ուժի ռեսուրսները գործողությունների արդյունավետ ծրագրի մեջ համադրելու կարողություն[53]: Այս առումով, միջազգային հարաբերություններում հատուկ նշանակություն են ստանում թվային դիվանագիտության և կիբեռանվտանգության հիմնահարցերը: Հաշվի առնելով արձանագրվող միտումները՝ Հնդկաստանը նույնպես ակտիվորեն աշխատում է թվային դիվանագիտության գործիքակազմի կիրառման ընդլայնման[54] և կիբեռանվտանգության ոլորտում իր կարողությունների ամրապնդման[55] ուղղությամբ, որոնց նպատակն է գլոբալ թվային տիրույթում սեփական շահերի պաշտպանությունն ու այս ոլորտում միջազգային համագործակցությունը: Որոշակիորեն տվյալ համատեքստում կարելի է դիտարկել նաև Հնդկաստանի խորհրդարանի կողմից 2023 թ. ընդունված՝ «Թվային անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը, որը միտված է կարգավորելու թվային անհատական տվյալների մշակումն այնպիսի սկզբունքով, որ ճանաչվի ինչպես առանձին անհատների անհատական տվյալների պաշտպանության իրավունքը, այնպես էլ օրինական նպատակներով այդ անհատական տվյալների մշակման անհրաժեշտությունը[56]:

«Փափուկ ուժի» գործիքակազմի կիրառման, այլ երկրների հետ երկխոսության զարգացման, որպես ձգողականության և ազդեցության գլոբալ կենտրոն հանդես գալու, ինչպես նաև միջազգային նշանակության գաղափարներին, իմաստների և պատումների (նարատիվների) գեներացման առանցք դիրքի, իմաստների և պատումների (նարատիվների) գեներացման առանցք դիրքի, համաձայնությունների կայացման համատեքստում հարկ է կարևորել նաև Նյու Դելիի ակտիվ նաև պաշտպանության համատեքստում հարկ է կարևորել նաև Նյու Դելիի ակտիվ նաև խաղաղապահ գործողությունների

համաժողովը: Վերջինս աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հարցերին նվիրված՝ Հնդկաստանի նախաձեռնած առանցքային համաժողովն է, որը միտված է միջազգային հանրության առջև ծառացած խնդիրների լուծմանը: Այսպես՝ 2024 թ. փետրվարին կայացած «Ռաիսինա երկխոսություն» իններորդ համաժողովին մասնակցել է ավելի քան 100 երկրի ներկայացուցիչ, այդ թվում՝ նախարարներ, պետությունների նախկին ղեկավարներ և կառավարությունների ղեկավարներ, ինչպես նաև ռազմական ոլորտի, գործարար, ակադեմիական, լրագրողական համայնքների ներկայացուցիչներ և ուղեղային կենտրոնների փորձագետներ[57]:

Հնդկաստանի արտաքին քաղաքականության վերլուծության համատեքստում կարևոր է նշել, որ վերջինս ակտիվորեն մասնակցում է նաև միջազգային կազմակերպությունների գործունեությանը՝ պաշտպանելով զարգացող երկրների շահերը, խթանելով գլոբալ խնդիրների լուծման հարցերում բազմակողմ մոտեցումները և ձգտելով բարելավել գլոբալ կառավարումը: Այս համատեքստում հարկ է հիշատակել 2023 թվականից Նյու Դելիի կողմից կազմակերպվող «Հարավի ձայն» վիրտուալ գագաթնաժողովը, որի նպատակն է ուշադրություն հրավիրել զարգացող երկրների հիմնախնդիրների վրա: Համաժողովը հարթակ է զարգացող երկրների շահերի, առաջնահերթությունների քննարկման և դրանց մտահոգող կարևորագույն հիմնախնդիրների հարցում լուծումներ գտնելու համար[58]: Հատկանշական է, որ 2023 թ. հունվարին կայացած գագաթնաժողովին մասնակցել և ելույթ է ունեցել նաև ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը[59]:

Միաժամանակ, Հնդկաստանի մասնակցությունը ԲՐԻԿՍ-ին և Քսանի խմբին ընդգծում է երկրի՝ միջազգային կայունությանն ու զարգացմանը նպաստող գլոբալ դերակատարի կարգավիճակը: Բացի այդ, կայացող ուժային կենտրոնի իր կարգավիճակն ընդգծելու համար Հնդկաստանը ակտիվորեն մասնակցում է գլոբալ կառավարման ինստիտուտների (ՄԱԿ, ԱՄՀ, Համաշխարհային բանկ և այլն) բարեփոխմանը և ակտիվ դիրքորոշում արտահայտում գլոբալ հանրային բարիքների, այդ թվում՝ միջազգային անվտանգության, համաշխարհային առևտրի և կլիմայի փոփոխության հարցերի առնչությամբ[60]: Այս համատեքստում պատահական չեն ամերիկյան հայտնի *U.S. News & World Reporter* կազմակերպության 2023 թվականի վարկանշումների արդյունքները, որտեղ Հնդկաստանը աշխարհի ամենաազդեցիկ պետությունների շարքում զբաղեցրել է 12-րդ հորիզոնականը: Հավելենք, որ վարկանշա-

[57] Raisina Dialogue 2024. (2024, February 20). Ministry of External Affairs, Government of India, https://www.mea.gov.in/press-releases.htm?dtl/37644/raisina+dialogue+2024

[58] Voice of Global South Summit 2023. (2023, November 11). Ministry of External Affairs, Government of India, https://www.mea.gov.in/voice-of-global-summit.htm

[59] **ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի ելույթը «Հարավի ձայն» վիրտուալ գագաթնաժողովին** // ՀՀ ԱԳՆ, **հունվարի** 12, 2023, https://www.mfa.am/hy/speeches/2023/01/12/SouthVirtualSummit/11816.

[60] Kruck, A., & Zangl, B. (2020). The Adjustment of International Institutions to Global Power Shifts: A Framework for Analysis. *Global Policy, 11*, 5-16, https://doi.org/10.1111/1758-5899.12865

վորման շրջանակներում իրականացված հետազոտությանը մասնակցել է 17 հազար մարդ՝ աշխարհի 87 երկրից: Վարկանիշը գնահատում է երկրների ազդեցությունը, որը հիմնված է հարցվածների ընկալումների վրա այնպիսի գործոնների մասին, ինչպիսիք են քաղաքական, տնտեսական և ռազմական հզորությունը[61]:

Այնուամենայնիվ, գլոբալ կառավարման մեջ Հնդկաստանի աճող դերը, նոր հնարավորությունների հետ մեկտեղ, ընդգծում է նաև առկա մարտահրավերները: Այս համատեքստում տնտեսական զարգացումը, տեխնոլոգիական նորարարությունները և տարածաշրջանային անվտանգության ամրապնդումը առանցքային ոլորտներից են: Բացի այդ, Հնդկաստանի ներքին մարտահրավերներից են սոցիալ-տնտեսական նշանակալի անհավասարությունը և բնապահպանական ռիսկերը, ինչն էական խոչընդոտ է որպես գլոբալ ուժային կենտրոն ամրապնդվելու հարցերում: Նյու Դելին բախվում է բնապահպանական լուրջ մարտահրավերների՝ կապված թափոնների առաջացման, դրանց անբավարար հավաքման, փոխադրման, մշակման և հեռացման հետ: Երկրի ներկայիս համակարգերը չեն կարողանում հաղթահարել քաղաքային աճող բնակչության կողմից առաջացրած թափոնների ծավալները, ինչը մեծապես ազդում է շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա: Այս առումով, մեթանի արդյունահանման կամ ջերմային մաքրման միջոցով աղբավայրից էներգիա ստանալու ներուժը մեծ հնարավորություններ կարող է ստեղծել երկրի համար, սակայն այդ հարցում հիմնական խոչընդոտը որակյալ ճարտարագետների և բնապահպանական ոլորտի մասնագետների պակասն է[62]: Հետևաբար՝ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության նկատմամբ համապատասխան մոտեցումների մշակումը և առկա բնապահպանական ռիսկերին արդյունավետ արձագանքը կարող է էական նշանակություն ունենալ Հնդկաստանի միջազգային մրցունակության պահպանման և զարգացման գործում[63]:

Հնդկաստանի արտաքին քաղաքականության հիմնահարցերի քննարկման համատեքստում հարկ է որոշակիորեն անդրադառնալ նաև արտերկրում բնակվող հնդկական համայնքների նշանակությանն ու դերակատարությանը: Այսպես՝ 2022 թ. ՄԱԿ-ի կողմից հրապարակված զեկույցի համաձայն, հնդիկ միգրանտների թիվն աշխարհում գրեթե 18 միլիոն է, ինչը ամենաարձր ցուցանիշն է աշխարհում[64]: Առավել հատկանշական են Հնդկաստանի արտաքին


[61] **The world's most powerful countries. (2023, September 6). U.S. News & World Reporter,** https://www.usnews.com/news/best-countries/rankings/power

[62] Kumar, S., Smith, S.R., Fowler, G., Velis, C., Kumar, S.J., Arya, S., Rena, Kumar, R., & Cheeseman, C. (2017). Challenges and opportunities associated with waste management in India. *Royal Society Open Science, 4*(3), 160764, https://doi.org/10.1098/rsos.160764

[63] Chu, E. (2018). Transnational Support for Urban Climate Adaptation: Emerging Forms of Agency and Dependency. *Global Environmental Politics, 18*(3), 25-46, https://doi.org/10.1162/glep_a_00467

[64] McAuliffe, M., & Triandafyllidou, A. (eds.). (2021). *World Migration Report 2022.* International Organization for Migration (IOM), Geneva, p. 25, https://publications.iom.int/books/world-migration-report-2022

գործերի նախարարության հրապարակած տվյալները, ըստ որոնց Հնդկաստանից դուրս բնակվող հնդիկների թիվը շուրջ 32.3 միլիոն է[65] (գծապատկեր 1.4):



Գծապատկեր 1.4 **Հնդկական սփյուռքի խոշորագույն համայնքները[66]**

Վերոնշյալի համատեքստում պատահական չէ, որ հնդկական սփյուռքը հաճախ համարվում է աշխարհի մյուս բոլոր սփյուռքներից ոչ միայն ամենամեծը, այլև առավել ազդեցիկը[67], ինչը, ազգային շահերի առաջմղման առումով, հավելյալ կարողություններ է ձևավորում Նյու Դելիի համար՝ այլ երկրների և տարածաշրջանների վրա ազդեցության տարածման դիտանկյունից:

Հնդկաստանի համար սփյուռքի նշանակությունը մեկ այլ տեսակետից գնահատելու համար նշենք, որ Համաշխարհային բանկի կողմից հրապարակված տվյալներով 2023 թվականին դրամական փոխանցումներ ստացած երկրների շարքում Հնդկաստանը 125 միլիարդ ԱՄՆ դոլար ցուցանիշով աշխարհում առաջին տեղում է: Հավելենք, որ Հնդկաստան դրամական փոխանցումների շուրջ 36%-ը ապահովել են ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Սինգապուրի հնդկական սփյուռքի ներկայացուցիչները[68]:

[65] Population of overseas Indians. (2023, May 10). Ministry of External Affairs, Government of India, https://www.mea.gov.in/population-of-overseas-indians.htm

[66] Պատրաստել է հեղինակը Հնդկաստանի ԱԳՆ հրապարակած տվյալների հիման վրա:

[67] Տե՛ս India's diaspora is bigger and more influential than any in history. (2023, June 16). *The Economist*, https://www.economist.com/international/2023/06/12/indias-diaspora-is-bigger-and-more-influential-than-any-in-history

[68] Ratha, D., Chandra, V., Kim, E.J., Plaza, S., & Shaw. W. (2023). Migration and Development Brief 39: Leveraging Diaspora Finances for Private Capital Mobilization. *World Bank*, Washington, DC, p. 4, https://knomad.org/sites/default/files/publication-doc/migration_development_brief_39.pdf

Դրամական փոխանցումներից և տնտեսական ներդրումներից բացի, հնդկական սփյուռքը ծառայում է որպես «փափուկ» ուժի կարևոր ակտիվ՝ բարձրացնելով Հնդկաստանի հեղինակությունը արտերկրում: Հատկանշական է, որ արտերկրում հնդիկ աշխատողները հաճախ ընկալվում են որպես խաղաղասեր, հանդուրժող և աշխատասեր, ինչը նշանակալիորեն բարելավում է Նյու Դելիի հեղինակությունը և դյուրացնում հնդկական հոծ համայնքներ ունեցող երկրների հետ երկկողմ հարաբերությունները[69]: Պատահական չէ, որ Հնդկաստանի կառավարությունը սփյուռքի ներուժի համախմբման, երկրի զարգացման գործում ներգրավման և նրանց աջակցելու նպատակով պարբերաբար հանդես է գալիս տարբեր նախաձեռնություններով[70]: Միաժամանակ գործում են հատուկ հարթակներ և լրատվական գործակալություններ, որոնց նպատակն է համախմբել և փոխկապակցել աշխարհասփյուռ հնդկական համայնքները[71]:

Սփյուռքի գործոնի կարևորման համատեքստում հատկապես պետք է հիշատակել յուրաքանչյուր տարվա հունվարի 9-ին նշվող հնդկական սփյուռքի օրը (Pravasi Bharatiya Divas), որը նշանավորում է վերջինիս ներդրումը Հնդկաստանի զարգացման գործում: Հարկ է նշել, որ օրվա ընտրությունը նույնպես պատահական չէ. 1915 թ. հունվարի 9-ի Մահաթմա Գանդին Հարավային Աֆրիկայից վերադառնում է Հնդկաստան, որով սկզբնավորվում է բրիտանական կայսրության կառավարումից երկրի ազատագրական շարժումը: Հավելենք, որ երկու տարին մեկ այդ օրը կազմակերպվում են համաժողովներ, որոնք համախմբում են հնդկական սփյուռքի նշանավոր անդամներին և Հնդկաստանի վերնախավի ներկայացուցիչներին՝ քննարկելու իրենց պատմական հայրենիքին առնչվող տարբեր հարցեր և համագործակցության հնարավորություններ՝ մշակույթի, կրթության, գործարարության և այլ ոլորտներում[72]:

Այսպիսով՝ ամբողջացնելով քննարկված հարցերը՝ փորձենք ձևակերպել ժամանակակից Հնդկաստանի արտաքին քաղաքականության հիմնական մոտեցումները:

1. *Ճկուն ռազմավարական ինքնավարություն.* այս մոտեցումը և ռազմավարական ինքնավարության ձգտումը առանցքային նշանակություն են ունեցել Հնդկաստանի անկախությունից ի վեր վարվող արտաքին քաղաքականության մեջ: Դա ենթադրում է Նյու Դելիի ցանկությունը՝ պահպանել անկախություն արտաքին քաղաքական որոշումներ կայացնելու հարցում և խուսափել ռազմաքաղաքական դաշինքներում ներգրավվելուց, ինչը թույլ է

[69] Pethiyagoda, K. (2017, June 15). How India's diaspora affects its role in a multipolar Middle East. *The Brookings Institution*, https://www.brookings.edu/articles/how-indias-diaspora-affects-its-role-in-a-multipolar-middle-east/

[70] Տե՛ս Indian Diaspora: All you need to know. (2022, December 30). *ClearIAS*, https://www.clearias.com/indian-diaspora/

[71] Տե՛ս Indian Diaspora: Community platform for the global Indian Diaspora, https://indiandiaspora.org/

[72] Pravasi Bharatiya Divas. (2024, January 2). Ministry of External Affairs, Government of India, https://www.mea.gov.in/pravasi-bharatiya-divas.htm

տալիս երկրին միջազգային ասպարեզում պահպանել գործողությունների ազատությունը[73]: Այս մոտեցումը ձևակերպվել է Հնդկաստանի առաջին վարչապետ Ջավահարլալ Ներուի կողմից և շարունակում է առաջ մղվել՝ հարմարեցվելով հարափոփոխ միջազգային գործընթացներին և պայմաններին:

2. *Պանչշելի սկզբունքները.* դրանք առաջին անգամ ձևակերպվել են 1954 թվականին՝ Հնդկաստանի և Չինաստանի միջև կնքված պայմանագրում և ներառում են հարգանք տարածքային ամբողջականության և ինքնիշխանության նկատմամբ, ինչպես նաև չհարձակման, այլ երկրների ներքին գործերին չմիջամտելու, խաղաղ գոյակցության և փոխշահավետ համագործակցության մոտեցումները: Այս սկզբունքներն առաջարկվել են որպես փոխադարձ հարգանքի հիմք՝ անկախ երկրների քաղաքական, սոցիալական և տնտեսական համակարգերից: Պանչշելի սկզբունքները հիմք են հանդիսացել նաև այլ պետությունների հետ հարաբերությունների կառուցման համար և շարունակում են կարևոր դեր խաղալ Նյու Դելիի արտաքին քաղաքականության մոտեցումներում: Այսպես՝ հիմնվելով Պանչշելի սկզբունքների վրա, Հնդկաստանի քաղաքականությունը միտված է բազմաբևեռ աշխարհի գաղափարի առաջմղմանը[74]:

3. *Հարավ-Հարավ համագործակցությունը.* Հնդկաստանը ակտիվորեն խթանում է Հարավ-Հարավ համագործակցությունը՝ որպես զարգացող երկրների միջև փոխգործակցության և համերաշխության ամրապնդման միջոց: Այս մոտեցումն ընդգծում է տնտեսական և տեխնիկական համագործակցության, գիտելիքի և փորձի փոխանակման կարևորությունը կայուն զարգացման և աղքատության կրճատման համար: Հնդկաստանը մեծապես կարևորում է այս ձևաչափը՝ դիտարկելով այն որպես գլոբալ հարավում իր ազդեցությունն ամրապնդելու համար արտաքին քաղաքականության կարևոր գործիք:

4. *«Նախևառաջ հարևանները».* 2014 թ. Նարենդրա Մոդիի՝ երկրի վարչապետ ընտրվելուց հետո արդիականացված այս հայեցակարգն ընդգծում է Հնդկաստանի հանձնառությունը՝ ամրապնդելու հարևան երկրների հետ հարաբերությունները, ապահովելու տարածաշրջանային կայունությունն ու բարգավաճումը և ամրապնդելու երկրի՝ որպես գլոբալ տերության կարգավիճակը[75]: Ընդլայնված հարևանության քաղաքականության միջոցով Հնդկաստանը նպատակ ունի զարգացնելու տնտեսական համագործակցությունը, լուծելու անդրսահմանային խնդիրները, ամրապնդելու անվտանգության ոլորտում կապերը և նպաստելու տարածաշրջանային ինտեգրմանը:

[73] Տե՛ս Bapat, J. (2022). COVID-19 and the Russia-Ukraine Conflict: Emergence of India as a Global Leader. *Jindal Journal of Public Policy, 6*(2), p. 84.

[74] Dahiya, R. (2015). [Review of Competing Visions of India in World Politics: India's Rise Beyond the West, by K. Sullivan]. *Indian Foreign Affairs Journal, 10*(4), 383–386, http://www.jstor.org/stable/45341062

[75] Песцов, С.К. (2023). Регионализм как тактика: политика Индии «Соседство прежде всего». *Россия и АТР, 3*, с. 9-36, http://doi.org/10.24412/1026-8804-2023-3-9-36

5. *«Գործել Արևելքում».* այս քաղաքականությունն ուղղված է Հնդկաստանի տնտեսական և ռազմավարական կապերի խորացմանը Արևելյան և Հարավարևելյան Ասիայի երկրների հետ: Դա 1990-ականներին մեկնարկած «Հայացք դեպի արևելք» քաղաքականության ընդլայնումն ու խորացումն է և ընդգծում է Հնդկախաղաղօվկիանոսյան տարածաշրջանի կարևորությունը Նյու Դելիի համար ինչպես տնտեսական, այնպես էլ առավել լայն՝ ռազմավարական իմաստով:

Հայաստան-Հնդկաստան. երկկողմ քաղաքական հարաբերությունների ուրվագծերը: Հնդկաստանի արտաքին քաղաքականության քննարկման համատեքստում հարկ է անդրադառնալ նաև Հայաստան-Հնդկաստան երկկողմ քաղաքական հարաբերություններին: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992 թվականի օգոստոսի 31-ին: Այնուամենայնիվ, երկու երկրների միջև պատմական կապերը հայտնի են դեռևս հին ժամանակներից, երբ Հայաստանով անցնում էին Հնդկաստանը Եվրոպայի հետ կապող առևտրային ուղիները: Միջնադարում հայկական Արտաշատ, Մծբին և Դվին քաղաքները դարձել էին Հնդկաստանի հետ փոխանակման կարևոր կենտրոններ. վերջինս թանկարժեք քարեր, դեղաբույսեր և քարեր էր արտահանում Հայաստան և ներկրում կաշի ու ներկանյութեր[76]: Երկկողմ պատմական նշանակության իրադարձություններից հարկ է հիշատակել 1783 թվականին Մադրասում հայ իրավունքի կարևորագույն աշխատություններից մեկի՝ «Որոգայթ փառաց»-ի հրատարակումը, որում առաջին անգամ ձևակերպվել են սահմանադրական հանրապետության և խորհրդարանական կառավարման հիմնական դրույթները[77]:

Խորհրդային Միության տարիներին հայ-հնդկական հարաբերությունները միջնորդավորված էին և հիմնականում սահմանափակվում էին կրթական և մշակութային կապերով: Այնուամենայնիվ, Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության գոյության ժամանակահատվածում երկկողմ հարաբերությունները նշանավորվել են 1964 թ. Հնդկաստանի նախագահ Ս. Ռադակրիշնանի և 1976 թ. վարչապետ Ինդիրա Գանդիի Երևան այցելություններով:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո սկսվեց երկկողմ հարաբերությունների զարգացման նոր փուլ: Այս առումով, հարկ է հիշատակել Հայաստանի նախկին երեք նախագահների, համապատասխանաբար՝ 1995, 2003 և 2017 թվականներին, ինչպես նաև օրենսդիր և գործադիր իշխանության բազմաթիվ այլ բարձրաստիճան ներկայացուցիչների Նյու Դելի իրականացրած այցերը: Հնդկական կողմից Հայաստան իրականացված այցերից հարկ է հիշատակել 2005 թվականին՝ երկրի փոխնախագահ, խորհրդարանի վերին

[76] Brief on India-Armenia relations, Embassy of India, Yerevan. *Ministry of External Affairs, Government of India*, https://www.mea.gov.in/Portal/ForeignRelation/India-ArmeniaFebruary_2024.pdf

[77] Թանանյան, Գ. (2013), «Որոգայթ փառաց» (Հրատարակման 230-ամյակի առթիվ) // *Պատմաբանասիրական հանդես, 2*, էջ 145-164:

պալատի խոսնակի, 2017 թվականին՝ փոխնախագահ, խորհրդարանի վերին պալատի նախագահի և 2021 թվականին՝ Հնդկաստանի արտաքին գործերի նախարար Սուբրամանյամ Ջայշանկարի այցերը Հայաստան: Ավելորդ չէ նշել նաև, որ երկու երկրների միջև ստորագրվել են մի քանի տասնյակ համաձայնագրեր և երկկողմ հարաբերություններին առնչվող այլ փաստաթղթեր[78]:

Վերջին տարիներին զգալի ակտիվացում է նկատվում Երևանի և Նյու Դելիի տնտեսական կապերում և հատկապես Հնդկաստանից ներմուծման շարժընթացում (գծապատկեր 1.5): Հայաստանը աջակցություն է հայտնել նաև Հնդկաստանին Եվրոպայի հետ կապող այլընտրանքային առևտրային ճանապարհի ձևավորման հարցում[79], որոնցից է, մասնավորապես, ՀՀՄՏՄ գլոբալ նախագիծը: Ինչպես նշել ենք վերևում, վերջինս հաճախ դիտարկվում է որպես Չինաստանի առաջ քաշած «Գոտի և ճանապարհ» մեգանախագծի հակակշիռ: Այս առումով, դեռևս անորոշ է, թե ինչպիսի փոխազդեցության մեջ են լինելու այդ երկու նախագծերը, և արդյո՞ք Երևանը հնարավորություն կունենա որոշակի մասնակցություն ունենալու երկու նախագծին էլ[80], թե՞ որոշակի պայմանների դեպքում ստիպած կլինի դրանց միջև ընտրություն կատարելու: Որոշ փորձագիտական գնահատականների համաձայն՝ այդ հարցը մեծապես կախված կլինի Ասիայի երկու հսկաների փոխհարաբերություններից և այլ գլոբալ զարգացումներից[81]: Այս համատեքստում հետաքրքրական է նաև քաղաքագետ Եղիա Թաշճեանի դիտարկումն առ այն, որ իր անբավարար ենթակառուցվածքների պատճառով Հայաստանն արդեն իսկ չի կարողացել մասնակցել Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությանը, իսկ չինական ներդրումները շրջանցեցին Երևանը և կենտրոնացան Բաքվի վրա: Նրա խոսքով՝ սա ձեռնտու էր Հնդկաստանին, քանի որ Հայաստանն իր տնտեսական և քաղաքական կապերը բազմազանեցնելու նպատակով ձգտում է կապեր հաստատել արագ զարգացող ասիական երկրների հետ[82], ինչը Նյու Դելիի համար այս ուղղությամբ որոշակի հնարավորություններ է ստեղծում:


[78] «Երկկողմ հարաբերություններ. Հնդկաստան» // ՀՀ արտաքին գործերի նախարարությ https://www.mfa.am/hy/bilateral-relations/in

[79] Amid Houthi strikes on Red Sea, Armenia offers alternative sea trade route to India. (2024, Febr 21). ANI News, https://aninews.in/news/world/asia/amid-houthi-strikes-on-red-sea-armenia-offers-alternative-sea-trade-route-to-india20240221220707/

[80] «Գոտի և ճանապարհ» նախագծին Հայաստանի մասնակցության հնարավորությունների մասին տե՛ս Աթոյան, Վ., Հովսեփյան, Մ., Առուստամյան, Տ., և Պետրոսյան, Ն. (2021), *Հայաստան-Չինաստան փոխադարձաբար ձեռնտու հարաբերությունների հեռանկարները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի շրջանակներում* // Եր., «Տնտեսագետ» հրատ. («Ամբերդ» մատեն. 49), 118 էջ, https://doi.org/10.52174/978-9939-61-239-3, EDN: YTDDDV

[81] Տե՛ս Gnerre, O.M. (2022). The Economic Triangulation Beijing-Yerevan-New Delhi: Cooperation or Competition? *Bulletin of the Institute of Oriental Studies, 2*(2), 124-134, https://doi.org/10.52837/27382702-2022.2-124

[82] Tashjian, Y. (2022, October 5). *Armenia–India relations: From politics to arms trade.* The Armenian Weekly, https://armenianweekly.com/2022/10/05/armenia-india-relations-from-politics-to-arms-trade/



Գծապատկեր 1.5

Հայաստանի և Հնդկաստանի միջև ապրանքաշրջանառության ծավալները[83]

Երկու երկրներն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում տեղեկատվական տեխնոլոգիաների և հատկապես ռազմատեխնիկական ոլորտում համագործակցությանը: Հարկ է նշել, որ այն բանից հետո, երբ Թուրքիան և Պակիստանը բազմակողմ աջակցություն ցուցաբերեցին Ադրբեջանին 2020 թ. 44-օրյա արցախյան պատերազմում, իսկ Ռուսաստանի ռազմական ներգրավվածությունն Ուկրաինայում սահմանափակեց հայկական բանակը վերազինելու նրա հնարավորությունն ու որոշակիորեն խմբագրեց ինչպես Մոսկվայի, այնպես էլ Երևանի արտաքին քաղաքական շեշտադրումները, Հայաստանը, իր անվտանգային խնդիրները լուծելու նպատակով, սկսեց արտաքին այլ գործընկերներ փնտրել: Այս առումով, կարևոր քայլ էր Նյու Դելիի հետ ռազմատեխնիկական համագործակցության զարգացումը և հատկապես վերջին տարիներին Երևանի կողմից զենքի նոր մատակարարներ փնտրելու համատեքստում Հնդկաստանից 250 միլիոն ԱՄՆ դոլարի զենք գնելու մասին պայմանավորվածությունը[84], ինչը, որոշ հետազոտողների կարծիքով, Հայաստանի համար կարող է նաև որոշակի հնարավորություններ ստեղծել ժամանակակից ռազմական տեխնոլոգիաներին հասանելիություն ապահովելու հարցում[85]:

[83] ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք, https://www.mfa.am/hy/bilateral-relations/in

[84] India to export Pinaka rocket launchers, ammunition to Armenia in $250m deal: Report. (2022, September 29). *WION*, https://www.wionews.com/india-news/india-to-export-pinaka-system-other-ammunitions-to-armenia-under-250m-deal-report-520819

[85] Nazaryan, H. (2023). Military-Technical Cooperation between the Republic of Armenia and the Republic of India. *The POLITNOMOS. Journal of Political and Legal Studies, 1*(1), 21-32, https://doi.org/10.54503/2953-8165-2023.1(1)-21

Վերոնշյալի համատեքստում հատկանշական է նաև 2024 թվականի հունվարին Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնի Նյու Դելիի պետական այցի ընթացքում ստորագրված՝ Հնդկաստանի հետ ռազմարդյունաբերական ոլորտում համագործակցության մասին փաստաթղթի բովանդակությունը[86], որը նախատեսում է համատեղ արտադրանքը մատակարարել նաև բարեկամական երկրներին: Որոշ փորձագիտական գնահատականների համաձայն՝ հաշվի առնելով Երևանի՝ Փարիզի և Նյու Դելիի հետ հարաբերությունների բարձր մակարդակը, այդ շահառու երկրների ցանկում կարող է լինել նաև Հայաստանը[87]: Վերջինիս հնարավորության մասին է վկայում նաև այն, որ Հայաստան-Հնդկաստան-Ֆրանսիա համագործակցության հարցը քննարկվել է նաև «Ռաիսինա երկխոսություն - 2024» համաժողովի «Հայ-հնդկական երկխոսություն» նիստի շրջանակներում [88]: Միաժամանակ, Հայաստանն ու Հնդկաստանը ուղիներ են որոնում Երևան - Նյու Դելի - Թեհրան և Երևան - Նյու Դելի – Աթենք - Փարիզ բազմակողմ ձևաչափերում համագործակցություն սկսելու համար[89]:

Երևանի և Նյու Դելիի արագ զարգացող հարաբերությունների մասին է վկայում նաև հնդկական *IADN* լրատվամիջոցի տեղեկատվությունը, որ Հնդկաստանը ռազմավարական կարևորության արտահանումների համար դեպի Հայաստան օդային միջանցք է ստեղծում: Միաժամանակ ձևավորվում է աշխատանքային խումբ, որի նպատակն է ամրապնդել երկու երկրների միջև լոգիստիկան[90]:

Պետք է նշել, որ, միջազգային հարաբերությունների ռեալիզմի տեսության համաձայն, պետությունները գործում են՝ ելնելով ռացիոնալ սեփական շահերից [91], ուստի, պետությունների միջև դաշնակցային հարաբերությունների ձևավորումը առավելապես կախված է շահերի համընկնումից: Այս առումով, Հայաստանն [92] ու Հնդկաստանը բացառություն չեն, և Նյու Դելիի կողմից

[86] Transcript of Special Briefing by Foreign Secretary on the visit of President of France to India. (2024, January 26). *Ministry of External Affairs, Government of India*, https://www.mea.gov.in/incoming-visit-detail.htm?37533/Transcript+of+Special+Briefing+by+Foreign+Secretary+on+the+visit+of+President+of+France+to+India+January+26+2024

[87] **«Углубление сотрудничества Франция – Индия: перспективы для Армении» // АРВАК, Армянский аналитический центр,** 31.01.2024, https://arvak.am/wp-content/uploads/2024/01/Bogdan-Atanesyan_Franco_Indian-cooperation-and-Armenia_Rus.pdf

[88] **«Հայ-հնդկական երկխոսության շրջանակում քննարկվել են համագործակցության հնարավորությունները նաև վերականգնվող էներգիայի ու ենթակառուցվածքների ոլորտներում» // *«Արմենպրես»*,** 23.02.2024, https://armenpress.am/arm/news/1130943.html

[89] Poghosyan, B., & Anand, R. (2024, March 21). Time to transform Armenia – India cooperation into a strategic partnership. *CIVILNET*. https://www.civilnet.am/en/news/768808/time-to-transform-armenia-india-cooperation-into-a-strategic-partnership/

[90] India establishes Air Corridor to Armenia to handle exports of strategic importance. (2024, March 10). *News IADN*, https://x.com/NewsIADN/status/1766826433652167093?s=20

[91] Political Realism in International Relations. (2023, October 9). *Stanford Encyclopedia of Philosophy*, https://plato.stanford.edu/entries/realism-intl-relations/

[92] Տե՛ս Atoyan, V., Brosius, L., & Hovyan, V. (2023). Comparative Analysis of National Security Strategies of Armenia in the Context of Political Realism, Liberalism, and Marxism. *Journal of Political Science: Bulletin*

Երևանին զենքի վաճառքը և, առավել լայն առումով՝ երկկողմ օրակարգի նկատմամբ ուշադրության մեծացումը նույնպես պետք չէ դիտարկել ընթացիկ գործարքի և զուտ բիզնեսի տրամաբանության շրջանակներում: Հնդիկ վերլուծաբանների պնդմամբ՝ այս հարաբերություններն ունեն աշխարհաքաղաքական հիմք, քանի որ Հնդկաստանը նպատակ ունի գլոբալ առումով հաստատվել որպես հուսալի պաշտպանական խաղացող և ապահովել իր ազգային շահերը տարածաշրջանում՝ զսպելով Պակիստանին, Թուրքիային և նրանց կրտսեր գործընկեր Ադրբեջանին[93]: Սա է փաստում նաև հնդկական հայտնի *Observer Research Foundation* ուղեղային կենտրոնի փորձագետ Ադիտյա Բհանը, ով «Ռաիսինա երկխոսություն - 2022» համաժողովի ընթացքում նշել է, որ Անկարայից կառավարվող պանթյուրքական կայսրություն ստեղծելու Թուրքիայի կայսերական նպատակը նկատելի է ժամանակակից Կովկասում և Եվրասիայի այլ մասերում: Միաժամանակ, Հնդկաստանը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում բացահայտորեն դիրքավորվել է Հայաստանի կողքին, հետևաբար՝ որոշել է դիմակայել Ադրբեջանին և նրա աջակիցներին, այդ թվում՝ Թուրքիային և Պակիստանին[94]: Բացի այդ, 2023 թվականին Հայաստանի կիրառական քաղաքականության հետազոտական ինստիտուտի («ԱՊՐԻ Արմենիա») կողմից կազմակերպված համաժողովի ընթացքում համանման դիտարկում է արել նաև Ջավահարլալ Ներուի համալսարանի Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ Ամիթաբ Սինկխը: Նրա խոսքով՝ Անկարան և Նյու Դելին հակադիր դիրքորոշում ունեն Քաշմիրի հարցում, և, միաժամանակ, Թուրքիայի հատկապես ներկայիս ղեկավարությունը հետապնդում է նորօսմանական նպատակներ, ինչն ազդեցություն է ունենում նաև Հնդկաստանի վրա, ուստի, սա խնդիր է ոչ միայն Հայաստանի և այլ երկրների, այլև Հնդկաստանի համար[95]:

Ի դեպ, ավելորդ չէ նշել, որ հիշատակված «ԱՊՐԻ Արմենիա» ուղեղային կենտրոնը նույնպես նշանակալի աշխատանք է կատարում երկու երկրների փորձագիտական շրջանակների միջև կապերի զարգացման գործում՝ առաջ մղելով երկկողմ հետաքրքրություն ներկայացնող օրակարգային հարցեր[96]:

of Yerevan University, *2*(3(6), 11–31, https://doi.org/10.46991/JOPS/2023.2.6.011, ինչպես նաև՝ Атоян, В.К. (2015). **Внешнеполитический выбор Армении: политика обеспечения максимальной безопасности.** *Проблемы постсоветского пространства*, 3(5), с. 96-120. EDN UXWWVB

[93] Tashjian, Y. (2023, August 9). *The geopolitical implications of India's arms sale to Armenia*. The Armenian Weekly, https://armenianweekly.com/2023/08/09/the-geopolitical-implications-of-indias-arms-sale-to-armenia/

[94] Bhan, A. (2022, November 1). *India's PINAKA export to Armenia positions it against pan-Turkism*. Observer Research Foundation, https://www.orfonline.org/expert-speak/indias-pinaka-export-to-armenia-positions-it-against-pan-turkism

[95] APRI Armenia. (2023). *2023 APRI Forum: Lessons from the G20 for Small States* [Video]. Vimeo, https://vimeo.com/883483765/61656f112b?share=copy

[96] **«Ի՞նչ դեր ունեն վերլուծական կենտրոնները արտաքին քաղաքականության մշակման մեջ»,** Անահիտ Փիլիպոսյան // *Ժողովրդավարություն*, փոդքաստ, 18.01.2024, https://podcasters.spotify.com/pod/show/demsecurity/episodes/11-e2ejof4.

Հնդկաստանի հետ քաղաքական կապերի խորացումը բնական է նաև այն համատեքստում, որ այս երկիրը ռազմավարական գործընկերություն ունի Ռուսաստանի, ԱՄՆ-ի և սերտ համագործակցություն է զարգացնում Իրանի հետ[97]: Միաժամանակ, Մոսկվայի և Նյու Դելիի շահերը Հարավային Կովկասում ոչ միայն չեն բախվում, այլև փոխլրացնում են իրար[98], ինչը Երևանի համար հնարավորություններ է ստեղծում դիրքավորվելու ոչ թե աշխարհաքաղաքական կենտրոններից որևէ մեկի հետ հակադրության, այլ այդ հարաբերությունների համադրման հարթությունում:

Թեև երկու երկրների հարաբերություններում արձանագրվում է դրական շարժընթաց, սակայն հարկ է նշել նաև ուշադրության արժանի որոշ այլ հարցեր: Այսպես՝ մեծապես կարևորելով ռազմատեխնիկական ոլորտում հայ-հնդկական համագործակցությունը, այնուամենայնիվ, հարկ է ուշադրություն դարձնել փորձագիտական շրջանակներում հնդկական արտադրության զենքի որակի և հուսալիության մասին երբեմն բարձրաձայնվող մտահոգություններին[99], որոնք, հաշվի առնելով խնդրի ռազմավարական նշանակությունը և կայացվող որոշումների հնարավոր հետևանքները, պետք է մշտապես Երևանի դիտարկման կենտրոնում լինեն:

Միաժամանակ, երկկողմ հարաբերությունների բնականոն զարգացման և երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում էական դեր ունի նաև Երևանի կողմից միգրացիոն հոսքերի արդյունավետ կառավարման խնդիրը, ինչը նույնպես, հատկապես վերջին տարիներին, Հնդկաստանից տասնյակ հազարավոր[100] աշխատանքային միգրանտների ներհոսքով պայմանավորված, հասարակության տարբեր շերտերի և փորձագիտական շրջանակների քննարկման և որոշակի մտահոգության առարկա է դարձել: Այսպես՝ պաշտոնական տվյալներով, 2023 թ. միայն առաջին ինը ամիսների տվյալներով, Հնդկաստանի քաղաքացիների Հայաստան մուտքի և ելքի դրական հաշվեկշիռը կազմել է 11 հազար[101]:

[97] Poghosyan, B., & Anand, R. (2024, March 21). *Time to transform Armenia – India cooperation into a strategic partnership*. CIVILNET, https://www.civilnet.am/en/news/768808/time-to-transform-armenia-india-cooperation-into-a-strategic-partnership/

[98] Вахланг, Д., Мелконян, С., Индия на Южном Кавказе: значение для России, Ирана и Турции // *Российский совет по международным делам*, 30.01.2024, https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/indiya-na-yuzhnom-kavkaze-znachenie-dlya-rossii-irana-i-turtsii/

[99] Տե՛ս Kumar, M. (2023, June 26). *India's defense indigenization: an emerging arms exporter?*. South Asian Voices, https://southasianvoices.org/indias-defense-indigenization/

[100] «20–30 հազար հնդիկ աշխատանքային միգրանտ կա ՀՀ-ում. գրոսաշրջիկներ քիչ են գալիս». Քերոբյան // *Sputnik Արմենիա*, 20.11.2023, https://armeniasputnik.am/20231120/2030-hazar-hndik-ashkhatanqajin-migrant-ka-hhum-zbyosashrjikner-qich-en-galis-qervobjan-68859898.html

[101] Մակարյան, Վ. (2024, նոյեմբերի 20). Արմեն Ղազարյան. « 2023-ի ընթացքում պլյուս 11 հազար հնդիկ է եկել Հայաստան, 32000 ՌԴ քաղաքացի էլ դարձել է ՀՀ օրինական բնակիչ» // *MediaHub*, https://mediahub.am/post/3ee3ba87e93a4812?fbclid=IwARIhalRnlMzkFMZRQhlU3D-xBj3ggEmKCJpX2FOod-XbwgjOaugEvKEXMX0

Ամփոփելով նշենք, որ Նյու Դելիի և Երևանի հարաբերություններն օժտված են մեծ ներուժով և ունեն ռազմավարական նշանակություն: Հնդկաստանի համար Հայաստանը կարևոր գործընկեր է Հարավային Կովկասում, հատկապես Իսլամաբադի հետ հակամարտային հարաբերություններում թուրք-ադրբեջանական գործոնը մասնակիորեն զսպելու, իր ռազմական արտադրանքի և տնտեսական նախագծերի առաջմղման հարցում, իսկ Երևանի համար Նյու Դելիի հետ փոխգործակցությունը տարածաշրջանում ուժային հավասարակշռության անհամաչափությունը որոշակիորեն շտկելու, ինչպես նաև քննարկվող տնտեսական նախագծերին մասնակցելու հնարավորություն է: Ակներև է, որ, չնայած որոշ խնդիրներին, երկու կողմերը շահագրգռված են համագործակցության հետագա խորացման հարցում՝ տնտեսությունից ու կրթությունից մինչև անվտանգություն և պաշտպանություն, ինչը իրատեսական է դարձնում ապագայում երկկողմ հարաբերությունները որակապես նոր մակարդակի բարձրացնելու հնարավորությունը:

Ամփոփում: Հնդկաստանի արտաքին քաղաքականությունը երկար ճանապարհ է անցել 1947 թվականի անկախությունից ի վեր՝ ենթարկվելով զգալի փոփոխությունների և հարմարվելով աշխարհաքաղաքական հարափոփոխ պայմաններին: Գլոբալ հարցերում Նյու Դելիի դերակատարումն ամրապնդվել է նրա ակտիվ մասնակցությամբ միջազգային կազմակերպություններում, այդ թվում՝ ռազմավարական գործընկերությունների հաստատման և գլոբալ մարտահրավերներին դիմակայելու գործում երկրի ունեցած ներդրման շնորհիվ:

Հնդկաստանի արտաքին քաղաքականության պատմական էվոլյուցիայի վերլուծությունը ցույց է տալիս դաշնակցային հարաբերությունների հաստատման հարցում խուսափողական մոտեցումից դեպի առավել ակտիվ գլոբալ դերակատարություն ստանձնող և պատասխանատու տերության կարգավիճակին անցումը:

Այնուամենայնիվ, անվտանգային մարտահրավերները, ինչպիսիք են սահմանային վեճերը և անհավասարությունը, տարածաշրջանում աճող մրցակցությունը, շարունակում են մնալ Նյու Դելիի արտաքին քաղաքականության ուշադրության կենտրոնում: Չինաստանի և Պակիստանի հետ սահմանային վեճերն ու Պեկինի աճող ազդեցության զսպման հրամայականը Նյու Դելիից պահանջում են դրսևորել ռազմավարական զգոնություն և հետևողականորեն ուժեղացնել պաշտպանական համակարգը: Նշված խնդիրների կարևորությունն արտահայտվում է ռազմավարական գործընկերությունների ամրապնդման և ռազմական արդյունաբերության զարգացմանն ուղղված Հնդկաստանի ակտիվ ջանքերով:

Գլոբալ խաղացողի կարգավիճակի ամրապնդումը Նյու Դելիից պահանջում է դրսևորել ռազմավարական ճկունություն արտաքին քաղաքականության ոլորտում և նորարարական մոտեցում ապահովել տնտեսական ու տեխ-

նոլոգիական ոլորտներում՝ շարունակական ակտիվ մասնակցություն ունենալով առանցքային միջազգային կազմակերպությունների աշխատանքներում և գլոբալ նախաձեռնություններում: Այս առումով, տնտեսական դիվանագիտությունը կենտրոնական տեղ է զբաղեցնում Հնդկաստանի արտաքին քաղաքականության մեջ, որն ուղղված է օտարերկրյա ներդրումների ներգրավմանը և բազմակողմ առևտրային համաձայնագրերին մասնակցելուն: Միաժամանակ, Նյու Դելին ակտիվորեն մասնակցում է ազատ առևտրի բանակցություններին և ձգտում է բազմազանեցնել իր տնտեսական կապերը՝ երկրի տնտեսական զարգացումը խթանելու նպատակով: Այդ համատեքստում գլոբալ նախագծերի հնարավոր իրագործումը, ինչպիսիք են, օրինակ՝ ՀՀՄՏՄ-ն կամ ՀՄԱԵ-ն, նույնպես կարող է նշանակալից դեր խաղալ Հնդկաստանի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական կարևորության բարձրացման գործում:

Նյու Դելին մեծ նշանակություն է տալիս նաև կլիմայի փոփոխության դեմ պայքարին և ակտիվորեն մասնակցում է այդ ոլորտում միջազգային նախաձեռնություններին, որոնցից է Միջազգային արևային դաշինքը: Երկիրն աջակցում է կայուն զարգացմանը և կանաչ տեխնոլոգիաների ներդրմանը, ինչը նոր հնարավորություններ է ապահովում էկոլոգիայի ոլորտում միջազգային համագործակցության համար:

Նյու Դելիի և Երևանի հարաբերությունների առնչությամբ պետք է նշել, որ ներկա փուլում դրանք բնութագրվում են ուժեղ դինամիզմով և երկու կողմերի համար ունեն ռազմավարական նշանակություն: Հայաստանի համար երկկողմ հարաբերությունները հատկապես կարևորվում են ազգային պաշտպանության և տարածաշրջանում ուժային հավասարակշռության ապահովման առումով: Մյուս կողմից՝ ինչպես նշեցինք, Հնդկաստանի համար Հայաստանը առանցքային գործընկեր է Հարավային Կովկասում, որը հատկապես կարևորվում է Անկարա-Բաքու-Իսլամաբադ առանցքի ազդեցության որոշակի զսպման, իր ռազմական արտադրանքի սպառման և տնտեսական նախագծերի առաջմղման համատեքստում: Չնայած երկկողմ հարաբերություններում առկա որոշ մտահոգություններին, որոնք կապված են հնդկական զենքի վերաբերյալ որոշ փորձագիտական գնահատականների և Հնդկաստանից Հայաստան աշխատանքային միգրացիայի արդյունավետ կառավարման խնդիրների հետ, Նյու Դելիի և Երևանի հարաբերությունները, համապատասխան մոտեցման և պայմանների պարագայում, բնութագրվում են որակապես նոր մակարդակի բարձրանալու իրական ներուժով:

Աղյուսակ 1.2

Հնդկաստանի հզորությունը պայմանավորող որոշ գործոններ

Ռազմական ուժ	Հնդկաստանը տիրապետում է միջուկային զենքին, և նրա զինված ուժերը աշխարհում ամենամեծաթիվներից են: Նյու Դելին արդիականացնում է իր պաշտպանական կարողությունները, զգալի ներդրումներ է իրականացնում ռազմական նավատորմի, ռազմաօդային ուժերի և ցամաքային զորքերի կարողությունների ընդլայնման ուղղությամբ, ինչպես նաև զարգացնում է իր ռազմարդյունաբերությունը:
Տնտեսական հզորություն	Հնդկաստանն աշխարհի խոշորագույն տնտեսություններից մեկն է: Բնութագրվում է արագ աճող ՀՆԱ-ով, մեծ ու բազմազան արդյունաբերական կարողություններով և զգալի գյուղատնտեսական արտադրանքով: Նյու Դելին համաշխարհային առևտրի, տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների ոլորտներում առանցքային գլոբալ դերակատարներից է: Այնուամենայնիվ, երկիրը բախվում է այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են եկամուտների անհավասարությունը և ենթակառուցվածքների պակասը:
Քաղաքական կայունություն և կառավարում	Հնդկաստանը ժողովրդավարություն ունեցող աշխարհի ամենամեծ երկիրն է և ունի համեմատաբար կայուն քաղաքական համակարգ, ամուր ինստիտուտներ և կառավարման կառույցներ: Այնուամենայնիվ, երկիրը բախվում է մի շարք ներքին մարտահրավերների, այդ թվում՝ կոռուպցիայի և քաղաքական բևեռացման:
Աշխարհաքաղաքական և ռազմավարական դիրք	Հնդկաստանի դիրքը Մերձավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի և Հարավարևելյան Ասիայի միջև այդ երկրին տալիս է ռազմավարական նշանակություն՝ հատկապես էներգետիկ ռեսուրսների և ծովային ուղիների հասանելիության առումով: Նյու Դելին ակտիվորեն մասնակցում է տարածաշրջանային և գլոբալ համաժողովների՝ ձգտելով ընդլայնել իր ազդեցությունը:
Տեխնոլոգիական առաջընթաց	Հնդկաստանն ունի տեղեկատվական տեխնոլոգիաների բարձր զարգացած ոլորտ և նշանակալի առաջընթաց է գրանցում տիեզերական տեխնոլոգիաների, կենսատեխնոլոգիայի և դեղագործության ոլորտներում: Երկիրն ունի հսկայական մտավոր ռեսուրս, որը նպաստում է տեխնոլոգիական հնարավորությունների զարգացմանը:
Փափուկ ուժ	Իր հարուստ մշակութային ժառանգությամբ, Բոլիվուդով, ազգային խոհանոցով և խոշոր սփյուռքի առկայությամբ Հնդկաստանն ունի փափուկ ուժի զգալի կարողություններ: Սփյուռքի գործոնը հատկապես կարևորվում է աշխարհում Նյու Դելիի ազդեցության պրոյեկտման համատեքստում:
Ժողովրդագրություն	Հնդկաստանը աշխարհում ամենաշատ բնակչությունն ունեցող երկիրն է՝ զգալի երիտասարդ աշխատուժով, որը կարող է խթանել տնտեսական աճը: Այնուամենայնիվ, Նյու Դելին բախվում է առողջապահության, կրթության և զբաղվածության հետ կապված մարտահրավերների:
Բնապահպանական և էներգետիկ անվտանգություն	Հնդկաստանն ակտիվորեն աշխատում է իր վերականգնվող էներգիայի հզորությունները մեծացնելու ուղղությամբ, սակայն դեռ մեծապես ապավինում է ածխին և ներմուծում է իր տնտեսության համար անհրաժեշտ նավթի զգալի մասը: Միաժամանակ, բնապահպանական մարտահրավերները և կլիմայի փոփոխությունն ազդում են երկրի գյուղատնտեսության ոլորտի և ընդհանուր կայունության վրա:

Հետախուզական հնարավորություններ	Հնդկաստանն ունի արհեստավարժ հետախուզական կառույցներ, որոնք զբաղվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անվտանգության ապահովման խնդիրներով: Այնուամենայնիվ, Նյու Դելին դեռևս բախվում է անվտանգության ոլորտում զգալի մարտահրավերների, այդ թվում՝ ահաբեկչության և տարածաշրջանային հակամարտությունների:
Իրավական և նորմատիվ դաշտ	Հնդկաստանը միջազգային ինստիտուտների ակտիվ մասնակից է և կողմնակից է գարգացող երկրների շահերի առավել նշանակալի չափով արտահայտմանը, որի շրջանակներում պարբերարար հանդես է գալիս գլոբալ կառավարման կառույցների բարեփոխման օգտին:

Ամփոփելով նշենք՝ հաշվի առնելով Նյու Դելիի հզորությունը պայմանավորող որոշ գործոններ (աղյուսակ 1.2.), վերջինս իր ռազմական, տնտեսական հնարավորությունների, տեխնոլոգիական առաջընթացի և փափուկ ուժի առումով, ժամանակակից միջազգային հարաբերություններում նշանակալի տերություն է: Թեև Հնդկաստանը բախվում է նաև բազմաթիվ մարտահրավերների, այդ թվում՝ տնտեսական, սոցիալական անհավասարության ու շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդիրներին, այնուամենայնիվ, նրա հզոր սփյուռքը, ռազմավարական, աշխարհաքաղաքական դիրքն ու դերը միջազգային կառույցներում ավելացնում են ազդեցության պրոյեկտման վերջնիս կարողությունը ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ մակարդակներում:

Այսպիսով՝ Հնդկաստանի ռազմավարական նշանակությունը համաշխարհային հարթությունում շարունակում է ամրապնդվել՝ ակտիվ արտաքին քաղաքականության, բազմակողմ համագործակցության և փոփոխվող աշխարհակարգին հարմարվելու շնորհիվ: Նյու Դելին ցուցադրում է իր պատրաստակամությունն ու կարողությունը՝ մասնակցելու և առաջնորդելու գլոբալ մարտահրավերների դիմագրավմանն ուղղված միջազգային ջանքերը՝ կլիմայի փոփոխությունից մինչև միջազգային անվտանգություն և տնտեսական զարգացում: Թեև Հնդկաստանին դեռևս չի հաջողվել լուծել երկրի տնտեսական, սոցիալական, բնապահպանական և մի շարք այլ ոլորտներում ծա[illegible]ցած բազմաթիվ ներքին հիմնախնդիրներ, այնուամենայնիվ, համաշխ[illegible]ային քաղաքականության ոլորտում Հնդկաստանի հեռանկարները բավ[illegible]անին հուսադրող են: Նյու Դելիի ակտիվ դիվանագիտությունը, միջազգայ[illegible]ներգրավվածությունը, ռազմավարական գործընկերությունները, ազդեցության տարածման և «փափուկ ուժի» պրոյեկտման աճող հնարավորությունները, ինչպես նաև աշխարհագրական դիրքը, մարդկային աննկարագրելի ռեսուրսները, խոշորագույն սփյուռքի առկայությունը, տնտեսական, տեխնոլոգիական և ռազմական աճող կարողությունները, այդ թվում՝ միջուկային զենքին տիրապետող երկրի կարգավիճակը, ժամանակակից Հնդկաստանի ռազմավարական հզորությունը փաստող գործոններ են, որոնք երաշխավորում են նրա նշանակալից դերակատարությունը ձևավորվող նոր աշխարհակարգում:

1.4 Անվտանգային համակարգը

Ընդհանուր ակնարկ: 1998 թվականին միջուկային զենքի փորձարկումից հետո Հնդկաստանը դարձավ միջուկային գերտերություն, ինչն էլ որոշիչ դեր ունեցավ պետության անվտանգային համակարգի վերաձևման համար: Թեև Հնդկաստանի անվտանգային համակարգն իր ներկա կառուցվածքով և հայեցակարգային ընդգրկումներով, ըստ էության, արդյունք է անվտանգային երկու «շոկերի»՝ 1962 թ. Չինաստանի և 1999 թ. Պակիստանի հետ Կարգիլյան պատերազմի[102], այնուամենայնիվ, անվտանգային արդի համակարգի ճարտարապետությունը պետք է դիտարկել նաև բազմաբևեռ աշխարհում Հնդկաստանի՝ որպես գերտերության դիրքավորման ռազմավարական նպատակադրման համատեքստում, որը, բացի ռազմական առումով հզորանալուց, ենթադրում է նաև տնտեսական և քաղաքական ամուր հիմքերի ձևավորում՝ ազդեցության տիրույթի ընդլայնման համար: Հայեցակարգային առումով շրջադարձային կետն այն գիտակցումն էր, որ ազգային անվտանգությունը չի սահմանափակվում երկրի պետական սահմանների պաշտպանությամբ, և որ անհրաժեշտ է մշակել առավել համապարփակ մոտեցումներ՝ ազգային անվտանգության բոլոր բնագավառներում (ռազմական, տնտեսական, սոցիալական, քաղաքական) առաջացող խնդիրները հասցեագրելու համար [103]: Մասնավորապես՝ Հնդկաստանի իշխանությունների մտահոգությունների կիզակետում է մնում ներքին քաղաքական անկայունության հարցը: Առնվազն երեք ապստամբության օջախներ (Ջամուում և Քաշմիրում, Նաքսալիտի գոտում և երկրի հյուսիս-արևելքում) ժամանակ առ ժամանակ թեժանում են՝ անվտանգային լրացուցիչ խնդիրներ ստեղծելով իշխանությունների համար[104]: Ներքին և արտաքին անվտանգային խնդիրների բազմազանությունը, պետական կարգի, մշակութային և ժողովրդագրական առանձնահատկությունները, փոփոխվող աշխարհաքաղաքական իրողությունները, փաստորեն, ձևավորել են անվտանգային ինքնատիպ համակարգ՝ բազմաթիվ ինստիտուտներով և կառույցներով, փոխգործակցության տեսանկյունից՝ երբեմն ներքին հակասություններով և մրցակցությամբ[105], կառավարման բարդ համակարգով: Անվտանգային համակարգում ներառված հաստատությունների նման բազմազանությունը նկատելիորեն բարդացնում է սույն հետազոտության կատարել ենք՝ հաշվի առնելով գործառույթների կարևորությունը:

[102] P.S. Raghavan. (2019). The Evolution of India's National Security Architecture, Journal of Defence Studies, Vol. 13, No. 3, July-September 2019, pp. 33-52.
[103] Satish Chandra. (2005). National Security System and Reform'. India's National Security: Annual Review 2005, New Delhi: Pentagon Press, 2005, p. 202.
[104] Paul Staniland. (2020). Political Violence in South Asia: The Triumph of the State? Carnegie Endowment for International Peace, September 3, 2020, https://carnegieendowment.org/2020/09/03/political-violence-in-south-asia-triu mph-of-state-pub-82641
[105] Milan Vaishnav. (2024). Institutional Roots of India's Security Policy. Oxford University Press, p. 10.

1.4.1. Զինված ուժերը

Global firepower-2024 համաթվի համաձայն՝ Հնդկաստանը ռազմական հզորությամբ աշխարհում զբաղեցնում է 4-րդ տեղը (ԱՄՆ-ից, Ռուսաստանից և Չինաստանից հետո), իսկ զինված ուժերում ներառված մարդկային կենդանի ուժի թվով աշխարհում երկրորդն է (Չինաստանից հետո)[106]: Զինված ուժերը (ԶՈՒ) համալրվում են բացառապես կամավորության սկզբունքով՝ պայմանագրային պրոֆեսիոնալ զինվորականներով, քանի որ, բնակչության բարդ էթնոկրոնական կառուցվածքով պայմանավորված, բանակի համալրումը պարտադիր զորակոչի միջոցով չափազանց բարդ կլիներ: Սակայն ԶՈՒ-ի անձնակազմն առանձնանում է մարտական և բարոյահոգեբանական պատրաստվածության բարձր մակարդակով, գործում է զինվորական ծառայության համար թեկնածուների ընտրության բավական խիստ գործընթաց, որը ներառում է բժշկական և հոգեբանական բարդ թեստեր: ԶՈւ-ում ծառայելը բավական գրավիչ և բարձր հեղինակություն ունեցող զբաղվածության տեսակ է համարվում Հնդկաստանում: Դա համարվում է պատվաբեր մասնագիտություն, որը հիմնված է հպարտության և հայրենասիրության զգացողությունների վրա, երաշխավորում է ֆինանսական կայունություն և սոցիալական արտոնություններ[107]:

Զինված ուժերը ներկա կառուցվածքով լիովին համահունչ են Հնդկաստանի ռազմական հայեցակարգին, որն անկախացումից հետո աստիճանաբար համապատասխանեցվել է պետության առջև ծառացած ներքին և արտաքին սպառնալիքներին՝ պաշտպանողականից, ըստ էության, վերածվելով հարձակողականի: Թեև անկախացումից հետո վարչապետ Ջավահարլալ Ներուն մեծ ուշադրություն չհատկացրեց պաշտպանության ոլորտին՝ առավել կարևոր համարելով սոցիալական և տնտեսական խնդիրների լուծումը, պաշտպանական հայեցակարգի (դոկտրին) վերանայման անհրաժեշտություն առաջացավ արդեն 1980-ականներին, երբ Հնդկաստանում վերաիմաստավորվեց միջուկային զենքի ռազմավարական նշանակությունը՝ Պակիստանի մեծացող ռազմական հզորությանը հակակշռելու նպատակով:

Հնդկաստանի զինված ուժերի ռազմական հայեցակարգը մշակվում է Պաշտպանության նախարարության կողմից, բայց այն ներառված է Պաշտպանության միացյալ շտաբի (Integrated Defence Staff) «Հնդկական զինված ուժերի միացյալ հայեցակարգում» (Երկրորդ բաժնի, երկրորդ գլխում, որը վերաբերում է հակամարտությունների բնույթին): Հայեցակարգով ռազմական գործողությունների համար տարբերակված է պատերազմի չորս մակարդակ՝ քաղաքական կամ մեծ ռազմավարական, ռազմական ռազմավարական, օպերատիվ և մարտավարական: Ռազմական ռազմավարությունը վերաբերում է

[106] 2024 India Military Strength, https://www.globalfirepower.com/country-military-strength-detail.php?country_id=india

[107] 5 Reasons for Youth Wanting to Join the Indian Army. Read More, https://www.ssbcrack.com/2023/02/reasons-for-youth-wanting-to-join-the-indian-army.html


բացառապես ազգային անվտանգությանը և ազգային շահերին առնչվող խնդիրներին (մասնավորապես՝ պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պահպանմանը): Օպերատիվ մակարդակում գործողությունները պլանավորվում են առանձին հրամանատարությունների (կորպուսների) մակարդակում: Օպերատիվ մակարդակը միավորում է ռազմական ռազմավարությունը ռազմադաշտի մարտավարության հետ՝ ապահովելով հաջողության հասնելու լայն հնարավորություններ ցամաքային, օդային, ծովային և կիբեռտիրույթներում: Հնդկաստանի զինված ուժերի կազմակերպական կառուցվածքը ներկայացված է գծապատկեր 1.6-ում:

Համաձայն Հնդկաստանի Սահմանադրության՝ ԶՈւ-ի գերագույն գլխավոր հրամանատարը երկրի նախագահն է, իսկ պետության պաշտպանունակության ապահովման և ԶՈւ-ի շինարարության գործառույթները վարչապետի և նախարարների իրավասության ներքո են: Պաշտպանության ոլորտում բոլոր կարևոր որոշումներն ուժի մեջ են մտնում նախարարների կաբինետի անվտանգության հարցերով կոմիտեի (որի նախագահը վարչապետն է, իսկ անդամները պաշտպանության, արտաքին և ներքին գործերի, ֆինանսների և արդյունաբերության նախարարներն են) կողմից հաստատելուց հետո: Պաշտպանության նախարարությունը ԶՈւ-ի, ռազմարդյունաբերական համալիրի, ռազմագիտական և ռազմակրթական կազմակերպությունների վարչական կառավարման բարձրագույն մարմինն է: Պաշտպանության նախարարը պատասխանատու է պետության պաշտպանական քաղաքականության, ԶՈՒ-ի տեսակների ամենօրյա գործունեության կազմակերպման և կառավարման, դրանց մարտական կիրառման պլանների համակարգման համար[108]:

Շտաբների ղեկավարների կոմիտեն նշված հարցերով պաշտպանության նախարարության կոլեկտիվ խորհրդատվական մարմին է, որի կազմում են բոլոր տեսակի ԶՈւ-ի շտաբների ղեկավարները: 2020 թվականի հունվարից Հնդկաստանի շտաբների ղեկավարների կոմիտեի նախագահի պաշտոնը համատեղությամբ զբաղեցնում է Հնդկաստանի պաշտպանության շտաբի ղեկավարը, որը Հնդկաստանի ԶՈՒ-ի ամենաբարձրաստիճան զինվորականն է[109]: Պաշտպանության միացյալ շտաբը (որի կազմում ներառված են ԶՈՒ-ի բոլոր տեսակների բարձրաստիճան սպաներ) պատասխանատու է ԶՈՒ-ի տեսակների միջև փոխգործակցության կազմակերպման հայեցակարգային դրույթների, ինչպես նաև ռազմական շինարարության հեռանկարային պլանների հիմնադրույթների մշակման համար:

[108] Бородин А., Вооружённые силы Индии: история становления, современное состояние и перспективы развития (2015). Зарубежное военное обозрение. 2015, №12, с. 18-23.

[109] National Portal of India, https://www.india.gov.in/my-government/whos-who/chiefs-armed-forces



Գծապատկեր 1.6 | Հնդկաստանի զինված ուժերի կազմակերպական կառուցվածքը

Ցամաքային զորքեր

Ցամաքային զորքերը Հնդկաստանի ՋՈՒ-ի հիմնական տեսակն են, որտեղ ծառայում է 1 237 000 մարդ, որոնք ներգրավված են 6 տարածաշրջանային (Կենտրոնական, Հյուսիսային, Արևմտյան, Հարավային, Արևելյան, Արևելյան) և մեկ ուսումնական հրամանատարություններում: Բացակայում են 14 կոմունտերից 4-ը հարձակողական են, 10-ը՝ պաշտպանական, իսկ հատուկ ուժերը ընդգրկված են 8 գումարտակից[110]: Ցամաքային ուժերի կազմն ու կառուցվածքը, ինչպես նաև հիմնական սպառազինության տեսակները ներկայացված են աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 1.3

Հնդկաստանի ցամաքային ուժերի կազմն ու կառուցվածքը

Հրամանատարություն	Կառուցվածք
Կենտրոնական	Ներառում է 1 բանակային կորպուս՝ հետևակային, կամային, զրահատանկային ստորաբաժանումներով:
Հյուսիսային	Ներառում է 3 բանակային կորպուս (14-րդ, 15-րդ, 16-րդ), որոնց կազմում գործում են 5 հետևակային և 2 զրահատանկային դիվիզիաներ, մեկ հրետանային բրիգադ:
Արևմտյան	Ներառում է 3 բանակային կորպուս (2-րդ, 9-րդ, 11-րդ), որոնց կազմում գործում են 1 զրահատանկային, 1 առագաստանավային, 1 լեռնային դիվիզիաներ, ինչպես նաև՝ 4 զրահատանկային բրիգադներ:
Հարավային	Ներառում է հրետանային դիվիզիաներ, ՀՕՊ, զրահատանկային և հատուկ նշանակության բրիգադներ:
Հարավ-արևմտյան	Ներառում է հետևակային դիվիզիա, 12-րդ և 21-րդ բանակային կորպուսներ, զրահատանկային բրիգադ, մեկ ուսումնական դպրոց, կազմում են մեկ զրահատանկային դիվիզիա, ինչպես նաև զրահատանային և 3 հետևակային դիվիզիաներ, հրետանային, վերլուծական, հրետանային, ՀՕՊ և հատուկ նշանակության բրիգադներ:
Հարավային	Ներառում է հետևակային դիվիզիաներ, 3-րդ, 4-րդ և 33-րդ բանակային կորպուսներ, զրահատանկային և հրետանային բրիգադներ:
Արևելյան	Ներառում է հետևակային դիվիզիան, 3-րդ, 4-րդ և 33-րդ բանակային կորպուսներ, զրահատանկային և հրետանային բրիգադներ:

Ցամաքային զորքերին է պատկանում Հնդկաստանի հրթիռային միջոցների մեծ մասը: Ռազմավարական միջուկային հրթիռները, որոնք սահմանափակվում «ցամաք-ցամաք» դասի հրթիռներով, դասակազմված են հետևյալ ստորաբաժանումներում՝

- 700–900 կմ հեռահարության տակտիկական բալիստիկ հրթիռներով (Agni-I) սպասարկվում է 1 բրիգադ, որն ապրի է ընկերության (գնդային) կազմակերպի թիմի, 12):
- Մինչև 2000–3000 կմ հեռահարության միջմայրցամաքային բալիստիկ

[110] The Military Balance 2024, p. 265.

[111] Նույն տեղում, էջ 267:

հրթիռներով (Agni-II և Agni-III) սպառազինված մեկ բրիգադ, որը հնարավորություն է տալիս խոցման թիրախ դիտարկելու նաև զգալի հեռավորության վրա գտնվող հակառակորդի ռազմավարական նշանակության օբյեկտները (մեկնարկային կայանների թիվը՝ 8)։

- Մինչև 350 կմ հեռահարության SS-250 Prithvi-II օպերատիվ-մարտավարական հրթիռների երկու բրիգադ, որոնք Հնդկաստանի ԶՈՒ-ի հիմնական սպառազինություններն են մարտավարական մակարդակում։ Այս հրթիռները համալրված են ինչպես սովորական, այնպես էլ միջուկային մարտագլխիկներով (մեկնարկային կայանների թիվը՝ 42)։
- Ցամաքային տեղակայման թևավոր հրթիռների երեք գունդ՝ համալրված 290500 կմ հեռահարությամբ PJ-10 Brahmos բարձր ճշգրտության գերձայնային հրթիռներով, որոնք արդյունավետ օգտագործվում են ինչպես ցամաքային, այնպես էլ ծովային թիրախները խոցելու համար (մեկնարկային կայանների թիվը՝ 72)։

Թեև նշված համակարգերի շնորհիվ հնդկական բանակը տիրապետում է ամենաբազմազան սպառնալիքներին օպերատիվ արձագանքման լայն հնարավորությունների, այնուամենայնիվ, շարունակում է ռազմավարական տարբեր ծրագրերի շրջանակներում ակտիվորեն արդիականացնել հրթիռային զինանոցը՝ ուշադրություն հատկացնելով ինչպես հարձակողական, այնպես էլ պաշտպանական տեխնոլոգիաների զարգացմանը։ Մասնավորապես՝ շահագործման հանձնելու փուլում է մոտ 3500 կմ հեռահարությամբ Agni IV հրթիռային համակարգը՝ լավարկված ճշգրտությամբ, իսկ ավելի քան 5000 կմ հեռահարությամբ Agni V հրթիռային համակարգը, որը նախատեսված է ռազմավարական զսպման համար, այդ թվում նաև տարածաշրջանից դուրս հնարավոր սպառնալիքների դեպքում, գտնվում է փորձարկումների փուլում։ Բոլոր բալիստիկ հրթիռները նախագծվում և արտադրվում են Հնդկաստանում, բացառությամբ Brahmos թևավոր հրթիռների, որոնք Ռուսաստանի Դաշնության և Հնդկաստանի համատեղ մշակման արդյունք են[112]։

Տարբեր վերլուծաբանների կարծիքով՝ Հնդկաստանի զինված ուժերի հիմնական թերություններից մեկը տարիներ շարունակ եղել է այն, որ ցամաքային ուժերի զգալի մասն օգտագործվել է առավելապես ներքի՝ ստամբությունները ճնշելու և հասարակական կարգն ու անվտանգութ պահելու, այլ ոչ թե երկրի սահմաններից դուրս ուժի ազդեցության տարածման համար։ Որպես հիմնավորում նշվում է այն փաստը, որ ցամաքային զորքերի 35%-ի սպառազինությունները թույլ են տալիս տեղաշարժվել միայն Հնդկաստանի ներսում[113]։ Վերջին տարիներին Հնդկաստանի զինված ուժերում սկսված արդիականացման գործընթացի կարևոր բաղադրիչներից մեկն այդ

[112] Россия и Индия создадут гиперзвуковую ракету, https://www.kommersant.ru/doc/1001809
[113] Hilali, A. Z. (2001). India's Strategic Thinking and Its National Security Policy. Asian Survey, 41:5, pp. 737–764.

թերությունների վերացումն է[114]։

Ռազմաօդային ուժեր

Հնդկաստանի ռազմաօդային ուժերը (ՌՕՈՒ) համարվում են տարածաշրջանում ամենամրցունակներից մեկը։ Շնորհիվ ինստիտուցիոնալ ճկուն կառուցվածքի՝ ռազմաօդային ուժերը մշտապես պատրաստ են արձագանքելու ոչ միայն տարածաշրջանային սպառնալիքներին, այլ նաև օժանդակելու տարբերային աղետների հետևանքների վերացմանը[115], ինչպես նաև ապստամբությունների դեմ պայքարին[116]։ Ռազմաօդային ուժերը որոշիչ դերակատարում են ունեցել և շարունակում են ունենալ անվտանգության «հնդկական» հայեցակարգի ձևավորման վրա։ Տարիներ շարունակ Հնդկաստանի անվտանգային քաղաքականությունը բնորոշվել է որոշակի «զսպվածությամբ», որը հաճախ սահմանափակել է ռազմաօդային ուժերի նախահարձակ կամ կանխարգելող հնարավորությունները։ Առավելապես շեշտադրվել է ռազմաօդային ուժերի պաշտպանողական նշանակությունն ու կարևորությունը, սակայն վերջին տարիների աշխարհաքաղաքական լարվածության մեծացումը տարածաշրջանում ստիպել է վերանայել նման քաղաքականությունը և զարգացնել նաև ռազմաօդային ուժերի հարձակողական հզորությունը։

ՌՕՈՒ-ի անձնակազմը, որը ներառում է մոտ 150 000 զինվորական, բաշխված է յոթ հրամանատարություններում (հինգ ավիացիոն՝ Արևմտյան, Կենտրոնական, Արևելյան, Հարավարևմտյան, Հարավային, ինչպես նաև նյութատեխնիկական ապահովման և ուսումնական)։ Համաձայն The Military Balance-2024 տվյալների[117]՝ ***ռազմական ավիացիան*** ունի կործանիչների 31 էսկադրիլիա՝ 11-ով ավելի պակաս, քան 2023 -ին (որոնցից 12-ը՝ Su-30 MKI, 5-ը՝ Jaguar IB/IS, 3-ական՝ MiG-29 և Mirage 2000, 2-ական՝ Rafale, MiG-21 և Tejas, 1-ը՝ Jaguar IM, 1-ը՝ Global 5000 ISR համակարգ), 32 օժանդակ էսկադրիլիա (որից տրանսպորտային ավիացիա՝ 15 էսկադրիլիա, անօդաչուներ՝ 5 էսկադրիլիա, օդային դիտարկման, կառավարման, լցավորման օդանավեր և ուղղաթիռներ՝ 12 էսկադրիլիա)։ Ռազմական ավիացիայի զարգացման Հնդկաստանի արդի ռազմավարական որոշումներում հստակ արտահայտված է ներմուծումից կախվածության թուլացման քաղաքականությունը՝ մասնավորապես տեղական արտադրության Tejas Mk 1A թեթև մարտական ինքնաթիռների և MK-II կատարելագործված միջին մարտական ինքնաթիռների (Advanced Medium Combat Aircraft) հաշվին[118]։ 2024–2025 թթ. 97 լրացուցիչ

[114] Vaibhav Agrawal (2022). Explained: Indian Army's need for specialised high mobility vehicles for rapid deployment of troops, https://frontierindia.com/explained-indian-armys-need-for-specialised-high-mobility-vehicles-for-rapid-deployment-of-troops/
[115] Dinakar Peri. (2024). Understanding India's Military Modernisation. IDSS Paper, No. 024/2024
[116] Gurmeet Kanwal, (2012). India's Military Modernization. Plans and Strategic Underpinning. The National Buro of Asian Studies, https://www.nbr.org/publication/indias-military-modernization-plans-and-strategic-underpinnings/
[117] The Military Balance 2024, p. 269.
[118] Bhaswar Kumar. Tejas Mk-1A to AMCA: Can IAF fix squadron woes or are delays here to stay? https://www.business-standard.com/external-affairs-defence-security/news/tejas-mk-1a-to-amca-can-iaf-fix-squadron-woes-or-are-delays-here-to-stay-124122500339_1.html

Tejas Mk 1A կործանիչների ձեռքբերումը, ինչպես նաև միջազգային համագործակցությամբ առաջադեմ նոր տարբերակների մշակման պլաններն արտացոլում են տեխնոլոգիական արդիականացման և ինքնաբավության հասնելու նպատակներին հավատարմությունը: Միաժամանակ, Հնդկաստանը փորձում է ՌՕՈՒ ինտեգրել նաև օդուժի այլ բազմապատկիչները, ինչպիսիք են օդաղեսանտային վաղ նախազգուշացման և կառավարման համակարգերը, անօդաչու թռչող սարքերը և առաջադեմ հրթիռային համակարգերը, որպեսզի ուժեղացնի իր ռազմավարական ներկայությունը տարածաշրջանում և աշխարհում: ***Հակաօդային պաշտպանության ուժերը*** բաղկացած են 42 էսկադրիլ հրթիռային համակարգերից (25-ը՝ S-125 Pechora-M, 8-ը՝ Akash, 6-ը՝ Osa-AKM, 3-ը՝ S-400, 2-ը՝ Barak 8 MR-SAM) և շարժական զենիթահրթիռային համակարգերի 10 ստորաբաժանումներից (Igla-1)[119]: Վերջին 10 տարիների ընթացքում Հնդկաստանի ռազմաօդային ուժերը նկատելիորեն արդիականացվել են: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է 2020–2022 թթ. 36 միավոր ֆրանսիական «4.5 սերնդի» Rafale կործանիչների (ընդհանուր 9.2 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ[120]) և ռուսական S-400 զենիթահրթիռային երեք համակարգերի ձեռքբերմանը (որոնցից ևս երկուսի մատակարարումը նախատեսված է 2026 թվականին): Միաժամանակ, Հնդկաստանն արագընթաց զարգացնում է նաև սեփական արտադրության Akash զենիթահրթիռային համակարգերը, որոնց առաջին արտասահմանյան գնորդը Հայաստանն է:

Նկատենք, որ Հնդկաստանի երկու տարածաշրջանային մրցակիցները՝ Չինաստանը և Պակիստանը, նույնպես տիրապետում են ռազմաօդային ուժերի զգալի կարողությունների, որոնք վերջին տարիներն արագ տեմպերով արդիականացվում են (հատկանշական են հատկապես Չինաստանի J-20 անտեսանելի ինքնաթիռի[121] և Պակիստանի հետ համատեղ JF-17 կործանիչների մշակումները[122]): Թեև Հնդկաստանի ռազմաօդային ուժերն ընդհանուր առմամբ ավելի ուժեղ են գնահատվում, քան Պակիստանինը, երկու մրցակիցների՝ այս ոլորտում համագործակցությունը կարելի է դիտարկել որպես լուրջ ռազմավարական մարտահրավեր Հնդկաստանի համար հատկապես երկու ճակատով իրադարձությունների զարգացման սցենարի դեպքում: Ակնհայտ է, որ ապագայում Հնդկաստանի ՌՕՈՒ-ի դերը երկրի պաշտպանական ռազմավարությունում աստիճանաբար ավելի նշանակալի է դառնալու: Տարածաշրջանում անվտանգային միջավայրի սցենարային առավել հավանական զարգացումները Հնդկաստանից պահանջում են շեշտադրել տեխնոլոգիապես առաջադեմ օդուժի զարգացումը, որը պետք է նաև համապատասխանի

[119] The Military Balance 2024, p. 269.
[120] France delivers to India its first Rafale, Speech by H.E. Mrs Florence Parly, French Minister for the Armed Forces. https://in.ambafrance.org/France-delivers-to-India-its-first-Rafale
[121] Jon Harper. China Upgrading Fifth-Gen Fighter Capabilities, https://www.nationaldefensemagazine.org/articles/2021/7/9/china-upgrading--fifth-gen-fighter-capabilities
[122] Anil Chopra. China, Pakistan Aerospace Connect, https://www.usiofindia.org/publication-journal/china-pakistan-aerospace-connect.html

Հնդկաստանի՝ աշխարհաքաղաքական խոշոր ակտորի վերածվելու ավելի լայն ձգտումներին՝ պահպանելով հավասարակշռությունն ՌՕՈՒ-ի մշտական օպերատիվ մարտունակության և ռազմավարական հեռահար նկրտումների միջև:

Ռազմածովային ուժեր

Հայտնի հնդիկ վերլուծաբաններից մեկի պնդմամբ[123] «հնդկական ռազմածովային նավատորմն անգերազանցելի է տարածաշրջանում և ամենահավասարակշռված ռազմածովային ուժն է Հնդկական օվկիանոսի տարածաշրջանում»: Թեև պնդումը կատարվել է 1995 թվականին, այն արդիական է նաև այժմ, քանի որ Հնդկաստանն այսօր էլ ունի հսկայական ստորջրյա նավատորմ՝ արդյունավետ ինտեգրված ռազմաօդային ուժերով (ՌԾՈՒ), վերջրյա նավատորմ՝ հիմնականում սպառազինված հրթիռներով: Հնդկաստանն ակտիվորեն զարգացնում է ինչպես միջուկային, այնպես էլ դիզել-էլեկտրական սուզանավերը՝ ամրապնդելով ստորջրյա նավատորմի հնարավորությունները թե՛ զսպման, թե՛ պարեկելու և թե՛ հետախուզական նպատակներով: Իսկ հնդկական վերջրյա նավատորմը, որը 2013-ին և 2022-ին համալրվել է համապատասխանաբար՝ INS Vikramaditya և INS Vikrant (հնդկական արտադրության առաջին ավիակիրը) ավիակիրներով, հարվածային հնարավորություններով իսկապես անգերազանցելի է տարածաշրջանում: Իհարկե, տարբեր գնահատումներով, Չինաստանի ռազմածովային նավատորմն այս պահին համարվում է ամենամեծն աշխարհում[124], սակայն, հարկ է նկատել, որ Չինաստանի նավատորմի հիմնական ուժերը շարունակում են կենտրոնացած մնալ Հարավչինական ծովում և Խաղաղ օվկիանոսի արևմտյան հատվածում, այլ ոչ թե Հնդկական օվկիանոսում:

Հնդկաստանի առափնյա գծի երկարությունը՝ 7516 կմ, ինչպես նաև աշխարհում մեծությամբ 18-րդը համարվող 2 305 143 կմ² բացառիկ տնտեսական գոտու (EEZ- Exclusive economic zone[125]) առկայությունը իրավամբ լավագույն հիմնավորումն են, թե ինչու պետք է Հնդկաստանն ունենար աշխարհի ամենահզոր նավատորմերից մեկը: Սակայն Հնդկաստանի ռազմածովային ուժերն այլ կարևոր գործառույթներ նույնպես ունեն: Մասնավորապես՝ ձևավորման պահից ի վեր դրանք Հնդկաստանի արտաքին քաղաքականության անփոխարինելի գործիքն են և պետության մեծ ռազմավարության կարևորագույն բաղադրիչը[126]: Միաժամանակ, ՌԾՈՒ հնարավորությունները լայնորեն կիրառվում են ճգնաժամային իրավիճակներում հումանիտար օգնության և տարերային աղետների հետևանքների վերացման աշխատանքներում և մեծ դերակատարում ունեն ծովահենության դեմ պայքարում՝ հատկապես Ադենի

[123] Amit Gupta, "Determining India's Force Structure and Military Doctrine," Asian Survey 35:5 (May 1995), p. 452.
[124] Leviathan: China's new navy | Military | Al Jazeera
[125] Բացառիկ տնտեսական գոտին տեղակայված է Լաբադիվա ծովում գտնվող Լաբշադվիպ կղզինեռում, ինչպես նաև Անդամանյան և Նիկոբարյան կղզիներում, որոնք գտնվում են Անդամանյան ծովում և Բենգալական ծոցում:
[126] Milan Vaishnav. (2024). Institutional Roots of India's Security Policy. Oxford University Press, p. 49.

ծոցում և նավագնացության հանգուցային ուղիների երկայնքով[127]:

Համաձայն The Military Balance-2024-ի՝ Հնդկաստանի ռազմածովային նավատորմի անձնակազմը 75500 հոգի է, որից ռազմածովային ավիացիայում ծառայում է 7000 հոգի, իսկ 1200 հոգի ծովային հետևակայիններ են՝ մասնագիտացված ցամաք–ծով գործողությունների, ներառյալ՝ արագ արձագանքման և էքսպեդիցիոն պատերազմների մասնակցելու համար: Բացի վերոնշյալ ավիակիրներից (INS Vikramaditya և INS Vikrant), որոնք, ըստ էության, ծառայում են որպես լողացող ավիաբազա, ռազմածովային նավատորմում հաշվվում է 16 սովորական (տակտիկական) սուզանավ, որոնցից 5-ը Kalvari (ֆրանսիական Scorpène) դասի, 4-ը՝ Shishumar (գերմանական-209/1500) դասի, 7-ը՝ Sindhughosh (ռուսական Kilo) դասի, ինչպես նաև 1 ռազմավարական սուզանավ՝ 1 Arihant դասի (հնդկական հարվածային միջուկային սուզանավ), որը սպառազինված է 4 ուղղահայաց արձակման հրթիռային համակարգերով, որոնք կարող են արձակել K-15 Sagarika SLBM միջուկային մարտագլխիկներով բալիստիկ հրթիռներ: Ռազմածովային նավատորմը ներառում է նաև 11 էսկադրոնային ականակիրներ (էսմինեցներ), որոնցից 3-ը Rajput դասի՝ տարբեր հրթիռային համակարգերով հագեցած ականակիրներ են, իսկ 8-ը՝ բազմաթիրախային կատարելագործված ականակիրներ՝ համալրված ուղղաթիռներով և կառավարվող հրթիռներով՝ ինչպես հարձակողական, այնպես էլ պաշտպանական գործողությունների համար (ընդ որում, դրանցից 3-ը Delhi դասի ականակիրներ են՝ նախատեսված տարբեր հակաօդային, հականավատորմային և հակասուզանավային ռազմական գործողություններում տարբեր խնդիրներ կատարելու համար, 3-ը՝ քողարկման առաջադեմ հնարավորություններ ապահովող հատուկ կառուցվածքով Kolkata դասի ականակիրներ, իսկ 2-ը՝ բազմաֆունկցիոնալ, քողարկված կառավարմամբ հրթիռներով համալրված առաջադեմ մարտական հնարավորություններով Visakhapatnam դասի ականակիրներ)[128]:

Մանրամասն չանդրադառնալով ՌԾՈՒ զինանոցի բազմաթիվ այլ սպառազինություններին (ֆրեգատներ, կորվետներ, ծովային ավիացիա, երկկենցաղ (դեսանտային) նավեր և այլն)՝ միայն նշենք, որ, տարբեր գնահատումներով, Հնդկաստանը ներկայումս ունի 150-ից ավելի նավեր և սուզանավեր, իսկ ծովային ավիացիայում՝ 300-ից ավելի ինքնաթիռներ[129]: Չնայած առկա հնարավորություններին՝ որոշ փորձագետներ պնդում են, որ պետության ռազմածովային շինարարությունը շարունակում է չհամապատասխանել ազգային պահանջմունքներին, մասնավորապես՝ Արաբական ծովում և Բենգալական ծոցում գտնվող կղզիների պաշտպանությունից բխող իր պարտականությունները կատարելու համար: Հնդկաստանի իշխանությունները նույնպես մշտա-

[127] Indian Navy holds anti-piracy operations in Africa, https://www.tribuneindia.com/news/nation/navy-holds-anti-piracy-op-in-africa-433368/

[128] The Military Balance 2024, p. 267.

[129] Adithya Krishna Menon, Indian Navy, Coast Guard to Get 15 Maritime Patrol Aircraft Based on Airbus C295, February 18, 2024, https://www.navalnews.com/naval-news/2024/02/indiannavy-coast-guard-to-get-15-maritime-patrol-aircraft-based-on-airbus-c-295/

պես շեշտում են, որ իրենց տնտեսական և անվտանգային շահերը սերտորեն փոխկապված են Հնդկախաղաղօվկիանոսյան տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների հետ, քանի որ Հնդկաստանին է պատկանում ծովային ռազմավարական նշանակության ուղիների 40%-ը[130]: Այս հանգամանքը, ինչպես նաև Չինաստանի՝ սեփական ՌԾՈՒ ներուժը, հատկապես ծովային տեղակայման բալիստիկ հրթիռներ արձակելու հնարավորությունները ընդլայնելու փաստը լրացուցիչ հիմնավորում են Հնդկաստանի ձգտումները՝ հասնելու բացարձակ ծովային գերակայության տարածաշրջանում: Ներկայացնենք Հնդկաստանի ՌԾՈՒ՝ առաջիկայում իրականացվելիք նախագծերը (աղյուսակ 1.4)՝ ուրվագծելու համար զարգացման ապագա միտումները՝ դրանց ռազմավարական ազդեցության գնահատման համատեքստում:

Աղյուսակ 1.4

Հնդկաստանի ռազմածովային նավատորմի առաջիկա որոշ նախագծեր[131]

Նախագծեր	Նկարագրություն
INS Surat	Կառավարվող հրթիռներով ավիակիր:
INS Imphal	Գերժամանակակից սպառազինությամբ (ներառյալ՝ «ցամաք-օդ» դասի, հականավատորմային հրթիռներով և տորպեդներով) և զգայուն սարքերով համալրված ավիակիր:
Project -17 Alpha	Հիմնական նպատակն է ընդլայնել արդյունավետ ցրման տիրույթը ռադիոլոկացիոն համակարգերում, ինչպես նաև ծածուկություն ապահովող տեխնոլոգիաները:
S-5 Class Սուզանավեր	Ատոմային սուզանավեր՝ բալիստիկ հրթիռներով: Դրանք հարթակ են հանդիսանալու Boeing P-8I Poseidon արդիականցված ծովային պարեկող ինքնաթիռների (հակասուզանավային պաշտպանության և հետախուզական գործողույթներով) և MQ-9B Sea Guardian ԱԹՍ-ների համար:
Project 75 Alpha	Հայրենական արտադրության հարվածային միջուկային սուզանավեր, որոնց հիմնական նպատակն է ապահովել հակառակորդի նավատորմին և սուզանավերին հակազդեցություն՝ մեծ արագությամբ և ծածուկության պայմաններում: Ակնկալվում է, որ դա կունենա պոմպային ռեակտիվ շարժիչ:

Ընդհանուր առմամբ, Հնդկաստանի կողմից ռազմածովային ուժերի արդիականացման քաղաքականությունը նպատակուղղված է հետևյալ հիմնական թիրախներին՝

- անցնել եռակի ավիակիրներով նավատորմի՝ ապահովելու համար ՌԾՈՒ ծավալման, սպասարկման և ուսուցման չընդհատվող գործընթաց[132],

[130] Capsnetdroff, India Must Seize the Opportunity in the Indian Ocean, CAPS India (blog), June 9, 2023, https://capsindia.org/india-must-seize-the-opportunity-in-the-indian-ocean/

[131] Abu Hurrairah Abbasi. India's Naval Development: Strategic Implications for Pakistan and South Asia. Issue BRIEF. Institute of Strategic Studies Islamabad. July, 2024.

[132] Navy's long-term plan is to have three aircraft carriers, says Navy chief Admiral Karambir Singh, https://www.thehindubusinessline.com/news/indian-navys-long-term-plan-is-to-have-three-aircraft-carriers-navy-chief-admiral-karambir-singh/article30147141.ece

- ընդլայնել միջուկային սուզանավերի հնարավորությունները՝ ապահովելու համար, այսպես կոչված, «միջուկային եռամիասնություն» (տրիադա)՝ ռազմավարական զսպման առավելագույն էֆեկտի համար,
- ուժեղացնել հակասուզանավային պայքարի միջոցները,
- ընդլայնել բաց ծովում նավատորմի հնարավորությունները՝ ռազմավարական սպառնալիքներին հակազդելու համար:

Սակայն կարևոր է ընդգծել նաև Հնդկաստանի «ծովային դիվանագիտության» առանցքային նշանակությունը երկրի՝ որպես աշխարհաքաղաքական կարևոր դերակատարի դիրքավորման տեսանկյունից: Մասնավորապես՝ Հնդկաստանի SAGAR առաքելությունը (Security and Growth for All in the Region՝ Անվտանգություն և զարգացում տարածաշրջանի բոլոր երկրների համար) և դրա շրջանակներում իրականացվող հումանիտար գործողությունները դիրքավորում են երկիրը որպես տարածաշրջանում կայունացնող դերակատարում ունեցող պետություն, իսկ QUAD (India, US, Japan, and Australia) շրջանակում ռազմավարական դաշնակցությունն, ըստ էության, նպատակաուղղված է Հնդկախաղաղօվկիանոսյան տարածաշրջանում Չինաստանին հակակշիռ ձևավորելուն:

Ռազմավարական զսպման հնարավորությունները

Հնդկաստանը երրորդ աշխարհի առաջին պետությունն էր, որին հաջողվեց 1974 թվականին փորձարկել միջուկային զենք և «համալրել» միջուկային ակումբի կազմը: Միջուկային ծրագրի հիմնավորումը Չինաստանի կողմից միջուկային սպառնալիքն էր, տարածաշրջանում և աշխարհում ռազմավարական գերակայության ձգտումը, ինչպես նաև Պակիստանի՝ աստիճանաբար աճող միջուկային ներուժի նկատմամբ առավելություն պահպանելու ցանկությունը: Չնայած զգալի միջուկային զինանոցին (մասնավորապես՝ «Միջուկային տրիադայի» առկայությանը)՝ Հնդկաստանի ռազմավարական զսպման քաղաքականությունը հենվում է «Վստահելի նվազագույն զսպման» (Credible Minimum Deterrence) սկզբունքի և «Առաջինը չկիրառելու» (NFU No-first-use) հայեցակարգի վրա[133]: Հնդկաստանը նաև այն պետություններից է, որը պարտավորվել է երբևէ միջուկային զենք չկիրառել այն պ[illegible]ությունների նկատմամբ, որոնք չունեն միջուկային զենք, թեպետ 2023 թվակ[illegible]ին Հնդկաստանի որոշ պաշտոնատար անձինք հայտարարել են, որ կարո[illegible]ն կիրառել միջուկային զենք՝ ի պատասխան քիմիական կամ կենսաբանական զենքով հարձակումներին[134]:

[133] Clarifying India's Nascent Nuclear Doctrine. Arms Control Association, https://www.armscontrol.org/act/1999-12/features/clarifying-indias-nascent-nuclear-doctrine

Աղյուսակ 1.5

Հնդկաստանի միջուկային հնարավորությունները 2024 թվականի հունվարի դրությամբ

Տեսակը/նախատիպը	*Մեկնարկային կայանների թիվը*	*Առաջին ծավալման տարեթիվը*	*Հեռահարություն (կմ)*	*Մարտագլխիկների թիվը*	*Մարտագլխիկներ x հզորություն*
Ինքնաթիռներ	***84***			***48***	
Mirage 2000H	32	1985	1 850	32	1x 12 կտ ռումբ
Jaguar IS	16	1981	1600	16	1x 12 կտ ռումբ
Rafale	36	2022	2000	Տվ. բացակայում են	..
Ցամաքային տեղակայման հրթիռներ	***80***			***80***	
Prithvi-II	24	2003	250	24	1x 12 կտ
Agni-I	16	2007	>700	16	1x 10-40 կտ
Agni-II	16	2011	>2000	16	1x 10-40 կտ
Agni-III	16	2018	>3200	16	1x 10-40 կտ
Agni-IV	8	2022	>3500	8	1x 10-40 կտ
Agni-V	Տվ. անհասանելի են	[2024]	>5000	Տվ. անհասանելի են	1x 10-40 կտ[135]
Agni-VI	Տվ. բացակայում են	[2027]	>6000	Տվ. բացակայում են	1x 10-40 կտ
Agni-P	Տվ. բացակայում են	[2025]	1000-2000		
Ծովային տեղակայման հրթիռներ	***3/14[136]***			***16***	
Dhanush	2	2013	400	4	1x 12 կտ
K-15 (B-05)	12	2018	700	12	1x 12 կտ
K-4	Տվ. բացակայում են[137]	[2025]	3500	Տվ. բացակայում են	1x 10-40 կտ
Մարտագլխիկներ այլ սպառնալիքներ[138]				[28]	
Ընդհ. միջուկային պաշարներ	**178**			**172**	

Խաղաղության հիմնախնդիրների հետազոտման ստոկհոլմյան ինստիտուտի (SIPRI) գնահատումներով՝ 2024 թվականի հունվարի դրությամբ Հնդկաստանի միջուկային զենքի պաշարները կազմում են 172 միավոր. մի փոքր աճել են նախորդ տարվա համեմատությամբ (աղյուսակ 1.5[139]): Մինչև

[135] Հնարավոր է նաև բազմաթիրախային խոցման հնարավորություն ունեցող մարտագլխիկներով (MITRV-Multiple Independently Targetable Reentry Vehicle):

[136] Առաջին թիվը ցույց է տալիս գործող ծովային հարթակների քանակը (2 ավիակիր և 1 սուզանավ՝ բալիստիկ հրթիռներով), երկրորդ թիվը ցույց է տալիս հրթիռների այն նվազագույն քանակը, որը կարող են դրանք տանել:

[137] Տվյալներ բացակայում են, քանի որ երրորդ և չորրորդ բալիստիկ հրթիռներով սուզանավերը դեռևս սպառազինության չեն դրվել, սակայն հայտնի է, որ դրանք նախագծված են յուրաքանչյուրը 8 հրթիռային տեղակայանքներով՝ ի տարբերություն, օրինակ, գործող INS Arihant սուզանավի, որն ունի 4 հրթիռային տեղակայանք:

[138] Առկա 144 միջուկային մարտագլխիկներից բացի, որոնք գտնվում են օպերատիվ ուժերի տրամադրության տակ, SIPRI-ի գնահատմամբ, Հնդկաստանում արտադրվել են ևս 28 մարտագլխիկներ այն հրթիռների համար, որոնք արդեն պատրաստ են շահագործման, մասնավորապես՝ Agni-V և Agni-P (16 մարտագլխիկ) և K-15 (12 մարտագլխիկ) հրթիռների համար:

[139] SIPRI Yearbook 2024: Armaments, Disarmament and International Security, www.sipriyearbook.org, p. 330.

2010-ական թվականների սկիզբը Հնդկաստանի ռազմավարական զսպման հիմնական «թիրախը» Պակիստանն էր, սակայն վերջին տարիներին Հնդկաստանի միջուկային զինանոցում հայտնված մեծ հեռահարությամբ հրթիռները, որոնք կարող են հասնել Չինաստանի բոլոր ծայրերը, թույլ են տալիս ենթադրել, որ Հնդկաստանը սկսել է մեծ ուշադրություն հատկացնել նաև Չինաստանի ռազմավարական զսպման հնարավորությունների ընդլայնմանը:

Ավելին, երկար ժամանակ համարվում էր, որ Հնդկաստանը միջուկային մարտագլխիկներն առանձին է պահում խաղաղ ժամանակահատվածում ծավալված մեկնարկային կայանքներից, սակայն վերջին ժամանակներում բաց ծովում զսպման նպատակով պարեկային գործողությունների անցկացման փաստը ստիպում է ենթադրել, որ Հնդկաստանը միջուկային մարտագլխիկների մի որոշակի մաս պահում է բարձր պատրաստականության վիճակում խաղաղ պայմաններում, ինչն էլ, իր հերթին, ենթադրում է, որ միջուկային բախման վտանգի դեպքում Հնդկաստանը կարող է նաև թիրախավորել հակառակորդի միջուկային զենքը՝ նախքան հակառակորդի կողմից դրա օգտագործումը[140]: Այս ենթադրությունները հիմք են տալիս պնդելու, որ Հնդկաստանը վաղուց արդեն (առնվազն մեկ տասնամյակ) հրաժարվել է «նվազագույն զսպման» հայեցակարգից և աստիճանաբար մեծացնելու է իր միջուկային զինանոցը: Այդ մասին են վկայում նաև աղյուսակ 1.5-ում ներկայացված տվյալները: Առնվազն երեք նոր ցամաքային տեղակայման բալիստիկ հրթիռներ մշակման փուլում են՝ միջին հեռահարության Agni-P-ն և միջինից բարձր հեռահարության Agni-V հրթիռները մոտ են օպերատիվ ծավալմանը, իսկ միջմայրցամաքային հեռահարությամբ Agni-VI-ը նախագծման փուլում է[141]: Agni-P-ն բնորոշվում է որպես «ապագա սերնդի» բալիստիկ հրթիռ, որի մարտագլխիկը կարող է մանևրել և խուսափել հակահրթիռային պաշտպանության համակարգերի համար թիրախ դառնալուց: Ըստ որոշ աղբյուրների՝ Հնդկաստանը մշակում է նաև կարճ հեռահարության K-15 սուզանավային տեղակայման բալիստիկ հրթիռների ցամաքային տարբերակները, որոնք հայտնի են Shaurya անունով[142], որոնց մասին տեղեկատվությունը, սակայն, տեղ չի գտել SIPRI-ի հրապարակումներում:

Ռազմավարական զսպումը Հնդկաստանում հիմնվում է ռա ական և ռազմավարական կառավարման վստահելի համակարգի վրա, ո ը համալրված է վաղ նախազգուշացման առաջադեմ և լավ պաշտպանված կապի համակարգերով: Միջուկային ենթակառուցվածքների ծավալման և միջուկային զենքի օգտագործման վերահսկողությունը պատկանում է Միջուկային հրամանատարության մարմնին (NCA-Nuclear Command Authority), որը բաղ-

[140] Clary, C. and Narang, V., India's counterforce temptations: Strategic dilemmas, doctrine, and capabilities, International Security, vol. 43, no. 3 (winter 2018/19)

[141] Vikas, S. V., Why India may not test Agni 6 even if DRDO is ready with technology, OneIndia, 10 July 2019.

[142] Տե՛ս, օրինակ, Press Trust of India, India successfully test-fires nuclear capable hypersonic missile Shaurya, Hindustan Times, 3 Oct. 2020; և Gupta, S., 'Govt okays induction of nuke-capable Shaurya missile amid Ladakh standoff', Hindustan Times, 6 Oct. 2020.

կացած է երկու խորհուրդներից՝ Քաղաքական խորհուրդ (վարչապետի գլխավորությամբ) և Գործադիր խորհուրդ (գլխավորում է Ազգային անվտանգության գծով խորհրդականը): NCA-ի հրահանգները իրագործվում են Ռազմավարական ուժերի հրամանատարության (Strategic Forces Command) կողմից, որը պատասխանատու է մարտավարական և ռազմավարական միջուկային ուժերի կառավարման և ծավալման կազմակերպման համար: Նման կառուցվածքը երաշխավորում է, որ Հնդկաստանի միջուկային զինանոցը գտնվում է քաղաքացիական իշխանության մարմինների խիստ վերահսկողության տակ և կարող է գործի դրվել միայն ռազմավարական կառավարման հրամանների հստակ շղթայի գործարկմամբ:

Անվտանգային համակարգի այլ կառույցներ

Սխալ կլիներ Հնդկաստանի անվտանգային համակարգը սահմանափակել միայն թվարկված կառույցներով, քանի որ այդ համակարգում ներառված են նաև առանձին ինստիտուտներ, որոնք առանցքային դերակատարում ունեն անվտանգային հարցերի առնչությամբ որոշումների կայացման գործընթացում, և դրանց անդրադարձը նույնպես կարևոր է: Հաշվի առնելով, որ սույն հետազոտության շրջանակներում անհնար է համապարփակ անդրադառնալ բոլոր կառույցների դերին, գործառույթներին և կառուցվածքին, դրանց մի մասը պարզապես հիշատակելու ենք անվտանգային համակարգի ընդհանուր պատկերն ամբողջացնելու մտայնությամբ:

Ինչպես ցանկացած երկրում, Հնդկաստանում նույնպես անվտանգային համակարգի կարևոր կառույցներ են պետության ներքին և սահմանային (այդ թվում՝ ծովային) անվտանգությունն ապահովող ինստիտուտները, որոնցում ներառված են ինչպես ռազմական, այնպես էլ կիսառազմականացված կառույցներ, որոնք գործում են տարբեր գերատեսչությունների ենթակայության: Նման կառույցների անձնակազմի ընդհանուր թիվը հասնում է 1630000-ի[143], որից *առափնյա պահպանություն* իրականացնող անձնակազմը՝ 13350, *ապաստամբությունների դեմ պայքարի ուժերը*՝ 130150 (որից *Ռազմուրհրաձգային ուժերը (65000)*՝ *Պաշտպանության նախարարության ենթակայությամբ, Ասամական հրաձգային ուժերը*՝ *Ներքին գործերի նախարարության ենթակայությամբ (65150)), սահմանային անվտանգության ուժերը*՝ 263900, *հնդկա-տիբեթական սահմանային ոստիկանության ուժերը*՝ 89400, Նեպալի և Բութանի միջև սահմանային տարածքի պահպանության *Սաշաստրա Սիմա Բալ ուժերը*՝ 87600, *հատուկ սահմանապահ ուժերը*՝ 10000, *պետական գիհված ոստիկանությունը*՝ 450000, *կենտրոնական պահեստավորային ոստիկանական ուժերը*՝ 324600, *արդյունաբերական անվտանգության կենտրոնական ուժերը*՝ 144400, *երկաթգծերի պահպանության ուժերը*՝ 70000, *Պաշտպանական անվտանգության կորպուսը*՝ 31000, *Ազգային անվտանգության գվարդիան*՝ 12000, *Հատուկ պահպանության խումբը*՝ 3000:

[143] The Military Balance 2024, p. 270.

Ռազմականացված և կիսառազմականացված կառույցների նման բազմազանությունն իր օբյեկտիվ պատճառներն ունի: Մասնավորապես՝ աշխարհագրական տարածքի առանձնահատկությունները, հարևան պետությունների աշխարհաքաղաքական դիրքավորումը, բնակչության էթնոկրոնական բազմազանությունը զգալիորեն ազդել են երկրի ներքին և արտաքին անվտանգային բարդ միջավայրերի ձևավորման, իսկ հաճախ նաև այդ միջավայրերի միջև սահմանների տարրալուծման վրա, որն էլ անվտանգային շատ կառույցներ ունենալու և հաճախ այդ կառույցների միջև գործառույթների ոչ արդյունավետ բաշխման և ինստիտուցիոնալ մրցակցության պատճառ է դարձել: Անվտանգային տարբեր ինստիտուտների և գործակալությունների միջև նման մրցակցությունը խոչընդոտում է նույնիսկ ամենալավ պլանավորված միասնականության և համագործակցության ջանքերը և հանգեցնում անվտանգային համակարգի անարդյունավետության: Նման իրավիճակի բացասական հետևանքների մասին վկայությունների կարելի է հանդիպել տարբեր վերլուծաբանների մոտ: Օրինակ՝ ըստ Ռ. Բհատիայի և Շ. Մեհտայի՝ նման ինստիտուցիոնալ մրցակցությունն էր պատճառը, որ Պակիստանի հետ 1999 թվականի Կարգիլյան պատերազմի օրերին Հնդկաստանի ռազմաօդային և ցամաքային ուժերն աշխատում էին հակառակ նպատակների հասնելու ուղղությամբ: Նույն Կարգիլյան պատերազմի ժամանակ, ըստ Ռ. Նիդումոլուի և Շ. Ռագհավանի, Սահմանային անվտանգության ուժերը հրաժարվել են ծառայել Ռաշտրյան մոտոհրաձգային գնդի հրամանատարության կազմում, քանի որ այդպիսով այն կհամարվեր ենթարկված կիսառազմականացված անվտանգային գործակալությանը՝ հաշվի չառնելով անգամ, որ Ռաշտրյան գունդը հնդկական բանակի ստորաբաժանում է, այլ ոչ թե ՆԳՆ մարմին[144]: Վերջին տարիներին նոր թափ առած անվտանգային համակարգի բարեփոխումները կոչված են վերացնելու տարբեր ինստիտուտների միջև առկա հակասությունները, հասնելու գործառույթների կրկնությունների վերացմանը, ձևավորելու տարբեր գերատեսչությունների միջև լիազորությունների պատվիրակման հստակ կառուցակարգեր: Մասնավորապես՝ 2019 թվականին Պաշտպանության շտաբի ղեկավարի նոր պաշտոնի ստեղծումը, որն, ի դեպ, հաճախ է ներկայացվում որպես պաշտպանական ոլորտի ամենակարևոր բարեփոխում, նպատակուղղված էր զինված ուժերի տարանջատվածության խնդիրների լուծմանը և գործունեության սիներգիայի ապահովմանը:

Հնդկաստանի անվտանգային համակարգում իր ուրույն տեղն ունի ***հետախուզությունը,*** որը նույնպես բաղկացած է բազմաթիվ ոլորտային հետախուզական գործակալություններից, որոնք միավորված են Ազգային հետախուզական ցանցում: Դրանց աշխատանքը համակարգվում է երեք կարևոր կառույցների կողմից՝ *Հետազոտությունների և վերլուծության դեպարտամենտի, Հետախուզական բյուրոյի և Պաշտպանական հետախուզության գործակալության:*

[144] Milan Vaishnav. (2024). Institutional Roots of India's Security Policy. Oxford University Press, p. 10.

Հետախուզական կառույցների առանձին մանդատը պայմանավորված է այն հանգամանքով, որ անվտանգային առաջին կառույցը, որը ձևավորվել է Հնդկաստանում՝ անմիջապես անկախացումից հետո, Միացյալ հետախուզական կոմիտեն էր, որը գործում էր ԶՈՒԻ-ի շտաբների ղեկավարների կոմիտեի ենթակայությամբ: Այն անվտանգային և պաշտպանական խնդիրների վերաբերյալ համապարփակ հետախուզական գնահատականներ էր ներկայացնում Շտաբների ղեկավարների կոմիտեին և Նախարարների կաբինետի միությանը (Union of Ministers Cabinet)[145]: Պատմականորեն, հետախուզության ինստիտուտի կարևորության մասին է վկայում նաև այն, որ տնտեսական անվտանգության ապահովման նկատառումով լայն հնարավորության մանդատով են օժտված նաև Տնտեսական հետախուզության խորհուրդը, Կենտրոնական տնտեսական հետախուզության բյուրոն և Ֆինանսական հետախուզության բյուրոն: Հետախուզական գործակալությունների բազմազանությունը, հետախուզական տվյալների փոխանակման կենտրոնացված հարթակի բացակայությունը, որ թույլ կտար ներդաշնակեցնել անվտանգային սպառնալիքներին հակազդման գործողությունները, ինչպես նաև Հետախուզական վերլուծաբանների կողմից գնահատվում է որպես Հնդկաստանի անվտանգային համակարգի անարդյունավետության պատճառներից մեկը[146]:

«Վտանգավոր» հարևանությունը Չինաստանի և Պակիստանի հետ, ինչպես նաև նոր՝ «բազմաբևեռ» աշխարհակարգի պայմաններում որպես հզոր աշխարհաքաղաքական դերակատար դիրքավորվելու ձգտումը ստիպում են Հնդկաստանի իշխանություններին շարունակաբար կատարելագործել անվտանգային համակարգը՝ թե՛ անվտանգային քաղաքականության ուղղությունների վերանայման, թե՛ կառուցվածքային փոփոխությունների և թե՛ տեխնոլոգիական նոր լուծումների ինտեգրման առումներով: Այդ ուղղությամբ գործադրած ջանքերում առանցքային է նաև սպառազինությունների հարցում ինքնաբավության հասնելու քաղաքականությունը, որին առավել մանրամասն կանդրադառնանք հաջորդիվ:

1.4.2. Ռազմարդյունաբերությունը

2023–2024 ֆինանսական տարում[147] հնդկական ռազմարդյունաբերության թողարկման ծավալները հասել են պատմական առավելագույն ցուցանիշի՝ 1.27 տրլն ռուփի (որը համարժեք է 15 մլրդ ԱՄՆ դոլարին), իսկ երկրների թիվը, գերազանցել է 90-ը[148]: Չնայած նման տպավորիչ ցուցանիշներին՝ Հնդկաս-

[145] Նույն տեղում, էջ 34:
[146] Yusuf Unjhawala, Needed: AI-enabled intel-sharing. 2024 October, https://www.deccanherald.com/opinion/needed-ai-enabled-intel-sharing-3220347?utm_source=chatgpt.com
[147] Հնդկաստանում ֆինանսական տարին սկսվում է մարտին, ավարտվում է ապրիլին:
[148] Оборонное производство Индии достигло исторического максимума – Медиапалуба (paluba.media).

տանը շարունակում է մնալ սպառազինություններ ներկրող ամենախոշոր պետությունն աշխարհում, և այդ կարգավիճակը չի փոխվել 1993 թվականից ի վեր, ընդ որում, ամենաշատ գնումները մշտապես կատարել է Ռուսաստանից, որը 2023 թվականի դրությամբ շարունակում է մնալ Հնդկաստանին սպառազինություն մատակարարող թիվ մեկ պետությունը անգամ ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Ռուսաստանից սպառազինությունների արտահանման սահմանափակումներից հետո: Սակայն պետք է նկատել, որ Ռուսաստանի մասնաբաժինը Հնդկաստանի ռազմական ներմուծման մեջ, նախորդ տարիների համեմատությամբ, էապես նվազել է: SIPRI-ի տվյալներով, եթե 2009–2013 թթ. այդ մասնաբաժինը 76% էր, 2014–2018 թթ.՝ 58%, ապա 2019–2023 թթ.՝ ընդամենը 36%[149]: Նման միտումը պայմանավորված է ռազմական ներմուծումը բազմազանեցնելու և տեղականով փոխարինելու Հնդկաստանի բավական արդյունավետ քաղաքականությամբ:

Ռազմատեխնիկական համագործակցության առումով Հնդկաստանը, ըստ էության, իրականացնում է կոմպլեմենտար քաղաքականություն՝ ակտիվ ռազմատեխնիկական հարաբերություններ զարգացնելով նաև Ֆրանսիայի (որին 2023 թվականին բաժին էր ընկնում Հնդկաստանի ռազմական ներմուծման 33%-ը), ԱՄՆ-ի (13%), Իսրայելի (11%), Մեծ Բրիտանիայի (3.6%) և այլ պետությունների հետ: Ընդ որում, այդ քաղաքականությունը մշտապես կողմնորոշված է եղել առավելապես տեխնոլոգիաների, այլ ոչ թե սպառազինությունների ներմուծմանը: Նման քաղաքականությունը մի կողմից՝ թելադրված էր այս ոլորտում անկախություն պահպանելու ցանկությամբ, մյուս կողմից՝ այն հանգամանքով, որ Հնդկաստանն այն պետություններից է, որը կարող է և արտադրում է սպառազինությունների և ռազմական տեխնիկայի գրեթե բոլոր տեսակները, ներառյալ՝ միջուկային զենք: Թեև տևական ժամանակ հնդկական արտադրության սպառազինությունները (օրինակ՝ «Արջուն» տանկը, «Տեջաս» կործանիչը, «Դխրուվ» ուղղաթիռը) բավական համեստ տեխնիկատակտիկական բնութագրիչներ ունեին[150], տեխնոլոգիաների ներմուծման քաղաքականությունը և միջազգային արտոնագրերով (լիցենզիա) սպառազինություններ հավաքելու փորձառությունն այսօր թույլ են տվել Հնդկաստանին դառնալ սպառազինություններ արտահանող երկիր և հաստատուն տեղ զբաղեցնել սպառազինությունների համաշխարհային շուկայում:

Անկախացումից անմիջապես հետո ռազմարդյունաբերության զարգացման հայեցակարգային հենքը Հնդկաստանի ռազմական դոկտրինն էր, որի կարևորագույն պահանջներից մեկը ինքնաբավության հասնելն էր: Ըստ այդմ՝ մշակվեց տեղական ռազմարդյունաբերության զարգացման մոդել: Նախնական շրջանում այդ մոդելը հնարավորություն տվեց 80% ինքնաբավության

[149] Pieter D. Wezeman, Katarina Djokic, Mathew George, Zain Hussain and Siemon T. Wezeman. Trends in International Arms Transfers, 2023. SIPRI Factsheet, March 2024.

[150] Александр Губанов. Военные расходы–последнее на чем нужно экономить. Земля-землица, 10-16 ноября, 2016, https://www.zemlya-zemlitsa.ru/pdf/2016/Zemlya-Zemlitsa_2016_44.pdf

հասնելու թեթև սպառազինությունների և զինամթերքի որոշ տեսակների առումով: Ավելի ուշ ջանքերը նպատակաուղղվեցին երկու հիմնական փոխլրացնող ուղղությունների՝ արտասահմանյան լիցենզիաների հիման վրա ռազմական տեխնիկայի տեղական արտադրության և անկախ հետազոտությունների իրականացման: Սակայն ինքնաբավության հասնելու նման մոդելը, չնայած առավելություններին, ուներ նաև թերություններ: Մասնավորապես՝ Հնդկաստանը շարունակում էր կախվածության մեջ լինել այլ պետություններից առավել բարդ սպառազինությունների առումով[151]: Սառը պատերազմի տարիներին Հնդկաստանը կատարյալ կախվածության մեջ ընկավ Խորհրդային Միությունից:

Հնդկական ռազմարդյունաբերության զարգացման տեսանկյունից կարելի է շրջադարձային համարել երեք ժամանակաշրջան՝

- 1983 թվականը, երբ գործարկվեցին կառավարվող հրթիռային սպառազինությունների մշակման համալիր ծրագիրը և թեթև բազմաֆունկցիոնալ կործանիչների (Light Combat Aircraft LCA) տեղական արտադրության ծրագիրը:
- 1998 թվականը, երբ հիմնվեց Ռուսաստանի հետ համատեղ «BrahMos Aerospace» ընկերությունը, որի հիմնական նախագծի՝ BrahMos գերձայնային թևավոր հրթիռների արտադրությունների առաջին փորձարկումը տեղի ունեցավ 2001 թվականին: Ընդ որում, բացի Ռուսաստանից, հնարավոր դարձավ համատեղ արտադրությունների համաձայնագրեր կնքել նաև այլ պետությունների (օրինակ՝ Իսրայելի) հետ: Ավելի ուշ՝ 2001 թվականին, ռազմարդյունաբերության ոլորտը, որը մինչ այժմ վերապահված էր բացառապես պետական հատվածին, ազատականացվեց՝ թույլ տալով մասնավոր հատվածի 100% մասնակցություն լիցենզավորման միջոցով, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների 26% ներկայություն ռազմարդյունաբերական ձեռնարկություններում (հետագայում ՕՈՒՆ-ների մասնակցությունը թույլատրվեց մինչև 49%, ապա նաև մինչև 74%)[152]:
- 2014 թվականը, երբ մեկնարկեց «Make in India» («Արտադրված է Հնդկաստանում») նախաձեռնությունը, որի շրջանակներում արդեն շուրջ 10 տարի իրականացվում են բազմաթիվ բարեփոխումներ ոչ միայն ռազմարդյունաբերության ոլորտում, այլ նաև ամբողջ տնտեսությունում: Թեև հնդկական ռազմարդյունաբերության զարգացման հայեցակարգն ընդունվել էր դեռևս 2001 թվականին, սակայն իրական քայլերը ռազմարդյունաբերության զարգացման ուղղությամբ սկսվեցին միայն 2014 թվականից հետո: Նախաձեռնության նպատակն էր ոչ միայն ռազմարդյունաբերության զարգացումը, այլ նաև ամբողջ տնտեսության արդիականացումը: Նախաձեռնության շրջանակներում ներդրվեցին մի շարք նոր քաղաքականություններ, որոնք ուղղված էին ներդրումների խթանմանը, ինչպես նաև ներդրումների համար բարենպաստ միջավայրի ստեղծման

նոր ռազմարդյունաբերության ձևավորման մեկնակետը, որտեղից էլ սկսելու ենք ներկայացնել Հնդկաստանի ռազմարդյունաբերության արդի վիճակը և առանձնահատկությունները:

Հնդկաստանի ռազմարդյունաբերական համալիրի առանցքային հաստատությունը Պաշտպանության նախարարության ենթակայությամբ գործող ***Պաշտպանական հետազոտությունների և մշակումների կազմակերպությունն*** է (Defense Research and Development Organization (DRDO), որի համակարգմամբ գործում են մոտ 50 գիտահետազոտական լաբորատորիաներ և հիմնարկներ՝ մասնագիտացած գրեթե բոլոր պաշտպանական տեխնոլոգիաների (ներառյալ՝ ռազմավարական և սովորական հրթիռներ, կործանիչներ, տանկեր, հրետանային համակարգեր, էլեկտրոնիկա, ռազմածովային համակարգեր և այլն) մշակմամբ: Կազմակերպության 2024–2025 ֆինանսական տարվա բյուջեն կազմել է 2.86 մլրդ ԱՄՆ դոլար[153]:

Աղյուսակ 1.6

Հնդկաստանում գործող պաշտպանական ոլորտի պետական ձեռնարկությունների մասնագիտացման ուղղությունները

Ձեռնարկության անվանումը	*Մասնագիտացման ուղղությունը*
Mazagon Dock Shipbuilders Limited Garden Reach Shipbuilders and Engineers Goa Shipyard Limited Hindustan Shipyard Limited	Նավաշինություն
Bharat Dynamics Limited	Հրթիռաշինություն
Hindustan Aeronautics Limited	Ինքնաթիռների արտադրություն
Bharat Electronics Limited	Էլեկտրոնիկայի արտադրություն
Mishra Dhatu Nigam Limited	Հատուկ համաձուլվածքների արտադրություն
BEML Limited	Տրանսպորտային միջոցներ և ծանր հողափոր տեխնիկա
Munitions India Limited	Զինամթերք և պայթուցիկ նյութեր
Armoured Vehicles Nigam Limited	Զրահամեքենաներ և տանկեր
Advanced Weapons and Equipment India Limited	Հրաձգային զենք և հրետանային համակարգեր
Troop Comforts Limited	Տեքստիլ, հագուստ և հանդերձանք զորքերի համար
India Optel Limited	Օպտիկական և էլեկտրաօպտիկական սարքեր
Gliders India Limited	Պարաշյուտներ և օդային առաքման համակարգեր
Yantra India Limited	Համալրող բաղադրիչներ և սարքավորումներ

2021 թվականին կազմալուծվեց Զինամթերքի արտադրության խորհուրդը (Ordnance Factory Board), որը Հնդկաստանի սպառազինությունների, զինամթերքի և ռազմական նշանակության այլ արտադրանքի թողարկման հիմնական պատասխանատու էր: Այն ներառում էր սպառազինություններ արտադրող 41 գործարան, որոնք 2021 թվականի հոկտեմբերին վերակազմակերպվեցին 7 նոր պետական ձեռնարկությունների (Defense Public Sector Undertakings DPSU): Դրանք գործում են Պաշտպանության նախարարության

[153] Laxman Kumar Behera. India's Defence Industry: Achievements and Challenges. ORF Issue Brief No. 708, May 2024, Observer Research Foundation, p. 4.

ենթակայությամբ՝ այդպիսով պաշտպանական ոլորտի պետական ձեռնարկությունների թիվը հասցնելով 16-ի (աղյուսակ 1.6): Նման կառուցվածքային վերափոխումների անհրաժեշտությունը հիմնավորվում էր ռազմարդյունաբերական ձեռնարկությունների գործառութային ինքնավարության, արդյունավետության բարձրացման և նորարարությունների խթանման հրամայականով[154]: Հնդկաստանի ռազմական նշանակության արտադրանքի ծավալների առյուծի բաժինը՝ 2023 թվականի դրությամբ 74%-ը (աղյուսակ 1.7), ապահովում է այս 16 ձեռնարկությունը:

Ռազմարդյունաբերության մյուս կարևոր սուբյեկտները ***Պաշտպանության նախարարության ենթակայությունից դուրս պետական ձեռնարկությունները*** են (օրինակ՝ Cochin Shipyard Ltd-ն՝ առաջին հայրենական ավիակրի արտադրողը, որը, սակայն, գործում է Նավահանգիստների, նավագնացության և ծովային ուղիների նախարարության վարչական վերահսկողությամբ), որոնք առևտրային գործունեություն են իրականացնում:

Հնդկական ռազմարդյունաբերության զարգացման գործում իրենց կարևոր դերակատարումն են ունեցել նաև Պաշտպանության նախարարության և արտասահմանյան գործընկերների հետ ***համատեղ ձեռնարկությունները***, ինչպիսիք են, օրինակ՝ արդեն հիշատակված BrahMos Aerospace-ը և Tata Boeing Aerospace Limited-ը, որն ամերիկյան հայտնի Boeing ընկերության հետ համատեղ ձեռնարկություն է, մասնագիտացած է աերոտիեզերական համակարգերի և բաղադրիչների արտադրությունում:

2023 թվականի դրությամբ Հնդկաստանի ռազմարդյունաբերական արտադրանքի մոտ 20%-ը և արտահանման գերակշիռ մասը թողարկում են ***մասնավոր ձեռնարկությունները***, որոնց գործունեությունն առավել ակտիվացել է 2014 թվականին՝ «Արտադրված է Հնդկաստանում» նախաձեռնության մեկնարկից հետո: 2023 թվականի ապրիլի դրությամբ Կառավարությունը ռազմական արդյունաբերությամբ զբաղվելու 606 լիցենզիա է տրամադրել 369 ձեռնարկությունների[155]: Բացի նշված ձեռնարկություններից՝ մեծ թիվ են կազմում նաև ռազմարդյունաբերության հարակից և սպասարկող միջին, փոքր և գերփոքր ձեռնարկությունները (մոտ 14000) և ստարտափները (329)[156]: Ռազմարդյունաբերության ոլորտի ազատականացմանը զուգընթաց, Կառավարությունը նաև զգալիորեն հեշտացրել է ռազմական արտադրանքի արտահանման գործընթացները մասնավոր ընկերությունների համար, թույլ է տվել օգտագործել պետական օբյեկտները՝ սեփական արտադրանքի թեստավորման համար, գործարկել է «միասնական պատուհան»՝ ռազմարդյունաբերական

[154] Ordnance Factory Board. Press Information Bureau, Government of India, Ministry of Defence, https://www.pib.gov.in/Pressreleaseshare.aspx?PRID=1895973

[155] Press Information Bureau, "Defence Industrial Corridor," April 03, 2023, https://pib.gov.in/PressReleaseIframePage.aspx?PRID=1913309

[156] Standing Committee on Defence, Demands for Grants 2023-24, 35th Report, https://eparlib.nic.in/bitstream/123456789/2963533/1/17_Defence_43.pdf, p. 45.

ընկերություններում ներդրումների հայտերն ուսումնասիրելու համար, որոնք իրենց դրական ազդեցությունն են ունեցել մասնավոր ռազմարդյունաբերության զարգացման վրա:

Աղյուսակ 1.7

Հնդկաստանի ռազմարդյունաբերական արտադրանքի ծավալները 2016–2023 թթ. (մլրդ հնդկական ռուփի)[157]


Ֆինանսական տարի	Պաշտպանական ոլորտի պետական 16 ձեռնարկություն	Այլ պետական ձեռնարկություններ և համապատկան ձեռնարկություններ	Մասնավոր ձեռնարկություններ	Ընդհանուր արտադրանքի ծավալը
2016–2017	552.52	46.9	141.04	740.54
2017–2018	582.93	51.8	153.47	788.2
2018–2019	582.03	55.67	173.5	811.2
2019–2020	568.82	62.95	158.94	790.71
2020–2021	613.46	60.29	172.68	846.43
2021–2022	677.03	72.22	199.2	948.45
2022–2023	804.64	71.37	210.83	1086.84

Աղյուսակ 1.7-ի տվյալները ցույց են տալիս, որ Հնդկաստանի ռազմարդյունաբերության զարգացմանն ուղղված բարեփոխումները, ըստ էության, հաջողվել են: Փորձագետների կարծիքով՝ այդ բարեփոխումների հաջողության համար առանցքային նշանակություն է ունեցել Ռազմական գործերի նոր դեպարտամենտի ստեղծումը, որի գործառույթներից կարևորներն առնչվում են ռազմական հաստատությունների կողմից տեղական արտադրության սպառազինությունների օգտագործման խթանմանը, ինչպես նաև տարբեր ռազմական կառույցների պահանջմունքների ինտեգրմանը, համատեղ պլանավորմանը և գնումների միասնականության ապահովմանը[158]: Դեպարտամենտի ձևավորմամբ, փաստացիորեն, Զինված ուժերը դարձան սպառազինությունների արտադրության հայրենական նախագծերի լիիրավ մասնակիցներ, և հնարավոր դարձավ վերջ դնել սպառազինություններն օգտագործողների և արտադրողների միջև հակամարտ հարաբերություններին: Այդ համատեքստում մոտ 500 անուն ռազմական նշանակության արտադրանքի (ներառյալ այնպիսի թանկարժեք սպառազինություններ, ինչպիսիք են հրթիռները, կործանիչները, ուղղաթիռները, ռազմանավերը, ռադարները) համար ներմուծման արգելք դրվեց, որոնք, բնականաբար, պետք է արտադրվեն Հնդկաստանում: Այս բարեփոխումներից բխող մեկ այլ կարևոր քայլ էր սպառազինությունների գնման գործընթացների կատարելագործումը, մասնավորապես՝ գնումների կատեգորիաների ռացիոնալացումը առաջնահերթությունների սահմանման ճանապարհով, որը ենթադրում էր տեղական ռազմարդյունաբերության արտադրանքի գնման առաջնահերթություն արտասահ-

[157] Laxman Kumar Behera. India's Defence Industry: Achievements and Challenges. ORF Issue Brief No. 708, May 2024, Observer Research Foundation, p. 5.

[158] Press Information Bureau, "Cabinet approves creation of the post of Chief of Defence Staff in the rank of four star General," December 24, 2019, https://pib.gov.in/Pressreleaseshare.aspx?PRID=1597425

մանյանի նկատմամբ, ինչպես նաև սպառազինությունների արտադրությունում հումքի, դետալների, բաղադրիչների, ծրագրային ապահովման մասով տեղական մասնակցության մեծացման քաղաքականություն[159]:



Գծապատկեր 1.7

Հնդկաստանի ռազմական բյուջեն 2015–2025 թթ. (կրոր հնդկական ռուփի)[160]

Անհերքելի է, որ ռազմարդյունաբերության ոլորտում հաջողություններն անհնար կլինեին առանց ռազմական հետազոտություններին և մշակումներին պատշաճ ուշադրության, քանի որ երկար տարիներ հնդկական ռազմարդյունաբերական ձեռնարկություններում հետազոտությունների և մշակումների համար կատարվող ներդրումները բնորոշվել են ցածր ինտենսիվությամբ (1.2%[161]): Սակայն վերջին տարիներին ռազմական հետազոտություններ և մշակումները խթանելու նպատակով Հնդկաստանի կառավարությունը նկատելիորեն մեծացրել է պետական բյուջեից ռազմական հետազոտություններին և մշակումներին հատկացումները, որոնք 2024–2025 ֆինանսական տարում կազմել են մոտ 3 մլրդ ԱՄՆ դոլար, որը կազմում է ռազմական բյուջեի 3.84%-ը[162]: Միաժամանակ, գործարկվել են ռազմական նորարարությու-

[159] Laxman Kumar Behera. India's Defence Industry: Achievements and Challenges. ORF Issue Brief No. 708, May 2024, Observer Research Foundation, p. 7-8.


[160] Կատուցել է հեղինակը https://ddpdashboard.gov.in/ կայքի տվյալների հիման վրա:

[161] Avinash Koli, Vibodh Nautiyal, et al., State of Industry R&D in India. Foundation for Advancing Science and Technology (FAST India), 2024.

[162] Հաշվարկները և փոխարկումը ԱՄՆ դոլարի կատարվել են հեղինակի կողմից: Աղբյուրը՝ Press Information Bureau, Record over Rs 6.21 lakh crore allocation to Ministry of Defence in Interim Union

ներին կողմնորոշված երկու նոր նախագծեր՝ iDEX-ը «Պաշտպանական գերազանցության համար նորարարությունները» (որը նախատեսված է ստարտափների, անհատ նորարարների, ՓՄՁ-ների նորարարական գործունեությունը խթանելու համար) և Տեխնոլոգիական զարգացման հիմնադրամը (որն արդեն հիշատակված Պաշտպանական հետազոտությունների և մշակումների կազմակերպության ֆինանսական աջակցության ծրագրերից մեկն է)[163]:

Անդրադառնալով ռազմական ծախսերին՝ ընդհանուր առմամբ (գծապատկեր 1.7), հարկ է նկատել, որ ռազմարդյունաբերության զարգացման քաղաքականության ամուր հիմքն, այնուամենայնիվ, պետական բյուջեի հսկայական ծախսերն էին: Հնդկաստանը ռազմական ծախսերի բացարձակ ցուցանիշով աշխարհում զբաղեցնում է 4-րդ տեղը՝ ապահովելով համաշխարհային ռազմական ծախսերի 3.6%-ը:



Գծապատկեր 1.8 **Հնդկաստանի ռազմարդյունաբերական արտադրանքի արտահանման ցուցանիշները 2016–2025 թթ., (կրոր հնդկական ռուփի)**[164, 165]

Վերջին 10 տարվա ընթացքում ռազմական ծախսերի կայուն աճը և դրանցում սպառազինությունների ձեռքբերման համար հատկացումների տեսակարար կշռի հարաբերական կայունությունը (30%-ի շուրջ) տեղական ռազմական նշանակության արտադրանքին նախապատվություն տալու հստակ ու

Budget 2024-25; 4.72% more than FY 2023-24. 2024, https://pib.gov.in/pib.gov.in/Pressreleaseshare.aspx?PRID=2001375

[163] Building a Self-reliant Defence Industry: Enhancing Indigenous Defence Manufacturing Capability in India, https://www.ibef.org/blogs/building-a-self-reliant-defence-industry-enhancing-indigenous-defence-manufacturing-capability-in-india

[164] Կառուցվել է հեղինակի կողմից https://ddpdashboard.gov.in/defence-exports կայքի տվյալների հիման վրա:

[165] 2024-2025 ֆինանսական տարվա համար ցուցանիշները ներկայացված են հունվարի 21 -ի դրությամբ:

աներկբա քաղաքականության հետ միասին տվել են իրենց ցանկալի արդյունքը՝ նպաստելով ոչ միայն անվտանգային համակարգի ամրապնդմանը, այն նաև հնդկական ռազմական նշանակության արտադրանքի արտահանման ծավալների շարունակական մեծացմանը (գծապատկեր 1.8) և Հնդկաստանի տնտեսական զարգացմանը (թեև ռազմարդյունաբերության ոլորտը կազմում է ՀՆԱ ընդամենը 0.45%-ը):

Ինչպես երևում է գծապատկեր 1.8-ից, Հնդկաստանի ռազմական նշանակության արտադրանքի արտահանման ծավալները 2016 թվականից ի վեր աճել են գրեթե 14 անգամ, ընդ որում, համախառն աճի տարեկան տեմպը (CAGR) կազմել է 45.6%, որը խոսում է թե՛ «Make in India» («Արտադրված է Հնդկաստանում») և թե՛ Atmanirbhar Bharat Abhiyan («Ինքնապահով Հնդկաստան») նախաձեռնությունների և այս ուղղությամբ իրականացված պետական քաղաքականության բացարձակ հաջողության մասին: Դա թույլ է տալիս Հնդկաստանի ռազմարդյունաբերության զարգացման փորձն ուսանելի համարել նաև Հայաստանի համար (իհարկե, հաշվի առնելով ռեսուրսների հասանելիության տարբերությունները): Անշուշտ, արտահանման ծավալների աճի վրա իր ազդեցությունն է ունեցել նաև 2022 թվականին սկսված ռուս-ուկրաինական պատերազմը, որի հետևանքով Ռուսաստանը կենտրոնացել է առավելապես սեփական ռազմական պահանջմունքների, իսկ Արևմուտքը՝ հատկապես զգալի է դարձել՝ լայն հնարավորություններ ընձեռելով ռազմարդյունաբերական որոշակի բազա ունեցող պետություններին՝ լրացնելու այդ ճեղքվածքը:

Չնայած թվարկված բոլոր դրական արդյունքներին՝ վերլուծաբանները կարծում են, որ Հնդկաստանը չունի հիմնական սպառազինության համակարգերի և կարևորագույն դետալների ու համալրող մասերի նախագծման և արտադրության «տեխնոլոգիական խորություն»[166]: Ըստ այդմ՝ Հնդկաստանը շարունակում է նախընտրել շատ կարևոր սպառազինությունների համակարգերի լիցենզային արտադրությունը, որը ծածկում է պաշտպանական պատվերների ավելի քան 58%-ը՝ դրանով իսկ Հնդկաստանին արտաքին կախվածության մեջ պահելով[167]:

Այնուամենայնիվ, Հնդկաստանի կառավարության հաջորդ թիրախն առաջիկա 5 տարիների ընթացքում (մինչև 2030 թ.) ռազմական արդյունաբերության արտադրանքի ցուցանիշը 36 մլրդ ԱՄՆ դոլարի (ներկայիս 15 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն), իսկ արտահանումը 6 մլրդ ԱՄՆ դոլարի (ներկայիս 2.63

[166] Lucie Bèraud-Sudreau et.al "Arms-Production Capabilities in the Indo-Pacific Region," SIPRI, October 2022, p. 16.

[167] Laxman Kumar Behera. India's Defence Industry: Achievements and Challenges. ORF Issue Brief No. 708, May 2024, Observer Research Foundation, p. 15.


մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն) հասցնելն է: Պետական հսկա ձեռնարկություններից, մասնավոր հաջողակ ձեռնարկություններից և աճող ստարտափներից բաղկացած Հնդկաստանի ռազմարդյունաբերության էկոհամակարգի բազմազան լանդշաֆտը, որն աննախադեպ կատարելագործում և զարգացման ցուցանիշներ է արձանագրել վերջին տասնամյակում, ամենայն հավանականությամբ, կհասնի նպատակադրած թիրախներին: Դրանում իրենց մեծ դերակատարումը կունենան նաև գլոբալ աշխարհակարգում կանխատեսվող փոփոխությունները: Սպառազինությունների համաշխարհային շուկան ունի իր օրենքները. եթե այն զրաղեցնում են ուրիշները, ապա վերադարձը շուկա դառնում է շատ դժվար, հաճախ՝ անհնար:

ԳԼՈՒԽ 2 ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1 Տնտեսության առկա վիճակը. մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոփոխման միտումները

Աշխարհաքաղաքական ներկայիս պայմաններում, որը լի է գլոբալ մարտահրավերներով, միջազգային տարբեր կառույցների կողմից քննարկվում են համաշխարհային տնտեսության զարգացման նոր բևեռների ձևավորման հնարավորությունները: Այս առումով, դիտակետում է նաև Հնդկաստանը, որը տնտեսական ներուժի յուրացման բավարար նախադրյալներ ունի համաշխարհային տնտեսության զարգացման ապագա «լոկոմոտիվի» դերը ստանձնելու համար:

Անվանական ՀՆԱ մեծությամբ (2022 թ.՝ 3,42 տրլն ԱՄՆ դոլար) Հնդկաստանն աշխարհում հինգերորդն է. գերազանցում է Միացյալ Թագավորությանը: Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատումներով՝ Հնդկաստանի տնտեսությունը 2027 թ. առաջ կանցնի Ճապոնիայի և Գերմանիայի տնտեսություններից և կզբաղեցնի երրորդ տեղը (գծապատկեր 2.1):




Գծապատկեր 2.1 **Անվանական ՀՆԱ-ն ընթացիկ գներով, տրլն ԱՄՆ դոլար, 1980–2028 թթ.[168]**

Չնայած համաշխարհային տնտեսության ցնցումներին և գլոբալ մարտահրավերներին՝ Հնդկաստանը համարվում է աշխարհի ամենաարագ աճող

[168] Աղբյուրը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների բազա, https://www.imf.org/external/datamapper/profile/DEU

տնտեսություններից մեկը, որի տնտեսական աճը 2023 ֆինանսական տարում (2023 թ. ապրիլի 1-ից մինչև 2024 թ. մարտի 31-ը) կազմել է 7,6%[169]: Միջազգային տարբեր կառույցների գնահատումներով կանխատեսվում է, որ 2025 թ. Հնդկաստանի ՀՆԱ-ն կաճի 6,2%–7%-ով[170]:



Գծապատկեր 2.2

Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ընթացիկ գներով, ԱՄՆ դոլար) և տնտեսական աճի (%) փոփոխման միտումները 2000–2022 թթ.[171]


Չնայած անվանական ՀՆԱ մեծությամբ Հնդկաստանն առաջատար հնգյակում է, սակայն բնակչության մեկ շնչի հաշվով նույն ցուցանիշով աշխարհում 140-րդն է՝ հետ մնալով BRICS-ի մյուս երկրներից: Հնդկաստանի՝ մեկ բնակչի հաշվով ՀՆԱ ցուցանիշը 2022 թ. կազմել է 2411 ԱՄՆ դոլար (գծապատկեր 2.2 և 2.3): Ըստ Համաշխարհային բանկի դասակարգման, որի հիմքում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշն է, Հնդկաստանը դասվում է միջինից ցածր եկամուտ ունեցող երկիր: Համաշխարհային բանկի գնահատումներով՝ 2047 թ. իր անկախության ձեռքբերումից մեկ դար անց Հնդկաստանը կհասնի միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներին[172]:

[169] Աղբյուրը՝ Asian Development Outlook (ADO) April 2024: India, Asian Development Bank, էջ 146, https://www.adb.org/sites/default/files/publication/957856/asian-development-outlook-april-2024.pdf

[170] Աղբյուրը՝ Indian Economic Monitor, Boston Consulting Group, March 2024, էջ 17, https://web-assets.bcg.com/c4/0c/73dd6c0b4d5ba8c3117fd678ead5/bcg-india-economic-monitor-march-2024.pdf

[171] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա, https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AZ-AM-GE-XT

[172] Աղբյուրը՝ The World Bank in India, https://www.worldbank.org/en/country/india/overview



Գծապատկեր 2.3

Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (ընթացիկ գներով, ԱՄՆ դոլար) BRICS-ի և զարգացած երկրներում[173]


Հարկ է նշել, որ Հնդկաստանի տնտեսական աճին առավելապես նպաստել է համախառն կապիտալի կուտակումը, ինչը վկայում է, որ տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը ներդրումներն են: Այսպես՝ 2023 ֆինանսական տարում համախառն կապիտալ կուտակումը աճել է 10,2%-ով, որը նպաստել է 3,4%-ով ՀՆԱ աճին: Հարկ է նշել, որ նույն ֆինանսական տարում ՀՆԱ-ում հիմնական կապիտալի համախառն կուտակման մասնաբաժինը վերջին տասնամյակում հասել է ամենաբարձր մակարդակին (31,3%, գծապատկեր 2.4), ինչը նախադրյալներ է ստեղծում տնտեսական ներուժի յուրացման հնարավորությունների ընդլայնման և երկարաժամկետում կայուն տնտեսական աճի ապահովման համար: Սպառումը, որը կազմում է ՀՆԱ շուրջ 60%-ը, համեմատաբար փոքր աճ է գրանցել (3%), որը 2,1%-ով է նպաստել տնտեսական աճին: Արտահանումը ևս համեստ աճ է արձանագրել (1.5%), մինչդեռ ներմուծումը 10,9%-ով է աճել, ինչը հիմնականում պայմանավորված է ներքին պահանջարկի աճով: Արդյունքում զուտ արտահանումը կրճատվել և հանգեցրել է տնտեսական աճի կրճատմանը 2,3%-ով[174]:

Անդրադառնալով Հնդկաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքին՝ կարելի է նկատել, որ տնտեսական աճին առավելապես նպաստել է արդյունաբերության, շինարարության և ծառայությունների ոլորտների աճը: Այսպես՝ արդյունաբերության ոլորտի աճը կազմել է 8.5%, շինարարության աճը՝ 10,7%, իսկ ծառայությունների ոլորտը, որը կազմում է ՀՆԱ շուրջ 50%-ը, աճել է 7,5%-ով՝ հիմնականում ֆինանսական, անշարժ գույքի և մասնագիտական ծառայությունների հաշվին[175]:


[173] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա, https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=IN-CN-RU-BR-ZA-US-DE-GB

[174] Աղբյուրը՝ Asian Development Outlook (ADO) April 2024: India, Asian Development Bank, էջ 147, https://www.adb.org/sites/default/files/publication/957856/asian-development-outlook-april-2024.pdf

[175] Աղբյուրը՝ Asian Development Outlook (ADO) April 2024: India, Asian Development Bank, էջ 146, https://www.adb.org/sites/default/files/publication/957856/asian-development-outlook-april-2024.pdf



Գծապատկեր 2.4 **ՀՆԱ կառուցվածքն ըստ օգտագործման, %[176]**



Գծապատկեր 2.5 **Համախառն ավելացված արժեքի աճի տեմպն ըստ տնտեսության ճյուղերի, 2013–2014 թթ. և 2023–2024 թթ.[177]**

[176] Աղբյուրը՝ Annual Estimates of GDP at current prices (for 2011-12 to 2023-24),Ministry of Statistics and Programme Implementation, Government of India, https://esankhyiki.mospi.gov.in/catalogue?page=0&search=&q=Gross+Domestic+Product+%28GDP%29

[177] Աղբյուրը՝ Annual Estimates of GDP at current prices (for 2011-12 to 2023-24), Ministry of Statistics and Programme Implementation, Government of India, https://esankhyiki.mospi.gov.in/catalogue?page=0&search=&q=Gross+Domestic+Product+%28GDP%29

Համեմատելով Հնդկաստանի ՀՆԱ ճյուղային կառուցվածքն իր խմբի երկրների տնտեսությունների կառուցվածքի հետ՝ կարելի է նկատել, որ Հնդկաստանի ճյուղային կառուցվածքի տրամաբանությունը համապատասխանում է միջինից ցածր եկամուտ ունեցող երկրների տնտեսական կառուցվածքին: Միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համեմատության մեջ ակնառու է գյուղատնտեսության ոլորտի մեծ մասնաբաժինը Հնդկաստանում, փոխարենը՝ ցածր է արդյունաբերության տեսակարար կշիռը (աղյուսակ 2.1): Դրական է համարվում այն հանգամանքը, որ մշակող արդյունաբերության ոլորտում ստեղծված ավելացված արժեքի շուրջ կեսը բաժին է ընկնում միջին և բարձր տեխնոլոգիատար ապրանքներին[178]:

Աղյուսակ 2.1

Հնդկաստանի և եկամուտների տարբեր խմբերի երկրների տնտեսությունների կառուցվածքը, 2022 թ., %[179]

	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն	Մշակող արդյունաբերություն	Ծառայություններ
Ցածր եկամուտներով երկրներ	25.6	25.4	10	34.4
Միջինից ցածր եկամուտներով երկրներ	15.5	29	15	48.7
Միջինից բարձր եկամուտներով երկրներ	6.9	36.6	23	53.1
Բարձր եկամուտներով երկրներ	1.3[180]	22.4	13.2[181]	69.9
Հնդկաստան	16.7	25.7	13	48.4

Հարկ է նշել, որ, ըստ Համաշխարհային բանկի տվյալների, վերջին երկու տասնամյակում տնտեսական աճը նպաստել է ծայրահեղ աղքատության մակարդակի կրճատմանը: 2011–2019 թթ. Հնդկաստանում կիսով չափ կրճատվել է ծայրահեղ աղքատության մեջ (օրական 2,15 ԱՄՆ դոլարից ցածր) ապրող բնակչության տեսակարար կշիռը: Սակայն վերջին տարիներին՝ հատկապես համավարակից հետո, աղքատության կրճատման տեմպը դանդաղել է:

Չնայած Հնդկաստանում իրականացվող բարեփոխումներին՝ առանցքային հիմնախնդիրներից մեկը շարունակում է մնալ անհավասարության անհամեմատ բարձր մակարդակը. Ջինիի գործակիցը, ըստ սպառման, վերջին երկու տասնամյակում կազմում է շուրջ 35%:

Խնդրահարույց է նաև անվանական աշխատավարձի ցածր մակարդակը: Հնդկաստանի հետնապատի դիրքը եվրոպական և նաև հարևան երկրների նկատմամբ ակնհայտ է նույնիսկ նվազագույն աշխատավարձի պարզագույն


[178] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա, https://data.worldbank.org/indicator/NV.MNF.TECH.ZS.UN?locations=IN-XT-XN

[179] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա, https://data.worldbank.org/indicator

[180] Ցուցանիշը հաշվարկված է 2021 թ. համար:

[181] Ցուցանիշը հաշվարկված է 2021 թ. համար:

«Լեգատում» կազմակերպության կողմից մշակված *բարգավաճման հաւմաթիվ* **(Legatum Prosperity Index),** որը բարգավաճումը գնահատում է որպես ներառական հասարակության, բաց տնտեսության և մարդկային զարգացման ամբողջություն, Հնդկաստանը 2023 թ. աշխարհի 167 երկրների շարքում զբաղեցրել է 103-րդ տեղը[187]: Հարկ է նշել, որ, 2011 թ. համեմատությամբ Հնդկաստանն իր դիրքը բարելավել է 5 հորիզոնականով, սակայն շարունակում է հետ մնալ Կենտրոնական և Հարավային Ասիայի 4 երկրներից:



Գծապատկեր 2.8

Բարգավաճման համաթվի բաղադրիչները, 2013 թ. և 2023 թ.[188]

Հարկ է նշել, որ Հնդկաստանը Կենտրոնական և Հարավային Ասիայում առաջատարն է ձեռնարկատիրության պայմանների, կառավարման, ներդրումային միջավայրի, ենթակառուցվածքների և շուկայի հասանելիության բաղադրիչներով, մինչդեռ վատագույն արդյունքն է արձանագրել շրջակա միջավայր հենասյունով: Վերջին տասնամյակում առավել շոշափելի որակական տեղաշարժեր արձանագրվել են սոցիալական կապիտալի բաղադրիչով, որը գնահատում է քաղաքացիական և սոցիալական ներգրավվածությունը, հասարակական նորմերն ու հանդուրժողականությունը:

Տնտեսական առաջընթացը և բարեկեցությունը մեծապես կախված են մարդկային կապիտալի զարգացման մակարդակից: Դա բնութագրող առավել առանցքային ցուցիչներից է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից հաշվարկվող *մարդկային զարգացման համաթիվը,* որը գնահատում է երկրների ձեռքբերումները մարդկային զարգացման

[187] Աղբյուրը՝ The Legatum Prosperity Index 2023, Legatum Institute, https://www.prosperity.com/globe#IND
[188] Նույն աղբյուրը:

երեք հիմնական ոլորտներում՝ կենսամակարդակ, առողջություն և կրթություն: 2022 թ. Հնդկաստանը 193 երկրների շարքում զբաղեցրել է 134-րդ տեղը և պատկանում է մարդկային զարգացման միջին մակարդակ ունեցող երկրների շարքին: 2022 թ., 1990 թ. համեմատությամբ, Հնդկաստանի մարդկային զարգացման համաթվի աճը կազմել է 48,4%: Նախորդ տարվա համեմատությամբ Հնդկաստանը դրական տեղաշարժեր է արձանագրել մարդկային զարգացման համաթվի բոլոր ցուցանիշներով: Այսպես՝ կյանքի սպասվող տևողությունը 67,2-ից աճել է՝ հասնելով 67,7-ի, կրթության սպասվող տևողությունը 12,6 է, կրթության միջին տևողությունը՝ 6,57, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամուտը 6542 ԱՄՆ դոլարից հասել է 6951 ԱՄՆ դոլարի[189]:

Աղյուսակ 2.2

Մարդկային զարգացման համաթիվն ու դրա բաղադրիչները, 2022 թ.[190]


	Մարդկային զարգացման համաթիվ	*Կյանքի սպասվող տևողություն*	*Կրթության սպասվող տևողություն*	*Կրթության միջին տևողություն*	*Բնակչության մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամուտը (ՀԱԵ)*
Հնդկաստան	*0.644*	*67.7*	*12.6*	*6.6*	*6,951*
Հարավային Ասիա	0.641	68.4	11.9	6.6	6,972
ՏՀԶԿ	0.906	80.1	16.6	12.2	46,318
Զարգացող երկրներ	0.694	70.5	12.5	7.6	11,125
Աշխարհ	0.739	72.0	13.0	8.7	17,254

Հարկ է նշել, որ սոցիալական բևեռացվածության և եկամուտների անհավասարության բարձր մակարդակը բացասաբար են անդրադառնում Հնդկաստանում մարդկային ներուժի զարգացման վրա: Այսպես՝ անհավասարությամբ ճշգրտված մարդկային զարգացման համաթիվը 2022 թ. կազմել է 0,444, այսինքն՝ անհավասարության հետևանքով Հնդկաստանի մարդկային զարգացման համաթվի կորուստը 31,1 տոկոս է: Հարկ է նշել, որ ազդեցությունն առավել նկատելի է ինչպես եկամուտների (37.4%), այնպես էլ կրթության (36.9%) բաղադրիչի մասով:

«Ժառանգություն» հիմնադրամի կողմից մշակվող տնտեսական ազատության համաթվով, որը գնահատում է երկրների իրավունքի գերակայության,

[189] Աղբյուրը՝ Human Development Report 2023/2024, Breaking the gridlock, Reimagining cooperation in a polarized world, The United Nations Development Programme, էջ 276, https://hdr.undp.org/system/files/documents/global-report-document/hdr2023-24reporten.pdf
[190] Աղբյուրը՝ Human Development Report 2023/2024, Breaking the gridlock, Reimagining cooperation in a polarized world, The United Nations Development Programme, էջ 286, https://hdr.undp.org/system/files/documents/global-report-document/hdr2023-24reporten.pdf

պետության չափի, կարգավորման արդյունավետության և շուկայի բացության ցուցանիշները, «Տնտեսական ազատություն - 2024» վարկանիշում Հնդկաստանը զբաղեցրել է 126-րդ տեղը 176 երկրների շարքում և համարվել «առավելապես ոչ ազատ» երկիր[191]:



Գծապատկեր 2.9 **«Տնտեսական ազատության համաթիվ - 2024»-ի բաղադրիչները[192]**

Գծապատկեր 2.9-ից կարելի է նկատել, որ Հնդկաստանը առավելապես հետ է մնում հարկաբյուջետային քաղաքականության բաղադրիչով, ինչը վկայում է այս ուղղությամբ պետական քաղաքականության բացերի վերացման և բարելավման անհրաժեշտության մասին:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ վերջին տարիներին Հնդկաստանում իրականացված ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումները նպաստել են տնտեսության առանձին ոլորտներում որակական դրական տեղաշարժերին: Տնտեսական քաղաքականության առանձին ուղություններում Հնդկաստանը նշանակալի հաջողությունների է հասել՝ հիմքեր ստեղծելով տնտեսության մրցունակության բարձրացման համար: Անկախության ավելի քան յոթ տասնյակ տարիների ընթացքում Հնդկաստանի տնտեսությունը առաջընթաց է արձանագրել տնտեսական աճի բարձր տեմպի, ենթակառուցվածքների զարգացման, տեխնոլոգիատար ապրանքների արտադրության զարգացման, գյուղատնտեսության ոլորտի արագ աճի, խնայողությունների և ներդրումների աճի, տնտեսական դիմադրողականության աճի ցուցանիշներով: Սակայն աղքատությունը և եկամուտների անհավասարությունը շարունակում են մնալ այն առանցքային հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են Հնդկաստանի երկարաժամկետ կայուն զարգացման նպատակների

[191] Աղբյուրը՝ «Ժառանգություն» (Heritage) հիմնադրամի «Տնտեսական ազատության համաթիվ - 2024» գեկույց, https://www.heritage.org/index/pages/report


[192] Նույն աղբյուրը:

իրագործմանը: Այս առումով, տնտեսական քաղաքականության դիտակետում պետք է մշտապես լինի սոցիալական լարվածության մեղմանն ուղղված հետևողական և կենսունակ քաղաքականության իրագործումը, որը երկարաժամկետում տնտեսության մրցունակության բարձրացման և կայուն զարգացման անկյունաքարն է:

2.2 Տնտեսության հիմնական ոլորտների զարգացման պատկերը և հեռանկարները

2.2.1. Արդյունաբերություն

Հնդկաստանը աշխարհի ամենաարագ զարգացող և արդյունաբերության ոլորտով առաջատար խոշոր տնտեսություններից մեկն է: Հնդկաստանի արդյունաբերության ոլորտը բազմազան է և առանցքային դեր ունի տնտեսության մեջ՝ նպաստելով թե՛ ՀՆԱ, թե՛ զբաղվածության և թե՛ արտահանման աճին: Բացի գործունեության ավանդական ճյուղերից՝ մշակող արդյունաբերությունից, հանքարդյունաբերությունից, շինարարությունից և կոմունալ ծառայություններից, տարիների ընթացքում ոլորտը զարգացել է՝ զարկ տալով տեղեկատվական տեխնոլոգիաների, դեղագործության, ավտոմոբիլաշինու-թյան ճյուղերին:



Գծապատկեր 2.10 **Արդյունաբերության և մշակող արդյունաբերության ավելացված արժեքի փոփոխման միտումները, մասնաբաժինը ՀՆԱ-ում, 2013–2023 թթ., %[193]**

[193] World Bank, Manufacturing, value added (% of GDP) – India, https://data.worldbank.org/indicator/NV.IND.MANF.ZS?locations=IN, Industry (including construction), value added (% of GDP), https://data.worldbank.org/indicator/NV.IND.TOTL.ZS

Համաձայն Համաշխարհային բանկի վերջին զեկույցի՝ Հնդկաստանի տնտեսությունը շարունակում է կայուն տեմպերով զարգանալ՝ չնայած արտաքին շոկերին[194]: 2024 թվականի հոկտեմբերի դրությամբ արդյունաբերության ոլորտի մասնաբաժինը Հնդկաստանի ընդհանուր համախառն ավելացված արժեքում կազմել է 27.62%[195]: Գծապատկեր 2.10-ից ակնառու է, որ 2013–2023 թթ. ժամանակահատվածում Հնդկաստանի ՀՆԱ-ում ընդհանուր արդյունաբերության (ներառյալ շինարարությունը), ինչպես նաև մշակող արդյունաբերության ոլորտները նվազող շարժընթաց են ունեցել: Ընդհանուր արդյունաբերության մասնաբաժինը 2013 թվականի 28.4%-ից նվազել է՝ 2023 թվականին հասնելով մինչև 25%-ի, իսկ մշակող արդյունաբերության բաժինը նույն ժամանակահատվածում 15.3%-ից հասել է 12.8%-ի (գծապատկեր 2.10): Անկումն առավել նկատելի է եղել 2020 թվականին, ինչը պայմանավորված է գերազանցապես COVID-19 համավարակով, որը խաթարել էր համաշխարհային արտադրական և արդյունաբերական շղթաները:

2020 թվականից հետո արդյունաբերությունը մասամբ վերականգնվել է, սակայն մշակող արդյունաբերության մասնաբաժինը շարունակաբար նվազել է, որի հետևանքով էլ արդյունաբերության ոլորտի աճի տեմպը դանդաղել է (գծապատկեր 2.11):

Հնդկաստանի հանքարդյունաբերության ոլորտը տնտեսության մեջ հիմնարար նշանակություն ունի հատկապես մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների հսկայական պաշարների շնորհիվ: Օգտակար հանածոների հսկայական պաշարները հիմք են հանդիսանում երկրի հանքարդյունաբերության ոլորտի առաջխաղացման համար: Հնդկաստանն արտադրում է մինչև 95 տեսակի օգտակար հանածոներ, ներառյալ՝ 4 վառելիքային, 10 մետաղական, 23 ոչ մետաղական, 3 ատոմային և 55 այլ տեսակի հանքանյութեր (ներառյալ շինարարական և այլ նյութեր)[196]:


Թեև հանքարդյունաբերությունը հումքի հիմնական մատակարարն է և էական նշանակություն ունի Հնդկաստանի էներգետիկ և արդյունաբերական կարիքները հոգալու համար, այնուամենայնիվ, մշակող արդյունաբերության ոլորտը, ավելի մեծ ավելացված արժեք ստեղծելով, ապահովում է ոլորտի համեմատաբար ավելի մեծ ներդրումը համախառն ավելացված արժեքում: 2023 ֆինանսական տարվա վերջում Հնդկաստանում հանքարդյունաբերության արտադրությունն աճել է մոտ 5.8 տոկոսով[197]:

[194] India's Economy to Remain Strong Despite Subdued Global Growth, https://www.worldbank.org/en/news/press-release/2024/09/03/india-s-economy-to-remain-strong-despite-subdued-global-growth

[195] Sector-wise GDP of India, https://statisticstimes.com/economy/country/india-gdp-sectorwise.php

[196] India.Metals & Mining, https://www.investindia.gov.in/sector/metals-mining

[197] Mining industry growth rate in India FY 2013-2024, https://www.statista.com/statistics/661316/mining-industry-production-growth-rate-india/#:~:text=At%20the%20end%20of%20fiscal,previous%20year%2C%20at%208.2%20percent.



Գծապատկեր 2.11

Հնդկաստանի մշակող արդյունաբերության արտադրանքը, 2000–2023 թթ.[198]

Հնդկաստանը հիմնականում ինքնաբավ է մետաղական օգտակար հանածոներով, ներառյալ՝ բոքսիտ, քրոմիտ, երկաթի հանքաքար և լիգնիտ, ինչպես նաև հանքային վառելանյութերով, այդ թվում՝ ածուխ: Շարունակելով մնալ խոշոր խաղացող հանքարդյունաբերության համաշխարհային ոլորտում՝ Հնդկաստանի օգտակար հանածոների, հատկապես երկաթի հանքաքարի և ածխի արտահանումը զգալիորեն նպաստում է նրա առևտրային հաշվեկշռի բարելավմանը: Հնդկաստանը ածխի խոշոր արտադրող է՝ տարեկան մոտ 761.66 միլիոն տոննա ածուխ[199], որը կենսական նշանակություն ունի էներգիայի արտադրության համար՝ ապահովելով երկրի էլեկտրաէներգիայի արտադրության շուրջ 70%-ը:

Հնդկաստանը աշխարհում երկաթի հանքաքարի յոթերորդ խոշոր արտադրողն է: Երկաթի հանքաքարի արտադրությունը 2021–2022 թթ. 253.97 միլիոն տոննայից աճել է մինչև 258 միլիոն տոննա 2022-2023 թվականներին,[200] մինչդեռ 2022-2023 թվականներին արտահանումը կազմել է 1.75 միլիարդ ԱՄՆ դոլար՝ 2021-2022 թթ. համեմատությամբ նվազելով գրեթե 2 անգամ (3.18 միլիարդ դոլար): Արտահանման եկամուտների կտրուկ անկումը կարելի է վերագրել նվազող պահանջարկին կամ գների նվազմանը, քանի որ այս պարագայում արտահանման եկամուտները կարող են նվազել, նույնիսկ եթե արտադրությունը մնում է կայուն կամ աճում է[201]:

[198] India Manufacturing Output 1960-2024, https://www.macrotrends.net/global-metrics/countries/ind/india/manufacturing-output


[199] Coal Production by Country, https://www.worldometers.info/coal/coal-production-by-country/#india

[200] Aatmanirbhar Bharat In Mining Sector, https://pib.gov.in/PressReleasePage.aspx?PRID=2038445

[201] Iron ore prices, https://tradingeconomics.com/commodity/iron-ore

2024 թվականի փետրվարին, 2023 թ. համեմատությամբ, մի շարք օգտակար հանածոների արտադրության ծավալն էական աճ է գրանցել. այդ թվում՝ ոսկին՝ 86%-ով, պղնձի կոնցենտրացիան՝ 28.7%-ով, բոքսիտը և քրոմիտը՝ 21%-ով, ֆոսֆորիտը՝ 19%-ով, կրաքարը՝ 13%-ով: Ածխի արտադրությունն աճել է 12%-ով, բնական գազինը՝ 11%-ով, նավթինը՝ 8%-ով, իսկ մանգանի հանքաքարինը՝ 6%-ով: Սակայն նվազման միտում են ցուցաբերել երկաթի հանքաքարը՝ 0.7%-ով, կապարը՝ 14%-ով[202]:


Հնդկաստանի արդյունաբերության ոլորտը կարևոր դեր է խաղում աշխատատեղերի ստեղծման և աղքատության նվազեցման գործում: Հնդկաստանում արդյունաբերության մեջ զբաղվածության մասնաբաժինը 2022 թվականին կազմել է 26,12%, այլ կերպ ասած՝ Հնդկաստանի աշխատունակ բնակչության շուրջ մեկ քառորդը ներգրավված է արդյունաբերության ոլորտում (գծապատկեր 2.12)[203]:



Գծապատկեր 2.12 **Զբաղվածության մակարդակը արդյունաբերության ոլորտում, 2000–2022 թթ., %[204]**

Գծապատկեր 2.13-ից կարելի է նկատել, որ մշակող արդյունաբերությունը շարունակում է մնալ Հնդկաստանի արդյունաբերության հատվածում հիմնական գործատուն, մինչդեռ հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածության մակարդակն անհամեմատ ցածր է: Հարկ է նշել, որ 2018–2019 ֆինանսական տարվանից մինչև 2021–2022 թթ. մշակող արդյունաբերությունում նույնպես նկատվում է զբաղվածության մակարդակի անկում:

[202] Metals And Mining Industry Report, Aug, 2024, https://www.ibef.org/industry/metals-and-mining
[203] India - Employment In Industry (% Of Total Employment), https://tradingeconomics.com/india/employment-in-industry-percent-of-total-employment-wb-data.html
[204] Employment in industry (% of total employment) (modeled ILO estimate) - India, https://data.worldbank.org/indicator/SL.IND.EMPL.ZS?locations=IN




Գծապատկեր 2.13 **Աշխատողների տոկոսային բաշխումն ըստ արդյունաբերության ճյուղերի, 2017–2022 թթ.[205]**

Մշակող արդյունաբերության բնագավառը ներառում է մի շարք աշխատատար ճյուղեր, ինչպիսիք են՝ մեքենաշինությունը, տեքստիլ արդյունաբերությունը, էլեկտրոնիկան և դեղագործությունը: Այս ոլորտները ստեղծում են մեծ թվով աշխատատեղեր՝ պահանջելով տարբեր հմտություններ ունեցող մասնագետներ[206]:

Համադրելով ՀՆԱ-ում արդյունաբերության ոլորտի մասնաբաժնի և ոլորտում զբաղվածության մակարդակի ցուցանիշները՝ կարելի է պատկերացում կազմել ոլորտի արտադրողականության մասին: Այս առումով, ՀՆԱ-ում արդյունաբերության ոլորտի նվազման միտումը և զբաղվածության մասնաբաժնի աճը վկայում են արդյունաբերության ոլորտի արտադրողականության աճի դանդաղման մասին: Դա, ըստ էության, համադրելի է Հնդկաստանի աշխատանքի արտադրողականության աճի նվազող միտումի հետ (գծապատկեր 2.14):

Ինչպես տեսնում ենք, Հնդկաստանի աշխատանքի արտադրողականության ցուցանիշները նվազման միտում ունեն դիտարկվող ժամանակահատվածում, և BRICS երկրների հետ համեմատության մեջ այս երկիրը վերջին տարիներին զիջում է Չինաստանին և Ռուսաստանին:

[205] Industry-wise percentage distribution of workers, https://dge.gov.in/dge/sites/default/files/-202305/Employment_and_Unemployment_scenario_of_India_May_2023.pdf
[206] Number of people employed across major sectors in India in financial year 2023, https://www.statista.com/statistics/1283990/india-sector-wise-employment/



Գծապատկեր 2.14

Աշխատանքի արտադրողականության աճի փոփոխման միտումները, 2011–2022 թթ., %[207]


Աշխատանքի արտադրողականության աճը միջազգային շուկայում խթանելու և մրցունակությունը պահպանելու համար Հնդկաստանի կառավարությունը իրականացնում է մի շարք նախաձեռնություններ («Make in India», «Digital India» և «Skill India»), որոնք նպատակ ունեն բարձրացնելու արդյունաբերական արտադրողականությունը՝ կենտրոնանալով հմտությունների զարգացման, տեխնոլոգիական ինտեգրման և օտարերկրյա ներդրումների խրախուսման վրա:

Հնդկաստանի արդյունաբերության ապրանքները մրցակցային մակարդակում արտադրելու և արտահանելու կարողությունը համակողմանիորեն վերլուծելու համար ստորև դիտարկել ենք արդյունաբերության մրցունակության համաթիվը (CIP, ԱՄՀ): Այն հաշվարկվում է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից և ցույց է տալիս արդյունաբերության ոլորտում ավելացված արժեքի ստեղծման շարժը, երկրի դիրքավորումը մշակող արդյունաբերության համաշխարհային դասակարգման սանդղակում, ինչպես նաև արդյունաբերության ոլորտի աճի որակը:

Հնդկաստանը ԱՄՀ համաթվի վարկանիշով 2022 թվականին զբաղեցրել է 40-րդ հորիզոնականը՝ 0.07 ցուցանիշով[208]՝ գրեթե անփոփոխ թողնելով նախորդ 2 տարիների ցուցանիշը:

[207] India Labour Productivity Growth, https://www.ceicdata.com/en/indicator/india/labour-productivity-growth#:~:text=What%20was%20India's%20Labour%20Productivity,table%20below%20for%20more%20data

[208] United Nations Industrial Development Organization, Competitive Industrial Performance Indexes, https://stat.unido.org/analytical-tools/cip?country=356




Գծապատկեր 2.15

Հնդկաստանի տնտեսական աճի և ԱՄՀ շարժընթացը, 1990–2022 թթ.[209]

1990–2022 թթ. Հնդկաստանի ՀՆԱ և ԱՄՀ շարժընթացների համեմատությունից պարզ է դառնում, որ, ընդհանուր առմամբ, այդ ցուցանիշների փոփոխությունների միջև կա որոշակի համադրելիություն: Մասնավորապես՝ տնտեսական աճի և անկման ժամանակահատվածներն ուղեկցվում են ԱՄՀ համապատասխան աճով և նվազմամբ: Ինչպես տեսնում ենք, 1990-ից մինչև 2000-ականները թե՛ արդյունաբերության մրցունակության համաթիվը, թե՛ ՀՆԱ-ն աճի դրական միտում են դրսևորել: Ուշագրավ է, որ անգամ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո՝ մինչև 2019 թ., համաթվի աճի տեմպը պահպանվել է՝ 2018 թվականին արձանագրելով ամենաբարձր ցուցանիշը (0.0816): Սակայն 2020 թվականին ՀՆԱ 5.78% անկումը ուղեկցվել է համաթվի նվազմամբ՝ 2019 թվականի 0.080-ից 2020 թ. հասնելով 0.072-ի: 2022 թ. ՀՆԱ աճը կազմել է 6.99%, իսկ CIP համաթիվը՝ 0.072՝ շարունակելով զիջել մինչհամավարակային մակարդակը (գծապատկեր 2.15):

BRICS-ի երկրները արդյունաբերության մրցունակության համաթվով տարբեր շարժընթաց են ունեցել: Համեմատելով BRICS-ի այլ երկրների հետ՝ կարող ենք նկատել, որ Չինաստանը ամրապնդել է առաջատարի իր դիրքերը, Ռուսաստանն ու Հնդկաստանը ԱՄՀ համաթվով կայունություն են ցուցաբերել, մինչդեռ Բրազիլիան և Հարավային Աֆրիկան նկատելի հետընթաց են արձանագրել (գծապատկեր 2.16):


[209] United Nations Industrial Development Organization, Competitive Industrial Performance, https://stat.unido.org/data/download?dataset=cip



Գծապատկեր 2.16

BRICS-ի երկրների ԱՄՀ համաթվի դիրքերի փոփոխությունը 2013–2022 թթ.[210]

Առավել համապարփակ վերլուծության կատարելու նպատակով դիտարկենք արդյունաբերության մրցունակության համաթվի բաղադրիչները: Բնակչության մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ավելացված արժեքի (MVA_{pc}) ցուցանիշը նվազման միտում է գրանցել. 2013-ի 0.014 մակարդակից 2022 թվականին կրճատվել է՝ կազմելով 0.007 (գծապատկեր 2.17):



Գծապատկեր 2.17


Բնակչության մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ավելացված արժեքի համաթվի շարժընթացը BRICS-ի երկրներում[211]

[210] United Nations Industrial Development Organization, Competitive Industrial Performance, https://stat.unido.org/data/table?dataset=cip

[211] UNIDO, Competitive Industrial Performance (CIP) index, https://stat.unido.org/data/download?dataset=cip

Սա վկայում է արդյունաբերության դանդաղ աճի մասին: Հարկ է նշել, որ Հնդկաստանի արդյունաբերական արտադրության ավելացված արժեքը բնակչության մեկ շնչի հաշվով՝ 324.50 ԱՄՆ դոլար, ամենացածրն է BRICS-ի երկրների շարքերում: Համեմատության համար նշենք, որ Չինաստանի ցուցանիշը շուրջ տասն անգամ գերազանցում է Հնդկաստանի ցուցանիշը:

Բնակչության մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի արտահանման համաթիվը (MX_{pc}) 2022 թվականին, նախորդ տարիների համեմատությամբ, համեստ աճ է արձանագրել՝ հասնելով 0.007-ի (գծապատկեր 2.18): Հետևաբար՝ դիտարկվող ենթահամաթվերի աննշան աճը բավարար չի եղել ԱՄՀ ընդհանուր գնահատականի վրա նշանակալի նպաստում արձանագրելու համար:




Գծապատկեր 2.18

Բնակչության մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի արտահանման համաթիվը (MXpc) BRICS-ի երկրներում[212]

Համեմատության համար նշենք, որ BRICS-ի անդամ մյուս երկրներում պատկերն այլ է: Չինաստանը առաջատար է բնակչության մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ավելացված արժեքի (2022 թվականին՝ 0.076) և բնակչության մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի արտահանման (2022 թվականին՝ 0.0576) ենթահամաթվերով՝ չնայած 2022 թվականին, 2021-ի համեմատությամբ, արդյունաբերական արտադրանքի արտահանման համաթվի որոշակի անկմանը: Ռուսաստանը և Բրազիլիան երկու համաթվերի գծով նվազում ունեն, սակայն համեմատաբար ավելի լավ դիրքերում են, քան Հնդկաստանը (գծապատկեր 2.18, 2.19):


[212] UNIDO, Competitive Industrial Performance (CIP) index, https://stat.unido.org/data/download?dataset=cip



Գծապատկեր 2.19

Մշակող արդյունաբերության ավելացված արժեքի մեջ միջին և բարձր տեխնոլոգիական արտադրությունների ավելացված արժեքի մասնաբաժինը BRICS-ի երկրներում[213]

Ուսումնասիրվող ժամանակահատվածում արդյունաբերության տեխնոլոգիական խորության և արդիականացման ենթահամաթվի ցուցանիշները տարբեր ուղղություններով են փոփոխվել: Միջին և բարձր տեխնոլոգիական արտադրությունների ավելացված արժեքի մասնաբաժինը դիտարկվող ժամանակահատվածում 2013 թվականի 0.38 մակարդակից 2022-ին հասել է 0.42-ի՝ այս ցուցանիշով առաջ անցելով անգամ Չինաստանից (գծապատկեր 2.19):



Գծապատկեր 2.20

Արդյունաբերականացման արդյունավետության ենթահամաթվի շարժընթացը BRICS-ի երկրներում[214]

[213] UNIDO, Competitive Industrial Performance (CIP) index, https://stat.unido.org/data/download?dataset=cip
[214] UNIDO, Competitive Industrial Performance (CIP) index, https://stat.unido.org/data/download?dataset=cip


Թեև արդյունաբերականացման արդյունավետության ենթահամաթիվը, որը ներառում է միջին և բարձր տեխնոլոգիական ապրանքների ավելացված արժեքի մասնաբաժինը մշակող արդյունաբերության ավելացված արժեքում և մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում ցուցանիշները, նախորդ տարիների համեմատությամբ որոշակի անկում է գրանցել, սակայն 2022-ի 0.40 արդյունքով զիջում է միայն Չինաստանին (գծապատկեր 2.20):

ԱՄՀ երրորդ խմբի ցուցանիշները վերաբերում են համաշխարհային տնտեսության մեջ երկրի արդյունաբերության ոլորտի գրաված տեղին, որոնք Հնդկաստանի դեպքում դիտարկվող ժամանակահատվածում դրական տեղաշարժ են արձանագրել: Մասնավորապես՝ Հնդկաստանի մասնաբաժինը համաշխարհային արդյունաբերական ավելացված արժեքի մեջ կայուն աճ է արձանագրել՝ 2013-ի 2.4%-ից 2022-ին հասնելով 3.1%-ի, ինչը վկայում է Հնդկաստանի արդյունաբերական հնարավորությունների ընդլայնման մասին:

Համաշխարհային առևտրի մասնաբաժինը հիմնականում տատանողական վարքագիծ է դրսևորել՝ 2022 թվականին հասելով 1.9 տոկոսի: Սա վկայում է, որ, չնայած գլոբալ մարտահրավերներին, ինչպիսին մատակարարման շղթայի խաթարումներն են, Հնդկաստանը պահպանել է իր մրցունակությունը համաշխարհային շուկայում:

Վերամշակող արդյունաբերական արտադրանքի մասնաբաժինը Հնդկաստանի ընդհանուր արտահանման մեջ տարեցտարի աճել է՝ 2013-ի 84%-ից 2022-ին հասնելով մինչև 90%-ի:

Հնդկաստանի արդյունաբերական արտադրանքի արտահանման որակի համաթիվը նույնպես դրական միտում ունի, ինչը վկայում է նորարարության և տեխնոլոգիական առաջընթացի մասին (գծապատկեր 2.21):



Գծապատկեր 2.21

Հնդկաստանի արդյունաբերական արտադրանքի արտահանման կառուցվածքը և որակը բնութագրող համաթվերի շարժընթացը 2013–2022 թթ.

Հնդկաստանի արդյունաբերական արտահանման մեջ միջին և բարձր տեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժինը 2013-ի 29%-ից 2020-ին հասել է աննախադեպ՝ 40%-ի, իսկ 2022-ին կազմել է 34%: Այս միտումը հուշում է դեպի տեխնոլոգիապես զարգացած ճյուղեր վերակողմնորոշման մասին, որոնք կենսական նշանակություն ունեն երկարաժամկետ մրցունակության համար:

Արտահանման որակի դրական կառուցվածքային տեղաշարժերի մասին է վկայում նաև Հնդկաստանի տնտեսական բարդության համաթիվը, որն արտացոլում է երկրի՝ բարդ ապրանքներ արտադրելու և արտահանելու կարողությունը. ըստ 2020 թվականի գնահատումների՝ կազմում է մոտ 0.42[215]: Այս ցուցանիշով BRICS-ի երկրների հետ համեմատության մեջ զիջում է միայն Չինաստանին (1.3): Առևտրի բարդության համաթվի գծով 2022 թվականին Հնդկաստանը բավական մեծ առաջընթաց է արձանագրել՝ 0.64, և 133 երկրների շարքում զբաղեցրել է 40-րդ տեղը[216]: Ցածր և միջինտեխնոլոգիական արտադրության և ռեսուրսատար արտահանման կենտրոնացվածության հետևանքով Հնդկաստանը դեռևս մնում է պակաս բարվոք դիրքերում:

Աղյուսակ 2.3

Հնդկաստանից արտահանվող հիմնական ապրանքախմբերը, 2023 թ., %[217]

ԱՏԳ	Ապրանքախումբը	Ընդհանուր արտահանման մեջ կոկոսը 2023 թ.
27	Հանքային վառելանյութեր, հանքային յուղեր և դրանց թորման արտադրանք. բիտումային նյութեր, հանքային	20.71
71	Բնական կամ մշակված մարգարիտներ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, պատված մետաղներ	7.75
85	Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ և դրանց մասեր. ձայնագրիչներ և վերարտադրիչներ, հեռուստացույց...	7.49
84	Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, մեքենաներ և մեխանիկական սարքեր, դրանց մասերը	6.79
30	Դեղագործական արտադրանք	4.94
87	Երկաթուղային կամ տրամվայի շարժակազմից բացի այլ տրանսպորտային միջոցներ և դրանց մասեր և պարագաներ	4.83
29	Օրգանական քիմիական նյութեր	4.52
72	Երկաթ և պողպատ	2.74
10	Հացահատիկային մշակաբույսեր	2.62
73	Երկաթից կամ պողպատից պատրաստված իրեր	2.26


[215] World Population Review, https://worldpopulationreview.com/country-rankings/economic-complexity-by-country

[216] The Observatory of Economic Complexity, Economic Complexity, https://oec.world/en/profile/country/ind#economic-complexity

[217] Trade Map, List of products exported by India, https://www.trademap.org/Product_SelCountry_TS.aspx?nvpm=1%7c699%7c%7c%7c%7cTOTAL%7c%7c%7c2%7c1%7c1%7c2%7c2%7c1%7c1%7c1%7c1%7c1

Արտահանման զամբյուղը ներառում է այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են նավթը, դեղագործական արտադրանքը, ոսկերչական իրերը, տեքստիլը և գյուղատնտեսական ապրանքները: Հարկ է նշել նաև, որ վերջին տարիներին նկատելի աճ է գրանցվել նաև էլեկտրոնիկայի և ինժեներական ապրանքների առումով:

Հնդկաստանը մասնագիտացած է համեմունքների սերմերի, այլ օրգանական միացությունների, գրանիտի, կոկոսի և այլ բուսական մանրաթելերի և սինթետիկ վերակառուցված ոսկերչական քարերի արտադրման ու արտահանման մեջ: Մասնագիտացումը չափվում է RCA համաթվի միջոցով, որը դիտարկում է Հնդկաստանի յուրաքանչյուր ապրանքի արձանագրված և ակնկալվող արտահանման հարաբերակցությունը (գծապատկեր 2.22):




Գծապատկեր 2.22

Առավել մասնագիտացված ապրանքները RCA համաթվով[218]

Ապրանքի բարդության համաթվի (PCI)՝ Հնդկաստանի արտահանման բարդությունը ոչ մետաղների այլ անօրգանական թթուների էսթերների (բացի բարդությունը ոչ մետաղների այլ անօրգանական թթուների էսթերների (բացի ջրածնի հալոգենիդներից), իոնափոխանակիչների, այլ օրգանական-անօրգանական միացությունների ապրանքներով է առանձնանում:

[218] The Observatory of Economic Complexity, Most Specialized Products by RCA Index, https://oec.world/en/profile/country/ind#most-specialized-products



Գծապատկեր 2.23 **PCI համաթվով ամենաբարդ ապրանքները**[219]

Հնդկաստանի արտադրանքի բարդության համաթվի (PCI) կառուցվածքը ցույց է տալիս, որ երկրի արտահանման մեջ առկա են ինչպես բարձր, այնպես էլ ցածր բարդության ապրանքներ (գծապատկեր 2.23): Հնդկաստանը մի քանի ոլորտում ունի մրցակցային առավելություններ, սակայն ցածր բարդության ապրանքների գերակշռությունը դեռևս սահմանափակում է մշակող արդյունաբերության զարգացման ներուժը՝ ավելի բարդ ապրանքներ արտադրող երկրների համեմատությամբ:

Այսպիսով՝ արդյունաբերության մրցունակության համաթվի և դրա բաղադրիչների ուսումնասիրությունից կարող ենք եզրակացնել, որ, չնայած առկա մարտահրավերներին և արտաքին շոկերին, Հնդկաստանի արդյունաբերության ոլորտը շարունակաբար հիմնվում է վերամշակող արդյունաբերության և տեխնոլոգիատար ապրանքների արտադրության վրա: Հնդկաստանի ԱՄՀ երրորդ խմբի ցուցանիշները, որոնք վերաբերում են համաշխարհային տնտեսության մեջ երկրի արդյունաբերության ոլորտի գրաված տեղին, դիտարկվող ժամանակահատվածում դրական տեղաշարժ են արձանագրել. Հնդկաստանի մասնաբաժինը համաշխարհային արդյունաբերական ավելացված արժեքի մեջ կայուն աճ է արձանագրել՝ 2013-ի 2.4%-ից 2022-ին հասնելով 3.1%-ի, ինչն արտացոլում է Հնդկաստանի արդյունաբերական հնարավորությունների ընդլայնումը: Վերամշակող արդյունաբերական արտադրանքի մասնաբաժինը Հնդկաստանի ընդհանուր արտահանման մեջ տարեցտարի աճել է՝ 2022-ին հասնելով մինչև 90%-ի: Երկրի արդյունաբերական արտահանման մեջ միջին և բարձր տեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժնի աճը հուշում է դեպի տեխնոլոգիապես զարգացած ճյուղեր վերակողմնորոշման մասին,

[219] The Observatory of Economic Complexity, Most Complex Products by PCI, https://oec.world/en/profile/country/ind#most-complex-products

որոնք կենսական նշանակություն ունեն երկարաժամկետ մրցունակության համար: Արտահանման որակի դրական կառուցվածքային տեղաշարժերի մասին է վկայում նաև Հնդկաստանի տնտեսական բարդության համաթվի ուսումնասիրությունը: Տեխնոլոգիական բարդության համաթվերի աճող մակարդակը վկայում է բարձր տեխնոլոգիաների արտադրության և արտահանման որակի բարելավման ուղղությամբ երկրի գրանցած առաջընթացի մասին: Չնայած առկա խնդիրներին և մարտահրավերներին՝ կարելի է արձանագրել, որ Հնդկաստանը հստակ քայլերով շարժվում է դեպի բարձր տեխնոլոգիատարություն և արդյունաբերության որակապես առավել բարձր մակարդակ ապահովելու ուղղությամբ:

2.2.2. Ագրոպարենային համակարգը

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (UNFPA) զեկույցում նշվում է՝ 2024 թ. կեսին Հնդկաստանը բնակչության թվով (1.44 մլրդ մարդ) գերազանցեց Չինաստանին (1.425 մլրդ մարդ) և աշխարհում դարձավ առաջատարը: Հիմնադրամը Հնդկաստանի բնակչության աճը կապում է երկրում սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման և մայրական մահացության մակարդակի նվազման հետ[220]: Առանձնահատուկ կարևորություն ունի Հնդկաստանում գյուղատնտեսության զարգացումը, քանի որ այս ոլորտն ապահովում է բնակչության սնունդն ու զբաղվածությունը: Բավական է նշել, որ Հնդկաստանի այգեգործության և անասնաբուծության ոլորտներին բաժին է ընկնում համաշխարհային գյուղատնտեսական արտադրանքի շոշափելի մասը: Երկրում գյուղատնտեսական արտադրությունից ստացված շահույթը վերջին 15 տարիների ընթացքում 87 մլրդ ԱՄՆ դոլարից հասել է 397 մլրդ ԱՄՆ դոլարի կամ աճել է 11%-ով[221]: Հնդկաստանն աշխարհում բացարձակ առաջատարն է կաթի, ջուտի և հատիկաընդեղենների արտադրությամբ, ինչպես նաև երկրորդ տեղում է բամբակի, բրնձի, շաքարեղեգնի, ցորենի, թեյի, գետնանուշի, էկզոտիկ մրգերի և համեմունքների արտադրությամբ:

Անկախ Հնդկաստանի առաջին վարչապետ Ջավահարլալ Ներուն սոցիալիստական հասարակության կողմնակից էր: Տնտեսության զարգացման առաջին երկու հնգամյա պլաններում (1951–1961 թթ.) նախատեսվում էր տնտեսության բոլոր ռազմավարական ճյուղերը տեղափոխել պետական հատված: Նրա սկզբունքներին հավատարիմ մնաց նաև Ինդիրա Գանդին (վարչապետ 1966–1977 և 1980–1984 թթ.), որի օրոք նույնպես պետական քաղաքականությունը հիմնականում սոցիալիստական էր: Այս ընթացքում գործարարությամբ զբաղվելու սահմանափակումները շատ էին, բայց հաջողություններ նույնպես կային: Բավական է նշել, որ, շնորհիվ գյուղատնտեսության արդիա-

[220] Индия заняла первое место в мире по численности населения, https://factor.am/ru/54722.html

[221] ТОП стран, в которых лучше всего развито сельское хозяйство, https://polymya-agro.by/news/top-stran-v-kotorykh-luchshe-vsego-razvito-selskoe-khozyaystvo/

կանացման, 1978 թվականից Հնդկաստանը դադարեցրեց սննդամթերքի ներմուծումը և հասավ պարենային ամբողջական ինքնաբավության[222]: Իսկ 1984 թ-ից հետո իրականացվեցին ժողովրդավարական բարեփոխումներ: Կառավարությունը որոշեց տնտեսությունը դնել ազատականացման ուղու վրա, և շուկայական հարաբերությունները դարձան տնտեսության զարգացման անկյունաքարը[223]:

Ներկայումս գյուղատնտեսությունը Հնդկաստանի տնտեսության կարևորագույն ճյուղն է, որին բաժին է ընկնում երկրի ՀՆԱ 18 տոկոսը և բնակչության մոտ 58%-ի ապրուստի հիմնական աղբյուրն է: Այս ճյուղում զբաղված է բնակչության ավելի քան 47 տոկոսը[224]:

Հնդկաստանը բրնձի, ցորենի և այլ հացահատիկային ապրանքների երկրորդ արտադրողն է աշխարհում: Համաշխարհային շուկայում հացահատիկի մեծ պահանջարկը նպաստավոր պայմաններ է ստեղծում հնդկական հացահատիկային արտադրանքի արտահանման համար: Հնդկաստանի կառավարությունը 2023–2024 թվականներին պարենային հացահատիկի արտադրության ծավալը նախատեսում է 332 մլն տոննա, ինչը 1,5 մլն տոննայով ավելի է նախորդ ժամանակահատվածի մակարդակից: Մասնավորապես՝ ցորենի բերքը կանխատեսվում է 114 մլն տոննա: Յուղատու և հատիկաընդեղեն մշակաբույսերի արտադրությունը սպասվում է համապատասխանաբար՝ 44 և 29,2 մլն տոննա[225]:

Հնդկաստանին բաժին է ընկնում աշխարհի վարելահողերի 11%-ը: Չնայած կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած մարտահրավերներին՝ Հնդկաստանը ապահովել է ցորենի արտադրության կայուն աճ՝ 2016–2017 թվականների 87 մլն տոննա, ապագայում կանխատեսվում է մինչև 110 մլն տոննա: Համեմատվող ժամանակահատվածում բրնձի արտադրությունը 109 միլիոն տոննայից հասնելու է 132 միլիոն տոննայի[226]: Դրա հետ մեկտեղ, Հնդկաստանը աշխարհի խոշորագույն արտադրողների շարքում ունի հացահատիկի հետբերքահավաքային կորուստների ամենաբարձր ցուցանիշներից մեկը: Թեև ցորենի և բրնձի արտադրությունը կտրուկ աճել է, վերջին տարիներին վատթարացել է այդ հացահատիկները պահելու Հնդկաստանի կարողությունը: Հնդկաստանում բերքահավաքից հետո տարեկան կորուստները գնա-

[222] Экономика Индии: рост, структура, особенности, https://trends.rbc.ru/trends/social/62b9b3b59a7947336eed1321

[223] https://cwejournal.hse.ru/article/view/19872/18442

[224] Food security at the top of India's agenda, https://www.fao.org/in-action/food-security-at-the-top-of-indias-agenda/en/, Сельскохозяйственная промышленность - в Индии Анализ размеров и долей - Тенденции роста и прогнозы (2024–2029 гг.) Source, https://www.mordorintelligence.com/ru/industry-reports/agriculture-industry-in-india

[225] Производство зерна в Индии в 2023/24 МГ может увеличиться на 1,5 млн тонн в год, https://www.apk-inform.com/ru/news/1536761

[226] Сельское хозяйство Индии, https://exp.idk.ru/news/world/selskoe-khozyajstvo-indii-2/642273/

հատվում են 10%-ից մինչև 15%՝ հիմնականում անբավարար պահեստավորման և անարդյունավետ բաշխիչ ցանցերի պատճառով: ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տվյալներով՝ երկրի պարենային հացահատիկի ընդհանուր արտադրությունը 2023 թվականին հասել է 311 միլիոն տոննայի, սակայն դրա պահեստավորման հզորությունը կազմում է ընդամենը 145 միլիոն տոննա՝ պահանջվողի կեսից պակաս:

Այդուհանդերձ, Հնդկաստանը գյուղատնտեսական արտադրանքի առաջատար արտահանողներից մեկն է: Հիմնական ապրանքներն են բրինձը, կաթը, գոմեշի միսը, ինչպես նաև ընդեղենը, համեմունքները և որոշ մրգեր:

1960–1970-ականների Կանաչ հեղափոխությունը, որը ներառում էր գյուղատնտեսության մեքենայացման մակարդակի բարձրացում, սերմերի պաշարների բարելավում, ոռոգման համակարգի արդիականացում և պարարտանյութերի օգտագործման ընդլայնում, թույլ տվեց Հնդկաստանին ազատվել սովի խնդրից: 1990-ականներին իրականացված տնտեսության ազատականացման շնորհիվ հանրապետությունը ներկայումս պարենամթերքի զուտ արտահանող է, այսինքն՝ ավելի շատ արտահանում է, քան ներմուծում:



Նկար 2.1

Հայդարաբադի գյուղատնտեսության միջազգային գիտական կենտրոնի սորգոյի դաշտում

Հնդկաստանի գյուղատնտեսության հիմնական հատվածը շարունակում է մնալ բուսաբուծությունը, որը կազմում է գյուղատնտեսության ոլորտում հավասարն ավելացված արժեքի ավելի քան 50%-ը: ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տվյալներով՝ 2021 թվականին Հնդկաստանը վարելահողերի 168 միլիոն հա տարածքով առաջին տեղն է զբաղեցրել աշխարհում: Բացի այդ, Հնդկաստանը գյուղատնտեսական մի շարք մշակաբույսերի արտադրության համաշխարհային առաջատարն է:

Մասնավորապես՝ աշխարհում առաջին տեղն է զբաղեցնում հատիկաընդեղենների, համեմունքների, բանանի, մանգոյի արտադրությամբ, երկրորդն է բրնձի, ցորենի, բամբակի, շաքարեղեգի, հնդկական ընկույզների, գետնանուշի մշակությամբ[227]:

Աղյուսակ 2.4

Բուսաբուծական արտադրանքների արտադրությունը Հնդկաստանում, մլն տոննա[228]

	2017	2018	2019	2020	2021
Շաքարեղեգն	306,1	379,9	405,4	370,5	405,4
Հացահատիկային մշակաբույսեր	311,4	321,6	325,0	342,1	356,3
Այդ թվում					
Բրինձ	169,1	174,7	178,3	186,5	195,4
Ցորեն	98,5	99,9	103,6	107,9	109,6
Եգիպտացորեն	25,9	28,8	27,7	28,8	31,7
Այլ տեսակներ	17,9	18,2	15,4	18,9	19,6
Ընձյուղային մշակաբույսեր	175,3	183,5	182,5	185,4	194,8
Այդ թվում					
Կարտոֆիլ	48,6	51,3	50,2	48,6	54,2
Միս	22,4	23,3	22,8	26,1	26,6
Ձուկ	20,7	19,8	19,0	20,6	21,1
Այլ ընձյուղներ	83,6	89,1	90,5	90,1	92,9

Աղբյուրը՝ FAOSTAT, USDA, India Ministry of Agriculture & Farmers' Welfare

Հնդկաստանի կլիմայական պայմանների բազմազանությունը հնարավորություն է ընձեռում ստանալու կայուն և առատ բերք: Երկրում գյուղատնտեսական երեք սեզոն կա. Խարիֆի (աշնանային) սեզոնի մշակաբույսերը ցանում են հունիս-հուլիս ամիսներին մուսոնների և անձրևների ժամանակ, իսկ բերքահավաքը սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին է: Այս սեզոնին բնորոշ է եգիպտացորենի, բրնձի և բամբակի մշակությունը: Երկրորդ սեզոնը Ռաբին է (գարուն): Այս սեզոնի հիմնական մշակաբույսերն են ցորենը, գարին, ռապսի սերմը և մանանեխը, որոնց ցանքը հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին է, իսկ բերքահավաքը՝ փետրվար-մայիսին: Երրորդ սեզոնը Զեյդն է (ամառ), որին բնորոշ է մրգերի և բանջարեղենի մշակությունը: Հացահատիկային մշակաբույսերից առաջատարը բրինձն է, երկրորդը՝ ցորենը, որը հիմնականում աճեցվում է երկրի հյուսիսում և հյուսիս-արևմուտքում: Մյուս կարևոր մշակաբույսերն են կորեկը, սորգոն և եգիպտացորենը: Հնդիկների համար, որոնց զգալի մասը բուսակեր է, լոբազգիները սպիտակուցի հիմնական աղբյուրն են: Տեխնիկական մշակաբույսերից առաջատարը բամբակն ու ջուտն են:

[227] Буйволы, рис и рыба: что нужно знать о сельском хозяйстве Индии, https://www.rbc.ru/industries/news/6673f0a19a7947a9a4419434

[228] https://aemcx.ru/wp-content/uploads/2023/03/%D0%9E%D0%B1%D0%B7%D0%BE%D1%80%D0%92%D0%AD%D0%94%D0%98%D0%BD%D0%B4%D0%B8%D1%8F.pdf

Աղյուսակ 2.5

Անասնաբուծական արտադրանքի արտադրությունը Հնդկաստանում[229]

	2017	2018	2019	2020	2021
Ձավիթ կրիաներ	95,2	103,3	114,4	122,1	122,0
Կաթնային կենդանիներ	176,3	188,0	198,7	210,2	209,0
Կովի կաթ	83,6	89,8	96,6	108,3	108,3
Գոմեշի կաթ	86,3	91,8	95,9	95,4	94,4
Այծի կաթ	6,2	6,1	5,9	6,3	6,1
Միս և պարենային ենթամթերքներ, մլն տոննա	13,2	13,7	13,9	13,4	13,2
Տավարիս	4,2	4,2	4,3	3,8	4,2
Թռչնիս	3,8	4,1	4,3	3,5	3,7
Գոմիշիս	1,6	1,7	1,6	1,6	1,6
Ձուկ և ծովամթերք, մլն տոննա	11,8	12,6	13,4	14,2	14,4*
Ձկնաբուծություն	5,6	5,3	5,5	5,5	5,5*
Ակվակուլտուրա	6,2	7,2	7,9	8,6	8,9*

Աղբյուրը՝ FAOSTAT, USDA, India Ministry of Agriculture & Farmers' Welfare

Հնդկաստանում անասնաբուծության զարգացման վրա զգալիորեն ազդում են կրոնական սահմանափակումները: Երկիրը խոշոր եղջերավոր անասունների քանակով աշխարհում առաջին տեղն է զբաղեցնում, սակայն գրեթե բոլոր նահանգներում արգելված է կովի սպանդը: 2023 թվականին կովերի, գոմեշների և յակերի գլխաքանակը կազմել է 303,8 միլիոն, ոչխարներինը՝ 74,2 միլիոն, այծերինը՝ ավելի քան 148 միլիոն, իսկ խոզերինը՝ ավելի քան 9 միլիոն: Հնդկաստանը կաթի ամենամեծ արտադրողն է. այս երկրին բաժին է ընկնում համաշխարհային արտադրության մոտ մեկ քառորդը[230]:

Թռչնամսի արտադրությունը համարվում է հնդկական անասնաբուծության ամենաարագ զարգացող հատվածը, երկրում կա ավելի քան 850 միլիոն թռչուն: 2000–2020 թվականներին գլխաքանակի միջին տարեկան աճի տեմպը կազմել է 9,2%: Ձվի արտադրությամբ Հնդկաստանը աշխարհում երրորդ խոշոր երկիրն է:

ԱՄՆ-ի գյուղատնտեսության նախարարությունը կանխատեսում է, որ գոմեշի մսի արտադրությունը մոտակա տարիներին կհասնի 4,6 միլիոն տոննայի: Ներկայում Հնդկաստանն այս ապրանքի խոշորագույն արտադրողն է և աշխարհում ութերորդն է մսի ընդհանուր արտադրությամբ:

Երկրի համար կարևոր են նաև ձկնորսությունն ու ձկնաբուծությունը: 1951 թվականից ի վեր ձկան արտադրությունն աճել է 22 անգամ: Այսօր Հնդկաստանն աշխարհում երրորդ տեղն է զբաղեցնում ձկան արտադրությամբ (ձկնորսություն և բուծում): Ըստ Invest India-ի՝ 2014-ից 2022 թվականներին այս հատվածը կայուն աճ է գրանցել՝ միջին տարեկան 8,6% տեմպերով: Արտա-

[229] Индия, Март 2023, https://aemcx.ru/wp-content/uploads/2023/03/%D0%9E%D0%B1%D0%B7%D0%BE%D1%80%D0%92%D0%AD%D0%94%D0%98%D0%BD%D0%B4%D0%B8%D1%8F.pdf

[230] Индия занимает первое место по производству молока в мире, https://dairynews.ru/news/indiya-zanimaet-pervoe-mesto-po-proizvodstvu-molok.html

դրության մոտ 75%-ը ստացվում է գետերից և լճերից, մնացածը՝ ծովային ձկնորսությունից:

Կանխատեսումները ցույց են տալիս, որ մինչև 2027 թվականը Հնդկաստանի պարենային շուկան կդառնա երրորդը Չինաստանից և ԱՄՆ-ից հետո: Ներկայումս այն զբաղեցնում է հինգերորդ տեղը, սակայն, ըստ վերլուծաբանների, առաջիկա երեք տարիներին սննդի վրա տնային տնտեսությունների ծախսերը կավելանան գրեթե մեկ երրորդով[231]:

2024 թվականի տվյալներով Հնդկաստանի բնակչության ավելի քան 65%-ը 35 տարեկանից ցածր տարիքի է, իսկ միջին տարիքը 28 է: Սա նշանակում է, որ, ի տարբերություն մեկ այլ «միլիարդատեր երկրի»՝ աստիճանաբար «ծերացող» Չինաստանի, առաջիկա մի քանի տասնամյակների ընթացքում հնդիկների թիվը միայն կաճի: Ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների՝ դարի կեսերին այն կհասնի մոտ 1,7 միլիարդ մարդու: Բնակչության աճի հետ մեկտեղ ավելանում է ներմուծվող սննդի պահանջարկը, որը պայմանավորված է աճող միջին խավով, արտասահմանյան ապրանքանիշների պահանջարկով, սննդի առցանց վաճառքի աճով և ռեստորանային ցանցի զարգացմամբ[232]:

2022–2023 ֆինանսական տարում Հնդկաստանի գյուղատնտեսական ապրանքների արտահանումը հասել է ռեկորդային բարձր մակարդակի՝ 52,5 միլիարդ ԱՄՆ դոլարի. 2021–2022 թվականներին այն կազմել է 50,2 միլիարդ ԱՄՆ դոլար:

Հանրապետությունը աշխարհում բրնձի ամենամեծ արտահանողն է: Բավական է նշել, որ 2021–2022 ֆինանսական տարում այն կազմել է գյուղատնտեսական ապրանքների արտահանման 27%-ը: Արտահանվող այլ ապրանքներն են ձուկը և ծովամթերքը (21%), շաքարավազը (12%), համեմունքները (11%), գոմեշի միսը (9%), բամբակը (8%), ցորենը (6%), գերչակի յուղը (3%)[233]: Դրա հետ մեկտեղ, Հնդկաստանը բուսական յուղերի աշխարհի խոշորագույն ներկրողն է: Այն կազմում է գյուղատնտեսական ապրանքների ընդհանուր ներմուծման 51,9%-ը[234]: 2023–2024 ֆինանսական տարում ցածր բերքի պատճառով ընդհենի ներմուծումը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 84%-ով՝ հասնելով վեց տարվա առավելագույն ցուցանիշին՝ 4,7 մլն տոննայի[235]:

Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդին 2024 թ. փետրվարին ցուցաբերեց պարենային խնդիրը լուծելու հավակնոտ նախաձեռնություն, որն անվանել է «աշխարհի հացահատիկի պահպանման ամենամեծ սխեման մեր

[231] Накормить Индию: какая продукция нужна самой населённой стране на планете, https://sberbank.co.in/ru/media/publications/nakormit-indiyu-kakaya-produktsiya-nuzhna-samoi-naselyonnoi-strane-na-planete

[232] Նույն տեղում:

[233] Буйволы, рис и рыба: что нужно знать о сельском хозяйстве Индии, https://www.rbc.ru/industries/news/6673f0a19a7947a9a4419434

[234] Նույն տեղում:

[235] Նույն տեղում:

ֆերմերների համար[236]»: Հնդկաստանի կառավարությունը առաջիկա հինգ տարիների ընթացքում 15 միլիարդ ԱՄՆ դոլարի ներդրմամբ նպատակ ունի ստեղծելու հավելյալ 70 միլիոն տոննա տարողությամբ հացահատիկի պահեստավորման հզորություն: Դա թույլ կտա ֆերմերներին պահպանել բերքը և վաճառել ճիշտ ժամանակին, երբ շուկայում մեծ է պահանջարկը: Սա նաև կօգնի նրանց օգտվել բանկերի նպատակային վարկերից, քանի որ ներկայումս նվազեցնելով հացահատիկի հետբերքահավաքի կորուստները, Հնդկաստանը կարող է բարձրացնել ցորենի ինքնաբավությունը և, հնարավոր է, նույնիսկ դառնա զուտ արտահանող: Այս օրինակը ուսանելի է նաև Աֆրիկյան մի շարք երկրների համար, որտեղ հացահատիկի հետբերքահավաքային կորուստները հասնում են 10-ից մինչև 20 %-ի[237]:

Հնդկաստանում պետական գնումները ներկայում սահմանափակվում են բրնձով և ցորենով: Պահեստարանների կառուցումը հնարավորություն կընձեռի օգնելու ֆերմերներին հավասարաչափ ծավալներով ու կայուն գներով իրացնել հացահատիկը, որի շնորհիվ զգալիորեն կկրճատվեն նաև տրանսպորտային ծախսերը, կձևավորվի հացահատիկի արտահանման որոշակի ծավալ, և կկարգավորվեն պարենային հացահատիկի գների կտրուկ տատանումները: Երկրի Գյուղատնտեսության նախարարությունն ակնկալում է, որ 2024 թ. հացահատիկի բերքը կհասնի 112 միլիոն տոննայի, ինչը գրեթե համապատասխանում է 2023 թվականի ռեկորդային ցուցանիշին (112,74 միլիոն տոննա)[238]: Հնդկաստանից ցորենի արտահանումը գնահատվում է տարեկան, միջին հաշվով, 6 մլն տոննա, միաժամանակ, հնդկական ալրաղացի շուկան ներառում է 1,3 հազար միջին և խոշոր ձեռնարկություններ, որոնք կարող են տարեկան արտադրել 25–28 միլիոն տոննա ալյուր: Ի դեպ, անհրաժեշտության դեպքում, հատկապես Հյուսիս-հարավ մայրուղու շինարարության ավարտից հետո Չաբահար նավահանգստից օգտվելու պայմաններում, Հնդկաստանը կարող է դառնալ նաև Հայաստանի համար հացահատիկ արտահանող երկիր, որը թույլ կտա բազմազանեցնել ՀՀ հացահատիկի ներմուծման խիստ բևեռացված շուկան:

Հնդկաստանում բուսական յուղ են ստանում սոյայից, ռապսից, գետնանուշից, արևածաղկից և կոկոսից: Յուղատու մշակաբույսերի վերամշակման միջին տարեկան ծավալը կազմում է շուրջ 34 մլն տոննա: Արտադրության աճը պայմանավորված է սննդամթերքի աճող պահանջարկով: Անասնաբուծական ֆերմերների համար որպես անասնակեր օգտագործվում է յուղազտման գործընթացի արդյունքում ստացվող ճզմվածքը՝ կոպտոնը կամ բուսպը, որի

[236] PM Modi launches 'world's largest agri storage plan'; Rs 1.25 lakh cr outlay over 5 years, https://indianexpress.com/article/india/pm-modi-launches-worlds-largest-agri-storage-plan-rs-1-25-lakh-cr-outlay-over-5-years-9179310/

[237] Индия начинает глобальный проект по увеличению мощностей хранения зерна, https://www.apk-inform.com/ru/news/1540195

[238] Индия в 2024 году может сократить производство пшеницы, https://www.apk-inform.com/ru/news/1540829

միջին տարեկան արտադրությունը հասնում է մինչև 20,0 մլն տոննայի: Հնդկաստանում անասնակերի նպատակով լայնորեն օգտագործվում է սոյայի, իսկ ավելի քիչ ծավալով՝ գետնանուշի, արևածաղկի և ռապսի ալյուրը:

Բրինձը Հնդկաստանում աճեցվող ամենակարևոր մշակարույսերից մեկն է: Այն կազմում է երկրում արտադրվող ամբողջ հացահատիկի մոտ 40%-ը: Բրնձի արտադրությունը վերընթաց միտում ունի և վերջին տարիներին հասել է ռեկորդային մակարդակի, որը պայմանավորված է մուսոնային բարենպաստ անձրևներով և նոր շրջանացված բարձր բերքատու սորտերով: Հնդկաստանից բրնձի արտահանումը 2022–2023 թվականներին գնահատվում է 19,5 միլիոն տոննա: Սա ավելի քիչ է, քան նախորդ սեզոնի ռեկորդային ցուցանիշը, որը կազմել է 22 միլիոն տոննա[239]: Երկրի գրեթե ամբողջ բրինձն աճեցնում են մանր ֆերմերային տնտեսությունները: Բերքի կեսը մնում է տնային սպառման և որպես սերմ օգտագործելու համար:

Չնայած բուսական յուղի հումքի արտադրության աճին՝ ձեթի պահանջարկը մեծ է և ակնկալվում է, որ 2024 թվականին այդ ապրանքների ներմուծման ծավալը կավելանա 6%-ով և կհասնի մինչև 14,5 մլն տոննայի: Հատկանշական է, որ մինչև ռուս-ուկրաինական պատերազմը ուկրաինական արևածաղկի ձեթի մոտ 30%-ը գնում էր Հնդկաստանը:

FAO-ի (2020) տվյալներով՝ Հնդկաստանը կոճապղպեղի և բամիայի խոշորագույն արտադրողն է աշխարհում, իսկ կարտոֆիլի, սոխի, ծաղկակաղամբի և կաղամբի արտադրությամբ զբաղեցնում է երկրորդ տեղը: Մրգերի մեջ երկիրն առաջին տեղում է բանանի (26,29%), պապայայի (43,26%) և մանգոյի (45,14%) արտադրությամբ[240]:

Այդուհանդերձ, Հնդկաստանի կառավարությունը մշտական հետաքրքրություն է ցուցաբերում գյուղատնտեսության մեջ խոշոր ներդրումների և նորարարական տեխնոլոգիաների զարգացման նկատմամբ: Վերջին տարիներին առանձնահատուկ ուշադրություն է դարձվում այնպիսի նորարարական ծրագրերի, որոնք նպաստում են գյուղատնտեսական արտադրության արտադրողականության, հատկապես՝ մշակարույսերի բերքատվության և ֆերմերների կենսամակարդակի բարձրացմանը: Այդպիսի ծրագրերից է Paramparagat Krishi Vikas Yojana-ն (PKVY), որն օգնում է խթանել օրգանական գյուղատնտեսությունը՝ խրախուսելով ֆերմերներին արտադրել թունաքիմիկատներից և վնասակար մնացորդներից զերծ արտադրանք: Այս ծրագիրը մեկնարկել է 2015 թ. և հանդիսանում է Կայուն գյուղատնտեսության ազգային առաքելության (NMSA) ներքո Հողի կառավարման բարելավման (SHM) ընդլայնված բաղադրիչը: PKVY-ի միջոցով կառավարությունը նպատակ ունի.

[239] Обзор рынков пшеницы, масличных и риса Индии, https://sfera.fm/articles/zernovye/obzor-indiiskikh-rynkov-maslichnykh-pshenitsy-i-risa

[240] Сельскохозяйственная промышленность - в Индии. Анализ размеров и долей - Тенденции роста и прогнозы (2024–2029 гг.), https://www.mordorintelligence.com/ru/industry-reports/agriculture-industry-in-india

- նվազեցնելու կախվածությունը պարարտանյութերից և գյուղատնտեսական քիմիկատներից,
- բարձրացնելու այս եղանակով արտադրված օրգանական պարենամթերքի մրցունակությունը արտաքին և ներքին շուկաներում:

Ներկայումս Հնդկաստանում մոտ 8,89 միլիոն ֆերմեր ընդգրկված է այս ծրագրում, և շուրջ 5,31 միլիոն հեկտար հող մշակվում է օրգանական գյուղատնտեսության տեխնոլոգիայով: Հատկանշական է, որ լուրջ պետական աջակցություն է ցուցաբերվում PKVY-ի զարգացմանը[241]:

Ֆերմերային տնտեսությունների մեքենայացման տեմպերի բարձրացումը չափազանց կարևոր է Հնդկաստանի համար, քանի որ կարող նպաստել գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը: Ներկայումս Հնդկաստանում գյուղատնտեսության մեքենայացված միջին մակարդակը 50 տոկոսից ցածր է, մինչդեռ հարևան Չինաստանում այն գերազանցում է 60 տոկոսը, իսկ Բրազիլիայում ավելի քան 75 տոկոս է[242]:

Գյուղատնտեսության մեքենայացման մակարդակը Փենջաբը և Հարյանան նահանգներում տատանվում է 40–45 տոկոսի միջակայքում, մինչդեռ այն աննշան է Հնդկաստանի հյուսիսարևելյան նահանգներում, որտեղ գերակշռում են փոքր տնտեսությունները: Բավական է նշել, որ այդ տնտեսությունների մոտավորապես 86 տոկոսն ունի 2 հեկտարից պակաս հողատարածություն: 2023 թվականին կանխատեսվել է, որ երկրում գյուղատնտեսության մեքենայացումը կպահանջի մոտավորապես 25 տարի՝ 75–80 տոկոս մեքենայացում:

Հնդկաստանի գյուղատնտեսական տեխնիկայի շուկան 2024 թվականին գնահատվում է 16,73 միլիարդ ԱՄՆ դոլար և կանխատեսվում է, որ մինչև 2029 թվականը կհասնի 25,15 միլիարդ ԱՄՆ դոլարի: Աճի հիմնական շարժիչ ուժերն են պետական աջակցության նպաստավոր քաղաքականությունը, գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճը, տեխնիկական առաջընթացը և մեքենայացման հրամայական դերը: Ահավասիկ՝ վերջին տարիներին մեծ չափերի է հասել անօդաչու թռչող սարքերի՝ դրոնների օգտագործումը: Հայտնի է, որ երկրագործությունը լայնածավալ գործունեություն է, որն իրականացվում է հազարավոր հեկտարների վրա: Հողի վիճակի և բերքի հասունացման մշտադիտարկման համար անհրաժեշտ են մշտական հետազոտություններ: Դա ձեռքով անելը կարող է մի քանի օր տևել, և նույնիսկ այդ դեպքում մարդկային սխալը բավականին զգալի է: Անօդաչու սարքերը կարող են նույն խնդիրը լուծել ընդամենը մի քանի ժամում և տեղեկատվություն տրամադրել ինֆրակարմիր քարտեզագրման միջոցով: Ավելին, դրոնների օգտագործումը կարող է միավոր հողատարածության հաշվով զգալիորեն նվազեցնել թունաքիմիկատների, միջատասպանների և այլ քիմիական նյութերի

[241] Paramparagat Krishi Vikas Yojana - Facts for UPSC, https://byjus.com/free-ias-prep/paramparagat-krishi-vikas-yojana/

[242] Farm Mechanization in India's Agriculture Sector: Challenges and Opportunities, https://www.india-briefing.com/news/india-farm-mechanization-sector-opportunities-challenges-31243.html/

ծախսը: Սա կարող է օգնել ֆերմերներին առավել ճշգրիտ ու արդյունավետ իրականացնել բույսերի պաշտպանության միջոցառումները:

Geofencing ինֆրակարմիր տեսախցիկներով հագեցած դրոնները կարող են հեշտությամբ հայտնաբերել կենդանիներին կամ մարդկանց: Արդյունքում՝ դրոնները կարող են պաշտպանել բերքը կենդանիների վնասից՝ հատկապես գիշերը:

Հիպերսպեկտրալ, ջերմային կամ բազմասպեկտրային սենսորներով դրոնները հայտնաբերում են չափազանց չոր տարածքները և դրանց ոռոգման համար սևեռում են ֆերմերների ուշադրությունը: Անօդաչու սարքերի հետազոտություններն օգնում են բարելավել ջրի օգտագործման արդյունավետությունը, բացահայտել ոռոգման ջրի հնարավոր արտահոսքերն ու կորուստները:

Գյուղատնտեսական դրոնների տեխնոլոգիան, անկասկած, գյուղատնտեսության ոլորտի ապագան է: Այն կարող է փոխել ավանդական գյուղատնտեսական գործընթացները շատ այլ ձևերով:

Գյուղատնտեսության և գյուղտեխնիկայի համաշխարհային շուկան կայուն աճ է գրանցում՝ 2023 թվականին հասնելով 174,12 միլիարդ ԱՄՆ դոլարի, կանխատեսվում է, որ 2024 թվականին կհասնի 184,69 միլիարդ ԱՄՆ դոլարի՝ արձանագրելով 6,1 տոկոս աճ: Վերջինս վերագրվում է այնպիսի գործոնների, ինչպիսիք են կրթությունը, հետազոտությունը, ենթակառուցվածքների զարգացումը, գյուղատնտեսության արդյունաբերականացումը, մշակաբույսերի գիտության առաջընթացը և գյուղական աշխատուժի սակավությունը:

Հայաստանի և Հնդկաստանի տնտեսական համագործակցությունը առանձնահատուկ զարգացում ստացավ 2005–2006 թվականներին, երբ Հնդկաստանի կառավարությունը 5 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհ տրամադրեց և դրա հաշվին ձեռք բերվեց 60 ձիաուժանոց 300 տրակտոր[243]: ՀՀ կառավարությունն այդ տրակտորները ֆերմերներին տրամադրեց արժեքի 50%-ով և դրանց վաճառքից առաջացած գումարը կենտրոնացրեց գյուղատնտեսության աջակցության հատուկ հիմնադրամում, որի միջոցները հատկացվում էին նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրերին:

2.2.3. Ծառայությունների ոլորտը

Ծառայությունների ոլորտը տնտեսության ամենադինամիկ զարգացող ուղղությունն է: Գաղտնիք չէ, որ բարձր եկամուտ ունեցող զարգացած երկրների տնտեսություններում մեծ տեսակարար կշիռ ունի ծառայությունների ոլորտը:

Հնդկաստանը քվազի-դաշնային կառավարման կառուցվածք ունի. որոշ ծառայություններ գտնվում են կենտրոնական կառավարության իրավասության ներքո (Միության ցուցակ), որոշները՝ նահանգների իրավասության ներքո (Նահանգների ցուցակ), իսկ մնացածը՝ կենտրոնական և նահանգային կառավարությունների համատեղ կառավարման ներքո (Համատեղ ցուցակ):


[243] Հնդկաստանը Հայաստանին կտրամադրի, https://armenpress.am/arm/news/409164/

ՄԻՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ	ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ	ՀԱՄԱՏԵՂ ՑՈՒՑԱԿ
• հեռահաղորդակցություն • փոստային ծառայություն • հեռարձակում • ֆինանսական ծառայություններ • պետական նշանակության ճանապարհներ • հանքարդյունաբերական ծառայություններ	• առողջապահություն և հարակից ծառայություններ • անշարժ գույքի ծառայություններ • մանրածախ առևտուր • գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության հետ կապված ծառայություններ	• մասնագիտական ծառայություններ • կրթություն • տպագրություն • էլեկտրաէներգիա

Գծապատկեր 2.24

Հնդկաստանի ծառայությունների ոլորտում լիազորությունները[244]

Ի տարբերություն զարգացող երկրների մեծ մասի, որտեղ տնտեսական զարգացումն ընթացել է գյուղատնտեսությունից արդյունաբերություն անցումով, Հնդկաստանի տնտեսությունն այլ ուղիով է ընթացել՝ գյուղատնտեսությունից ծառայությունների ոլորտ: Գծապատկեր 2.24-ում ներկայացված է Հնդկաստանի տնտեսության կառուցվածքի շարժընթացը 1960–2022 թթ.:



Գծապատկեր 2.25

Հնդկաստանի ՀՆԱ կառուցվածքը 1960–2022 թթ.[245]

Գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում կրճատվել է՝ 1960 թվականի 41,7%-ից 2022 թվականին հասնելով մինչև 16,7%-ի, այն դեպքում, երբ ծառայությունների մասնաբաժինն ավելացել է համապատասխանաբար՝ 38,8%-

[244] Mukherjee A., The Service Sector in India, 2013, ADB Economics Working Paper Series, https://www.adb.org/sites/default/files/publication/30285/ewp-352.pdf

[245] Worldbank Data, https://data.worldbank.org/

ից մինչև 48,4%: Արդյունաբերության մասնաբաժինը գրեթե չի փոխվել. նույն տարիներին կազմել է համապատասխանաբար՝ 20,8% և 25,7%: Հետևապես՝ կարելի է եզրակացնել, որ ծառայությունների ոլորտի մասնաբաժնի աճը տեղի է ունեցել ի հաշիվ գյուղատնտեսության մասնաբաժնի կրճատման:

Աղյուսակ 2.6

Առանձին ոլորտներում զբաղվածների մասնաբաժինը զբաղվածների ընդհանուր թվում, 2022–2023 թթ., %[246]

Ճյուղեր	*Ենթաճյուղեր*	*Զբաղվածների մասնաբաժինը*
Գյուղատնտեսություն		45.8
Արդյունաբերություն		25.2
Ծառայություններ		29.4
	Մեծածախ և մանրածախ առևտուր	10.2
	Տրանսպորտային ծառայություններ	4.1
	Կրթություն	3.1
	Կացության և սննդի ծառայություններ	1.9
	Տեղեկատվական և հաղորդակցության ծառայություններ	1.3
	Ֆինանսական և ապահովագրության ծառայություններ, անշարժ գույքի գործունեություն	1.1
	Գիտատեխնիկական, մասնագիտական գործունեություն	0.6
	Այլ ծառայություններ	6.7


Չնայած տնտեսության կառուցվածքում ծառայություններն ունեն ամենամեծ տեսակարար կշիռը, սակայն այս հատվածում զբաղվածությունը փոքր է: Աշխատող բնակչության 45,8%-ը զբաղված է գյուղատնտեսության ոլորտում, թեև վերջինս ՀՆԱ-ում ունի ամենափոքր մասնաբաժինը: Ծառայությունների ոլորտին բաժին է ընկնում զբաղվածների 29,4%-ը: Ընդ որում, ծառայությունների ոլորտում ևս զբաղվածների մեծ մասն աշխատում է ցածր ավելացված արժեք ունեցող ուղղություններում՝ առևտուր, տրանսպորտ, կացության և սննդի ծառայություններ և այլն: Կրթության ոլորտին բաժին է ընկնում զբաղվածների 3,1%-ը, տեղեկատվական և հաղորդակցության ծառայությունների ոլորտին՝ 1,3%-ը, գիտատեխնիկական ծառայությունների ոլորտին՝ 0,6%-ը:

Հնդկաստանի ծառայությունների ոլորտի աճը կապվում է 1990-ական թթ. բարեփոխումների հետ[247]: Դրանք նախաձեռնվեցին ի պատասխան 1991 թ. վճարային հաշվեկշռի խնդիրներով պայմանավորված աննախադեպ ֆինանսական ճգնաժամի: Ծառայությունների ոլորտում բարեփոխումները լայնա-

[246] Periodic Labour Force Survey (PLFS), July 2022-June 2023, https://www.mospi.gov.in/sites/default/files/publication_reports/AR_PLFS_2022_23N.pdf

[247] Коновалова Ю.А., Ушанов С.А. (2014), Сектор услуг Индии: информационно-коммуникационные технологии и вопросы занятости. Вестник Российского университета дружбы народов. Серия: Международные отношения, (2), 169-176.

ծավալ կառուցվածքային վերափոխումների միայն մի մասն էին, որոնք ներառում էին այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են ապրանքների, ծառայությունների, տեխնոլոգիաների միջազգային հոսքերի, ինչպես նաև ՕՈՒՆ-ի սահմանափակումների կրճատում կամ վերացում և այլն[248]: Հետագայում տեխնոլոգիական առաջընթացն ու բարձր որակավորում ունեցող աշխատուժի առկայությունը ևս նպաստել են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և դրա հետ կապված ծառայությունների աճին: Ներկայումս զարգացած երկրները արտապատվիրակում են ծառայությունները զարգացող երկրներին, այդ թվում՝ Հնդկաստանին՝ հանգեցնելով ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճի: Զգալի են նաև պետական ծախսերը համայնքային, սոցիալական, անձնական ծառայությունների բնագավառում, որը ևս նպաստել է ոլորտի զարգացմանը:



Գծապատկեր 2.26

Հնդկաստանի ծառայությունների ոլորտի և առանձին ենթաճյուղերի աճի դինամիկան[249]

Վերջին տասը տարիների ընթացքում Հնդկաստանի ծառայությունների ոլորտն աճել է կայուն տեմպերով: Բացառություն է կազմել 2020–2021 ֆինանսական տարին, երբ ծառայությունների ոլորտում գրանցվել է 5,5% անկում, ինչը պայմանավորված է եղել COVID-19 համավարակով: Ամենից շատ տուժել են կացության և սննդի, տրանսպորտի, առևտրի ենթաճյուղերը: Ինչ վերաբերում է ժամանակակից ծառայություններին (SS, գիտատեխնիկական, ֆի-


[248] UPSC GS 3 Notes: Economic Reforms of 1991, https://byjus.com/free-ias-prep/economic-reforms-1991/

[249] Ministry of Statistics and Programme Implementation, https://www.mospi.gov.in/

նանսական ծառայություններ), ապա նշված տարում այս ուղղություններով թեև մյուս տարիների համեմատությամբ նվազ, բայց աճ է գրանցվել: 2022–2023 թթ. ծառայությունների ոլորտն ամբողջության վերականգնվել է՝ որոշ ենթաճյուղերում գերազանցելով նախահամավարակային ցուցանիշները:

Հնդկաստանի ծառայությունների ոլորտի ամենադինամիկ զարգացող ենթաճյուղերը ժամանակակից ծառայություններն են՝ տեղեկատվական և համակարգչային ծառայություններ (համակցված աճի ցուցանիշը (compound annual growth rate) կազմել է 17,8%), հեռահաղորդակցություն (12%), գիտատեխնիկական և մասնագիտական գործունեություն (16.4%):

Ծառայությունների ոլորտի դինամիկ զարգացումն արտացոլվում է նաև արտահանման ծավալների մեջ: Այսօր Հնդկաստանն աշխարհի առաջատարն է ծառայությունների մի շարք տեսակների արտահանմամբ: Երկիրը 2022 թ. ծառայությունների արտահանման ծավալներով աշխարհում զբաղեցրել է 7-րդ տեղը (309,4 մլրդ ԱՄՆ դոլար)[250]: Ընդ որում, համակարգչային ծառայությունների, մասնագիտական և կառավարչական խորհրդատվական ծառայությունների, ուղղակի ապահովագրության ծառայությունների արտահանման ծավալներով աշխարհում զբաղեցնում է 2-րդ, ծովային տրանսպորտային ծառայությունների գծով՝ 5-րդ, հետազոտությունների և մշակումների ծառայությունների արտահանման ծավալով՝ 8-րդ տեղն աշխարհում:



Գծապատկեր 2.27 **Հայաստան-Հնդկաստան ծառայությունների առևտրի շարժընթացը, 2016–2021 թթ.[251]**


Ծառայությունների ոլորտում Հնդկաստանի հետ համագործակցության մեծ ներուժ կա: Եթե դիտարկենք Հայաստանի առևտրի շարժընթացը Հնդկաստանի հետ, ապա կտեսնենք, որ, սկսած 2020 թվականից, ՀՀ առևտրային հաշվեկշիռը դարձել է դրական՝ արտահանման ծավալների կտրուկ ավելաց

[250] Trade Map, https://www.trademap.org/Index.aspx
[251] Balanced International Trade in Services (2005-2021), https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=BATIS_EBOPS2010#

ման հաշվին: Ծառայությունների արտահանումը աճել է՝ 2016 թ. 15,9 մլն ԱՄՆ դոլարից 2021 թ. հասնելով 94,9 մլն ԱՄՆ դոլարի, այն դեպքում, երբ ներմուծումը նույն ժամանակահատվածում 40,1 մլն ԱՄՆ դոլարից աճել է՝ հասնելով մինչև 46,4 մլն ԱՄՆ դոլարի:

Երկու երկրների առևտրի հիմնական առանձնահատկությունն այն է, որ արտահանվում և ներմուծվում են նույնատիպ ծառայություններ՝ ճամփորդություններ, տրանսպորտ, հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ու այլ գործնական ծառայություններ:

Ամենամեծ աճը (9.9 անգամ) գրանցվել է հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայությունների արտահանման ոլորտում՝ 2016 թ. 1,7 մլն ԱՄՆ դոլարից 2021 թ. հասնելով 18,9 մլն ԱՄՆ դոլարի: Չնայած դեռևս փոքր ծավալներին, դինամիկ զարգանում է նաև այլ գործնական ծառայությունների արտահանումը, որի ծավալները 2016 թ. 1.0 մլն ԱՄՆ դոլարից 2022 թ. հասել են 4,4 մլն ԱՄՆ դոլարի: Անհրաժեշտ է ընդգծել, որ անգամ համավարակի պայմաններում ճամփորդական ծառայությունների արտահանումը շարունակաբար աճել է:



Գծապատկեր 2.28 **Հայաստան-Հնդկաստան ծառայությունների առևտրի կառուցվածը, մլն ԱՄՆ դոլար[252]**

[252] Balanced International Trade in Services (2005-2021), https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=BATIS_EBOPS2010#

Այլ է պատկերը ներմուծման պարագայում: Այս դեպքում աճի դանդաղումը պայմանավորված է եղել ճամփորդությունների նվազմամբ, որը, թերևս, 2021 թ., նախորդ տարվա համեմատությամբ, մի փոքր ավելացել է, սակայն դեռևս հեռու է նախահամավարակային ցուցանիշից: Դրեթե կրկնակի ավելացել է հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայությունների ներմուծումը (2016 թ. 10 մլն ԱՄՆ դոլարից՝ 2022 թ. 18,7 մլն ԱՄՆ դոլար): Այլ գործնական ծառայությունների ներմուծումն աճել է՝ նույն ժամանակահատվածում 4,9 մլն ԱՄՆ դոլարից մինչև 8,3 մլն ԱՄՆ դոլար:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ Հնդկաստանի ծառայությունների ոլորտը տնտեսության ամենադինամիկ զարգացող ուղղությունն է: Ընդ որում, ավելի արագ զարգանում են բարձր տեխնոլոգիական ուղղությունները՝ համակարգչային, խորհրդատվական ծառայություններ, հետազոտություններ ու մշակումներ և այլն: Հայաստանի և Հնդկաստանի միջև ծառայությունների առևտուրը թեև փոքր ծավալների է, սակայն շարունակական աճ է դրսևորում: Առևտրի հեռանկարային ուղղություններից է հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ու այլ գործնական ծառայությունների առևտուրը:

Զբոսաշրջությունը Հնդկաստանում

Հնդկաստանը, լինելով աշխարհի ամենահին քաղաքակրթություններից մեկը, գրավում է զբոսաշրջիկների հսկայական հոսքեր: Հարուստ ժառանգությամբ և անհամար տեսարժան վայրերով երկիրը համարվում է աշխարհի ամենահայտնի զբոսաշրջային ուղղություններից մեկը և առաջարկում է զբոսաշրջիկներին տեսարժան վայրերի անսպառ բազմազանություն՝ ներառելով բնական լանդշաֆտներ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության վայրեր, ինչպիսիք են Թաջ Մահալը, Քութուբ Մինարը, Կարմիր բերդը և Աջանտա Էլլորա քարանձավները, Ջայպուրը, Կերալայի հետնախորշերը, Գոայի լողափերը, Հիմալայան շրջանները և տարբեր ազգային պարկեր ու վայրի բնության արգելավայրեր:

Զբոսաշրջությունը Հնդկաստանի տնտեսության հիմնական ոլորտներից է: Զբոսաշրջիկներն այցելում են Հնդկաստան՝ մշակութային, բժշկական, գործարար, սպորտային և այլ նպատակներով:


Հնդկաստանում զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականությունը մշակում և իրականացնում է Հնդկաստանի զբոսաշրջության նախարարությունը[253], որի հիմնական նպատակը Հնդկաստանում զբոսաշրջության խթանումն է: Այդ ուղղությամբ իրականացվող հիմնական քայլերն են զբոսաշրջային ենթակառուցվածքների ընդլայնումը, վիզային ռեժիմի դյուրացումը, զբոսաշրջային ծառայություններ մատուցողների ծառայությունների որակի չափորոշիչների սահմանումը, երկիրը որպես 365 օր գրավիչ զբոսաշրջային վայրի

[253] Ministry of tourism, https://tourism.gov.in/

առաջմղումը, կայուն զբոսաշրջության խթանումը և այլն[254]:


Զբոսաշրջության նախարարությունը զբաղվում է զբոսաշրջության հետ կապված քաղաքականության բոլոր հարցերով, ներառյալ՝ զբոսաշրջության խթանում և շուկայավարում, զբոսաշրջության աճի ռազմավարությունների ձևավորում, զբոսաշրջության ոլորտում հմտությունների և աշխատուժի զարգացում, ռազմավարություններ՝ կապված զարգացման, ներդրումների, խթանների, զբոսաշրջության ոլորտում արտաքին աջակցության հետ և այլն[255]:

2022 թվականին զբոսաշրջության ոլորտի ներդրումը ՀՆԱ-ում կազմել է 199.6 միլիարդ ԱՄՆ դոլար (ՀՆԱ շուրջ 9 տոկոսը), և ակնկալվում է, որ մինչև 2028 թվականը դա կկազմի 512 միլիարդ ԱՄՆ դոլար (գծապատկեր 2.29):



Գծապատկեր 2.29

Զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՆԱ-ում, մլրդ ԱՄՆ դոլար[256]



Գծապատկեր 2.30

Ներգնա զբոսաշրջիկների թիվը Հնդկաստանում, մլն մարդ[257]

[254] Annual Report 2023-2024, p. 6, https://tourism.gov.in/sites/default/files/2024-08/MOT%20Annual%20Report_2023-24_English%20Final.pdf

[255] Annual Report 2023-2024, p. 19, https://tourism.gov.in/sites/default/files/2024-08/MOT%20Annual%20Report_2023-24_English%20Final.pdf


[256] Tourism and Hospitality, https://www.ibef.org/uploads/industry/Infrographics/large/tourism-and-hospitality-infographic-august-2024.pdf

[257] Tourism and Hospitality, https://www.ibef.org/uploads/industry/Infrographics/large/tourism-and-hospitality-infographic-august-2024.pdf

Ներգնա զբոսաշրջիկների թիվը 2023 թ. կազմել է 9.2 մլն մարդ (գծապատկեր 2.30), և կանխատեսվում է, որ 2028 թ. այդ թիվը կհասնի 30.5 միլիոնի, իսկ զբոսաշրջությունից եկամուտները 28 միլիարդից կհասնեն 59 միլիարդ ԱՄՆ դոլարի: Ներգնա զբոսաշրջիկների մեծ մասը Բանգլադեշից է, ԱՄՆ-ից, Միացյալ Թագավորությունից, ԵՄ-ից[258]:

Այցելուների մոտ 49 տոկոսը ժամանում է հանգստի և ժամանցի նպատակով, շուրջ 25 տոկոսը հնդկական սփյուռքի ներկայացուցիչներն են, 10 տոկոսն այցելում է գործնական, 7 տոկոսը՝ բուժման, իսկ մոտ 9 տոկոսը՝ այլ նպատակներով: Հնդկաստանն առաջարկում է աշխարհագրական բազմազանություն, համաշխարհային ժառանգության վայրեր և զբոսաշրջության տարբեր տեսակներ, ինչպիսիք են կրուիզները, արկածային, բժշկական, էկոլոգիական զբոսաշրջությունը և այլն[259]:

Ներքին զբոսաշրջիկների թիվը Հնդկաստանում 2022 թվականին կազմել է 1.7 մլրդ մարդ: Մինչ համավարակը՝ 2019 թ., այդ ցուցանիշը 2.3 մլրդ էր, իսկ 2020 թ. նվազել է՝ կազմելով 610 մլն մարդ:




Գծապատկեր 2.31 **Ներքին զբոսաշրջիկների թիվը Հնդկաստանում, մլն մարդ[260]**

[258] Tourism and Hospitality Industry Report, https://www.ibef.org/industry/tourism-hospitality-india#
[259] Նույն տեղում:
[260] Number of domestic tourist visits in India from 2000 to 2022, https://www.statista.com/statistics/207012/-number-of-domestic-tourist-visits-in-india-since-2000/

Զբոսաշրջության ոլորտում զբաղվածների թիվը 2023 թ. կազմել է 42.9 մլն մարդ (ընդհանուր զբաղվածների շուրջ 7 տոկոսը): Մինչև 2029 թվականն ակնկալվում է, որ ոլորտը կապահովի մոտ 53 միլիոն աշխատատեղ (գծապատկեր 2.32):

Հնդկաստանի զբոսաշրջությունը բրենդավորված է Incredible India կարգախոսով, իսկ երկրի զբոսաշրջության մարքեթինգային պաշտոնական կայքէջը ներկայացնում է Հնդկաստանի հիմնական զբոսաշրջային գրավչությունները[261]:

Հնդկաստանից 43 օբյեկտ ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում, որից 35-ը մշակութային են, 7-ը՝ բնական, 1-ը՝ խառը[262]:



Գծապատկեր 2.32 **Զբաղվածների թիվը զբոսաշրջության ոլորտում, մլն մարդ[263]**

Հնդկաստանը Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող զբոսաշրջության զարգացման համաթվի 2024 թ. հաշվետվության մեջ եղել է 39-րդ հորիզոնականում՝ 2021 թ. 54-րդի փոխարեն: Գնային մրցունակությամբ եղել է 18-րդ, օդային տրանսպորտի ենթակառուցվածքի ցուցանիշով՝ 26-րդ, վերգետնյա և նավահանգստային ենթակառուցվածքների ցուցանիշով՝ 25-րդ, բնական ռեսուրսների ցուցանիշով՝ 6-րդ, մշակութային ռեսուրսների ցուցանիշով՝ 9-րդ, գործարար միջավայրի ցուցանիշով՝ 80-րդ, ապահովության և անվտանգության ցուցանիշով՝ 91-րդ, մարդկային ռեսուրս-

[261] Incredible India, https://www.incredibleindia.gov.in/en
[262] India, https://whc.unesco.org/en/statesparties/in
[263] Number of direct and indirect jobs in the travel and tourism sector across India from financial year 2014 to 2023, with projection for 2024, https://www.statista.com/statistics/1094224/india-employment-in-travel-and-tourism-sector/

ների և աշխատաշուկայի ցուցանիշով՝ 119-րդ, զբոսաշրջային ծառայությունների ենթակառուցվածքի ցուցանիշով՝ 96-րդ, շրջակա միջավայրի կայունության ցուցանիշով՝ 111-րդ տեղում[264]:

Չնայած իր հսկայական ներուժին՝ Հնդկաստանի զբոսաշրջության արդյունաբերությունը բախվում է այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են անբավարար ենթակառուցվածքները, անվտանգության հետ կապված մտահոգությունները, որակավորված աշխատուժի պակասը, բյուրոկրատական խոչընդոտները և այլն[265]: Հնդկաստանում զբոսաշրջության հիմնական բացասական ազդեցություններից մեկը շրջակա միջավայրի վրա ազդեցությունն է: Անվերահսկելի զբոսաշրջությունն առաջացրել է ժառանգության վայրերում երթևեկության ծանրաբեռնվածության խնդիր: Հնդկաստանի այցելքարտը համարվող Թաջ Մահալը, լինելով աշխարհի հրաշալիքներից մեկը, բախվել է օդի աղտոտվածության և թթվային անձրևների պատճառած վնասներին՝ Մաթուրայի նավթավերամշակման գործարանի պատճառով: Այժմ Թաջ Մահալի մոտ աղտոտվածության վերահսկման խիստ նորմեր են գործում:

Այսպիսով՝ Հնդկաստանի զբոսաշրջության արդյունաբերությունը զարգացման հսկայական ներուժ ունի, սակայն այն բախվում է մի շարք մարտահրավերների, որոնք խոչընդոտում են դրա աճը: Ոլորտի առջև ծառացած մարտահրավերները բազմակողմանի են և պահանջում են համապարփակ մոտեցում դրանց լուծման համար՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին՝ կառավարությանը, մասնավոր հատվածին և այլն:

2.3 Հարկաբյուջետային քաղաքականության նկարագիրը

Հնդկաստանի հարկաբյուջետային հատվածը բաղկացած է 3 մակարդակից՝ կենտրոնական կառավարություն, նահանգային կառավարություն և տեղական իշխանության մարմիններ:


Որպես դաշնային պետություն՝ նահանգային իշխանություններն ունեն ընդգծված ինքնուրույնություն՝ կենտրոնական կառավարությունից լիազորությունների հստակ բաժանմամբ: Այնուամենայնիվ, կենտրոնական կառավարությունը հավաքագրում է եկամուտների 60%-ը, սակայն ծախսում 45%-ը՝ մնացյալ մասը միջբյուջետային տրանսֆերտներով ուղղելով նահանգային բյուջեներ[266]:

[264] India, Travel & Tourism Development Index 2024, https://www.weforum.org/publications/travel-tourism-development-index-2024/interactive-data-and-economy-profiles-afaa00a59c/

[265] What are the key challenges facing India's tourism sector and what are some potential solutions to these challenges?, **https://universalinstitutions.com/what-are-the-key-challenges-facing-indias-tourism-sector-and-what-are-some-potential-solutions-to-these-challenges/**

[266] Chapter 8. Fiscal federalism in India, https://www.oecd-ilibrary.org/docserver/940cc5ee-en.pdf?expires=1728473605&id=id&accname=guest&checksum=95BB7667IB9E64A00FD94C2141A47E3B

Ընդհանուր քաղաքականության ուրվագծերը: Հնդկաստանի պետական բյուջեին բնորոշ են մշտական պակասուրդները: Այսպես՝ ինչպես կարելի է տեսնել գծապատկեր 2.32-ից, 1996–2022 թթ. հարկաբյուջետային իրավիճակը բնորոշվում է եկամուտների ՀՆԱ 19.1%, ծախսերի՝ ՀՆԱ 27.4% մակարդակով, ինչի արդյունքում պետական բյուջեն ունեցել է միջինում ՀՆԱ 8.4%-ի չափով պակասուրդ: Ընդհանուր առմամբ, ինչպես ծախսերը, այնպես էլ եկամուտները հիմնականում տատանվել են իրենց միջին մակարդակների շուրջ՝ առանց ցուցաբերելու որոշակի միտումներ: Ընդ որում, նշված ժամանակահատվածում պակասուրդը տատանվել է ՀՆԱ 4.6–12.9 տոկոս մակարդակներում, ինչը, ինչպես կարելի է տեսնել գծապատկերից, հիմնականում ծախսերի մակարդակի տատանումների արդյունք է:




Աղբյուրը՝ ԱՄՀ կայքէջ, Հաամաշխարհային տնտեսական հեռանկարներ, հոկտեմբեր, 2023

Գծապատկեր 2.33 **Հնդկաստանի պետական բյուջեի հաշվեկշռի ձևավորումը, %-ով՝ ՀՆԱ-ում**

Ծախսերի համեմատաբար ավելի բարձր տատանողականությունը հուշում է, որ հարկաբյուջետային քաղաքականությունը դիսկերցիոն բնույթ է ունեցել: Բացահայտելու համար, թե արդյոք այն արձագանքել է տնտեսական պարբերաշրջաններին, գծապատկեր 2.34-ում դիտարկվել են տնտեսական աճը, ՀՆԱ ճեղքվածքը (իրական ՀՆԱ շեղումն իր թրենդից)[267], հարկաբյուջետային դիրքը (կառուցվածքային հաշվեկշիռը բացասական նշանով) և հարկաբյուջետային ազդակը (հարկաբյուջետային դիրքի փոփոխությունը):

[267] Գնահատել են հեղինակները՝ Hodrick-Prescott վիճակագրական ֆիլտրի օգնությամբ՝ օգտագործելով 1980–2022 թթ. համար:



Աղբյուրը՝ ԱՄՀ կայքէջ, Համաշխարհային տնտեսական հեռանկարներ, հոկտեմբեր, 2023

Գծապատկեր 1.34

Հնդկաստանի հարկաբյուջետային քաղաքականության արձագանքը տնտեսական պարբերաշրջանին

Ըստ գծապատկեր 2.34-ի և աղյուսակ 2.7-ի՝ հարկաբյուջետային դիրքը և ազդակը հակադարձ են կոռելացված տնտեսական աճին և տնտեսական պարբերաշրջաններին, ինչը նշանակում է, որ տնտեսական անկման փուլում պետական բյուջեի պակասուրդը ընդլայնվել է կառավարության կողմից՝ արձագանքելու տնտեսական անկմանը, իսկ աճի փուլում ավելի զուսպ պակասուրդ է գրանցվել:

Աղյուսակ 2.7

Հնդկաստանի հարկաբյուջետային ազդակի և դիրքի կոռելյացիան տնտեսական պարբերաշրջանների հետ

	ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱԶԴԱԿ	ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԻՐՔ
ՀՆԱ ՃԵՂՔՎԱԾՔ	-0.18	-0.46
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ	-0.43	-0.20

Պետական բյուջեի ծախսերը: Հետազոտության այս հատվածում իրականացվել է Հնդկաստանի պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վերլուծություն՝ նպատակ ունենալով բացահայտելու ծախսային գերակայությունները ու եկամտի գոյացման հիմնական աղբյուրները, Հնդկաստանի բյուջետային ծախսերի և եկամուտների միտումները՝ ընդգծելով հարկաբյուջետային քաղաքականության, եկամուտների ստեղծման և պետական ծախսերի հիմնական փոփոխությունները վերջին տարիներին:

Համավարակին հաջորդող 4 տարիների ընթացքում Հնդկաստանի տնտեսությունը բացահայտել է իր լավագույն որակները և հասել աճի դրական դինամիկայի՝ հենվելով արդյունաբերության աշխուժացման, ներդրումների ներգրավման վրա (հատկապես բարձր տեխնոլոգիական հատվածում), թիրախավորելով ենթակառուցվածքների զարգացումը:

2022–2023 թթ. ֆինանսական տարում բյուջեի եկամուտները կազմել են 24,32 տրիլիոն ռուփի (292 միլիարդ դոլար), իսկ ծախսերը՝ 41,87 տրլն ռուփի (502 միլիարդ դոլար)՝ հանգեցնելով 17,55 տրիլիոն ռուփիի պակասուրդի (211 միլիարդ դոլար)[268]:


Նշված ժամանակահատվածում հավաքագրվել է, ընդհանուր առմամբ, 30,43 տրիլիոն ռուփի հարկային եկամուտ, որից 9,48 տրիլիոնը փոխանցվել է նահանգային կառավարություններին: Եկամուտների կառուցվածքում ամենաբարձր մասնաբաժինն ունեցել են ԱԱՀ-ն (8,54 տրլն ռուփի), կորպորատիվ հարկը (8,35 տրլն ռուփի), եկամտահարկը (8,15 տրլն ռուփի), ապրանքների արտադրության հարկը (միության ակցիզային տուրքեր, 3,20 տրլն ռուփի), մաքսատուրքերը (2,10 տրլն ռուփի)[269]:

Եթե դիտարկենք ծախսային հիմնական ուղղությունները, ապա կարող ենք նկատել, որ ծախսային գերակայությունների շարքում նշանակալի դերակատար է պաշտպանական ոլորտը: Պետական բյուջեի գերատեսչական հատկացումներից ամենամեծ բաժինը ստացել են Պաշտպանության նախարարությունը (5,85 տրլն ռուփի), Պարենի և հանրային բաշխման (2,97 տրիլիոն ռուփի), Քիմիական նյութերի և պարարտանյութերի (2,28 տրիլիոն ռուփի), Ճանապարհային ենթակառուցվածքների (2,17 տրիլիոն ռուփի), Ներքին գործերի (1.94 տրլն ռուփի), Գյուղական զարգացման (1.82 տրլն ռուփի), Տրանսպորտի (1.62 տրլն ռուփի) նախարարությունները:

Տարաբնույթ սուբսիդիաների գծով հատկացումները կազմել են շուրջ 5,62 տրիլիոն ռուփի: Միաժամանակ, նշանակալի են Գյուղական զբաղվածության երաշխավորման ծրագրի (MGNREGA) ուղղությամբ կատարված հատկացումները՝ շուրջ 894 միլիարդ ռուփի, սոցիալական բնակարանների կառուցման համար՝ 771 միլիարդ ռուփի, գյուղացիական տնտեսություններին աջակցելու համար՝ 600 միլիարդ ռուփի, գյուղական բնակավայրերը խմելու ջրով ապահովելու համար՝ 550 միլիարդ ռուփի[270]: Ծախսային կառուցվածքը մոտ է ներկայացվածին 2023–2024, ինչպես նաև 2024–2025 բյուջետային տարիների համար:


2023–2024 ֆինանսական տարում Հնդկաստանի պետական բյուջեի ծախսերը կազմել են ՀՆԱ 14,9%-ը: Ընդ որում, անկախացումից ի վեր այդ ծախսերը միջինում կազմել են ՀՆԱ 15,11%-ը՝ 1986 թ. հասնելով պատմական առավելագույնի՝ 19,42%-ի, իսկ 1970 թ.՝ պատմական նվազագույնին՝ 11,81%[271]:

[268] India Central Government Budget, 1970-2023, Trading Economics, https://tradingeconomics.com/india/government-budget
[269] Union Budget 2023-24 Analysis, PRS Legislative Research, https://prsindia.org/files/budget/budget_parliament/2023/Union_Budget_Analysis-2023-24.pdf
[270] Նույն տեղում:
[271] India Central Government Total Expenditure to GDP, Trading Economics, https://tradingeconomics.com/india/government-spending-to-gdp



Գծապատկեր 2.35

Հնդկաստանի կենտրոնական կառավարության պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ շարժընթացը, %




Գծապատկեր 2.36

Հնդկաստանի կենտրոնական կառավարության պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ շարժընթացը, %

Հնդկաստանի 2024–2025 թթ. պետական բյուջեի ծախսերը բաշխվել են հետևյալ հիմնական ոլորտներում՝ պաշտպանություն, կրթություն և առողջապահություն, տարածքային զարգացում և կենսամակարդակ, ենթակառուցվածքներ և այլն:

Ծախսերի բաշխման միտումը շարունակում է մնալ նույնը. պաշտպանության հատկացումները զգալի են, ընդ որում, մեծ մասն ուղղվում է կապիտալ ծախսերի իրականացմանը, այդ թվում՝ պաշտպանական ուժերի արդիականացմանը:



Գծապատկեր 2.37

Հնդկաստանի պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը, 2024–2025 թթ., %[272]

[272] Union Budget 2024-25 Analysis, PRS Legislative Research, https://prsindia.org/files/budget/budget_parliament/2024/Union_Budget_Analysis_2024-25.pdf

Երկրի բնակչության թվի աճի պայմաններում ցածր սոցիալական ներգրավվածությունը, աղքատությունը, անբավարար զբաղվածությունը շարունակում են մնալ օրակարգային խնդիրներ՝ կանխորոշելով պետական բյուջեի նախասային հիմնական ուղղությունները: Թեև շեշտը դրված է արտադրողականության բարձրացման, շուկաների արդյունավետության բարելավման և տեխնոլոգիաների օգտագործման վրա, 2024–2025 թթ. բյուջեն առաջարկում է տնտեսական աճի և զարգացման համապարփակ ծրագիր՝ կարևորելով հաջորդ սերնդի բարեփոխումները: Դրանց ուղղությունները ներկայացված են ստորև:

Զբաղվածություն: Բյուջեի հիմնական նպատակներից է առաջիկա հինգ տարիների ընթացքում շուրջ 4,1 մլն երիտասարդի համար ստեղծել աշխատանքային հնարավորություններ: Այս ուղղությամբ հատկացումները կազմում են շուրջ 2 միլիարդ ռուփի՝ թիրախավորելով զբաղվածության, կրթության և վերապատրաստման խնդիրները: Համաձայն ՄԱԿ-ի բնակչության կանխատեսումների՝ մինչև 2065 թ. Հնդկաստանը կունենա մոտ 1,7 միլիարդ բնակչություն, որից հետո այն կսկսի նվազել: Ասիական զարգացման բանկի «Ասիա 2050» զեկույցում ընդգծվում է, որ 21-րդ դարը պատկանում է Ասիային, որտեղ Հնդկաստանը հանդես է գալիս որպես հիմնական դերակատար: Վերոնշյալ բոլոր զեկույցներում շեշտը դրվում է աշխատուժի ոլորտային և տարածական բաշխման, հմտությունների զարգացման և աշխատուժի մեջ կանանց մասնակցության բարձրացման վրա: Արդյունքում՝ կառավարությունը նպատակ ունի բյուջեով հաստատեց զբաղվածությունը խթանելու երեք սխեմաների մեկնարկը, որոնք ենթադրում են նոր աշխատատեղերի ստեղծում արտադրական ոլորտներում, վաղաժամ աշխատանքի ընդունման խրախուսում, կանանց աշխատանքի ընդունմանն աջակցություն և այլն:

Մասնագիտական ուսուցում: Մասնագիտական ուսուցումը կառավարության հիմնական նպատակն է եղել դեռ 2014 թ-ից: Հետաքրքրական է, որ նույնիսկ ստեղծվել է առանձին նախարարություն արդյունաբերության կարիքներին համապատասխան երիտասարդների վերապատրաստմանը, հետագա ուսուցմանը և հմտությունների զարգացմանը նպաստելու համար: 2024–2025 թթ. բյուջեն առաջնահերթությունը տալիս է ուսուցմանը, քանի որ դա աշխատողի նկատմամբ ոլորտային պահանջները բավարարելու հիմքն է. խթանում է նորարարությունն ու արտադրողականությունը: Հնդկաստանի արագ աճող բնակչության 65%-ը 35 տարեկանից ցածր տարիքի է, և շատերը չունեն ժամանակակից տնտեսության համար անհրաժեշտ հմտություններ: Հաշվարկները ցույց են տալիս, որ երիտասարդների մոտ 51.25%-ը աշխատատեղերի համար սահմանված նվազագույն պահանջները չբավարարելու պատճառով չունի աշխատանքի ընդունվելու հնարավորություն[273]: Ուստի, նոր

[273] Տե՛ս Chokhawala S Mohammed, Economic Survey 2024: Highlights, Summary, PDF Download, Jul 25, 2024, https://cleartax.in/s/economic-survey-2024

բյուջետային տարում Հնդկաստանի կառավարությունն առաջարկել է արդիականացնել ինչպես կրթական ենթակառուցվածքները, այնպես էլ դասընթացների կառուցվածքը և որակը: Միաժամանակ, կառավարությունը սկսել է նաև կրթական վարկային ծրագիր մինչև 7,5 մլն ռուփի արժողությամբ՝ պետական հիմնադրամի երաշխիքով, որը նախատեսվում է տրամադրել այն երիտասարդներին, ովքեր ցանկանում են բարձրագույն կրթություն ստանալ Հնդկաստանում, սակայն չունեն բավարար ռեսուրսներ:

Ենթակառուցվածքների զարգացում: Հնդկաստանի կառավարության ռազմավարության մեջ տնտեսական աճի արագացումը և նոր աշխատատեղերի ստեղծումը ուղղակիորեն փոխկապակցված են ինչպես գյուղական, այնպես էլ նահանգային ենթակառուցվածքային ցանցի կատարելագործման անհրաժեշտության հետ: Վերջին մի քանի տարիների բյուջեներում կարելի է տեսնել կապիտալ ծախսերի զգալի աճ՝ 2021–2022 ֆինանսական տարվա 4,1 տրլն ռուփիից մինչև 10 տրլն 2023–2024 ֆինանսական տարում, իսկ հաջորդ՝ 2024–2025 թթ. բյուջեում դրանց մակարդակը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 11,1%-ով՝ կազմելով 11,11 տրլն ռուփի (մոտ 134 մլրդ դոլար) կամ ՀՆԱ 3,4%-ը[274]: Ներդրումների հիմնական մասը կուղղվի գոյություն ունեցող երկաթուղային կայանների, օդանավակայանների, մայրուղիների, հանգույցների, տրանսպորտային և տնտեսական միջանցքների վերանորոգմանը և կառուցմանը, էներգետիկայի զարգացմանը և ջրամատակարարման բարելավմանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ժամանակակից հաղորդակցության միջոցների տարածմանը հեռավոր գյուղերում և դժվարամատչելի վայրերում, մասնավորապես՝ հյուսիսարևելյան տարածաշրջանում, որը երկրի մնացած մասի հետ կապված է միայն Սիլիգուրի նեղ միջանցքով:

Խոշոր ենթակառուցվածքային նախագծերի շարքում կարելի է առանձնացնել մի շարք նահանգներ իրար կապող կամուրջների շինարարությունը, Բոգիբել երկաստիճան կամրջի շինարարությունը՝ երկաթուղային և ճանապարհային երթևեկություն իրականացնելու համար: Միաժամանակ, մինչև 2026–2027 թթ. նախատեսվում է կառուցել Ասամ և Մեղալայա նահանգները միացնող ժամանակակից երթևեկության մայրուղային կամուրջ՝ 19,3 կմ երկարությամբ[275]:


Նշենք, որ հնդկական կառավարության պլանավորած կապիտալ ծախսերը վերջին 26 տարվա ընթացքում կլինեն ամենաբարձրը: Ռեսուրսների մի մասն ուղղվելու է 2 խոշոր սխեմաների կյանքի կոչմանը՝ 25000 գյուղական համայնքների համապարփակ կապի ապահովմանը, ինչպես նաև գյուղական

[274] Տե՛ս Das G. Budget 2024: Budget raises capex target by 11.1% to Rs 11.11 lakh crore to steer India's economy to third largest spot, Economic times, https://economictimes.indiatimes.com/news/economy/infrastructure/budget-2024-budget-raises-capex-target-by-11-1-to-rs-11-11-lakh-crore-to-steer-indias-economy-to-third-largest-spot/articleshow/107315590.cms?from=mdr

[275] Տե՛ս Bogibeel bridge, India's longest rail-road bridge, opens in Assam, Times of India, https://timesofindia.indiatimes.com/india/bogibeel-bridge-indias-longest-rail-road-bridge-opens-in-assam/articleshow/67250512.cms

և քաղաքային վայրերում բնակարանային կարիքների բավարարմանը: Այս երկու սխեմաներն էլ կստեղծեն մեծ թվով ժամանակավոր աշխատատեղեր գյուղական և քաղաքային բնակավայրերում:

Պետական պարտք: Պետական բյուջեի մշտական պակասուրդների առկայությունը հանգեցրել է պարտքի բեռի կուտակման, որը վերջին տասնամյակներում բավականին բարձր մակարդակներում է եղել: Մասնավորապես՝ պարտքի բեռը տատանվել է 67–88 տոկոս մակարդակներում՝ առավելագույն մակարդակին հասնելով 2020 թ.՝ 88.4%: Միաժամանակ, դիտարկվող ժամանակահատվածում պարտքի տոկոսավճարներն աճել են՝ ՀՆԱ 3%-ից հասնելով 5%-ի, իսկ բյուջեի եկամուտների շուրջ 25%-ի (գծապատկեր 2.38):



Աղբյուրը՝ ԱՄՀ կայքէջ, Համաշխարհային տնտեսական հեռանկարներ, հոկտեմբեր, 2023

Գծապատկեր 2.38 **Հնդկաստանի պետական պարտքը և պարտքի տոկոսավճարները, %-ով՝ ՀՆԱ-ում**

Միաժամանակ, ինչպես կարելի է տեսնել գծապատկեր 2.38-ից, միջնաժամկետ հատվածի համար ակնկալվում է, որ ինչպես պարտքի բեռը, այնպես էլ տոկոսավճարները աստիճանական նվազման դինամիկա կունենան: Դա բացատրվում է սպասվող բարձր տնտեսական աճով (2024–2029 թթ. համար՝ միջինում 6.5%), երբ պարտքի իրական տոկոսադրույքը շուրջ 2.5% է (անվանական տոկոսադրույք՝ 6.5%, սպասվող գնաճ՝ 4%): Սա նշանակում է, որ պարտքն ինքնին նվազող վարքագիծ կունենա զրոյական առաջնային պակասուրդի ապահովման դեպքում:

Արժույթի միջազգային հիմնադրամի՝ Հնդկաստանի պետական պարտքի կայունության վերլուծությունը վկայում է, որ թեպետ կանխատեսվող հորիզոնում պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազող է, պարտքի մակարդակը բարձր է: Այնուամենայնիվ, հաշվի առնելով պարտքի կառուցվածքը, որը կենտրոնացած է երկարաժամկետ, ամրագրված տոկոսադրույքով և ազգային

արժույթով արտահայտված՝ ռեզիդենտների կողմից պահվող պարտատոմսերի վրա, բարձր պարտքի բեռից բխող պարտքի կայունության ռիսկերը մեղմվում են: Միաժամանակ, այս պարագայում ռիսկ է առաջանում ներդրումների դուրսմղման հետ կապված:

Միաժամանակ, պարտքի կայունության համար երկարաժամկետ ռիսկեր են ներկայացնում կլիմայի փոփոխության մարտահրավերներին արձագանքելու համար անհրաժեշտ ներդրումները[276]:

Եզրակացություն: Իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ Հնդկաստանում իրականացված հարկաբյուջետային քաղաքականությանը վերջին 2-3 տասնամյակներում բնորոշ է եղել ծախսերի և եկամուտների կայուն մակարդակը՝ պակասուրդի բավականին բարձր մակարդակով: Արդյունքում՝ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը ևս բարձր մակարդակում է գտնվել, սակայն կայուն է եղել՝ հիմնականում շնորհիվ բարձր տնտեսական աճի: Մշտական պակասուրդների ձևավորումը պայմանավորված է սոցիալական և պաշտպանական մարտահրավերներով, ինչպես նաև ենթակառուցվածքային ներդրումների մեծ կարիքներով, ինչն արտահայտված է նաև վերջին տարիների բյուջեներում: 2024–2025 թթ. բյուջեն ևս բարեփոխումների հավակնոտ նշաձողեր է սահմանում, ինչի համատեքստում շարունակում է մնալ պակասուրդային: Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ պարտքի բեռը թույլ նվազող կլինի՝ պայմանավորված տնտեսական աճի համեմատությամբ պարտքի տոկոսադրույքների չափավոր մակարդակով:

2.4 Ֆինանսական համակարգը և հիմնական զարգացումները

Հնդկաստանի ֆինանսական համակարգը բնութագրվում է բարդ կառուցվածքով, որն ընդգրկում է տարբեր ինստիտուտներ, շուկաներ, կարգավորող շրջանակներ և գործիքներ: Ֆինանսական համակարգի հիմնական բաղադրիչներն են կարգավորող մարմինները, բանկերը, ոչ բանկային ֆինանսական ընկերությունները, կապիտալի շուկան, ապահովագրական ընկերությունները, կենսաթոշակային ֆոնդերը, շուկայական ենթակառուցվածքները, ինչպես նաև ֆինանսական նորարարությունների ոլորտը ներկայացնող կառույցները:

1. Կարգավորող մարմիններ

Հնդկաստանի պահուստային բանկ (Reserve Bank of India (RBI)): Հնդկաստանի պահուստային բանկը պատասխանատու է դրամավարկային քաղաքականության կարգավորման, արժութային համակարգի կառավարման, ֆինանսական կայունության վերահսկման և բանկերի ու ոչ բանկային ֆինանսական ընկերությունների (non-banking financial companies (NBFCs)) վերահսկողության համար: Որպես դրամավարկային քաղաքականություն իրականացնող կառույց՝ իրազործում և վերահսկում է դրամավարկային քաղաքականությունը, որի հիմնական նպատակն է պահպանել գների կայունությունը՝ հաշվի առնելով աճի նպատակը: Ֆինանսական համակարգի կարգավորման ու վերահսկման շրջանակներում սահմանում է հիմնական գործառնությունները, որոնց շրջանակներում գործում է երկրի բանկային և ֆինանսական համակարգը: Այս մասով, գործունեության նպատակն է պահպանել հասարակության վստահությունը համակարգի նկատմամբ, պաշտպանել ավանդատուների շահերը և հանրությանը տրամադրել ծախսերի տեսանկյունից արդյունավետ բանկային ծառայություններ: Արտարժութային կարգավորման շրջանակներում բանկը կառավարում է արտարժույթի կառավարման ակտը (1999 թ.), որի նպատակն է հեշտացնել արտաքին առևտուրը, վճարումները և նպաստել Հնդկաստանում արտարժույթի շուկայի կանոնավոր զարգացմանն ու պահպանմանը: Բանկը թողարկում, փոխանակում և ոչնչացնում է արժույթի թղթադրամները, ինչպես նաև շրջանառության մեջ է դնում Հնդկաստանի կառավարության կողմից հատված մետաղադրամները: Հնդկաստանի պահուստային բանկն ունի նաև կարևոր դեր ֆինանսական համակարգի զարգացումն ապահովելու գործում. ապահովում է գովազդային գործառույթների լայն շրջանակ՝ աջակցելու ազգային համակարգի զարգացմանը: Վճարահաշվարկային համակարգերի կարգավորման և վերահսկման շրջանակներում Հնդկաստանի պահուստային բանկը ներդնում և արդիականացնում է երկրում վճարային համակարգերը, պահպանում է հանրային վստահությունը վճարահաշվարկային համակարգի նկատմամբ: Դա ունի նաև հիմնական նպատակներին առնչվող գործառույթներ, որոնց շրջանակում իրականացնում է առևտրային բանկային գործառույթ կենտրոնական և նահանգային կառավարությունների համար, վարում է բոլոր պլանավորված բանկային հաշիվները[277]:


Հնդկաստանի պահուստային բանկն իրականացրել է բազմաթիվ նշանակալի բարեփոխումներ՝ Հնդկաստանի ֆինանսական հատվածի կայունությունը, արդյունավետությունը և ներառականությունը բարձրացնելու համար: Դրամավարկային քաղաքականության հիմնական բարեփոխումները ներառում են 2002 թվականին իրացվելիության ճշգրտման գործիքի (LAF) ներդրումը, որը թույլ է տալիս ավելի լավ կառավարել կարճաժամկետ իրացվելիությունը: Այնուհետև՝ 2016 թվականին, ընդունվեց Դրամավարկային քաղաքականության շրջանակային համաձայնագիրը, որի նպատակն էր սահմանված միջակայքում գնաճի պահպանումը: Արդյունքում՝ ստեղծվեց նաև Դրամա-

[276] India: 2023 Article IV Consultation-Press Release; Staff Report; and Statement by the Executive Director for India, https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2023/12/18/India-2023-Article-IV-Consultation-Press-Release-Staff-Report-and-Statement-by-the-542605

[277] Տե՛ս Հնդկաստանի պահուստային բանկի պաշտոնական կայքէջ, https://www.rbi.org.in/Scripts/AboutusDisplay.aspx#MF

վարկային քաղաքականության կոմիտեն, որը սահմանում է դրամավարկային քաղաքականության հիմնական տոկոսադրույքները:

Որպես հիմնական դրամավարկային գործիք հանդես է գալիս ռեպո տոկոսադրույքը, որը գնաճը կարգավորելու հիմնական միջոցն է:



Գծապատկեր 2.39

Ռեպո տոկոսադրույքը և գնաճը 2000–2024 թթ.[278]

Պատմական շարքերի դիտարկումն այս համատեքստում ցույց է տալիս Պահուստային բանկի վարքագիծը: 2000-ականների սկզբում չափավոր գնաճի պայմաններում ռեպո տոկոսադրույքը նվազեցվում է, քանի որ այս փուլում պահուստային բանկի ուշադրության կենտրոնում տնտեսական աճին աջակցումն էր: 2008–2013 թթ. բարձր գնաճը, որը 2010 թվականին հասավ 12%-ի, պահանջեց ավելի բարձր ռեպո տոկոսադրույքներ՝ գների ճնշումը վերահսկելու համար: Սակայն 2009–2011 թթ. տնտեսական աճի խթանման համար կրկին ավելի մեղմ դրամավարկային քաղաքականություն է վարվել: 2014–2019 թթ. արդյունավետ դրամավարկային քաղաքականության դրսևորումներն ակնհայտ են, և ռեպո տոկոսադրույքի նվազեցումները համընկնում էին վերահսկվող գնաճի հետ: 2020–2024 թթ. տոկոսադրույք[illegible] կտրուկ կրճատվեցին COVID-19 համավարակի ժամանակ՝ տնտեսությա[illegible]ակցելու համար: Համաշխարհային անորոշության պայմաններում գն[illegible]զսպելու նպատակով տեղի ունեցան տոկոսադրույքների հետագա բարձրացումներ, և այժմ տոկոսադրույքը մնում է 6,5 տոկոսի մակարդակում:

Բանկային ոլորտի վերահսկողության և կարգավորման շրջանակներում 2004 թվականին ներդրվեցին ռիսկերի կառավարման և կապիտալի համարժեքության Բազել II-ի նորմերը: 2010 թվականին ընդունվեց Բազել III-ի ուղեցույցը՝ նպատակ ունենալով ուժեղացնելու բանկային կապիտալի պահանջները և ներդնելու նոր կարգավորող պահանջներ բանկային իրացվելիության և լծակների վերաբերյալ: Ոչ բանկային ֆինանսական ընկերությունների (NBFC)

[278] Աղբյուրը՝ https://tradingeconomics.com/india/indicators

կանոնակարգման շրջանակներում 2006 թվականին վերանայվեց ոչ բանկային ֆինանսական ընկերությունները կարգավորող դաշտը, ինչի նպատակը դրանց ֆինանսական կայունության բարձրացումն էր: 2014 թվականից խստացվեցին նաև ոչ բանկ ֆինանսական ընկերությունների կողմից ակտիվների դասակարգման և տրամադրման պահանջները: Իրացվելիության կառավարումը բարելավելու համար 2019 թվականից սահմանվեց իրացվելիության ծածկույթի հարաբերակցության պահանջը խոշոր ընկերությունների համար:

Ֆինանսական ծառայությունների սպառողների ռիսկերի ու շահերի պաշտպանությունը նույնպես Հնդկաստանի պահուստային բանկի ուշադրության ներքո է: 2016 թվականին բանկերի համար ստեղծվեցին կիբեռանվտանգության շրջանակների վերաբերյալ ուղեցույցներ, իսկ 2018 թվականին ստեղծվեց Կիբեռանվտանգության և SS քննության բջիջը, որի նպատակն էր վերահսկել բանկային հատվածում կիբեռանվտանգության միջոցառումները: 2014 թվականին սպառողների պաշտպանության շրջանակներում ստեղծվեց ոչ բանկային ֆինանսական ընկերությունների բանկային օմբուդսմենի սխեման, որից հետո՝ 2015 թվականին, մեկնարկեց Հաճախորդների իրավունքների խարտիայի գործարկումը, որն ուրվագծեց բանկի հաճախորդների իրավունքները:

2015–2020 թվականների ընթացքում Հնդկաստանի պահուստային բանկը որոշակի նախաձեռնություններ իրականացրեց նաև կանաչ ֆինանսավորումը, կանաչ պարտատոմսերի թողարկումները և բնապահպանական կայունության ծրագրերի ֆինանսավորումը խթանելու նպատակով: Մշակվեցին ուղեցույցներ կլիմայի հետ կապված ռիսկերը ֆինանսական կայունության գնահատումների մեջ ներառելու համար:

Հնդկաստանի արժեթղթերի և բորսաների խորհուրդ (Securities and Exchange Board of India (SEBI)): Արժեթղթերի շուկայի կարգավորող մարմին է, որը պատասխանատու է ներդրողների շահերի պաշտպանության, շուկայի ամբողջականությունը խթանելու և ֆոնդային բորսաները վերահսկելու համար: Կառույցը հիմնադրվել է 1988 թվականի ապրիլի 12-ին՝ Հնդկաստանի կառավարության որոշմամբ: Այնուհետև Հնդկաստանի արժեթղթերի և բորսաների խորհուրդը ստանում է օրենսդրական մակարդակով կարգավորողի սատիճան՝ համաձայն Հնդկաստանի արժեթղթերի և բորսաների խորհրդի մասին 1992 թվականի օրենքի: Օրենքը սահմանում է խորհրդի նպատակները՝ արժեթղթերում ներդրողների շահերի պաշտպանություն, արժեթղթերի շուկայի զարգացման խթանում և կարգավորում, ինչպես նաև դրանց առնչվող այլ հարցերի կարգավորում[279]: Այս առումով, Հնդկաստանի արժեթղթերի և բորսաների խորհրդի հիմնական գործառույթներն են.

[279] Տե՛ս Հնդկաստանի արժեթղթերի և բորսաների խորհրդի պաշտոնական կայք, https://www.sebi.gov.in/about-sebi.html

- արժեթղթերի շուկայում ներդրողների շահերը պաշտպանությունը,
- արժեթղթերի շուկայի զարգացման և անխափան գործունեության ապահովումը,
- արժեթղթերի շուկայի միջնորդների գործունեության կարգավորումը,
- ինսայդերական առևտրի և շուկայական չարաշահումների կանխարգելումը,
- ընկերությունների միաձուլումների, ձեռքբերումների և բաժնետոմսերի ձեռքբերման վերահսկողությունը,
- արժեթղթերի նոր թողարկումների և ցուցակման համակարգի կարգավորումը,
- ներդրումային ֆոնդերի գործունեության կարգավորումը,
- կորպորատիվ կառավարման կարգավորումը և այլն[280]:

Հնդկաստանի արժեթղթերի և բորսաների խորհուրդն իրականացրել է բազմաթիվ բարեփոխումներ՝ ուղղված արժեթղթերի շուկայի զարգացմանը, թափանցիկության բարձրացմանը, ներդրողների շահերի պաշտպանությանը: Շուկայի կարգավորման և վերահսկման շրջանակներում 2000 թվականին ներդրվեցին բաժնետոմսերի էական ձեռքբերումների և միաձուլումների ոլորտը կարգավորող կանոնակարգերը, 2015 թվականին ընդլայնվեցին արժեթղթերի ցուցակման պարտավորությունների և տեղեկատվության բացահայտման պահանջների կանոնակարգերի փոփոխությունները, որոնք ընդլայնեցին թողարկողների նկատմամբ վերահսկողության շրջանակները: 2013–2018 թվականների ընթացքում բարեփոխվեցին կորպորատիվ կառավարման համակարգերը՝ հատկապես խորհրդի կազմի, աուդիտի հանձնաժողովների և անկախ տնօրենների, ինչպես նաև ցուցակված ընկերությունների կորպորատիվ կառավարման համակարգերի մասով: Ներդրումային ֆոնդերի կարգավորման առումով շարունակաբար բարեփոխվել են ֆոնդերի թափանցիկության, ռիսկերի կառավարման և ներդրողների պաշտպանության համակարգերը, դասակարգվել և ռացիոնալացվել են բաց ֆոնդերի գործողության սխեմաները՝ բարդությունը նվազեցնելու և ներդրողների ըմբռնման աստիճանը բարձրացնելու համար: Խստացվել են նաև ֆոնդերի ռիսկերի կառավարման և իրացվելիության նորմերը: Հնդկաստանի արժեթղթերի և բորսաների խորհուրդը, ինչպես և Հնդկաստանի պահուստային բանկը կարևորում են ֆինանսական ներգրավվածության ընդլայնման, ֆինանսական կրթության ու գրագիտության բարձրացման հարցերը: Այս նպատակների իրականացմանն են ուղղված ներդրողների պաշտպանության, ներդրումային խորհրդատվության որակի բարելավման, անկանխակալ ու որակյալ վերլուծությունների բարեփոխումները, վերջիններիս կարգավորման կանոնակարգերի ընդունումը: Վերջին տասնամյակում կարևոր նախաձեռնությունները նպատակաուղղված են արժեթղթերով առևտրի ոլորտում տեխնոլոգիաների

[280] Աղբյուրը՝ The securities and exchange board of India Act, 1992, https://www.sebi.gov.in/acts/act15ac.html

և թվային համակարգերի կիրառմանը, դրանց բարելավմանն ու չարաշահումների կանխարգելմանը, շուկայական միջնորդների կողմից արհեստական բանականության և մեքենայական ուսուցման օգտա-գործման նորմերի ներդրմանը, հսկողության և համապատասխանության բարձրացմանը: Առևտրային համակարգերի զարգացման պայմաններում կարևորվում են նաև կիբեռանվտանգությունն ու դրանց շրջանակներում ռիսկերի կառավարումը:

Հնդկաստանի ապահովագրության կարգավորման և զարգացման մարմին (Insurance Regulatory and Development Authority of India (IRDAI)): Կարգավորում և խթանում է ապահովագրական ոլորտը՝ ապահովելով ապահովադիրների շահերի պաշտպանությունը: Կառույցի հիմնական գործառույթներն են.

- ապահովագրողների շահերի պաշտպանությունը և ապահովադիրների նկատմամբ արդար վերաբերմունքի ապահովումը,
- ապահովագրական ոլորտի արագ և կանոնավոր աճի ապահովումը (ներառյալ անուիտետային և կենսաթոշակային վճարները)՝ ի շահ քաղաքացիների և տնտեսության ան արագացնելու համար երկարաժամկետ միջոցների ձևավորման,
- կարգավորվող կազմակերպությունների ֆինանսական կայունության, գործունեության համար արդար չափանիշների սահմանումը, խթանումը, վերահսկումը և կիրառումը,
- հատուցման իրական պահանջների արագ լուծման ապահովումը, ապահովագրական խարդախությունների և այլ չարաշահումների կանխումը և բողոքների լուծման արդյունավետ մեխանիզմի գործարկումը,
- ապահովագրությանն առնչվող ֆինանսական շուկաներում արդարության, թափանցիկության և կանոնակարգված վարքագծի խթանումը, հուսալի կառավարման տեղեկատվական համակարգի կառուցումը՝ շուկայի խաղացողների միջև ֆինանսական կայունության բարձր չափանիշների կիրառման նպատակով,
- նման չափանիշների անբավարար կամ անարդյունավետ կիրառման դեպքում գործողությունների ձեռնարկումը,
- տնտեսական կարգավորման պահանջներին համապատասխան ինքնակարգավորման օպտիմալ համակարգի ապահովումը[281]:

Հնդկաստանի ապահովագրության կարգավորման և զարգացման մարմինը նախաձեռնել է մի շարք բարեփոխումներ, որոնք էական դեր են ունեցել ոլորտի զարգացման համար: Այս բարեփոխումներն ուղղված են Հնդկաստանում կարգավորող դաշտի բարելավմանը, ապահովագրական հատվածի աճին, ապահովագրողների շահերի պաշտպանությանը և ապահովագրական ներթափանցման մեծացմանը: Ամենաառաջին քայլը ոլորտի զարգացման

[281] Աղբյուրը՝ Հնդկաստանի ապահովագրության կարգավորման և զարգացման մարմնի պաշտոնական կայքէջ, https://irdai.gov.in/mission-statement

գործում դրա ազատականացումն էր, երբ 2000 թվականից ոլորտը բացվեց մասնավոր ընկերությունների համար՝ վերջ դնելով պետական սեփականություն հանդիսացող ապահովագրողների մենաշնորհին, որը թույլ տվեց օտարերկրյա ուղղակի ներդրումները հասցնել մինչև 26%-ի: Հետագայում ձևավորվեցին կարգավորման շրջանակը, լիցենզավորման համակարգը, ինչպես նաև ապահովագրական բիզնեսի տարբեր ասպեկտների վերաբերյալ ուղեցույցները, ներառյալ՝ վճարունակության մարժաները, ներդրումները և վերաապահովագրությունը: Արդյունքում՝ 2013 թվականից ապահովագրության ոլորտում ՕՈՒՆ-ների սահմանաչափն ավելացավ և 26%-ից հասավ 49%-ի՝ ներգրավելով ավելի շատ օտարերկրյա ներդրումներ, խթանելով մրցակցությունը:

2013 թվականից ներդրվեց առողջության ապահովագրության համակարգը, ընդունվեցին առողջապահական ապահովագրության համապարփակ կանոնակարգեր, որոնք ներառում են այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են նոր պրոդուկտների ձևավորումը, գնագոյացումը և սպառողների իրավունքների առավելագույն պաշտպանության ապահովումը: 2012 թվականին ներդրվեցին միկրոապահովագրության կանոնակարգեր ցածր եկամուտ ունեցող բնակչության շրջանում ապահովագրական ծածկույթը խթանելու համար՝ նախանշելով պրոդուկտների և բաշխման հատուկ ուղեցույցներ:

2015–2019 թվականները կարելի է համարել թվայնացման և շուկայի զարգացման ժամանակահատված, երբ ստանդարտացվեցին ապահովագրական պրոդուկտները և հիմնական գործընթացները: 2020–2024 թվականներին տեխնոլոգիական առաջընթացի և հետագա ազատականացման համար ՕՈՒՆ-ի սահմանաչափն ավելացվեց մինչև 74%՝ նպատակ ունենալով խթանելու կապիտալի ներհոսքը և մեծացնելու ոլորտի կարողությունները: 2020 թվականից ներդրվեցին առողջության ստանդարտ ապահովագրության պրոդուկտները, ինչը դյուրին դարձրեց սպառողների համար տեղեկացված ընտրություն կատարելը: Կիբեռանվտանգության վերաբերյալ կանոնակարգերի ընդունումը, ոլորտի թվայնացման խթանումը, Insurtech-ի զարգացումը կարգավորող մարմնի բարեփոխումների հիմնական ուղին է: Արդյունքում՝ ներդրվեց Bima Sugam թվային հարթակը, որի նպատակն է ապահովել ապահովագրական ծառայությունների միասնական հարթակ: Քայլեր են ձեռնարկվում նաև բնապահպանական, սոցիալական և կառավարման ուղեցույցների (ESG) ներդրման համար:

Կենսաթոշակային ֆոնդերի կարգավորման և զարգացման մարմին (Pension Fund Regulatory and Development Authority (PFRDA)): Կարգավորում և զարգացնում է կենսաթոշակային ոլորտը՝ ապահովելով կենսաթոշակային ֆոնդերի կանոնավոր աճը: Կենսաթոշակային ոլորտը կարգավորող այս մարմնի հիմնական գործառույթներն են.

- կենսաթոշակային, կենսաթոշակային խնայողությունների և հարակից հարցերի վերաբերյալ մասնակիցների և հանրության ուսուցմանն ուղղված քայլերի ձեռնարկումն ու միջնորդների վերապատրաստումը,

- որևէ այլ օրենքով չկարգավորված կենսաթոշակային սխեմաների ապահովումը,
- ազգային կենսաթոշակային համակարգի շահառուների և այլ կենսաթոշակային սխեմաների մասնակիցների շահերի պաշտպանությունը, որոնք հաստատվում են մարմնի կողմից,
- կենսաթոշակային սխեմաների հաստատումը և նման սխեմաների ներքո ներդրումային ուղեցույցների սահմանումը,
- միջնորդների (NPS Trust, Ներկայության կետեր, Կենտրոնական հաշվառման գործակալություն, Հոգաբարձու բանկ, Կենսաթոշակային հիմնադրամներ, Պահառու) գրանցումը և գործունեության կարգավորումը,
- միջնորդության և այլ գործառնական ծախսերի տնտեսական արդյունավետության ու ողջամտության ապահովումը,
- բողոքների բավարարման գործընթացի ապահովումը,
- միջնորդների և բաժանորդների միջև վեճերի լուծումը[282]:

Կենսաթոշակային ֆոնդերի կարգավորման և զարգացման մարմինը ստեղծվել է Հնդկաստանի կառավարության կողմից 2003 թվականին՝ կենսաթոշակային ոլորտը խթանելու, զարգացնելու և կարգավորելու նպատակով: 2004 թվականի հունվարին ներդրվեց ազգային կենսաթոշակային համակարգ պետական աշխատողների համար (բացառությամբ զինված ուժերի)՝ 2009 թվականին այն ընդլայնվեց և ներգրավեց Հնդկաստանի բոլոր քաղաքացիներին, ներառյալ մասնավոր հատվածը՝ կամավոր հիմունքներով: 2015 թվականին ձևավորվեց NPS Trust-ը, որը ստեղծվեց ազգային կենսաթոշակային համակարգի ներքո գտնվող ակտիվներն ու միջոցներն ի նպաստ շահառուների կառավարելու համար: Դա ապահովում է կենսաթոշակային ֆոնդերի պահպանությունն ու կառավարումը: 2016 թվականից գործարկվեց eNPS հարթակը՝ առցանց գրանցումը և ներդրումը հեշտացնելու, մատչելիության ու հարմարավետության աստիճանը բարձրացնելու համար: 2017 թվականից կենսաթոշակային ֆոնդերում օտարերկրյա ներդրումների սահմանաչափը հասցվել է 49%-ի՝ ավելի շատ օտարերկրյա կապիտալ ներգրավելով կենսաթոշակային հատված: Շարունակական են ոլորտում թափանցիկության բարելավման, վեճերի լուծման համակարգերի գործարկման շրջանակներում բարեփոխումները, ինչպես նաև թափանցիկության աստիճանի բարձրացումը: Պարբերաբար քայլեր են ձեռնարկվում նոր ներդրումային կամավոր սխեմաների ներդրման, կենսաթոշակային համակարգի հարկային գրավչության բարձրացման համար:

2. Բանկային ոլորտ

Հնդկաստանի բանկային համակարգը կարելի է բաժանել մի քանի հատվածի.

[282] Աղբյուրը՝ Ազգային կենսաթոշակային համակարգի և կենսաթոշակային ֆոնդերի կարգավորման և զարգացման մարմնի կայք, https://npstrust.org.in/functions-of-pfrda, https://www.pfrda.org.in/

- Հանրային հատվածի բանկեր (**Public Sector Banks (PSBs)**). պետական սեփականությամբ բանկերը, որոնք գերիշխող դեր են խաղացել, ներառյալ՝ Հնդկաստանի պետական բանկը (State Bank of India (SBI)) և նրա գործընկերները, ինչպես նաև ազգայնացված այլ բանկեր: Ոլորտը զգալի համախմբում է ունեցել միաձուլումների միջոցով, որոնք ուղղված են ավելի ուժեղ կազմակերպությունների ստեղծմանը:
- Մասնավոր հատվածի բանկեր (**Private Sector Banks**). մասնավոր սուբյեկտներին պատկանող բանկեր, որոնք մեծ տեղ են գրավել շուկայի մասնաբաժնի աճով և տեխնոլոգիական առաջընթացով: Հայտնի բանկերից են ICICI Bank-ը, HDFC Bank-ը և Axis Bank-ը:
- Օտարերկրյա բանկեր. Հնդկաստանի սահմաններից դուրս գործող գլխամասերով բանկեր, որոնք գործում են մասնաճյուղերի կամ դուստր ձեռնարկությունների միջոցով և նպաստում են ոլորտում մրցակցային դինամիկային և նորարարություններին:
- Տարածաշրջանային գյուղական բանկեր (**Regional Rural Banks (RRBs)**). կենտրոնացած են գյուղական շրջաններում՝ գյուղատնտեսությանը և գյուղերի զարգացմանը վարկային և ֆինանսական ծառայություններ տրամադրելու համար:
- Փոքր ֆինանսական բանկեր (Small Finance Banks (SFBs)) և վճարային բանկեր (Payments Banks). ներդրվել են ֆինանսական ներառման խթանման համար՝ տրամադրելով հիմնական բանկային ծառայություններ անապահով շրջաններում:


Աղյուսակ 2.8

Հնդկաստանի բանկերի քանակն ըստ տեսակների 2023 թ. նոյեմբերի դրությամբ[283]

Բանկերի տեսակները	*Քանակ*
Գյուղական կոոպերատիվ բանկեր	96,508
Քաղաքային կոոպերատիվ բանկեր	1,534
Արտասահմանյան բանկեր	46
Տարածաշրջանային գյուղական բանկեր	43
Մասնավոր հատվածի բանկեր	21
Պետական հատվածի բանկեր	12

Ինչպես երևում է աղյուսակ 2.8-ից, 2023 թվականի նոյեմբերի վերջի դրությամբ Հնդկաստանում գերակշռում էին կոոպերատիվ բանկերը՝ ընդհանուր բանկերի քանակի 99,88 տոկոսը: Դրանց մեջ գերակշռող են գյուղական կոոպերատիվ բանկերը՝ 96 508 բանկ:

[283] Աղբյուրը՝ Statista.com, Number of banks across India as of November 2023, by type, https://www.statista.com/statistics/1021852/india-number-of-scheduled-banks-by-type/



Գծապատկեր 2.40

5 խոշորագույն բանկերի ակտիվների կենտրոնացվածությունը[284]



Գծապատկեր 2.41

Բոլոր բանկերի ակտիվների կենտրոնացվածությունը[285]

Ըստ գծապատկերի՝ վերջին տասնամյակում Հնդկաստանի բանկերի ակտիվների կենտրոնացվածությունն աճի միտում ունի: Օրինակ՝ 2015 թվականից հետո Հնդկաստանի բոլոր բանկերի կենտրոնացվածությունը 29,6 տոկոսից 2021 թվականին հասել է 40,9 տոկոսի, իսկ 5 խոշոր բանկերի կենտրոնացվածությունը 2015 թվականի 40 տոկոս մակարդակից 2021 թվականին հասել է 51,9 տոկոսի: Նման կտրուկ փոփոխության պատճառը բանկերի շրջանում միավորումներն են, կապիտալի պահանջների խստացումը, պետական աջակցությունը պետական կապիտալով բանկերին, արտասահմանյան կապիտալի ներգրավումը առանձին բանկերի կողմից:



Գծապատկեր 2.42

Կենտրոնական բանկի ակտիվների և ՀՆԱ հարաբերակցության դինամիկան[286]

[284] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի կայքէջ, https://data.humdata.org/dataset/8ad0d426-01f1-4095-8d6b-61a34072fbc9/resource/2ac94fbc-dfcf-46a0-943d-5114ccc762fb/download/financial-sector_ind.csv
[285] Նույն աղբյուրը:
[286] Նույն աղբյուրը:



Գծապատկեր 2.43 **Բանկերի ավանդների և ՀՆԱ հարաբերակցությունը[287]**

ԿԲ ակտիվների և ՀՆԱ հարաբերակցությունը 2000 թվականի 7,19 տոկոսից 2003 թվականին հասել է 2,02 տոկոսի. ցուցանիշի ցածր մակարդակը պահպանվել է մինչև 2008 թվականը: 2008 թվականից հետո ԿԲ ակտիվների կշիռը սկսել է աճել՝ 1,82 տոկոսից 2021 թվականին հասնելով 6,77 տոկոսի: Ակտիվների մեծության վրա հիմնական ազդեցություն են գործել ճգնաժամերը (2001 թ., 2008 թ., COVID-19-ով պայմանավորված): Մյուս կարևոր պատճառը արտահանման ծավալների մեծացումն է, արտարժութային գործառնությունների ծավալների փոփոխությունը: Էական ազդեցություն են գործել նաև պետական պարտքային քաղաքականության փոփոխությունները և Կենտրոնական բանկի կողմից կատարվող ներդրումները: Վերջին տարիներին էական ազդեցություն են գործել նաև թվային արժույթների թողարկման ու դրանցում ներդրումների կատարման գործում Կենտրոնական բանկի ջանքերը:


Բանկերի կողմից ռեզիդենտներից ներգրավված ավանդների կշիռը ՀՆԱ-ում 2000 թվականի սկզբից աճի միտում ունի, 2008 թվականից հետո ցուցանիշը հիմնականում կայուն է մնացել, իսկ 2016 թվականից՝ անկում ապրել: 2018 թվականից սկսած՝ ցուցանիշը կրկին աճել է: 2016 թվականի աճը հիմնականում պայմանավորված է 500 և 1000 անվանական արժեքով թղթադրամների դեմոնետարիզացմամբ[288], ինչի արդյունքում բնակչությունը սկսեց փոխանցել այդ գումարները բանկային հաշիվների վրա, իսկ հետագա նվազումը պայմանավորված էր համաշխարհային ֆինանսական շուկաների միտումներով և COVID-19 համավարակի ազդեցությամբ: Վերջին տարիների աճի միտումը հիմնականում կարելի է պայմանավորել ֆինանսական ներգրավվածության ուղղությամբ կառավարության ծրագրերով[289], ինչպես նաև

[287] Նույն աղբյուրը:

[288] At least 4 months needed to replace demonetised notes, not 50 days: Here's why, https://indianexpress.com/article/business/banking-and-finance/demonetisation-black-money-corruption-banks-atms-modi-finance-ministry4375205/


[289] Pradhan Mantri Jan Dhan Yojana (PMJDY) - National Mission for Financial Inclusion, completes nine years of successful implementation, https://www.pib.gov.in/PressReleasePage.aspx?PRID=1952793

պետական նպաստների ու սուբսիդիաների՝ բանկային հաշիվներին փոխանցմամբ[290]:



Գծապատկեր 2.44 **Մասնավոր հատվածի ռեզիդենտներին բանկային վարկավորման կշիռը ՀՆԱ-ում[291]**

Մասնավոր հատվածի վարկավորման տեմպերն արագ աճ են ունեցել մինչև 2008 թվականը, որից հետո նվազել են: Վերջին տարիներին վարկավորման աճի վրա էական ազդեցություն են ունենում ինչպես ֆինանսական ներգրավվածության ծրագրերը[292], այնպես էլ բնակչության ուրբանիզացման արագացումը: Էական աճ է գրանցվում հիմնականում անշարժ գույքի ու ենթակառուցվածքների շինարարությանը զուգահեռ:



Գծապատկեր 2.45 **Բանկերի կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը[293]**


[290] Direct Benefit Transfer, A blessing during the time of Pandemic, https://www.nic.in/blogs/direct-benefit-transfer-a-blessing-during-the-time-of-pandemic/

[291] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի կայքէջ, https://data.humdata.org/dataset/8ad0d426-01f1-4095-8d6b-61a34072lbc9/resource/2ac94fbc-dfcf-46a0-943d-5114ccc762lb/download/financial-sector_ind.csv

[292] Nine Years of Pradhan Mantri Jan-Dhan Yojana (PMJDY) chrome-extension, https://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/, https://static.pib.gov.in/WriteReadData/specificdocs/documents/2023/aug/doc2023828246001.pdf

[293] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի կայքէջ, https://data.humdata.org/dataset/8ad0d426-01f1-4095-8d6b-61a34072lbc9/resource/2ac94fbc-dfcf-46a0-943d-5114ccc762lb/download/financial-sector_ind.csv

Բանկերի կապիտալի ու ակտիվների հարաբերակցությունը 2005 թվականի 5,23 տոկոսից 2021 թվականին հասել է 7,83 տոկոսի: Աճի հիմնական պատճառը բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի փուփոխություններն են, բազելյան սկզբունքների զարգացմանը համարժեք կարգավորման նորմատիվների սահմանումը: Էական դեր է կատարում նաև օտարերկրյա կապիտալի ներգրավումը հնդկաստանյան բանկերի կողմից:



Գծապատկեր 2.46

Բանկերի զուտ տոկոսային մարժան և ակտիվների ու կապիտալի շահութաբերությունը[294]

Ինչպես երևում է գծապատկեր 2.46-ից, Հնդկաստանի բանկերի զուտ տոկոսային եկամուտներն ընդհանուր եկամուտների կազմում բավականին փոքր կշիռ ունեն, ինչը ցույց է տալիս զուտ տոկոսային մարժայի կայուն ցածր մակարդակը: Բանկերի ակտիվների ու կապիտալի շահութաբերությունը սկսել է նվազել 2015 թվականից, սակայն 2017 թվականից հետո հիմնականում աճի միտում է դիտարկվել: Վերջին տարիների աճի մեջ էական դեր ունի բնակչության ֆինանսական ներգրավվածության մեծացումը:

3. Ոչ բանկային ֆինանսական ընկերություններ (Non-Banking Financial Companies (NBFCs))

Ոչ բանկային ֆինանսական ընկերությունների տեսակները.

- ակտիվներ ֆինանսավորող ընկերություններ,
- վարկային ընկերություններ,
- ներդրումային ընկերություններ,
- ենթակառուցվածքները ֆինանսավորող ընկերություններ:

NBFC-ները վարկ են տրամադրում ավանդական բանկերի կողմից անբավարար սպասարկվող հատվածներին և վճռորոշ դեր են խաղում ֆինանսական ներառականության ապահովման գործում: RBI-ի կողմից կարգավորման

[294] Նույն աղբյուրը:

և վերահսկողության շարունակական ավելացումը ոչ բանկային ֆինանսական կազմակերպությունների կանոնակարգերն ավելի է մոտեցնում բանկերի համար կիրառելի մակարդակի՝ կայունություն և ռիսկերի կառավարում ապահովելու համար: Վերջին տարիներին վարկային կազմակերպությունների զարգացումները հիմնականում պայմանավորված են RBI-ի կողմից կարգավորման խստացմամբ:

4. Կապիտալի շուկաներ

Ֆոնդային բորսաներ


Խոշոր բորսաները ներառում են Բոմբեյի ֆոնդային բորսան (Bombay Stock Exchange) և Ազգային ֆոնդային բորսան (National Stock Exchange (NSE)), որոնք կազմակերպում են բաժնետոմսերի, պարտատոմսերի, ածանցյալ գործիքների և այլ արժեթղթերի առևտուրը:

1875 թվականին հիմնադրված BSE-ն (նախկինում հայտնի էր որպես Բոմբեյի ֆոնդային բորսա) Ասիայի առաջին և ամենաարագ ֆոնդային բորսան է աշխարհում՝ 6 միկրովայրկյան արագությամբ և Հնդկաստանի առաջատար բորսայական խմբերից մեկը[295]: Արդյունավետ գործունեության շնորհիվ BSE-ն նպաստել է Հնդկաստանի կորպորատիվ հատվածի աճին՝ ապահովելով կապիտալի հավաքագրման կարևորագույն գործառույթը: Բորսան ստեղծվել է 1875 թվականին որպես Բաժնետոմսերի և ֆոնդային բրոքերների ասոցիացիա: 2017 թվականին BSE-ն դարձավ Հնդկաստանի 1-ին ցուցակված ֆոնդային բորսան: Այսօր BSE-ն արդյունավետ և թափանցիկ շուկա է ապահովում արժույթի, պարտքային գործիքների, բաժնետոմսերի, արտարժույթի վրա կնքվող ածանցյալ գործիքների, փոխադարձ ֆոնդերի առևտրի համար: BSE-ն, ըստ էության, ընկերությունների խումբ է, որը ներառում է կապիտալի շուկայի ու դրա ենթակառուցվածքների մի շարք հարթակներ: Բորսայի BSE SME -ն Հնդկաստանի ամենամեծ ՓՄՁ հարթակն է, որը ցուցակել է ավելի քան 250 ընկերություն և շարունակում է աճել կայուն տեմպերով: BSE Star MF-ը Հնդկաստանի խոշորագույն առցանց փոխադարձ ֆոնդերով առևտրի հարթակն է: BSE Bond-ը պարտքային արժեթղթերի մասնավոր տեղաբաշխման էլեկտրոնային համակարգ է, որն ապահովում է փոխառու կապիտալի ներգրավման թափանցիկ և արդյունավետ գործընթացը: BSE-ն գործարկել է India INX-ը՝ Հնդկաստանի առաջին միջազգային բորսան: Indian Clearing Corporation Limited-ը՝ BSE-ին ամբողջությամբ պատկանող դուստր ձեռնարկությունը, հանդես է գալիս որպես BSE առևտրային հարթակում իրականացվող բոլոր առևտրային գործարքների կենտրոնական գործընկեր և ապահովում է գործարքների կատարումը՝ երաշխավորելով քլիրինգի և վերջնահաշվարկի գործընթացը: BSE Institute Ltd-ն BSE-ի դուստր ընկերություններից մեկն է, որը ղեկավարում է երկրում կապիտալի շուկայի ամենաահեղինակավոր կրթական ինստիտուտներից մեկը: BSE-ն նաև գործարկել է BSE Sammaan-ը՝

[295] Բոմբեյի ֆոնդային բորսայի կայք, https://www.bseindia.com/static/about/Company_Overview.html

կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հարթակը, որն իր տեսակի մեջ առաջին նախաձեռնությունն է և նպատակ ունի փոխկապակցելու կորպորատիվ ոլորտը և հասարակական կազմակերպությունները:

BSE-ի բաժնետոմսերի հանրաճանաչ համաթիվը՝ BSE SENSEX-ը, Հնդկաստանի ֆոնդային շուկայի ամենահայտնի ցուցիչն է: Դրանով միջազգային առևտուր է իրականացվում EUREX-ում, ինչպես նաև BRCS երկրների առաջատար բորսաներում[296]:




Գծապատկեր 2.47

BSE SENSEX համաթվի արժեքը 1998–2024 թթ.՝ ըստ փակման գնի[297]

NSE-ն (Ազգային ֆոնդային բորսա) ազգային նշանակության ֆինանսական ինստիտուտ է, որն ունի միջազգային հեղինակություն: NSE-ն համարվում է աշխարհի ամենամեծ բորսաներից և Հնդկաստանի տնտեսական աճը խթանող հիմնական կառույցներից մեկն է: NSE-ն առաջին բորսան էր Հնդկաստանում, որն իրականացրեց էլեկտրոնային գործարքներ[298]. հիմնադրվել է 1992 թ.: Այն SEBI-ի կողմից ճանաչվել է որպես ֆոնդային բորսա 1993 թ. ապրիլին և սկսել է գործել 1994 թ.՝ մեծածախ պարտքի շուկայի մեկնարկով, որից անմիջապես հետո սկսել է գործել կանխիկ շուկայի հատվածը: Բորսան ապահովում է առևտուր ինչպես պարտքային, այնպես էլ բաժնային գործիքների համար: Այն նաև ածանցյալ գործիքների կարևորագույն շուկա է, որտեղ ֆյուչերսներ, օպցիոններ ու սվոփներ են կնքվում բաժնետոմսերի, պարտատոմսերի, արտարժույթի, համաթվերի, տոկոսադրույքների, ինչպես նաև ապրանքների համար:

[296] Բոմբեյի ֆոնդային բորսայի կայք, https://www.bseindia.com/static/about/group_companies.html
[297] Բոմբեյի ֆոնդային բորսայի կայք, https://www.bseindia.com/markets/keystatics/Keystat_index.aspx
[298] Ազգային ֆոնդային բորսայի կայք, https://www.nseindia.com/national-stock-exchange/about-nse-company




Գծապատկեր 2.48

NIFTY 500 համաթիվը 1995–2024 թթ.[299]

Բորսայական համաթվերն ու գների տատանումները, սովորաբար, տնտեսության մեջ տեղի ունեցող գործընթացների արձագանքն են: Հնդկաստանի բորսայական համաթվերն այս առումով բացառություն չեն: Համաթվերի տատանումները առանձին ընկերությունների բաժնետոմսերի կամ ընդհանուր շուկայական գնային փոփոխությունների հետևանք են:

Փոխադարձ ֆոնդեր (Mutual Funds) և ակտիվների կառավարման ընկերություններ (Asset Management Companies (AMCs)): Այս ինստիտուտները կառավարում են կոլեկտիվ ներդրումային սխեմաներ՝ առաջարկելով մի շարք ներդրումային պրոդուկտներ մանրածախ և ինստիտուցիոնալ ներդրողներին:




Գծապատկեր 2.49

Ներդրումային ֆոնդերի ակտիվների կշիռը ՀՆԱ-ում[300]

[299] Ազգային ֆոնդային բորսայի համաթվերի հաշվարկման համակարգ, https://www.niftyindices.com/reports/historical-data
[300] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի կայքէջ, https://data.humdata.org/dataset/8ad0d426-01f1-4095-8d6b-61a340721bc9/resource/2ac94fbc-dfcf-46a0-943d-51f4ccc7621b/download/financial-sector_ind.csv

Ինչպես երևում է գծապատկերից, ներդրումային ֆոնդերի ակտիվների կշիռը ՀՆԱ-ում աճի հստակ միտում ունի: 2008–2009 թվականների ճգնաժամով պայմանավորված՝ այն նվազել է, սակայն հետագայում՝ 2011 թվականից սկսած, աճել և 2020 թվականի դրությամբ ցուցանիշը 15,8 տոկոս է: Այս ցուցանիշի տատանումները երկու պատճառ ունեն: Մի կողմից՝ դրանք տատանվում են արժեթղթերի շուկայում գնային փոփոխությունների, մյուս կողմից՝ ֆոնդերում կատարվող ներդրումների ծավալների փոփոխման հետևանքով: Ներդրումային ֆոնդերի կազմում զգալի դեր են կատարում վենչուրային ֆոնդերը, որոնք ստարտափների և աճի փուլում գտնվող ընկերությունների ֆինանսավորման կարևոր հաստատություններ են և նպաստում են նորարարության էկոհամակարգի գործարկմանը:




Գծապատկեր 2.50 | **Բաժնետոմսերի շուկայի շարժընթացը**[301]


Բաժնետոմսերի շուկաներ: Հնդկաստանի արժեթղթերի շուկայի ամենաակտիվ հատվածը բաժնետոմսերի շուկան է: Այն նպաստում է տարբեր ֆինանսական ու ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից տնտեսությունից կապիտալի ներգրավման գործընթացին, ինչը տեսական աճի կարևոր աղբյուր է:

Ինչպես երևում է գծապատկեր 2.50-ից, ՀՆԱ և բաժն ոմսերի շուկայի ծավալների ու կապիտալացման մեծությունները առավելագույն մակարդակի են հասել 2007 թվականին, ինչը պայմանավորված է եղել հիմնականում ՀՆԱ անկմամբ: Հետագա ժամանակահատվածում ցուցանիշներն աճել են հիմնականում շուկայի ծավալների և բաժնետոմսերի գների աճի հետևանքով:

[301] Նույն աղբյուրը:



Գծապատկեր 2.51 | **Բորսաներում ցուցակված ընկերությունների քանակը**[302]



Գծապատկեր 2.52 | **Բաժնետոմսերով առևտրի ընդհանուր ծավալը (մլն ԱՄՆ դոլար)**[303]

Թեև ցուցակված ընկերությունների ծավալներն անընդհատ աճի միտում են ունեցել, սակայն 2019 թվականից հետո դրանք կտրուկ անկում են ապրել: Նվազման հիմնական պատճառը բանկային համակարգում միաձուլումներն են, ինչը հանգեցնում է ցուցակված ընկերությունների ընդհանուր քանակի նվազման: Բացի դա, էական ազդեցություն ունեցան նաև անշարժ գույքի շուկայում կարգավորումների փոփոխությունները, ինչը բերեց տնտեսական պարբերաշրջանների փոփոխությունների, որն իր ազդեցությունն ունեցավ նաև ցուցակված ընկերությունների քանակի վրա:

Բաժնետոմսերով առևտրի ծավալներն ավելի արագ աճել են 2011 թվականից հետո, իսկ 2020 թվականից անկումը պայմանավորված է տնտեսական իրավիճակով և ցուցակված ընկերությունների քանակի փոփոխությամբ:

[302] Նույն աղբյուրը:
[303] Նույն աղբյուրը:

5. Ապահովագրության ոլորտ


Հնդկաստանի ապահովագրական համակարգի զարգացման համար էական նշանակություն ունեցավ 1991 թվականին ոլորտի ազատականացումը: Մինչ այդ, ֆինանսական շուկայի այս հատվածը վերահսկվում էր կառավարության կողմից, և շուկայում գերիշխում էին պետական ընկերությունները, ինչպիսիք են Life Insurance Corporation (LIC)-ը և General Insurance Corporation (GIC)-ը: 1999 թվականին ստեղծվեց Հնդկաստանի ապահովագրության կարգավորող և զարգացման մարմինը (Insurance Regulatory and Development Authority of India (IRDAI))[304]: Վերջինիս վարած քաղաքականությունը և բարեփոխումները ոլորտի զարգացման և ապահովադիրների շահերի պաշտպանության համար կարևոր դեր կատարեցին: Ապահովագրական ոլորտի զարգացման համար կարևոր էր նաև թվային տեխնոլոգիաների, արհեստական բանականության ու մեծ տվյալների բազաների վերլուծության համակարգերի ներդրումը: Հնդկաստանի կառավարության վարած քաղաքականությունը ևս կարևոր էր ոլորտի զարգացման համար: Կառավարության ջանքերով գործարկվել են ապահովագրական տարբեր սխեմաներ, որոնց նպատակն է մեծացնել ներառականությունը հատկապես գյուղական վայրերում: Օրինակները ներառում են՝ Pradhan Mantri Fasal Bima Yojana (բերքի ապահովագրություն), Pradhan Mantri Jeevan Jyoti Bima Yojana (կյանքի ապահովագրություն) և Pradhan Mantri Suraksha Bima Yojana (դժբախտ պատահարից ապահովագրություն)[305]: Այս նախաձեռնությունները նպաստել են ապահովագրական պրոդուկտների մասին տեղեկացվածության և հասանելիության աստիճանի բարձրացմանը՝ հատկապես ցածր եկամուտ ունեցող խմբերի համար: Ազատականացումից հետո ոլորտը բացվեց մասնավոր հատվածի համար՝ 2000 թվականից թույլ տալով ներքին և օտարերկրյա ընկերություններին մուտք գործել շուկա՝ նպաստելով մրցակցության աճին, ավելի լավ ապահովագրական պրոդուկտների և ծառայությունների ի հայտ գալուն: Գյուղատնտեսության ոլորտի զարգացումը և համակարգում միկրոապահովագրության զարգացումը ևս ապահովագրական ոլորտի ներառականության ընդլայնման կարևոր գործոն են: Ոլորտում առկա են.

- Կյանքի ապահովագրության ընկերություններ[306]. տրամադրում են կյանքի ապահովագրություն, կենսաթոշակային պրոդուկտներ և անուիտետներ: Հիմնական խաղացողները ներառում են Հնդկաստանի կյանքի ապահովագրական կորպորացիան (Life Insurance Corporation of India (LIC)) և տարբեր մասնավոր ապահովագրողների:
- Ընդհանուր ապահովագրական ընկերություններ[307]. առաջարկում են ոչ

[304] Insurance Regulatory and Development Authority of India, https://irdai.gov.in/what-we-do
[305] Department of Financial Services, https://financialservices.gov.in/beta/en/page/insurance-overview
[306] Insurance Regulatory and Development Authority of, Life Insurers, https://irdai.gov.in/life-insurersl
[307] Insurance Regulatory and Development Authority of, non-life-insurers, https://irdai.gov.in/non-life-insurersl

կյանքի ապահովագրական պրոդուկտներ, ինչպիսիք են՝ առողջության, ավտոմեքենաների և գույքի ապահովագրությունը: Ոլորտում նկատվում է մասնավոր մասնակցության և պրոդուկտների բազմազանեցման աճ:


Հնդկաստանում գործունեություն են իրականացնում նաև արտասահմանյան վերաապահովագրական ընկերությունների մասնաճյուղեր[308]:



Գծապատկեր 2.53

Ապահովագրական ընկերությունների ակտիվների և ՀՆԱ հարաբերակցությունը[309]

Ինչպես երևում է գծապատկերից, ապահովագրական ընկերությունների ակտիվների և ՀՆԱ հարաբերակցության տոկոսային մեծությունը հիմնականում աճում է: Աճի տեմպերը դանդաղել են 2008 թվականի ճգնաժամից հետո, սակայն հետագայում վերականգնվել են:




Գծապատկեր 2.54

Ոչ կյանքի ապահովագրական շուկայի կառուցվածքը 2023 թվականին[310]

[308] Foreign Re-Insurance Branches, Department of Financial Services, https://financialservices.gov.in/beta/en/foreign-re-insurance-branches
[309] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի կայքէջ, https://data.humdata.org/dataset/8ad0d426-01f1-4095-8d6b-61a34072fbc9/resource/2ac94fbc-dfcf-46a0-943d-5114ccc7621b/download/financial-sector_ind.csv
[310] https://www.ibef.org/industry/insurance-sector-india/infographic

Հնդկաստանում ապահովագրական շուկայի ոչ կյանքի ապահովագրության տեսակների էական մասը կազմում են առողջության ու մեքենաների ապահովագրությունները: Դրանց կշիռն ընդհանուրում 67 տոկոսից ավելի է: Բացի այդ, 2023 թվականի սեպտեմբերի դրությամբ ոչ կյանքի ապահովագրության շուկայի 32 տոկոսը պատկանում է պետական ապահովագրական կազմակերպություններին: Կյանքի ապահովագրության ոլորտում 36 տոկոսը պատկանում է մասնավոր ապահովագրական ընկերություններին[311]:



Գծապատկեր 2.55

Կյանքի և ոչ կյանքի ապահովագրական վճարների կշիռը ՀՆԱ-ում[312]

Հնդկաստանի ապահովագրության ոլորտում գերակշռում է կյանքի ապահովագրությունը, որի մասով ապահովագրական վճարների կշիռը ՀՆԱ-ում շարունակ աճում է: Ոչ կյանքի ապահովագրության վճարների կշիռն էական փոփոխություններ չի կրում և դիտարկված ժամանակահատվածում մոտ 5 անգամ պակաս է կյանքի ապահովագրական վճարների կշ

6. Կենսաթոշակային ոլորտ

Հնդկաստանի կենսաթոշակային համակարգը սահման նպաստների և վճարումների սխեմաների համակցությունն է, որն առաջարկում է կենսաթոշակային մի շարք տարբերակներ բնակչության տարբեր շերտերի համար: Հաշվի առնելով բնակչության ծերացումը և սոցիալական փոփոխությունները՝ պետական աշխատողներին վերաբերող կենսաթոշակային համակարգի հարկաբյուջետային սթրեսից խուսափելու համար Հնդկաստանում 2004 թ. ներդրվել է Ազգային կենսաթոշակային համակարգը (NPS) Կենտրոնական կառավարության այն ծառայողների համար, ովքեր ծառայության են անցել

[311] https://www.ibef.org/uploads/industry/Infrographics/large/insurance-infographic-august-2024.pdf
[312] **Աղբյուրը՝** Համաշխարհային բանկի կայքէջ, https://data.humdata.org/dataset/8ad0d426-01f1-4095-8d6b-61a34072fbc9/resource/2ac94fbc-dfcf-46a0-943d-5114ccc762fb/download/financial-sector_ind.csv

01.01.2004 թ-ից (բացի զինված ուժերից): Համակարգը 2009 թ. մայիսից ընդգրկեց Հնդկաստանի բոլոր քաղաքացիներին: Համակարգի ներքո գործող տարբեր սխեմաներ, ինչպիսիք են NPS Lite-ը, Swavalambhan-ը և այլն, գործարկվեցին չաշխատող և տնտեսապես ավելի թույլ հատվածների համար՝ նպատակ ունենալով ապահովելու սոցիալական ապահովություն կամ թոշակ ծերության համար:

2013 թվականի սեպտեմբերին հիմնվեց Կենսաթոշակային ֆոնդերի կարգավորման և զարգացման գործակալությունը (Pension Fund Regulatory and Development Authority (PFRDA), որի նպատակն է ծերության եկամուտների ապահովումը՝ ստեղծելով, զարգացնելով և կարգավորելով կենսաթոշակային հիմնադրամները և պաշտպանելով մասնակիցների շահերը: Համակարգը սահմանում է նվազագույն երաշխավորված վերադարձի սխեմա: 2015 թվականի մայիսին Հնդկաստանի կառավարության կողմից գործարկվեց երաշխավորված կենսաթոշակային սխեման, այսինքն՝ Atal Pension Yojana (APY): Գոյություն ունեցող Swavalamban Scheme-ում նոր գրանցումները դադարեցվեցին[313]: Հետագա զարգացումները նպատակ են ունեցել բարելավելու կենսաթոշակային ծածկույթը, իրազեկելու համակարգին միանալու կարևորությունը և այլն: Ներկայում գործող համակարգը բաղկացած է մի քանի հատվածից, որոնք ներառում են պետական, մասնավոր հատվածներում զբաղվածների, ինչպես նաև չաշխատող և անապահով հատվածի կենսաթոշակային ապահովության համակարգերը: Կենսաթոշակային համակարգն ունի մի շարք սխեմաներ: Ստորև ներկայացնենք դրանք.

1. Կառավարության կենսաթոշակային սխեմաներ

ա. Սահմանված նպաստների կենսաթոշակային համակարգ է. գործել է մինչ 2004 թվականը: Դա կենտրոնական կառավարության աշխատողների կենսաթոշակային սխեման էր: Պետական աշխատողներն իրավունք ունեին օգտվելու այս կենսաթոշակային պլանից. թոշակառուներին տրվում էր իրենց ստացած վերջին աշխատավարձի ամրագրված տոկոսը՝ որպես կենսաթոշակ: Այն ներառում է ընտանեկան կենսաթոշակ և գնաճի հետ կապված նպաստ: Որոշ նահանգներ նույնպես իրենց աշխատողների համար նման սխեմաներ էին կիրառում:

բ. Նոր կենսաթոշակային սխեմա (NPS) / Ազգային կենսաթոշակային համակարգ[314]. գործարկվել է 2004 թ., փոխարինել է կենտրոնական կառավարության աշխատողների համար սահմանված ավանդական նպաստների սխեմային: Այն հասանելի է նաև լայն հանրությանը՝ կամավոր հիմունքներով: Համակարգը սահմանված վճարումների վրա է հիմնված, որտեղ ներդրում են կատարում և՛ աշխատողները, և՛ գործատուները: Թոշակի անցնելուց հետո կուտակված գումարն օգտագործվում է անուիտետային վճարումներով սխե-

[313] Departmenst of Financial Services, National Pension System, https://financialservices.gov.in/beta/en/nps
[314] Pension Fund Regulatory & Development Authority, https://www.pfrda.org.in/index1.cshtml?lsid=86

մայի ձևավորման համար: Գումարի մի մասը մասնակիցները կարող են միանվագ վճարմամբ ստանալ:

գ. Աշխատողների կենսաթոշակային սխեմա (Employees' Pension Scheme-EPS)[315]. համակարգը կառավարվում է Աշխատակիցների ապահովման հիմնադրամի (Employees' Provident Fund Organisation- EPFO) կողմից: Սխեման պարտադիր է ամսական մինչև 15,000 ռուփի վաստակող աշխատողների համար, ովքեր ապահովագրված են Աշխատակիցներին ապահովման հիմնադրամում (EPF): Աշխատողի աշխատավարձի 8.33%-ը գործատուն ներդնում է համակարգում և հետագայում տրամադրում ամրագրված կենսաթոշակ՝ ըստ աշխատողի ծառայության տևողության և ստացած վերջին աշխատավարձի:

2. Հանրային ապահովության ֆոնդ (Public Provident Fund-PPF)[316]. սա կամավոր և առանց հարկերի կամավոր խնայողությունների սխեման է, որն ապահովվում է կառավարության կողմից: Դա թույլ է տալիս ֆիզիկական անձանց ներդրում կատարել կենսաթոշակային ֆոնդում՝ հարկային արտոնություններով: Ներդրման ժամկետը 15 տարի է՝ 5 տարով երկարաձգելու հնարավորությամբ: Տոկոսադրույքը կառավարության կողմից հայտարարվում է եռամսյակը մեկ և, ընդհանուր առմամբ, ավելի բարձր է, քան սովորական խնայողական հաշիվները:

3. Չկազմակերպված հատվածի կենսաթոշակային սխեմաներ

ա. Atal Pension Yojana (APY)[317]. չկազմակերպված հատվածի աշխատողների համար 2015 թ-ից գործող սխեմա է, որը նպատակ ունի տրամադրելու սահմանված կենսաթոշակ՝ ըստ անհատի կատարած ներդրման և միանալու պահին նրա տարիքի: Ժամկետի ավարտին (60 տարեկանից) առաջարկում է երաշխավորված կենսաթոշակ՝ ամսական 1000-ից մինչև 5000 ռուփի չափով:

բ. Pradhan Mantri Shram Yogi Maan-dhan (PMSYM)[318]. համակարգը նախատեսված է ոչ կանոնավոր աշխատողների համար, ովքեր ամսական 15000 ռուփիից պակաս են վաստակում: Ֆոնդում ներդրումներ են կատարվում անհատի և կառավարության կողմից հավասարապես: Համակարգը 60 տարեկանից հետո տրամադրում է 3000 ռուփի ամսական թոշակ:


4. Կորպորատիվ հատվածի կենսաթոշակային պլաններ

ա. Կենսաթոշակային ֆոնդեր (Superannuation Funds), որոնք կարող են առաջարկել գործատուները՝ որպես աշխատողների նպաստների մաս: Այստեղ վճարումները կատարվում են գործատուի կողմից: Միջոցները տնօրինում են ապահովագրական ընկերությունները:

[315] Employees' Provident Fund Organisation, https://www.epfindia.gov.in/site_en/index.php
[316] Department of Financial Services, Ministry of Finance, Government of India, https://financialservices.gov.in/
[317] National portal of India, https://www.india.gov.in/spotlight/atal-pension-yojana
[318] Ministry of Labour & Employment, https://labour.gov.in/pmsym

բ. Կամավոր տրամադրվող ֆոնդեր (Voluntary Provident Fund -VPF), որտեղ աշխատակիցները կարող են կամավոր մասնակցություն ունենալ, ինչը դիտվում է որպես երկարաժամկետ ներդրում՝ թոշակի անցնելու համար:

5. Ապահովագրության վրա հիմնված կենսաթոշակային պլաններ: Սրանք առաջարկվում են ապահովագրական ընկերությունների կողմից: Այս կենսաթոշակային ծրագրերը կենսաթոշակի անցնելուց հետո ապահովում են անուիտետներ կամ միանվագ վճարումներ: Կենսաթոշակային տվյալ պլանները ներառում են անմիջական անուիտետային պլաններ (կենսաթոշակի վճարումը կատարվում է միանվագ վճարումից անմիջապես հետո) և հետաձգված անուիտետային պլաններ (մինչև կենսաթոշակը կատարված կուտակումները վճարվում են կենսաթոշակի անցնելուց հետո):



Գծապատկեր 2.56 **Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների և ՀՆԱ հարաբերակցությունը**[319]

Հնդկաստանում կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կշիռը ՀՆԱ-ում շարունակ աճում է. 2010 թվականից մինչև 2020 թվականի վերջն այդ ցուցանիշն աճել է 2 անգամից ավելի: Համակարգում մասնակիցների թվի, ներդրումների ծավալների մեծացումը ֆոնդերում ակտիվների աճի ապահովման հիմնական գործոններն են:

7. Տեխնոլոգիական նորարարությունների ոլորտ և շուկայական ենթակառուցվածքներ

Հնդկաստանի բավականին բարդ ու ընդգրկուն ֆինանսական համակարգի մասն են կազմում նաև տեխնոլոգիական նորարարության ոլորտի համակարգերը: Սրանց մեջ կարելի է ներառել.

- Թվային վճարումների համակարգերը, որոնցից է Վճարումների միասնական ինտերֆեյսը (Unified Payments Interface (UPI)): Դա իրական ժա-

[319] Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի կայքէջ, https://data.humdata.org/dataset/8ad0d426-01f1-4095-8d6b-61a34072fbc9/resource/2ac94fbc-dfcf-46a0-943d-5114ccc7621b/download/financial-sector_ind.csv

մանակում վճարային համակարգ է, որը մշակվել է Հնդկաստանի վճարումների ազգային կորպորացիայի (National Payments Corporation of India -NPCI) կողմից՝ բջջային հեռախոսների միջոցով միջբանկային գործարքները հեշտացնելու համար:

- Ֆինտեք էկոհամակարգ. ֆինտեք ընկերությունների արագ աճն ապահովում է նորարարական ֆինանսական ապրանքներ և ծառայություններ՝ խթանելով ֆինանսական ներգրավվածությունը և բարելավելով հաճախորդների փորձը:
- Aadhaar ինտեգրում (**Aadhaar Integration**). Aadhaar-ը Հնդկաստանի կենսաչափական նույնականացման համակարգն է (India's biometric identity system), որն օգտագործվում է հաճախորդների ուսումնասիրման գործընթացների և ուղղակի օգուտների փոխանցումների համար՝ հեշտացնելով ֆինանսական ծառայությունների հասանելիությունը:
- Վճարումների և հաշվարկների համակարգեր. կարգավորվում են RBI-ի կողմից՝ ապահովելով անվտանգ և արդյունավետ գործարքներ ֆինանսական համակարգում: Իրական ժամանակի ռեժիմով համախառն հաշվարկների (Real Time Gross Settlement (RTGS)) և Ազգային էլեկտրոնային միջոցների փոխանցման (National Electronic Funds Transfer (NEFT) համակարգերը դրա առանցքային բաղադրիչներն են:
- Վարկային վարկանշային գործակալություններ. այնպիսի հաստատություններ, ինչպիսիք են CRISIL-ը, ICRA-ն և CARE-ն, տրամադրում են վարկային վարկանիշներ կորպորատիվ և այլ ֆինանսական գործիքների համար՝ աջակցելով ռիսկերի գնահատմանը և ներդրումային որոշումներին:

Ամփոփում

2000 թվականից մինչև 2024 թվականը Հնդկաստանի ֆինանսական համակարգը ենթարկվել է էական կառուցվածքային փոփոխությունների, որոնք նշանավորվել են կարգավորման բարեփոխումներով, տեխնոլոգիական առաջընթացներով և արդյունավետության, կայունության և ներառականության բարձրացմանն ուղղված ռազմավարական նախաձեռնություններով: Բանկային հատվածի էվոլյուցիան, թվային ֆինանսավորման աճը, կարգավորող շրջանակների ամրապնդումը և օտարերկրյա ներդրումների ազատականացումը միասին ձևավորել են ամուր և դինամիկ ֆինանսական էկոհամակարգ Հնդկաստանում:

Ֆինանսական շուկան հիմնականում ունի բարդ կառուցվածք, որտեղ կարևոր դեր ունեն բանկերը, ֆոնդային բորսաները, ներդրումային ու կենսաթոշակային ֆոնդերը: Այս ֆինանսական ինստիտուտների զարգացման քաղաքականության շրջանակներում էապես կարևորվում է ոլորտի ներառականության բարձրացումը, ծառայությունների հասանելիության մեծացումը տարբեր

տարածաշրջանների համար: Բացի այդ, կարգավորող մարմինները շարունակ բարեփոխում են նորմատիվային համակարգերը հատկապես ոչ բանկային ֆինանսական ինստիտուտների համար:

Ոլորտի զարգացման համար էական դեր են կատարում նաև օտարերկրյա ներդրումները ոլորտի կազմակերպություններում, ինչի խթանողը նաև կարգավորող մարմիններն են՝ ոլորտի ազատականացման, ռիսկերի նվազեցման ու գործունեությանն աջակցման միջոցով:

Բանկային ու ոչ բանկային հատվածներում մատուցվող ծառայությունների ծավալներն ու տեսակներն աստիճանաբար աճում են, ինչի մասին են վկայում դրանց ցուցանիշների շարունակական աճի միտումները: Չնայած դրան, շուկան պարբերաբար արձագանքում է տնտեսական ու ֆինանսական ոլորտներում տեղի ունեցող գործընթացներին, համաշխարհային ճգնաժամերին: Սրանք են բորսայական ցուցանիշների, բանկային համակարգի վարկավորման, ներգրաված ավանդների ծավալների տատանման հիմնական պատճառները:

Դրամավարկային ու ֆինանսական համակարգի կարգավորման կառույցների քաղաքականությունները բավականին արդյունավետ են, ինչի մասին են վկայում հիմնական ցուցանիշների բարելավման միտումներն ու տեմպերը: Համակարգի հիմնական խնդիրն է շարունակում մնալ ներառականության մեծացումը, բնակչության ավելի լայն շերտերի ընդգրկումը ֆինանսական համակարգում՝ ապահովագրության, կենսաթոշակային համակարգի տարբեր սխեմաներում, բանկային համակարգի ու վճարային տարբեր ծառայություններից օգտվելու շրջանակներում:

2.5 Թվայնացումը և նորարարական համակարգերը

Թվայնացումը ներկայումս ընթացող մեծ տեխնոլոգիական փոփոխություն է, և, կախված այն բանից, թե ինչպես են երկրներն ընդունում այդ տեխնոլոգիաները, որոշվում է առաջիկա տասնամյակների զարգացումը: Թվայնացումը բարձրացնում է տնտեսական արդյունավետությունն ու մրցունակությունը՝ ստեղծելով նոր բիզնեսներ և ապրանքներ, ինչպես նաև լուծում է ֆինանսական ծառայություններից օգտվողների թվի մեծացման, կառավարման բարելավման և անհավասարությունների նվազեցման հետ կապված մարտահրավերները: Հնդկաստանի համար թվայնացումը հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով բնակչության մեծ թիվը, որի 60%-ից ավելին ապրում է գյուղական վայրերում: Թվայնացումը թույլ է տալիս ավելի մեծ թվով քաղաքացիներին և հնարավորություններին՝ դրանով իսկ կամրջելով տնտեսական անջրպետը: Ավելին, առաջադեմ տեխնոլոգիաների ընդունումը, ինչպիսիք են

արհեստական բանականությունը (ԱԲ), մեքենայական ուսուցումը, բլոկչեյնը, ամպային հաշվարկը և այլն, բացահայտելով նոր շուկաներ և ստեղծելով նոր բիզնես մոդելներ, բարելավում են հնդկական բիզնեսների արդյունավետությունը՝ դրանք, գլոբալ առումով, դարձնելով մրցունակ:

2015 թ. մեկնարկել է «Թվային Հնդկաստան» ծրագիրը, որն իրականացվում է երեք հիմնասյուների միջոցով՝ ամուր թվային ենթակառուցվածք, հասանելի պետական ծառայություններ և պահանջվող հմտություններով վերազինված քաղաքացիներ[320]: Ծրագրի մեկնարկից ի վեր Հնդկաստանում կառավարումը ենթարկվել է լուրջ բարելավման՝ բարդ նույնօրինակ գործընթացներից անցում կատարելով անխափան առցանց հարթակների: Այս հարցում առանցքային դեր է խաղացել Էլեկտրոնային կառավարման ազգային բաժինը (NeGD)՝ աջակցելով Էլեկտրոնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ծրագրերի կառավարումը, նախագծերի մշակումը, տեխնոլոգիաների կառավարումը, կարողությունների զարգացումը, «Թվային Հնդկաստան» առաջատար ծրագրի շրջանակներում իրազեկումն ու հաղորդակցությունը: NeGD-ն մշակել և կառավարում է մի շարք հանրային թվային հարթակներ: Պետական գնումներում թափանցիկություն ապահովելու համար կառավարությունը մշակել է e-Marketplace-ը (GeM)[321], որը հատուկ հարթակ է պետական կազմակերպությունների, ստորաբաժանումների կողմից գնվող տարբեր ապրանքների և ծառայությունների համար, որն առաջարկում է 11,900 ապրանքների և 321 ծառայությունների կատեգորիաներ: Նույնկերպ՝ MyGov-ի և UMANG-ի նման նախաձեռնությունները քաղաքացիներին հնարավորություն են տալիս անմիջականորեն օգտվելու պետական բազմաթիվ ծառայություններից՝ պարզեցնելով փոխգործակցությունը և մեծացնելով հաշվետվողականությունը: Մեկ այլ շատ կարևոր նախաձեռնություն է Aadhaar-ը՝ թվային ինքնության եզակի ծրագիրը, որը միլիոնավոր մարդկանց հնարավորություն է տալիս օգտվելու բոլոր հիմնական, այդ թվում՝ ֆինանսական ծառայություններից: Aadhaar-ի թվային ինքնության ծրագրից օգտվում է 1.35 մլրդ անհատ: Aadhaar-ի օգտատերերը 2023 թ. ապրիլին իրականացրել են շուրջ 2 միլիարդ նականացման գործարք, որը, 2022 թ. ապրիլի համեմատությամբ, աճ ավելի քան 19%-ով: Թվայնացումը ներթափանցել է Հնդկաստանի տնտ թյան բոլոր ոլորտներ՝ վերաձևելով նաև ֆինանսական ոլորտը. միայն 2023 թ-ին վճարումների միասնական ինտերֆեյսի (UPI) միջոցով 118 մլրդ գործարք է կատարվել: Սա ցույց է տալիս Հնդկաստանում թվային տնտեսության աճը և վերոնշյալ նախաձեռնություններից օգտվողների օրեցօր աճող թիվը[322]:

[320] Digital India, https://www.digitalindia.gov.in/
[321] Government e-Marketplace, https://www.india.gov.in/spotlight/government-e-marketplace-procurement-made-smart#tab=tab-5
[322] Unique Identification Authority of India, https://uidai.gov.in/en/1023-resources/annual-reports.html

Քաղաքացիների հմտությունների, կարողությունների զարգացումը «Թվային Հնդկաստանի» հիմքում է: Քաղաքացիներին թվային ծառայություններից օգտվելու հնարավորություն ընձեռելու համար ընդլայնվել է գերարագ համացանցային կապի ծածկույթը՝ ընդգրկելով նույնիսկ երկրի ամենահեռավոր հատվածները: 2023 թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ Հնդկաստանում կար ավելի քան 888 միլիոն լայնաշերտ կապի օգտագործող: Քաղաքացիները կարող են օգտվել Digilocker-ի նման նախաձեռնությունից, որն ապահովում է փաստաթղթերի անվտանգ կառավարում: Մեկ այլ կարևոր նախաձեռնություն է տարածաշրջանային լեզվական էլփոստի ծառայությունը, ինչպիսին է DataMail-ը, որը կամրջում է լեզվական բացը: Կարևոր նախաձեռնություններից է նաև Pradhan Mantri Grameen Digital Saksharta Abhiyan-ը (PMGDisha)՝ թվային գրագիտության աշխարհի ամենամեծ ծրագիրը, որը գյուղական համայնքներին զինում է հիմնական թվային հմտություններով, ինչպիսիք են մարքեթինգը, էլեկտրոնային առևտուրը, ֆինանսները և կիբեռանվտանգությունը՝ հնարավորություն տալով լիարժեք մասնակցելու թվային տնտեսությանը: PMGDisha-ի 4,38,570 ուսումնական կենտրոններն արդեն հավաստագրել են ավելի քան 48 միլիոն ուսանողի[323]:

Հնդկաստանի կառավարությունն ակտիվորեն օգտագործում է նաև առաջադեմ տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները թվային տնտեսության ծավալները մեծացնելու համար: Մասնավորապես՝ կառավարության IndiaAI նախաձեռնությունը միտված է փոխակերպող տեխնոլոգիաների օգտագործմամբ խթանելու ներառականությունը, նորարարությունը և դրանց սոցիալական ազդեցությունը: 2022–2023 ֆինանսական տարվա բյուջեում նախանշվել էր առաջնակարգ ուսումնական հաստատություններում ԱԲ երեք գերազանցության կենտրոններ ստեղծելու ծրագիրը, ինչը նշանակալի քայլ է դեպի «Ստեղծել ԱԲ-ն Հնդկաստանում և աշխատացնել Հնդկաստանի համար» տեսլականը[324]: Նախաձեռնությունը նպատակ ունի խթանելու միջգիտակարգային հետազոտությունները՝ գյուղատնտեսության, առողջապահության և կայուն քաղաքների ոլորտներում առաջադեմ լուծումներ մշակելու համար: Այդ նախաձեռնություններից է 2023 թ. սեպտեմբերին գործարկված AI chatbot-ը՝ նախատեսված հող ունեցող ֆերմերներին ֆինանսական աջակցություն տրամադրելու համար[325]: Դա ԱԲ կիրառմամբ, ձայնային հրամաններով աշխատող ծրագիր է, որը ֆերմերներին օգնում է պարզել վարկ ստանալու իրենց իրավասությունը, վճարման եղանակները և բողոքարկման կարգը: Ծրագրի գործարկման առաջին իսկ օրը 500 հազար ֆերմեր օգտագործել է

[323] PMGDisha, https://www.pmgdisha.in/
[324] Make AI work for India': Union Budget 2023 introduces big plans for artificial intelligence, https://www.businesstoday.in/union-budget/story/make-ai-work-for-india-union-budget-2023-introduces-big-plans-for-artificial-intelligence-368428-2023-02-01
[325] AI-Based chatbot to support Indian Farmers, https://opengovasia.com/2023/09/23/ai-based-chatbot-to-support-indian-farmers/#:~:text=The%20chatbot%20has%20been%20incorporated,said%20in%20a%20press%20release

այն, ինչը, կարծում ենք, պատկերում է Հնդկաստանի տնտեսության մեջ ԱԲ ներթափանցման մակարդակը:

Հնդկաստանի թվայնացման նախաձեռնությունը, սակայն, զերծ չէ նաև մարտահրավերներից: Առկա է էական բաց՝ թվային տեխնոլոգիաների տադանդների պահանջարկի և առաջարկի միջև, և ակնկալվում է, որ մինչև 2026 թ. դա կավելանա 3,5 անգամ՝ որոշակիորեն կասեցնելով Հնդկաստանի՝ որպես տեխնոլոգիական և տնտեսական հզոր կենտրոն դառնալու ընթացքը: Այս մարտահրավերը հաղթահարելու նպատակով Էլեկտրոնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը Ծրագրային ապահովման և սպասարկման ընկերությունների ազգային ասոցիացիայի հետ համատեղ ստեղծել է «Ապագա հմտություններ» նորարարական հարը (FuturSkills Prime): Դա նախատեսված է սովորողներին ժամանակակից արագ զարգացող թվային միջավայրում, Հնդկաստանի տեխնոլոգիական տաղանդի պահանջարկին համապատասխան, նորագույն անհրաժեշտ հմտություններով զինելու համար[326]:


Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր նախաձեռնությունները՝ զարմանալի չէ, որ Հնդկաստանը Սթենֆորդի ԱԲ համաթվով 2015–2023 թթ. աշխարհի առաջատարն է՝ ԱԲ հմտությունների ներթափանցման բաղադրիչով[327]:

Հնդկաստանի կառավարության կարևոր նախաձեռնություններից է նաև Բլոկչեյն տեխնոլոգիայի գերազանցության կենտրոնը, որն ընդգրկում է վկայագրերը, դատական համակարգը, փաստաթղթերը, նյութատեխնիկական ապահովումը և սեփականության բլոկչեյնները՝ ներառելով 20 կենտրոնական և պետական գերատեսչություններ՝ քաղաքացիներին անխափան թվային ծառայություններ մատուցելու նպատակով: Բացի Բլոկչեյն գերազանցության կենտրոնից, գործում է նաև Իրերի համացանցի գերազանցության կենտրոնը, որն օգնում է խոր տեխնոլոգիական ստարտափներին զարգանալ Հնդկաստանում՝ աջակցելով դրանց ֆինանսավորման, ինկուբացիայի, աքսելերացիայի, մենթորության և այլ ձեռնարկությունների հետ կապի հարցերում: Այն հիմնականում խթանում է սենսորների զարգացումը խելացի IoT համակարգերի տիրույթում, որոնք ընդգրկում են ցանցերում, սարքերում և սենսորային համակարգերում խելացի սենսորների կիրառությունների լայն տարրապատկերը:

Այսպիսով՝ Հնդկաստանի թվային շուկան ունի մեծ ներուժ, որը, բնականաբար, չէին կարող չնկատել աշխարհի տեխնոլոգիական հսկաները: Մասնավորապես՝ Google-ը դեռևս 2020 թ. հայտարարել է 5–7 տարվա ընթացքում Հնդկաստանի թվայնացման ֆոնդում 10 մլրդ ԱՄՆ դոլար ներդնելու մասին[328]: Տեխնոլոգիական մեկ այլ խոշոր ընկերություն՝ Microsoft-ը, մեկնարկել

[326] FutureSkills Prime, https://futureskillsprime.in/about-us
[327] Artificial Intelligence Index Report 2024, https://aiindex.stanford.edu/wp-content/uploads/2024/04/HAI_2024_AI-Index-Report.pdf
[328] Financial Times, https://www.ft.com/content/431e50fb-eedc-44f7-9c36-d85dd9cc2f32

է AI Odyssey ծրագիրը, որով նախատեսվում է 100 հազար հնդիկ ծրագրավորողների վերապատրաստում՝ ԱԲ տեխնոլոգիաների և գործիքների կիրառության համար[329]:



Գծապատկեր 2.57

Հնդկաստանի ՏՀՏ ծառայությունների արտահանման մասնաբաժինն ընդհանուր ծառայությունների արտահանման մեջ, %[330]


Հնդկաստանի թվայնացման օրինակելի նախաձեռնություններից և տնտեսության թվայնացման տպավորիչ մակարդակից անցում կատարելով ոչ պակաս տպավորիչ նորարարական համակարգին՝ պետք է ընդգծել, որ Հնդկաստանը միջինից ցածր եկամուտներ ունեցող երկրների խմբում զբաղեցնում է 1-ին հորիզոնականը գլոբալ ինովացիոն համաթվով (ԳԻՀ), իսկ աշխարհի 132 տնտեսությունների շարքում 2023 թ. ԳԻՀ-ով զբաղեցնում է 40-րդ հորիզոնականը: Համեմատության համար նշենք, որ Հայաստանը ԳԻՀ-ով զբաղեցնում է 72-րդ հորիզոնականը: Հնդկաստանը, ինչպես և Հայաստանը, ավելի բարձր միավորներ է գրանցում ինովացիոն արդյունքով, քան ռեսուրսներով, իսկ դա նշանակում է, որ արդյունավետորեն է ծախսատար ինովացիոն ռեսուրսները վերածում արդյունքի: Ընդհանուր առմամբ, ԳԻՀ-ի բոլոր 80 ենթացուցանիշների առումով Հնդկաստանն ավելի շատ ուժեղ, քան թույլ կողմեր ունի: Մասնավորապես՝ հատկապես տպավորիչ է ՏՀՏ ծառայությունների արտահանման մասնաբաժինը, որ 2022 թ. կազմել է ողջ ծառայությունների արտահանման շուրջ 47%-ը (գծապատկեր 2.57): Այս ցուցանիշով Հնդկաստանը 2023 թ. զբաղեցրել է 5-րդ հորիզոնականը:

[329] Microsoft, https://news.microsoft.com/en-in/microsoft-launches-ai-odyssey-to-skill-100000-developers-in-india-in-latest-ai-technologies-and-tools/
[330] World Bank Data, https://data.worldbank.org/indicator/BX.GSR.CCIS.ZS?locations=IN-AM



Գծապատկեր 2.58 **Հնդկաստանի բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանումը, մլրդ ԱՄՆ դոլար[331]**

Բավականին տպավորիչ են նաև մշակող արդյունաբերության մեջ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության մասնաբաժինը և բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանման ծավալները (գծապատկեր 2.57)։ Այսպես՝ մշակող արդյունաբերության մեջ բարձր տեխնոլոգիական ապրանքների արտադրությունն ըստ վերջին՝ 2019 թ. ցուցանիշի կազմել է 34,2%, իսկ բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանումը 2022 թ. հասել է 35 մլրդ ԱՄՆ դոլարի։



Գծապատկեր 2.59 **Հնդկաստանում ռեզիդենտների կողմից գրանցված արտոնագրերի թիվը[332]**

Շեշտակի աճել է նաև ինովացիոն գործունեության արգասիք հանդիսացող արտոնագրերի թիվը (գծապատկեր 2.59)։ Վերջին 20 տարում դրանց թիվն աճել է ավելի քան 10 անգամ՝ 2021 թ. հասնելով 26 հազարի։ Աճի այս

[331] World Bank Data, https://data.worldbank.org/indicator/TX.VAL.TECH.CD?locations=IN

[332] WB, https://data.worldbank.org/indicator/IP.PAT.RESD?view=chart

տեմպերը հաշվի առնելով՝ կարող ենք եզրակացնել, որ Հնդկաստանը տեխնոլոգիաներ ներմուծողից և սպառողից աստիճանաբար վերածվում է տեխնոլոգիական զարգացումը գեներացնողի։

Տպավորիչ է նաև Հնդկաստանի մշակութային և ստեղծարար ծառայությունների արտահանման ծավալը՝ 11.4 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2021 թ. տվյալներով։ Այս ծառայությունները ներառում են տեսալսողական (աուդիովիզուալ) ծառայությունները (կինո, ռադիո, հեռուստատեսային ծառայություններ), գովազդը, մարքեթինգային հետազոտությունները և այլն։

Հնդկաստանն առաջատար դիրքեր է զբաղեցնում նաև նորարարական արդյունքը բնութագրող մեկ այլ ցուցանիշով՝ ՀՆԱ-ի նկատմամբ միաեղջյուրների (միաեղջյուր համարվում են այն ստարտափները, որոնց արժեքը գերազանցում է 1 մլրդ ԱՄՆ դոլարը) արժեքով, որը 2023 թ. կազմել է 5.04%, ինչը բավականին բարձր ցուցանիշ է։ Այս ցուցանիշով Հնդկաստանը զբաղեցրել է 9-րդ հորիզոնականը 132 երկրների շարքում՝ առաջ անցնելով նույնիսկ ԳԻՀ-ով առաջատար Շվեյցարիայից, մի շարք զարգացած եվրոպական երկրներից, ինչպես նաև Չինաստանից։ 2024 թ. մարտի դրությամբ Հնդկաստանում գործում է 71 միաեղջյուր, որոնցից 13-ն ունեն 5 և ավելի մլրդ ԱՄՆ դոլար շուկայական արժեք[333]։ Ընդ որում, միաեղջյուրները ներկայացնում են գրեթե բոլոր բնագավառները՝ սկսած կրթության, զբոսաշրջության, առևտրի, ֆինանսներից, ծրագրային ապահովման ոլորտներից, վերջացրած լոգիստիկայի և տրանսպորտի ոլորտով։

Ինովացիոն արդյունքը բնութագրող H-ինդեքս հոդվածների ցուցանիշը, որը ցույց է տալիս տվյալ երկրի հոդվածների թիվը, որոնք ստացել են առնվազն H հոդվածներ, Հնդկաստանի դեպքում հատկապես վերջին տարիներին աճել է մեծ տեմպերով։ Այսպես՝ 2021 թ., նախորդ տարվա համեմատությամբ, նշված ցուցանիշն աճել է շուրջ 20%-ով, 2022 թ.՝ 9%-ով և 812 միավորով զբաղեցրել է 20-րդ հորիզոնականը[334]։

Անդրադառնալով նորարարության արդյունքի գիտելիքի տարածումը բնութագրող տնտեսական բարդության ցուցչին, որը հաշվարկվում է արտահանման բազմազանության և արտահանված ապրանքների տարածվածության հիման վրա, պետք է նշել, որ թեև Հնդկաստանի դեպքում դա միշտ դրական է եղել, սակայն մինչև 2017 թ. 0.26 միավորից չի անցել, ինչը կարելի է համարել միջին ցուցանիշ։ Սակայն 2018 թ. տնտեսության բարդության ցուցիչը կտրուկ աճել է՝ հասնելով 0.54 միավորի, որը թեև հաջորդիվ որոշակի անկում է գրանցել, այնուամենայնիվ, շատ ավելի բարձր է եղել, քան մինչև 2018 թ.։ Աճը կրկին վերականգնվել է 2021-ին. ցուցչի արժեքը հասել է 0.48 միավորի, որով Հնդկաստանն աշխարհում զբաղեցրել է 42-րդ հորիզոնականը[335]։

[333] CBInsights, Tracker – The Complete List of Unicorn Companies, https://www.cbinsights.com/research-unicorn-companies

[334] SCImago, SJR – SCImago Journal & Country Rank, https://www.scimagojr.com/countryrank.php?min=0&min_type=itp


[335] The Atlas of Economic Comlexity, https://atlas.cid.harvard.edu/rankings

Ստեղծարար ծառայությունները բնութագրող բջջային հավելվածների ստեղծման ցուցանիշը, որը ցույց է տալիս տվյալ երկրում ստեղծված բջջային հավելվածների՝ աշխարհում ներբեռնումների քանակը, կայուն աճ է ցուցաբերում: Այստեղ շրջադարձային է եղել 2020 թ., երբ Հնդկաստանում ստեղծված բջջային հավելվածների ներբեռնումները, նախորդ տարվա համեմատությամբ, աճել են միանգամից 28%-ով: Հաջորդիվ աճը դանդաղել է, սակայն պետք է հաշվի առնել, որ տեղի է ունեցել ավելի բարձր հիմքի վրա և 2022 թ. Հնդկաստանի համար ապահովել է 36-րդ հորիզոնականը՝ 132 երկրների շարքում[336]: Այս ցուցանիշի աճին նպաստել է նաև Հնդկաստանի կառավարության թվայնացման նախաձեռնությունը, որով լայնաշերտ ինտերնետը հասանելի է դարձել ավելի մեծ թվով քաղաքացիների, որոնք նաև թվային կրթության ընդլայնման շրջանակներում կարող էին հենց Հնդկաստանում ստեղծված հավելվածների օգտագործողը դառնալ՝ նպաստելով ներբեռնումների աճին:

Նման ինովացիոն արդյունքներ գրանցելը պատահական չէ, քանի որ բացի այն, որ Հնդկաստանն արդյունավետորեն է օգտագործում ռեսուրսները, այնուամենայնիվ, որպես խոշոր տնտեսություն, տիրապետում է նաև մեծ ռեսուրսների: Մասնավորապես՝ այս երկիրը զբաղեցնում է 6-րդ հորիզոնականը ՀՆԱ-ի նկատմամբ ընդհանուր վենչուրային ներդրումների՝ 0.0057% գործակցով, 9-րդ հորիզոնականը՝ ստարտափների և սքեյլափների ֆինանսավորման գործակցով: Հնդկաստանը մեծ ներդրումներ է կատարում նաև կրթության ոլորտում. կրթության պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2021 թ. կազմել է 4.64%, որով զբաղեցրել է 49-րդ հորիզոնականը: Այնուամենայնիվ, գրագիտության մակարդակը դեռևս 76% է[337], թեև, ինչպես արդեն նշել ենք, կառավարությունը ջանքեր է գործադրում տարբեր ծրագրերի միջոցով հնարավորինս շատ քաղաքացիների կրթության հասանելիություն ապահովելու համար: Ի տարբերություն համատարած գրագիտության ցածր մակարդակի՝ Հնդկաստանում բավականին բարձր է ինովացիոն գործունեության վրա առավել անմիջական ազդեցություն ունեցող՝ գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի գծով հետդպրոցական կրթության շրջանավարտների տեսակարարը կշիռն ընդհանուր շրջանավարտների մեջ: 2021 թ. այդ ցուցանիշը կազմել է 34%, որով զբաղեցրել է 11-րդ հորիզոնականը: Համեմատության համար նշենք, որ Հայաստանում այս ցուցանիշը եղել է 17.7%՝ շուրջ երկու անգամ պակաս Հնդկաստանի ցուցանիշից:

Մարդկային կապիտալ և հետազոտությունների խումբը բնութագրող՝ ըստ QS վարկանիշի լավագույն 3 համալսարանների 47.57 միջին միավորով Հնդկաստանը 2022 թ. զբաղեցրել է 22-րդ հորիզոնականը: Հնդկաստանի 3 համալսարանները՝ Գիտության հնդկական ինստիտուտը, Բոմբեյի տեխնոլոգիական հնդկական ինստիտուտը և Դելիի տեխնոլոգիական հնդկական ինստիտուտը ընդգրկված են QS-ի լավագույն 200 համալսարանների շարքում[338]:

[336] WIPO, https://www.wipo.int/gii-ranking/en/india
[337] World Bank data, https://data.worldbank.org/indicator/SE.ADT.LITR.ZS?locations=IN



Գծապատկեր 2.60 **Համախառն ՀուՄ-ի ծախսերի կառուցվածքը Հնդկաստանում, %[339]**

Անդրադառնալով ինովացիոն գործունեության համար առանցքային նշանակություն ունեցող հետազոտություններին ու մշակումներին (ՀուՄ) ուղղվող համախառն ծախսերին՝ պետք է նշել որ Հնդկաստանում դրանք 2021 թ. կազմել են 17.2 մլրդ ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ 0.64%-ը[340]: ՀուՄ-ի ծախսերը թեև 10 տարում ավելի քան կրկնապատկվել են, սակայն դեռևս հարաբերական ցուցանիշով բավականին նվազ են աշխարհի միջին ցուցանիշից (1.8%): Դրանք նաև ամենացածրն են BRICS-ի մյուս երկրների համեմատությամբ: Ինչ վերաբերում է ՀուՄ-ի ծախսերի կառուցվածքին, ապա պետք է նշել, որ դրանց գերակշիռ մասը կատարվում է պետության կողմից, թեև ընդհանուր միտումն այն է, որ դրանց մասնաբաժինն աստիճանաբար նվազում է (գծապատկեր 2.60): Ավելին՝ Հնդկաստանը 13-րդ հորիզոնականն է զբաղեցնում երկրի առաջատար երեք համաշխարհային ընկերությունների կողմից ՀուՄ-ի աշխատանքների վրա կատարված միջին ծախսերի ցուցանիշով: Ընդ որում, ՀուՄ-ի տանքների վրա կատարվող ծախսերի առումով աշխարհի առաջատար ընկերությունների ցանկում ընդգրկված է 24 հնդկական ընկերու-թյուն՝ մեքենաշինության, դեղագործության, քիմիայի, ծրագրային ապահովման և հանքարդյունաբերության ոլորտներից:

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք նշել, որ Հնդկաստանը կայուն կերպով բարելավում է իր դիրքերը որպես թվային տնտեսության և տեխնոլոգիական

[338] QS, https://www.topuniversities.com/qs-world-university-rankings
[339] R&D Statistics at a Glance 2022-23, https://dst.gov.in/sites/default/files/R%26D%20Statistics%20at%20a%20Glance%2C%202022-23.pdf
[340] R&D Statistics at a Glance 2022-23, https://dst.gov.in/sites/default/files/R%26D%20Statistics%20at%20a%20Glance%2C%202022-23.pdf


զարգացման նոր ծագող առաջատար՝ տեխնոլոգիաներ սպառողից վերածվելով դրանք նաև գեներացնողի: Հնդկաստանի կառավարության մշակած թվային նախաձեռնությունները, տարեցտարի ընդլայնվելով, նպաստում են ավելի մեծ թվով մարդկանց ներառմանը՝ այդպիսով մեծացնելով Հնդկաստանի տնտեսական աճի և զարգացման ներուժը:

ԳԼՈՒԽ 3
ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

3.1 Ժողովրդագրական պատկերը

ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ Հնդկաստանը պաշտոնապես առաջ է անցել Չինաստանից՝ դառնալով աշխարհի ամենաբնակեցված երկիրը: Հնդկաստանի համար աշխարհի ամենախիտ բնակեցված երկիր լինելը ներառում է և՛ հնարավորություններ, և՛ մարտահրավերներ: 2023 թվականին Հնդկաստանի բնակչությունը հասել է 1,426 միլիոնի[341]: Հնդկաստանի բնակչության հաշվարկները հիմնված են կանխատեսումների վրա, քանի որ վերջին մարդահամարն անցկացվել է 2011 թվականին: Տասնամյակը մեկ անգամ անցկացվող մարդահամարը, որը նախատեսված էր իրականացնել 2021 թվականին, հետաձգվել է համաճարակի պատճառով և, ամենայն հավանականությամբ, տեղի կունենա Հնդկաստանի համընդհանուր ընտրություններից հետո:

Ընդհանուր առմամբ, թեև Հնդկաստանի բնակչությունն ավելի քան եռապատկվել է՝ 1960-ականների 450,55 միլիոնից հասնելով 1,42 միլիարդի (2022 թ.), վերջին տարիներին բնակչության աճի տեմպը դանդաղել է:




Գծապատկեր 3.1 **Հնդկաստանի բնակչությունը 1965-2020 թթ. (մլն մարդ)[342]**

Պետք է նշել, որ միջազգային կառույցների և Հնդկաստանի վիճակագրության և ծրագրերի իրականացման նախարարության կողմից հրապարակվող պաշտոնական տվյալների միջև առկա են որոշակի տարբերություններ:

[341] Տե՛ս UN Department of Economic and Social AffairsEconomic Analysis, https://www.un.org/development-/desa/dpad/publication/un-desa-policy-brief-no-153-india-overtakes-china-as-the-worlds-most-populous-country/


[342] Գծապատկերը կազմել են հեղինակները: Աղբյուրը՝ World Data, https://www.worlddata.info/asia/india/populationgrowth.php



Գծապատկեր 3.2

Հնդկաստանի բնակչությունը 1951–2021 թթ.՝ ըստ պաշտոնական մարդահամարի տվյալների (մլն մարդ)[343]

Հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Հնդկաստանում իրականացվող մարդահամարը կարող է թերհաշվարկել բնակչության թիվը, ինչպես դա եղավ 2011 թվականին, երբ 27,85 միլիոն մարդ թերհաշվարկված էր[344]:



Գծապատկեր 3.3

Հնդկաստանի բնակչության տարեկան ս եմպերը 1965-2024 թթ. (%)[345]

1970-ականների կեսերից մինչև 1980-ականների կեսերս ընկած ժամանակահատվածի հետ համեմատած, երբ տարեկան աճի տեմպը գերազանցել է 2,3%-ը, իսկ հետո՝ մինչև 1993 թվականը, նվազել է մինչև 2%-ից պակաս, աճի


[343] Գծապատկերը կազմել են հեղինակները: Աղբյուրը՝ Government of India. Ministry of statistics and programme implementiation, https://www.mospi.gov.in/publication/women-men-india-2022

* Բնակչության կանխատեսումների տեխնիկական խմբի հաշվետվություն, հուլիս, 2020 թ., Բնակչության ազգային հանձնաժողով (MoHFW):

[344] Աղբյուրը՝ https://www.livemint.com/news/india/womens-literacy-rate-increased-by-68-since-independence-report-11678863594186.html%20.%20

[345] Գծապատկերը կազմել են հեղինակները: Աղբյուրը՝ https://countrymeters.info/ru/India#population_density

տեմպերը շարունակել են նվազել (1% – 1.3%՝ 2020 թվականից ի վեր): Ծնելիության ներկա մակարդակը երկու երեխա է՝ յուրաքանչյուր կնոջ հաշվով, և մոտավորապես 1,7 երեխա՝ մեկ կնոջ հաշվով՝ քաղաքային բնակավայրերում[346]:



Գծապատկեր 3.4

Ամենաբնակեցված երկրների հնգյակը 1970 թ. և 2023 թ. գնահատականներով և 2050 թ. կանխատեսումներով (մլն մարդ)[347]


Հնդկաստանի բնակչությունը գործնականում կշարունակի աճել մի քանի տասնամյակ (գծապատկեր 3.4): Ի հակադրություն նշենք՝ Չինաստանի բնակչության թիվը հասել է իր գագաթնակետին վերջերս և սկսել է անկում ապրել 2022 թվականից: Կանխատեսումները ցույց են տալիս, որ Չինաստանի բնակչության թիվը կշարունակի նվազել և մինչև դարավերջ կարող է 1 միլիարդից պակաս լինել[348]: Փորձելով դանդաղեցնել բնակչության աճը՝ Հնդկաստանի կառավարությունը սկսեց իրականացնել ընտանիքի պլանավորման լայնածավալ ծրագրեր՝ սկսած 1950-ականների սկզբից: 1951 թվականին, երբ Հնդկաստանի բնակչությունը մոտ 361 միլիոն էր, կառավարությունն ընդունեց ընտանիքի պլանավորման առաջին ազգային ծրագիրը, որը կոչ էր անում յուրաքանչյուր կնոջը, օրինակ, վեց երեխայի փոխարեն ունենալ երկու երեխա: 1970-ականներին Հնդկաստանի կառավարությունը ծնելիության մակարդակը

[346] Տե՛ս World Data, https://www.worlddata.info/asia/india/populationgrowth.php

[347] Տե՛ս UN Department of Economic and Social AffairsEconomic Analysis, https://www.un.org/development/desa/dpad/wp-content/uploads/sites/45/PB153_figI.png

[348] Տե՛ս նույն տեղը:

վերահսկելու համար ոչ հանրամատչելի և ագրեսիվ միջոցներ ձեռնարկեց, ներառյալ տղամարդկանց հարկադիր ստերիլիզացումը: 1990-ականների կայուն տնտեսական աճը և աղքատության կրճատման, կրթության հասանելիության և կանանց առաջխաղացման միջոցով սոցիալական բարեկեցության համապատասխան բարելավումները հանգեցրել են ավելի փոքր ընտանիքների առկայության:



Գծապատկեր 3.5

Հնդկաստանի բնակչության սեռատարիքային բուրգը 2011 և 2021 թթ. դրությամբ (%)[349]

Ժողովրդագրական կարևոր ցուցանիշ է նաև բնակչության բաշխվածությունն ըստ տարիքի և սեռի (գծապատկեր 3.5): Տեղեկատվությունն ըստ սեռի և տարիքային խմբի ներառվում է հետևյալ կերպ. 0–14 տարեկան (երեխաներ), 15–64 տարեկան (աշխատանքային տարիք), 65 տարեկան և բարձր (տարեցներ): Ժողովրդագրական կարևոր ցուցանիշ է նաև տղամարդկանց և կանանց հարաբերակցությունը հինգ տարիքային խմբերում՝ ծննդյան ժամանակ, մինչև 15 տարեկան, 15–24 տարեկան, 25–64 տարեկան, 65 տարեկան և ավելի:

[349] Գծապատկերը կազմել են հեղինակները: Աղբյուրը՝ Government of India. Ministry of statistics and programme implementiation, https://www.mospi.gov.in/publication/women-men-india-2022

* Բնակչության կանխատեսումների տեխնիկական խմբի հաշվետվություն, հուլիս, 2020 թ., Բնակչության ազգային հանձնաժողով (MoHFW)

Ինչպես երևում է գծապատկեր 3.5-ից, 2011 թվականի Հնդկաստանի սեռատարիքային բուրգի հիմքն ավելի լայն է, քան 2021 թվականինը: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ զարգացող երկրներում երեխաները և երիտասարդները (0–24 տարեկան) կազմում են ընդհանուր բնակչության զգալի մասը: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգընթաց, բուրգի հիմքը նեղանում է, քանի որ ծնելիությունը նվազում է, և բնակչության աստիճանական վերաբաշխում է տեղի ունենում՝ հօգուտ ավելի մեծ տարիքային խմբերի (2021 թ.):

Հնդկաստանի բնակչության սեռատարիքային կառուցվածքի կարևոր առանձնահատկությունն այն է, որ 2021 թ. դրությամբ տղամարդկանց 45%-ի և կանանց մոտ 43%-ի տարիքը ցածր է եղել 25-ից: Փորձագետները կանխատեսում են, որ Հնդկաստանի երիտասարդ բնակչությունը կշարունակի աճել մինչև 2060-ական թվականներին իր գագաթնակետին հասնելը[350]: Երիտասարդության առավելությունը, որը հայտնի է որպես «ժողովրդագրական դիվիդենդ», կարող է օգնել Հնդկաստանին ավելի արագ զարգանալ, քան ցանկացած այլ երկիր: Անգլերենի իմացության և տեղեկատվական տեխնոլոգիաների ու տեխնիկական ոլորտներում առաջընթացի առավելությունների շնորհիվ Հնդկաստանի երիտասարդությունը մրցունակ է ոչ միայն ազգային, այլև համաշխարհային մակարդակում: Առաջիկա տասնամյակների ընթացքում երիտասարդության ներուժն օգտագործելու համար համապատասխան կրթություն, ուսուցում և զբաղվածություն ապահովելը Հնդկաստանի կառավարության առջև ծառացած հիմնական մարտահրավերներն են:

Հնդկաստանում կրթական համակարգը բաժանված է ըստ դասի, լեզվական ծագման, սեռի, էթնիկ պատկանելության, աշխարհագրական դիրքի և այլ չափորոշիչների: Տարբերություններ կան նաև անգլերենով կրթության, բարձրագույն կրթության և հետագա կրթության դասընթացների հասանելիության հարցում: Արդյունքում՝ մեծահասակների գրագիտության մակարդակը Հնդկաստանի քաղաքներում կազմում է 84,11%, իսկ գյուղական վայրերում՝ 67,77%[351]:

Երիտասարդ բնակչության մեծ թիվը պահանջում է նաև մեծ թվով աշխատեղեր: Ամեն տարի ավելի քան 10 միլիոն երիտասարդ հնդիկ մուտք է գործում աշխատաշուկա: Ըստ կանխատեսումների՝ մինչև 2030 թվականը Հնդկաստանում պետք է ստեղծվի ավելի քան 90 միլիոն նոր աշխատատեղ՝ 60 միլիոն նոր աշխատողներ ներգրավելու համար՝ ի լրումն 30 միլիոն նոր աշխատատեղերի նրանց համար, ովքեր անցնում են գյուղատնտեսական աշխատանքից ոչ գյուղատնտեսական աշխատանքի: Նման ցուցանիշների հասնելու համար Հնդկաստանի տնտեսությունը պետք է տարեկան աճի ավելի

[350] Տե՛ս BBC, https://www.bbc.com/news/world-asia-india-63957562

[351] Աղբյուրը՝ https://www.livemint.com/news/india/womens-literacy-rate-increased-by-68-since-independence-report-11678863594186.html%20.%20

քան 8%-ով[352]: 2022 թվականին գործազրկության մակարդակը կազմել է շուրջ 7–8%: Քանի որ բնակչության մեծ մասը դեռևս չունի կրթության և հմտությունների բավարար մակարդակ, գործազրկության խնդիրը Հնդկաստանի ժողովրդագրական հիմնական մարտահրավերներից է[353]: 2022 թվականին երիտասարդների գործազրկության մակարդակը կազմել է շուրջ 23%, ընդ որում, բարձրագույն կրթություն ստացած միայն չորս շրջանավարտներից մեկն էր աշխատում: Բացի այդ, կանանց մասնակցությունը աշխատաշուկայում ամենացածրերից մեկն է զարգացող շուկաների մեջ և կազմել է մոտ 25%[354]: Չնայած Հնդկաստանի կառավարության ջանքերին՝ խրախուսելու կանանց մասնակցությունը աշխատաշուկայում, դեռ երկար ճանապարհ կա անցնելու աշխատուժում գենդերային հավասարության հասնելու համար:

Բնակչության տարիքային կառուցվածքն ազդում է նաև երկրի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների և դրանց լուծմանն ուղղված ծախսերի մեծության և ծախսային գերակայությունների որոշման վրա: Սովորաբար, երիտասարդ բնակչություն ունեցող երկրներում (մինչև 15 տարեկանների բարձր տոկոս) ներդրումներն առավելապես ուղղվում են նախակրթական և կրթական հաստատություններ, մինչդեռ ավելի բարձր տարիքի բնակչություն ունեցող երկրները (65 տարեկան և բարձր) հարկադրված են զգալի ծախսեր կատարել առողջապահության, սոցիալական պաշտպանության ոլորտներում:

Ժողովրդագրական կախվածության գործակիցները նույնպես բնակչության տարիքային կառուցվածքի գնահատման չափանիշներ են: Ծնելիության մակարդակի նվազումը սկզբնական շրջանում հանգեցնում է կախվածության գործակցի նվազման, քանի որ երիտասարդների համամասնությունը նվազում է, մինչդեռ, ինքնըստինքյան, աշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը զուգահեռ մեծանում է, բայց մեծանում է նաև տարեցների մասնաբաժինը: Իսկ երբ ծնելիության մակարդակը շարունակում է նվազել, կախվածության գործակիցներն, ի վերջո, աճում են, քանի որ աշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը սկսում է նվազել, իսկ տարեցների համամասնությունը շարունակում է աճել[355]: Հնդկաստանի համար ընդհանուր կախվածության գործակիցը 54,1% է: Ըստ այսպիսի հարաբերակցության՝ Հնդկաստանի հասարակության վրա համեմատաբար բարձր սոցիալական բեռ է ընկնում. յուրաքանչյուր աշխատող Հնդկաստանում պետք է մոտ 1,5 անգամ ավելի շատ ապրանքներ և ծառայություններ մատուցի, քան անձամբ իրեն անհրաժեշտ կլիներ: Երիտասարդների ժողովրդագրական ծանրաբեռնվածության գործակիցը հավասար է 45.7%-ի: Տարեցների ժողովրդագրական ծանրաբեռնվածության կախվածության գործակիցը 8.4 % է[356]:

Միգրացիայի բացակայության դեպքում սեռատարիքային բուրգի ձևը կախված է ծնելիության և մահացության միտումներից: Մինչև վերջերս տնտեսապես զարգացած երկրներում բուրգի ձևի փոփոխությունն առաջին հերթին պայմանավորված էր ծնելիության նվազմամբ, իսկ մահացության մակարդակը շատ թույլ ազդեցություն է ունեցել բուրգի ձևի վրա: Ավելի հաճախ մահացության նվազումը, հատկապես մանկական, հանգեցնում է սեռատարիքային բուրգի ստորին հատվածի ամրացման: Վերջին տասնամյակների ընթացքում զարգացած երկրներում մահացության մակարդակի նվազումը, հատկապես մեծ տարիքում, հանգեցրել է բուրգի վերին մասի ուժեղացմանը: Դա տեղի է ունենում ծերության ժամանակ կյանքի տևողության աճի պատճառով: Այս միտումը նկատվում է մի շարք զարգացած երկրներում, որտեղ կյանքի տևողությունը բարձր է: Նույն պատկերը նկատվում է նաև մի շարք զարգացող երկրներում. ծնելիության նվազման և կյանքի տևողության աստիճանական աճի հետևանքով բնակչությունն աստիճանաբար ծերանում է: Հնդկաստանի 2021 թ. սեռատարիքային բուրգի վրա, ի տարբերություն 2011 թ., մենք տեսնում ենք, թե ինչպես է բուրգի հիմքը սկսել նեղանալ ծնելիության նվազման պատճառով (գծապատկեր 3.5):

Աշխատունակ բնակչության թվաքանակի փոփոխություններն առանցքային դեր են խաղում աշխատուժի թվի և միջպետական աշխատանքային միգրացիայի ուղղությունը որոշելու հարցում: Հաշվի առնելով փոփոխվող տարիքային կազմը՝ Հնդկաստանի աշխատունակ տարիքի բնակչությունը կշարունակի աճել: Հնդկաստանի բնակչության կանխատեսումների տեխնիկական խմբի գնահատման համաձայն՝ 2021 թ. 924 միլիոն մարդ կամ Հնդկաստանի բնակչության 64,8%-ը եղել է աշխատանքային տարիքային խմբում: Ակնկալվում է, որ 15–59 տարեկան բնակչության խումբը տարիների ընթացքում կաճի և 2036 թվականին կհասնի մոտ 988,5 միլիոնի (աղյուսակ 3.1):

---

352 Տե՛ս McKinsey Global Institute (2020), https://www.mckinsey.com/featured-insights/india/indias-turning-point-an-economic-agenda-to-spur-growth-and-jobs#/

353 Աղբյուրը՝ https://time.com/6248790/india-population-data-china/

354 Աղբյուրը՝ https://www.theguardian.com/world/2022/nov/14/india-faces-deepening-demographic-divide-as-it-prepares-to-overtake-china-as-the-worlds-most-populous-country

355 **Ընդհանուր կախվածության գործակիցը** հավասար է երիտասարդների (0–14 տարեկան) և տարեց բնակչության (65+ տարեկան) հարաբերակցությանը՝ աշխատունակ տարիքի (15–64 տարեկան) 100 մարդու նկատմամբ: Կախվածության ընդհանուր բարձր գործակիցը ցույց է տալիս, որ աշխատունակ տարիքի բնակչությունը և ընդհանուր տնտեսությունը բախվում են ավելի մեծ բեռի՝ աջակցելու և սոցիալական ծառայություններ մատուցելու երիտասարդներին և տարեցներին, որոնք հաճախ տնտեսապես կախվածության մեջ են գտնվում:
Երիտասարդների ժողովրդագրական ծանրաբեռնվածության կախվածության գործակիցը ներկայացնում է երիտասարդ բնակչության (0–14 տարեկան) հարաբերակցությունը՝ աշխատունակ տարիքի (15–64 տարեկան) 100 մարդու նկատմամբ: Երիտասարդների ժողովրդագրական ծանրաբեռնվածության կախվածության բարձր գործակիցը ցույց է տալիս, որ ավելի մեծ ներդրումներ պետք է կատարվեն դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված այլ ծառայություններում:
Տարեցների ժողովրդագրական ծանրաբեռնվածության կախվածության գործակիցը ներկայացնում է տարեց բնակչության (65+ տարեկան) հարաբերակցությունը աշխատունակ տարիքի (15–64 տարեկան) 100 մարդու նկատմամբ: Տարեցների կախվածության գործակցի աճը լրացուցիչ ճնշում է կառավարության վրա՝ ֆինանսավորելու կենսաթոշակները և առողջապահության ոլորտը:

356 Աղբյուրը՝ Население Индии, https://countrymeters.info/ru/India#:~:text=%D0%A0%D0%BE%D0%B6%D0%B4%D0%B0%D0%B5%D0%BC%D0%BE%D1%81%D1%82%D1%8C%3A%20%D0%B2%20%D1%81%D1%80%D0%B5%D0%B4%D0%BD%D0%B5%D0%BC%2080%20730,%D0%B4%D0%B5%D0%BD%D1%8C%20(%2D67.57%20%D0%B2%20%D1%87%D0%B0%D1%81)

Աղյուսակ 3.1

Ըստ տարիքային խմբերի բնակչության կանխատեսվող ցուցանիշները 2011–2036 թթ.[357]


Տարիներ	Բնակչությունն ըստ տարիքային խմբերի			Համամասնություն (%)			Միջին տարիք	Կախվածության հարաբերակցություն (%)		
	0–14	15–59	60+	0–14	15–59	60+		0–14	60+	Ընդամենը
2011	373,9	735,4	101,5	30.9	60.7	8.4	25,0	50.8	13.8	64.6
2021	350,0	875,4	137,6	25.7	64.2	10.1	28.3	40.0	15.7	55.7
2031	323,3	962,1	193,4	21.9	65.1	13.1	32.4	33.6	20.1	53.7
2036	306,4	988,5	227,4	20.1	64.9	14.9	34.5	31.0	23.0	54.0

Հնդկաստանի մեկ այլ մարտահրավեր է աճող ուրբանիզացիան: Հնդկաստանը դեռևս հիմնականում գյուղական երկիր է, որտեղ բնակչության միայն 34%-ն է (2021 թ.) ապրում քաղաքային բնակավայրերում: Տնտեսական աճը և միգրացիան խթանում են աճող ուրբանիզացիան, որը ՄԱԿ-ի կանխատեսմամբ կհանգեցնի ավելի ու ավելի ուրբանիզացված բնակչության առկայության: Արդյունքում՝ մինչև 2035 թվականը մոտ 675 միլիոն հնդիկ կարող է ապրել քաղաքներում, ընդ որում, ամենամեծ աճը սպասվում է խոշոր քաղաքների առաջին տասնյակում: Օրինակ՝ Նյու Դելիում, որն այժմ ունի 20 միլիոն բնակչություն, մինչև 2041 թվականը բնակչության թիվը կարող է հասնել մինչև 28 միլիոնի: Նմանատիպ աճ է սպասվում նաև այլ խոշոր քաղաքներում, ինչպիսիք են Մումբայը, Բանգալորը, Հայդերաբադը, Ահմեդաբադը, Չեննայը, Կալկաթան և այլն[358]: Ուրբանիզացիան ճնշում է տնտեսության հիմնական ենթակառուցվածքները՝ կացարաններ, տրանսպորտ, ջրային և էներգետիկ ռեսուրսներ, սանիտարական պայմաններ, և պահանջում է քաղաքային կառավարման բարելավված համակարգեր, ներառյալ խելացի քաղաքների համակարգերի ընդլայնումը: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2021 թ. Հնդկաստանի ընդհանուր բնակչության 34.4%-ը քաղաքաբնակներ են, 65.6%-ը՝ գյուղաբնակներ[359] (գծապատկեր 3.6): Ըստ գծապատկերի տվյալների՝ վերջին քառասուն տարվա ընթացքում Հնդկաստանի քաղաքային բնակչությունն ավելացել է մոտ 11 տոկոսային կետով:

[357] Աղյուսակը կազմել են հեղինակները: Աղբյուրը՝ Government of India. Ministry of statistics and programme implementiation. Women and Men in India 2022, https://www.mospi.gov.in/publication/women-men-india-2022


[358] Աղբյուրը՝ https://www.theguardian.com/world/2022/nov/14/india-faces-deepening-demographic-divide-as-it-prepares-to-overtake-china-as-the-worlds-most-populous-country

[359] Նույն աղբյուրը:



Գծապատկեր 3.6

Հնդկաստանի գյուղական և քաղաքային բնակչությունը 1981–2021 թթ., %[360]



Գծապատկեր 3.7

Հնդկաստանում ծնելիության ցուցանիշները, 1000 մարդու հաշվով[361]

Հնդկաստանի բնակչության ընդհանուր խտությունը կազմում է 439 մարդ / 1 քառ. կմ[362]: Համեմատության համար նշենք, որ Գերմանիայում այդ ցուցանիշը կեսից մի փոքր ավելի է, իսկ ԱՄՆ-ում մեկ տասներորդ մասն է կազմում: Անապատային և լեռնային շրջաններում բնակչության խտության աստիճանը շատ ցածր է (մի քանի մարդ/ 1 քառ. կմ), մինչդեռ քաղաքներում մեկ քառակուսի կիլոմետր տարածքում երբեմն ավելի քան 25000 բնակիչ է ապրում: Նյու Յորքում այդ թիվն ընդամենը 10000 է: Բնակիչների մոտ 60 տոկոսն ապրում

[360] Տե՛ս Government of India. Ministry of statistics and programme implementiation, https://www.mospi.gov.in/publication/women-men-india-2022

[361] Գծապատկերը կազմել են հեղինակները: Աղբյուրը՝ World Data, https://www.worlddata.info/asia/india/populationgrowth.php


[362] Աղբյուրը՝ https://countrymeters.info/ru/India#population_density

է երկրի բերրի հատվածներում գտնվող մի քանի խոշոր քաղաքներում: Ավելի քան մեկ միլիոն բնակիչ ունեցող 40 քաղաքներով Հնդկաստանը Չինաստանից հետո ամենամեծ մետրոպոլիաներով երկիրն է[363]:

Ժողովրդագրության հաջորդ կարևոր ցուցանիշները ծնելիության և մահացության գործակիցներն են:

1961-ից 2021 թթ. ընկած ժամանակահատվածում Հնդկաստանում ծնելիության միջին ցուցանիշը կազմել է 30,7 ծնունդ՝ 1000 մարդու հաշվով. նվազագույնը 16,4 ծնունդ՝ 2021 թվականին, առավելագույնը 41,8 ծնունդ՝ 1961 թվականին: Համեմատության համար նշենք, որ 2021 թվականին համաշխարհային միջին ցուցանիշը 194 երկրների համար կազմել է 18,9 ծնունդ՝ 1000 մարդու հաշվով[364]: Վերջին 10 տարիների ընթացքում Հնդկաստանում ծնունդների միջին թիվը տարեկան մոտ 24.3 միլիոն մարդ է, մահացությանը՝ 9,6 միլիոն[365]:

Հնդկաստանի հյուսիսում և հարավում ծնելիության և միգրանտների թվի տարբերությունների պատճառով Հնդկաստանը և՛ երիտասարդ, և՛ ծերացող երկիր է: Այն կարելի է անվանել մի աշխարհ՝ ժողովրդագրական երկու բևեռներով: Հնդկաստանի հյուսիսային նահանգները, որտեղ ծնելիության մակարդակը բարձր է, ավելի շատ խնդիրներ ունեն հանրային առողջության և գրագիտության ցածր մակարդակի հետ կապված, մինչդեռ հարավային նահանգների բնակչությունը բախվում է ծերացող հասարակությանը բնորոշ հիմնախնդիրներին: Շատ դժվար է քաղաքականության առաջնահերթություններ սահմանել, երբ երկիրը միաժամանակ բախվում է երկու շատ տարբեր ժողովրդագրական խնդիրների:




Գծապատկեր 3.8

Հնդկաստանում մահացության ցուցանիշները 1000 մարդու հաշվով[366]

[363] Տե՛ս World Data, https://www.worlddata.info/asia/india/populationgrowth.php
[364] Տե՛ս The Global Economy.com, https://ru.theglobaleconomy.com/India/Birth_rate/
[365] Տե՛ս World Data, https://www.worlddata.info/asia/india/populationgrowth.php
[366] Գծապատկերը կազմել են հեղինակները: Աղբյուրը՝ World Data, https://www.worlddata.info/asia/india/populationgrowth.php

1961-ից 2021 թթ. ընկած ժամանակահատվածում Հնդկաստանում մահացության միջին ցուցանիշը կազմել է 11,8 մահ՝ 1000 մարդու հաշվով. նվազագույնը 6,6 մահ՝ 2018 թ., առավելագույնը 21,7 մահ՝ 1961 թ.[367]: Համեմատության համար նշենք, որ 2021 թվականին համաշխարհային միջին ցուցանիշը 194 երկրի պարագայում կազմել է 8,8 մահ՝ 1000 մարդու հաշվով[368]:



Գծապատկեր 3.9

Հնդկաստանի բնակչության տղամարդկանց և կանանց հարաբերակցությունը, %[369]

Ինչպես երևում է գծապատկեր 3.9-ից, 60 տարվա ընթացքում Հնդկաստանի բնակչության սեռային կառուցվածքն էական փոփոխությունների չի ենթարկվել:

Կյանքի սպասվող տևողությունը նույնպես ժողովրդագրական կարևորագույն ցուցանիշ է, որը ցույց է տալիս մարդու կյանքի տևողության միջին թիվը, այսինքն՝ այն տարիների թիվը, որ մարդը տեսականորեն կարող է ապրել՝ պայմանով, որ ծնելիության և մահացության ներկայիս ցուցանիշները անփոփոխ մնան մարդու ողջ կյանքի ընթացքում: Սովորաբար, «կյանքի սպասվող տևողությունը» վերաբերում է կյանքի սպասվող տևողությանը՝ ծննդի պահին: Հնդկաստանում ծննդի պահին կյանքի միջին տևողությունը (երկու սեռերի համար) կազմում է 67,3 տարի (2021 թ.): Սա ցածր է համաշխարհային կյանքի միջին տևողության ցուցանիշից, որը մոտ 71 տարի է (ըստ ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտի բնակչության բաժնի տվյալների): Տղամարդկանց կյանքի միջին տևողությունը ծննդյան ժամանակ կազմում է 65,8 տարի, կանանցը՝ 68.9 տարի[370]:

[367] Տե՛ս World Data, https://www.worlddata.info/asia/india/populationgrowth.php
[368] Տե՛ս The Global Economy.com, https://ru.theglobaleconomy.com/India/Birth_rate/
[369] Գծապատկերը կազմել են հեղինակները: Աղբյուրը՝ Government of India. Ministry of statistics and programme implementiation, https://www.mospi.gov.in/publication/women-men-india-2022
[370] Տե՛ս The Global Economy.com, https://ru.theglobaleconomy.com/India/Birth_rate/

Ամփոփելով Հնդկաստանի ներկայիս ժողովրդագրական իրավիճակը՝ կարելի է նշել, որ այն լավ հնարավորություններ ունի՝ հասնելու, այսպես կոչված, «ժողովրդագրական դիվիդենդի», որն էլ, իր հերթին, կնպաստի տնտեսական աճի խթանմանը: Այս հանգամանքը պայմանավորված է աշխատունակ տարիքի բնակչության համեմատաբար բարձր մասնաբաժնով, ինչպես նաև կառավարության կողմից անհրաժեշտ քաղաքականության իրականացմամբ, ներառյալ մարդկային կապիտալում ներդրումները: Ինչպես Չինաստանում, այնպես էլ Հնդկաստանում բնակչության ավելի դանդաղ աճը համարում են տնտեսական զարգացման նախապայման: Սակայն, ի տարբերություն Չինաստանի, Հնդկաստանը մարդկային կապիտալում էական ներդրումներ չի կատարել այս նպատակներին հասնելու համար: Գրագիտության մակարդակը, հատկապես կանանց շրջանում, հետ է մնում համաշխարհային միջին մակարդակից: Անհրաժեշտ է նաև ավելացնել ներդրումները առողջապահության ոլորտում, ինչի մասին է վկայում մանկական մահացության բարձր ցուցանիշը:

Այս տեսանկյունից, կարելի է նշել, Հնդկաստանը պետք է շտապի: Արևմտյան երկրներում ծնելիության նվազումը տնտեսական զարգացման հետևանք էր, իսկ Հնդկաստանում ընտանիքի պլանավորումը հանգեցրեց դրան: Սա նշանակում է, որ ժողովրդագրական փոփոխությունների ավելի արագ տեմպերի պատճառով Հնդկաստանն ավելի քիչ ժամանակ կունենա իր ժողովրդագրական «դիվիդենդը» օգտագործելու համար: Արևմտյան Եվրոպայում, գնահատվում է, որ 75 տարի կպահանջվի 60-ից բարձր տարիքի բնակչության համամասնությունը 15%-ից 30%-ի հասցնելու համար: Նմանատիպ անցումը Հնդկաստանում կպահանջի ընդամենը 34 տարի: ՄԱԿ-ի գնահատմամբ՝ Հնդկաստանի ուրբանիզացիայի մակարդակը կազմում է ընդամենը 33%, Չինաստանինը՝ 65%[371]: Ուրբանիզացիան պատմականորեն եղել է տնտեսական ներուժի հիմնական ցուցիչ, որտեղ քաղաքները կենտրոնացնում են ծառայությունները, գաղափարները և աշխատատեղերը, ուստի ուրբանիզացիայի ցածր մակարդակը սահմանափակում է Հնդկաստանի տնտեսական աճը:

3.2 Գործազրկության և աղքատության հիմնախնդիրները: Սոցիալական պատկերը

Ժողովրդագրական աճն իր հետ բերում է սոցիալական և տնտեսական մի շարք մարտահրավերներ, որոնք խորապես փոխկապակցված են երկրի զարգացման հետ: Ավելի քան մեկ միլիարդ մարդու բարեկեցությունը կառավարելը դժվար խնդիր է, և ակնհայտ է, որ երկիրը բախվում է զգալի խոչընդոտ-

[371] Աղբյուրը՝ https://ipdefenseforum.com/ru/2024/03/%D0%B4%D0%B5%D0%BC%D0%BE%D0%B3%D1%80%D0%B0%D1%84%D0%B8%D1%87%D0%B5%D1%81%D0%BA%D0%B8%D0%B5%D1%81%D0%B4%D0%B2%D0%B8%D0%B3%D0%B8/


ների՝ իր բոլոր քաղաքացիների համար արժանապատիվ կյանքի որակ ապահովելու հարցում: Սոցիալական ամենահրատապ խնդիրներից են աղքատությունն ու եկամուտների անհավասարությունը: Չնայած վերջին մի քանի տասնամյակների ընթացքում նկատելի տնտեսական առաջընթացին՝ բնակչության զգալի մասը դեռևս ապրում է աղքատության շեմից ցածր մակարդակում: Հարուստների և աղքատների միջև հարստության անհավասարությունը խիստ է, ինչը հանգեցնում է սոցիալական շերտավորման և շարժունակության սահմանափակման:

Կրթության հիմնախնդիրը ևս կարևորագույն ոլորտ է: Թեև Հնդկաստանը քայլեր է ձեռնարկել կրթության մակարդակի բարելավման և կրթության հասանելիության ընդլայնման ուղղությամբ, մարտահրավերները պահպանվում են: Կրթության որակը շատ տարբեր է երկրի տարբեր հատվածներում: Որոշ գյուղական շրջաններ հաճախ չունեն համապատասխան ենթակառուցվածքներ և պատրաստված մանկավարժներ: Կրթական հնարավորությունների այս անհավասարությունը պահպանում է աղքատության փուլերը և սահմանափակում տնտեսական առաջընթացի ներուժը:

Առողջապահությունը Հնդկաստանում նույնպես բախվում է զգալի մարտահրավերների: Առողջապահական համակարգը գերծանրաբեռնված է հատկապես գյուղական և անապահով քաղաքային վայրերում: Հիմնական բժշկական ծառայությունների հասանելիությունը մնում է խնդիր, ինչը հանգեցնում է կանխարգելելի հիվանդությունների և մահացության բարձր մակարդակի: COVID-19 համավարակը ևս մեկ հարված էր ինչպես Հնդկաստանի առողջապահական համակարգին, այնպես էլ երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակին, որը բացահայտեց Հնդկաստանի առողջապահական ենթակառուցվածքի խոցելիությունը՝ ընդգծելով բարեփոխումների հրատապ անհրաժեշտությունը:

Ավելին, երկիրը բախվում է այնպիսի խնդիրների, ինչպիսիք են գործազրկությունը և թերզբաղվածությունը, որոնք սրվում են բնակչության արագ աճի հետևանքով: Աշխատանքի շուկան պայքարում է աշխատանք փնտրողների աճող թվի հետ համընթաց քայլելու համար, ինչը պատճառ է դառնում է տնտեսական անկայունության և սոցիալական խնդիրների առաջացման:

Նախ ուսումնասիրենք Հնդկաստանում գործազրկության վիճակը: Գծապատկեր 3.10-ում ներկայացված է գործազրկության մակարդակը Հնդկաստանում 2000–2023 թվականներին:



Գծապատկեր 3.10

Գործազրկության մակարդակը Հնդկաստանում 2000–2023 թթ.[372]

Ըստ գծապատկերի տվյալների՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում գործազրկությունը, ընդհանուր առմամբ, նվազել է երկրում: Եթե 2000 թվականին Հնդկաստանում գործազրկությունը կազմել է 7.9 տոկոս, ապա 2023 թվականին՝ 4.7 տոկոս: Սակայն առանձին ժամանակահատվածներում գործազրկության մակարդակն աճել է երկրում: Մասնավորապես՝ 2000–2005 թվականներին գործազրկությունը Հնդկաստանում աճել է՝ հասնելով մինչև 8.7 տոկոսի: Այս ժամանակահատվածում գործազրկության մակարդակի աճը հիմնականում պայմանավորված է եղել բնակչության թվի աճի տեմպերի բարձր մակարդակով և, դրա հետ մեկտեղ, տնտեսության մեջ ոչ բավականաչափ աշխատատեղերի ստեղծմամբ[373]: Սակայն 2005–2006 թվականներին իրավիճակը երկրում փոխվեց, երբ Հնդկաստանի տնտեսությունը սկսեց կտրուկ աճել, որը հիմնականում պայմանավորված էր ոչ գյուղատնտեսական արտադրության աճով[374]: Գործազրկությունը Հնդկաստանում աճել է նաև 2020 թվականին, որը հիմնականում պայմանավորված էր կորոնավիրուսային համավարակով: 2019 թվականին գործազրկությունը Հնդկաստանում կազմել է 6.5 տոկոս, իսկ 2020 թվականին հասել է մինչև 7.9 տոկոսի:

Հնդկաստանում գործազրկության համատեքստում գենդերային անհավասարություն չկա: Որոշ տարիներին նույնիսկ տղամարդկանց շրջանում գործազրկության մակարդակը ավելի բարձր է եղել, քան կանանց շրջանում: Գծապատկեր 3.11-ում ներկայացված է գործազրկության մակարդակը Հնդկաստանում ըստ սեռի՝ 2000–2023 թվականներին:

[372] World Bank, World Development Indicator, India, 2000-2023.
[373] Mehra, Geeti, Unemployment: Stumbling Block to Economic Growth (January 3, 2018). IMPACT: International Journal of Research in Humanities, Arts and Literature, Vol. 6, Issue 1, Jan 2018, p. 71-78, http://dx.doi.org/10.2139/ssrn.3115958
[374] Sengupta, Anindya, Diversification of Rural Workforce: Indian Context (August 21, 2007), http://dx.doi.org/10.2139/ssrn.1008505



Գծապատկեր 3.11

Գործազրկության մակարդակը Հնդկաստանում ըստ սեռի, 2000–2023 թթ.[375]

2000–2018 թվականներին Հնդկաստանում գործազրկության մակարդակը կանանց և տղամարդկանց շրջանում գրեթե հավասար է եղել: Սակայն իրավիճակը սկսել է փոխվել 2019 թվականից, երբ տղամարդկանց շրջանում գործազրկության մակարդակն ավելի բարձր էր, քան կանանց շրջանում: 2020 թվականին՝ կորոնավիրուսային համավարակի ժամանակ, կանանց և տղամարդկանց գործազրկության մակարդակների միջև տարբերությունը հասել է առավելագույնի՝ 1.4 տոկոսի: Ներկայումս այդ տարբերությունն աստիճանաբար նվազում է, սակայն դեռևս կա 1.1 տոկոսային կետով տարբերություն: Նման տարանջատման պատճառ կարող է լինել այն, որ կանայք հիմնականում ինքնազբաղված են, որը տալիս է նրանց որոշակի պաշտպանվածություն, իսկ տղամարդիկ հիմնականում աշխատում են արդյունաբերության կամ գյուղատնտեսության ոլորտներում[376]:

Թեև վերջին տարիներին Հնդկաստանում լուրջ զարգացում է ապրում արդյունաբերությունը, սակայն գյուղատնտեսությունը դեռևս մնում է երկրի գլխավոր տնտեսական ճյուղը: Գծապատկեր 3.12-ում ներկայացված է Հնդկաստանում զբաղվածության կառուցվածքն ըստ տնտեսության ոլորտների՝ 2000 - 2022 թվականներին:

[375] World Bank, World Development Indicator, India, 2000–2023.
[376] Desai S., Deshmukh N., Pramanik S. (2021). Precarity in a Time of Uncertainty: Gendered Employment Patterns during the Covid-19 Lockdown in India. Feminist Economics, 27(1–2), p. 152–172, https://doi.org/10.1080/13545701.2021.1876903




Գծապատկեր 3.12

Հնդկաստանում զբաղվածության կառուցվածքը ըստ տնտեսության ոլորտների, 2000–2022 թթ.[377]

Ըստ գծապատկերի տվյալների՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը ամենամեծն է: Թեև դրա տեսակարար կշիռը նվազել է ամբողջ ժամանակահատվածում՝ 59.6 տոկոսից հասնելով 42.9 տոկոսի, այն դեռևս մնում է զբաղվածների հիմնական գործունեության ոլորտը: Գյուղատնտեսության բնագավառում զբաղվածների տեսակարար կշռի նվազման հետ մեկտեղ աճել է արդյունաբերությունում և ծառայությունների ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը: Արդյունաբերությունում զբաղվածների տեսակարար կշիռը 16.3 տոկոսից աճել է՝ հասնելով մինչև 26.1 տոկոսի՝ ավելանալով 1.6 անգամ: Ծառայությունների ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը նույնպես աճել է՝ 24 տոկոսից հասնելով 31 տոկոսի, սակայն ոչ այնքան արագ, որքան արդյունաբերության ոլորտում:

Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների տեսակարար կշռի նվազումը և արդյունաբերության ու ծառայությունների ոլորտներում զբաղվածների տեսակարար կշռի ավելացումը ցույց է տալիս, որ Հնդկաստանում ավելանում է որակավորված մասնագետների նկատմամբ պահանջարկը: Հետևաբար՝ բարձրագույն կրթություն ստացածների շրջանում գործազրկությունը կնվազի: Գծապատկեր 3.13-ում ներկայացված է բարձրագույն, հիմնական և միջնակարգ կրթություն ունեցողների շրջանում գործազրկության մակարդակը 2018–2023 թվականներին:

[377] World Bank, World Development Indicator, India, 2000-2023.



Գծապատկեր 3.13


Բարձրագույն, հիմնական և միջնակարգ կրթություն ունեցողների շրջանում գործազրկության մակարդակը 2018–2023 թթ.[378]

Կարելի է նկատել, որ գրեթե բոլոր տարիներին բարձրագույն, հիմնական և միջնակարգ կրթություն ստացողների շրջանում գործազրկության մակարդակը նվազել է: Բացառություն է կազմում 2020 թվականը, երբ կորոնավիրուսային համավարակի հետևանքով ընդհանուր գործազրկության մակարդակն աճել է: Գծապատկերից կարելի է նկատել, որ բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում՝ 6.3 տոկոսային կետով: Հետևաբար՝ կարելի է եզրակացնել, որ չնայած բարձրագույն կրթություն ունեցողների նկատմամբ պահանջարկը մեծացել է աշխատանքի շուկայում, սակայն հիմնական և միջնակարգ կրթություն ունեցողների շրջանում պահանջարկն էլ ավելի արագ է աճում:

Չնայած վերջին տարիներին զբաղվածների թիվը կտրուկ աճում է, իսկ գործազրկությունը՝ նվազում, Հնդկաստանում սոցիալ-տնտեսական խնդիրները դեռևս արդիական են: Սա հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի ցածր մակարդակով[379]: 2022 թվականին միջին աշխատավարձը Հնդկաստանում կազմել է 18585 ռուփի, որը մոտավորապես համարժեք է 220 դոլարի: Գյուղական բնակավայրերում այս ցուցանիշն էլ ավելի ցածր է՝ կազմել է 14766 ռուփի, որը մոտավորապես համարժեք է 175 ԱՄՆ դոլարի[380]: Այս

[378] World Bank, World Development Indicator, India, 2000-2023.
[379] Kumar, D., & Prakash, V. (2017). Poverty and Condition of Employment among Social Groups in India. International journal of social sciences, 6, 125, https://doi.org/10.5958/2321-5771.2017.00014.X
[380] Ministry of Statistics and Programme Implementation of India, Periodic Labour Force Survey, Annual Report, 2021-2022.

առումով, նույնիսկ այն մարդիկ, ովքեր ունեն աշխատանք, կարող են աղքատ լինել Հնդկաստանում: Գծապատկեր 3.14-ում ներկայացված է աղքատության մակարդակը Հնդկաստանում 2015–2021 թվականներին[381]:



Գծապատկեր 3.14


Աղքատության մակարդակը Հնդկաստանում 2015–2021 թթ.[382]

Կարելի է նկատել, որ Հնդկաստանի բնակչության 80 տոկոսից ավելին չեն ստանում օրական 6.85 ԱՄՆ դոլար և ավելի: Չնայած այդ մարդկանց տեսակարար կշիռը նվազել է ուսումնասիրվող ժամանակահատվածում՝ 88.9 տոկոսից դառնալով 81.8 տոկոս, սակայն դա դեռևս շատ բարձր ցուցանիշ է: Մեծ է նաև 3.65 ԱՄՆ դոլարից ցածր եկամուտ ունեցողների տեսակարար կշիռը: 2021 թվականին բնակչության 44.1 տոկոսը օրական 3.65 ԱՄՆ դոլարից ցածր եկամուտ է ստացել: Սակայն օրական 3.65 ԱՄՆ դոլար եկամուտ ունեցողների թիվը նույնպես կրճատվել է՝ 61 տոկոսից հասնելով 44.1 տոկոսի: 2.15 ԱՄՆ դոլարից ցածր եկամուտ ունեցողները, որոնք ծայրահեղ աղքատներն են, 2021 թվականին կազմել են բնակչության 12.9 տոկոսը, որը նույնպես բավականին բարձր ցուցանիշ է:

Աղքատությունից բացի, Հնդկաստանի համար կարևոր խնդիրների եկամուտների անհավասարությունը: 2021 թվականին Ջինիի գործակիցը, [illegible] եկամուտների անհավասարությունը գնահատող ամենատարածված ցուցանիշներից մեկն է, եղել է 32.8: Համեմատության համար նշենք, որ նույն թվականին Հայաստանում Ջինիի գործակիցը կազմել է 27.9, իսկ աշխարհում ամենացածր ցուցանիշը եղել է Նորվեգիայում՝ 22.1: Գծապատկեր 3.15-ում ներկայացված է Հնդկաստանի ամենահարուստ և ամենաաղքատ բնակչության 10

[381] 2022 և 2023 թվականների տվյալները դեռևս բացակայում են Համաշխարհային բանկի տվյալների բազայում:
[382] World Bank, World Development Indicator, India, 2000-2023.

տոկոսի եկամուտների մասնաբաժինը ընդհանուր եկամտի մեջ՝ 2015–2021 թվականներին:



Գծապատկեր 3.15


Հնդկաստանի ամենահարուստ և ամենաաղքատ 10 տոկոս բնակչության եկամուտների մասնաբաժինը ընդհանուր եկամուտների մեջ, 2015–2021[383]

Ըստ գծապատկերի տվյալների՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում ամենահարուստ 10 տոկոս բնակչության եկամուտների մասնաբաժինը նվազել է՝ 29.7 տոկոսից հասնելով 25.6 տոկոսի, սակայն ամենաաղքատ 10 տոկոս բնակչության եկամուտները նույն չափով չեն ավելացել: Ամենաաղքատ 10 տոկոս բնակչության եկամուտները 2021 թվականին կազմել են ընդհանուր եկամուտների միայն 3.3 տոկոսը, որը շատ ցածր ցուցանիշ է, իսկ ամենահարուստ 10 տոկոս բնակչության եկամուտները նույն ժամանակահատվածում կազմել են 25.6 տոկոս, որն ավելին է, քան ընդհանուր եկամուտների մեկ քառորդը:

Եկամուտների անհավասարության մի քանի պատճառ կա Հնդկաստանում: Որոշ հեղինակներ կարծում են, որ այստեղ եկամուտների անհավասարության մեծացման հիմնական պատճառը գլոբալացումն է, որի հետևանքով տեղի ունեցած սեփականաշնորհման գործընթացը և առևտրի ազատականացումը նպաստեցին հարուստների էլ ավելի հարստացմանը, իսկ աղքատների առավել աղքատացմանը[384]: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ Հնդկաստանում եկամուտների անհավասարության պատճառները տեխնոլոգիական փոփոխություններն են: Տեխնոլոգիական փոփոխությունների հետևանքով փոփոխվում է որոշ հմտություններ և որակավորում ունեցողների նկատմամբ պահանջարկը, որի հետևանքով որոշ մասնագիտությունների տեր մարդկանց աշխատավարձերը բարձրանում են, իսկ մյուս մասը կորցնում է աշխա-

[383] World Bank, World Development Indicator, India, 2000-2023.
[384] Mohammadi, M., & Ghoreishi, F. (2021). Roots of Appearance and Persistence of Income Inequality: A case study of India. Journal of History Culture and Art Research, https://doi.org/10.7596/TAKSAD.V10I2.3042.

տանքը[385]: Հնդկաստանում 1990-ական թվականներին կատարված տնտեսական բարեփոխումները նույնպես հանգեցրել են եկամուտների անհավասարության մեծացման: Այդ բարեփոխումների արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը խստացվեց, սկսեց կիրառվել ռեգրեսիվ հարկային քաղաքականություն, և պետական ծախսերն էականորեն նվազեցին: Այս ամենը նպաստեց երկրում եկամուտների անհավասարության ավելացմանը[386]:



Գծապատկեր 3.16

Հնդկաստանում չափահասների շրջանում մահացության թիվը 2000-2022 թթ.՝ 1000 չափահասի հաշվով[387]

Եկամուտների անհավասարության առաջացման մեկ այլ պատճառ է երկրի առողջապահական համակարգը: Երկրի առողջապահական համակարգը ուղղակիորեն կոռելացված է ներառական տնտեսական աճի և եկամուտների անհավասարության հետ, որն էլ Հնդկաստանում եկամուտների անհավասարության մեծացման հենց հիմնական պատճառներից է[388]: Հնդկաստանում բավականին շատ են ինֆեկցիաներից և մակաբույծներից մահացության դեպքերը: Այս ամենը ցույց է տալիս Հնդկաստանում առողջապահակ ի մակարգի խնդիրները, որը չի ապահովում ամբողջ բնակչության կարի ի բավարարումը[389]: Բացի այդ, կան նաև հետազոտություններ, որոնք ցույց են

[385] Kijima, Y. (2006). Why did wage inequality increase? Evidence from urban India 1983-99. Journal of Development Economics, 81, 97-117, https://doi.org/10.1016/J.JDEVECO.2005.04.008

[386] Pal, P., & Ghosh, J. (2007). Inequality in India: A Survey of Recent Trends, https://doi.org/10.18356/0AF507BB-EN


[387] World Bank, World Development Indicator, India, 2000-2023.

[388] Hatti, N., & Hari, K. (2015). Poverty and Inequality in India: An Exploratory Analysis. Social Science Spectrum, 1, 249-261.

[389] Joshi, R., Cardona, M., Iyengar, S., Sukumar, A., Raju, C., Raju, K., Raju, K., Reddy, K., Lopez, A., & Neal, B. (2006). Chronic diseases now a leading cause of death in rural India--mortality data from the

տալիս, որ ցածր եկամուտներ և վատ սոցիալ-տնտեսական պայմաններ ունեցող ընտանիքներում ավելի մեծ հավանականություն կա, որ ընտանիքի անդամները կմահանան ոչ վարակիչ հիվանդություններից[390]: Գծապատկեր 3.16-ում ներկայացված են Հնդկաստանում չափահասների շրջանում մահացության դեպքերը 2000–2022 թվականներին:

Կարելի է նկատել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում, չհաշված կորոնավիրուսային համավարակի ժամանակահատվածը, մահացության քանակը չափահասների շրջանում նվազել է: Սա վերաբերում է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց: Եթե 2000 թվականին տղամարդկանց շրջանում մահացությունն ամեն 1000 տղամարդու հաշվով կազմում էր 252 մարդ, ապա 2019 թվականին այդ ցուցանիշը նվազել է՝ հասնելով մինչև 193-ի: Նույն ձևով՝ եթե կանանց շրջանում 2000 թվականին ամեն 1000 կնոջ հաշվով մահացությունը կազմել է 190 մարդ, ապա 2019 թվականին այդ ցուցանիշը 139 է: Սակայն կորոնավիրուսային համավարակի ժամանակահատվածում՝ 2020 թվականից սկսած, մահացության քանակը սկսել է աճել: 2022 թվականին տղամարդկանց շրջանում 1000 մարդու հաշվով մահացությունը կազմել է 242 մարդ, իսկ կանանց շրջանում՝ 176 մարդ:



Գծապատկեր 3.17

Նորածինների և մինչև 5 տարեկան երեխաների շրջանում մահացության քանակը 2000–2022 թթ., 1000 երեխայի հաշվով[391]

Andhra Pradesh Rural Health Initiative. International journal of epidemiology, 35 6, 1522-9, https://doi.org/10.1093/IJE/DYL168

[390] Akhtar, S., & Saikia, N. (2022). Socio-economic and demographic determinants of all-cause, main-cause and sub-cause mortality among 45+ adults: Evidence from Longitudinal Ageing Study in India, https://doi.org/10.1101/2022.05.22.22275425

[391] World Bank, World Development Indicator, India, 2000-2023.

Հնդկաստանում լուրջ խնդիր է նաև նորածինների և մանկահասակների շրջանում մահացության քանակը: Դրա պատճառներից են նաև սոցիալ-տնտեսական պայմանները: Օրինակ՝ ըստ Կլաուվի և Վանգի, նորածինների և մանկահասակ երեխաների շրջանում մահացության պատճառը առողջապահական խնամքի պայմանների բացակայությունն է[392]: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ նորածինների մահացության պատճառը մայրական վատ սնուցումն է[393]: Այս ամենի հետ մեկտեղ, վերջին շրջանում նորածինների և մանկահասակ երեխաների շրջանում մահացության ցուցանիշը նվազել է: Գծապատկեր 3.17-ում ներկայացված է նորածինների և մինչև 5 տարեկան երեխաների շրջանում մահացության քանակը 1000 երեխայի հաշվով:

Ըստ գծապատկերի տվյալների՝ վերջին 2 տասնամյակի ընթացքում նորածինների և մանկահասակ երեխաների շրջանում մահացության քանակը նվազել է: Եթե 2000 թվականին մինչև 5 տարեկան երեխաների շրջանում 1000 երեխայի հաշվով մահանում էր 91.7 երեխա, ապա 2022 թվականին այդ ցուցանիշը նվազել է՝ հասնելով մինչև 29.1-ի, այսինքն՝ 2000–2022 թվականների ընթացքում նվազել է ավելի քան 3 անգամ: Մանկահասակների շրջանում նույնպես նվազել է մահացության ցուցանիշը, սակայն ոչ այն ծավալով, ինչպես մինչև 5 տարեկան երեխաների դեպքում: Եթե 2000 թվականին 1000 նորածնի հաշվով մահանում էր 66.4 նորածին, ապա 2022 թվականին այդ ցուցանիշը նվազել է մինչև 25.5, այսինքն՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում նվազել է 2.5 անգամ:

3.3 Գիտությունը, կրթությունը, մշակույթը

Կրթության ոլորտը Հնդկաստանում

Հնդկաստանում կրթության ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման պատասխանատուն Կրթության նախարարությունն է[394]:

Հնդկաստանում կրթական համակարգն ունի չորս մակարդակ՝ ցած
նական (6-ից 10 տարեկան), վերին հիմնական (11 և 12), բարձր (13-ի
բարձր ընտրովի (17 և 18):

Հնդկաստանում կրթական համակարգի երկու տեսակ կա՝ ֆորմալ և ոչ ֆորմալ: Ֆորմալ կրթությունը վերաբերում է դպրոցներում, քոլեջներում, ինչպես նաև բուհերում գիտելիքների փոխանցմանը՝ ուսումնական պլանով: Ոչ ֆորմալ կրթությունը վերաբերում է ֆորմալ կրթական համակարգից դուրս տրվող կրթությանը և չունի սահմանված ուսումնական պլան: Հնդկաստանում

[392] Klaauw, B., & Wang, L. (2004). Child mortality in rural India. Journal of Population Economics, 24, 601-628, https://doi.org/10.1007/S00148-009-0290-3

[393] Gandotra, M., Das, N., & Dey, D. (1923). Infant Mortality and Its Causes. Science, https://doi.org/10.1126/science.58.1497.xii.u


[394] Ministry of Education, https://www.education.gov.in/minister-page

ֆորմալ կրթությունը բաղկացած է 5 տարվա տարրական դպրոցից, որին հաջորդում է 3 տարի միջին դպրոցը և 2 տարի ավագ դպրոցը: Ավագ դպրոցն ավարտելուց հետո ուսանողները կարող են բարձրագույն կրթություն ստանալ քոլեջի կամ համալսարանի մակարդակով[395]:

2022 թ. տարրական դպրոցի սովորողների թիվը կազմել է 198,1 մլն, միջին դպրոցինը՝ 38,5 մլն, ավագ դպրոցինը՝ 28,5 մլն, ընդհանուրը՝ 265,2 մլն[396]:

Դպրոցների ընդհանուր քանակը Հնդկաստանում 2022 թ. եղել է 1489115, որից 1.2 մլն-ը՝ գյուղական վայրերում: Ուսուցիչների թիվը 9507123 է[397]:

Հնդկաստանն այժմ ունի 74% գրագիտության մակարդակ՝ 1947 թվականի 12%-ի դիմաց, երբ երկիրը ձեռք բերեց իր անկախությունը: Ե՛վ կրթությունը, և՛ գրագիտությունը կարևոր սոցիալական ցուցանիշներ են, որոնք ազդեցություն ունեն հասարակության ընդհանուր սոցիալական և տնտեսական զարգացման վրա: Նրանք վճռորոշ դեր են խաղում մարդկային զարգացման գործում: Գրագիտության մակարդակի բարձրացումը նպաստում է հասարակության, մշակույթի, ազգի զարգացմանը: Ընդ որում, Կերալան եղել և շարունակում է կրթական մակարդակով մնալ երկրի բարձրակարգ նահանգներից մեկը. բոլոր նահանգների մեջ ունի գրագիտության ամենաբարձր մակարդակը՝ 93,91%[398]:



Գծապատկեր 3.18 **Կրթության ոլորտում կատարված պետական ծախսեր, ընդհանուր (ՀՆԱ-ում՝ %)[399]**

[395] Advantages and Problems of Education System in India, https://www.geeksforgeeks.org/education-system-in-india/

[396] *Number of school students in India in financial year 2022, by education level (in millions),* https://www.statista.com/statistics/142143/india-number-of-school-students-by-education-level/


[397] Latest School Statistics in India, https://ezyschooling.com/parenting/expert/schools-teachers-students-statistics-2022

[398] Top 10 Educated States In India, https://www.javatpoint.com/top-10-educated-states-in-india

[399] Government expenditure on education, total (% of GDP), https://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS?locations=IN

2020–2021 թվականներին կրթության և ուսուցման համար բյուջետային հատկացումներն ավելացել են մինչև 941746,42 միլիոն ռուփի[400] կամ 11.2 մլրդ ԱՄՆ դոլար[401]:

Գծապատկեր 3.18-ից երևում է, որ Հնդկաստանում կրթության նպատակով կատարված ծախսերը 2021 թ. կազմել են ՀՆԱ 4.64 տոկոսը: Համեմատության համար նշենք, որ ՀՀ-ում դրանք կազմել են ՀՆԱ 2.77 տոկոսը:



	2017	2018	2019	2020	2021
Հնդկաստան	13.5	13.1	15.0	14.7	14.6
Հայաստան	8.9	9.0	10.0	9.6	9.7

Գծապատկեր 3.19

Կրթության ոլորտում կատարված պետական ծախսեր, ընդհանուր (պետական ծախսերի տոկոսը)[402]

Ընդհանուր պետական ծախսերի մասնաբաժնում կրթության վրա կատարված ծախսերը կազմել են 14,6 տոկոս՝ Հնդկաստանում, 9,7 տոկոս՝ Հայաստանում (գծապատկեր 3.19):

Հնդկաստանում 2021 թ. եղել է 1113 համալսարան, 11296 անկախ հաստատություն, 43796 քոլեջ[403]:

Բարձրագույն կրթության ընդգրկվածությունը 2020–2021 թթ. աճել է 41,4 միլիոն՝ առաջին անգամ անցնելով 40 միլիոնի սահմանագիծը. 2019 թթ. աճը կազմել է 7,5%, իսկ 2014-15 թթ.՝ 21%: Կանանց ընդգրկվածութ հասել է 20 միլիոնի[404]:

[400] Ըստ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքի՝ 1 հնդկական ռուփին համարժեք է 4.61 ՀՀ դրամի՝ 03.10.2024 թ. դրությամբ, https://www.cba.am/AM/SitePages/default.aspx

[401] ANALYSIS OF BUDGETED EXPENDITURE ON EDUCATION 2018-19 to 2020-21, p. 3, https://www.education.gov.in/sites/upload_files/mhrd/files/statistics-new/budget_exp.pdf

[402] Government expenditure on education, total (% of government expenditure), https://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GB.ZS?locations=IN&view=chart

[403] Number of higher educational institutions across India in 2021, by type, https://www.statista.com/statistics/660862/higher-education-institutions-bytype-india/

[404] *Ministry of Education releases All India Survey on Higher Education (AISHE) 2020-2021, https://pib.gov.in/PressReleasePage.aspx?PRID=1894517*

Ակնկալվում է, որ 2035 թ. բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածների թիվը կհասնի 92 մլն-ի[405]:

Հնդկաստանում բնակչության 20 տոկոսն ունի բարձրագույն կրթություն, և այդ ցուցանիշով երկիրը զբաղեցնում է 43-րդ տեղն աշխարհում: Առաջին տեղում Հարավային Կորեան է՝ 69 տոկոս ցուցանիշով, երկրորդում՝ Կանադան՝ 67 տոկոս, երրորդում՝ Ճապոնիան՝ 65 տոկոս[406]:

QS World University Rankings 2024-ում լավագույն 250 համալսարանների մեջ Հնդկաստանից ընդգրկված են հետևյալ համալսարանները՝ Հնդկական Բոմբեյի տեխնոլոգիական ինստիտուտը (IITB) Մումբայում, որը 149-րդ տեղում է, Դելիի տեխնոլոգիական հնդկական ինստիտուտը (IITD), որը 197-րդ տեղում է, և Գիտության հնդկական ինստիտուտը՝ 225-րդ տեղում[407]:

Ունենալով աշխարհի երկրորդ ամենաշատ թվով կրթական հաստատությունները՝ Հնդկաստանը մի քանի հայտնի համալսարանների հիմնադրման երկիր է: Ներկայում Բանգալորի Գիտության հնդկական ինստիտուտը գլխավորում է Հնդկաստանի ամենահայտնի 100 համալսարանների ցուցակը, որին հաջորդում են Ջավահարլալ Ներու համալսարանը (JNU) և Բանարաս Հինդու համալսարանը (BHU)[408]:

Գիտության դերը Հնդկաստանում

Տեխնոլոգիաների առաջընթացը եղել է երկրի, ինչպես նաև մարդկային քաղաքակրթության զարգացման հիմքը: Հնդկաստանը, որը ճանաչված է աշխարհում իր գիտական ներուժով, հնագույն ժամանակներից ի վեր իր ներդրումն է ունեցել գիտության և տեխնիկայի ոլորտներում, ինչն ակնհայտ է զրոյի հայտնաբերումից մինչև մասնիկների ֆիզիկայի հետազոտությունները: Հնդկաստանը կարողացել է գիտական հայտնագործությունների և նորարարությունների տեմպեր ձեռք բերել անկախությունից հետո ևս: Մի շարք հնդիկ գիտնականներ արժանացել են գիտության բնագավառում ամենահեղինակավոր՝ Նոբելյան մրցանակի:

Այսօր Հնդկաստանն առաջընթաց է գրանցում ավելի առաջադեմ տեխնոլոգիաների մեջ, ինչպիսիք են նեյտրինոն, գրավիտացիոն ալիքները, մարդկային առաքելությունները տիեզերք ուղարկելը և զարգացող տեխնոլոգիաները:

Հնդկաստանի գիտական հայտնագործությունների և զարգացման պատմությունը սկսվում է Վեդայական շրջանից: Հայտնի մաթեմատիկոս Արյաբ-

[405] Estimated number of students enrolled in higher education across India from financial year 2020 to 2035, https://www.statista.com/statistics/1286736/india-estimated-growth-of-student-enrolments-in-higher-education/

[406] List of most educated countries in the world: Know where India stands, https://www.siasat.com/list-of-most-educated-countries-in-the-world-know-where-india-stands-2710521/

[407] QS World University Rankings 2024, https://www.topuniversities.com/world-university-rankings?tab=indicators&countries=in&sort_by=rank&order_by=asc

[408] *Top 100 Universities in India, https://www.studyin-uk.com/india/india-rankings/universities/*

հաթան հորինել է «զրոն»: Քառակուսիների, շրջանների, եռանկյունների, կոտորակների, հանրահաշվական բանաձևերի և աստղագիտության հայեցակարգերը ծագել և առաջին անգամ հանդիպում են վեդայական գրականության մեջ:

Հարապպան քաղաքների համալիր դասավորությունը՝ ստորգետնյա ջրահեռացման, քաղաքացիական սանիտարական, հիդրոտեխնիկայի և օդային հովացման ճարտարապետությամբ, ինչպես նաև Դելիում երկաթյա սյունի առկայությունը վկայում են, որ Հնդկաստանի բնիկ տեխնոլոգիաները շատ բարդ էին:

Ռիգ Վեդան նկարագրում է աստղագիտության և մետաֆիզիկայի հասկացությունները:

Շատ գիտնականներ, որոնցից են Չարական և Սուշրուտան, անգնահատելի ներդրում են ունեցել Այուրվեդայում, ինչպես հայտնաբերված է հին ձեռագրերում:

Թեև ավելի դանդաղ տեմպերով, միջնադարյան ժամանակաշրջանը նույնպես ականատես եղավ գիտության և տեխնիկայի աճին Հնդկաստանում: Տասներեքերորդ դարում Համսադևան կազմել է աշխատություն կենսաբանության բնագավառի վերաբերյալ, որտեղ նկարագրվում են որոշ որսորդական կենդանիներ և թռչուններ: Այդ ժամանակաշրջանում ստեղծվեց հինգ աստղադիտարան՝ Դելիում, Ուջջայնում, Վարանասիում, Մաթուրայում և Ջայպուրում[409]:

Միջնադարյան ժամանակաշրջանում Հնդկաստանում ծաղկում էր Unani Tibb բժշկական համակարգը: Ալի-բին Ռաբանը գրել է Ֆիրդաուսու-Հիքմատը, որտեղ ամփոփել է հունական և հնդկական բժշկական գիտելիքների համակարգը:

Քսաներորդ դարի արշալույսին հնդիկ գիտնականները մեծ քայլերով առաջ գնացին: Դարասկզբից Հնդկաստանի շատ ֆիզիկոսներ իրենց ներդրումն ունեցան ֆիզիկայի բնագավառում:

Ջագդիշ Չանդրա Բոզեն առաջին մարդն էր, ով հայտնաբերեց ռադիո ազդանշաններ՝ այդպիսով առաջին անգամ ցուցադրելով անլար կապը: Նա ստեղծեց կրեսկոգրաֆը, որի միջոցով չափեց բույսերի արձագանքը տարբ՝ գրգռիչներին և ենթադրեց, որ բույսերը կարող են ցավ զգալ, հասկանալ ֆ մությունը և այլն:

Ռամանը հայտնի է լույսի ցրող էֆեկտի մասին իր աշխատանքով: Նրա գտածոն կոչվում է «Ռամանի էֆեկտ», որի համար ստացել է ֆիզիկայի Նոբելյան մրցանակ 1930 թվականին:

Սուբրահմանյան Չանդրասեխարը հնդիկ-ամերիկացի աստղաֆիզիկոս էր, արժանացել է ֆիզիկայի Նոբելյան մրցանակի 1983 թվականին՝ աստղերի կառուցվածքի և էվոլյուցիայի տեսական ուսումնասիրությունների համար:

[409] Achievements of India in Science and Technology, https://vajiramandravi.com/quest-upsc-notes/achievements-of-india-in-science-and-technology/

Պրաֆուլա Չանդրա Ռեյը համարվում է Հնդկաստանի «քիմիական գիտության հայրը» և նպաստել է անօրգանական ու օրգանական նիտրիտների և օրգանական թիո միացությունների հետազոտություններին:

Ռաոն ներդրում է ունեցել քիմիական սպեկտրոսկոպիայի, մակերեսային քիմիայի, մոլեկուլային կառուցվածքի և բարձր ջերմաստիճանի գերհաղորդականության բնագավառներում:

Հնդկաստանում ԴՆԹ մատնահետքերը ստեղծվել են 1988 թվականին: Բջջային և մոլեկուլային կենսաբանության կենտրոնի գիտնականները մշակել են տեխնիկան և հասանելի դարձրել օգտագործման համար՝ Հնդկաստանը դարձնելով երրորդ երկիրը, որը մշակել է ԴՆԹ մատնահետքի սեփական զոնդը:

Հար Գոբինդ Խորանան Նոբելյան մրցանակի դափնեկիր հնդիկ-ամերիկացի կենսաքիմիկոս էր, ով ցույց տվեց նուկլեինաթթուների նուկլեոտիդների կարգը, որոնք կրում են բջջի գենետիկ կոդը և վերահսկում բջջի սպիտակուցների սինթեզը:

Հնդկաստանի տիեզերական ճանապարհորդությունը սկսվել է 1962 թվականին՝ Տիեզերական հետազոտությունների Հնդկաստանի ազգային կոմիտեի (INCOSPAR) ստեղծմամբ, որը 1969 թվականին վերանվանվել է Հնդկական տիեզերական հետազոտությունների կազմակերպություն (ISRO):

Aryabhata-ն Հնդկաստանի առաջին արբանյակն էր, որն արձակվել է 1975 թվականի ապրիլի 19-ին՝ ռուսական «Կոսմոս-3Մ» արձակման մեքենայի միջոցով:

Satellite Launch Vehicle-3-ը Հնդկաստանի առաջին փորձնական արբանյակային արձակման մեքենան էր, որը գործարկվել է 1980 թվականին: Դրա հաջողությունը ճանապարհ հարթեց առաջադեմ մեկնարկային մեքենաների նախագծերի համար, ներառյալ՝ Augmented Satellite Launch Vehicle (ASLV), Polar Satellite Launch Vehicle (PSLV), Geosynchronous Satellite Launch Vehicle (GSLV) և LVM3:

Chandrayaan-1-ը Հնդկաստանի առաջին լուսնային առաքելությունն էր, որն արձակվել է 2008 թվականին:

Chandrayaan-2-ը Լուսնի վրա փափուկ վայրէջք կատարելու Հնդկաստանի առաջին փորձն էր, որն արձակվել է 2019 թվականին GSLV MkIII-M1-ի կողմից:

2023 թվականին Chandrayaan-3-ի հաջող մեկնարկով Հնդկաստանը դարձավ առաջին երկիրը, որի տիեզերանավն հաջողությամբ վայրէջք կատարեց լուսնային հարավային բևեռի մոտ:

Mars Orbiter Mission-ը (MoM)՝ Հնդկաստանի առաջին միջմոլորակային առաքելությունը գործարկվել է 2013 թվականին: Ռոսկոսմոսից, ՆԱՍԱ-ից և Եվրոպական տիեզերական գործակալությունից հետո Հնդկաստանը աշխարհում չորրորդն էր, որ հասավ Մարսի ուղեծիր: Այն նաև Հնդկաստանը դարձրեց աշխարհում առաջին երկիրը, որն իր առաջին փորձով հասավ Մարսի ուղեծիր:

104 արբանյակ մեկ թռիչքով. PSLV-C37-ը հաջողությամբ գործարկել է 714 կգ քաշով Cartosat-2 Series արբանյակը և 103 համուղևոր արբանյակները 2017 թվականին:

Aditya-L1 առաքելություն. 2023 թվականի սեպտեմբերին Հնդկաստանը գործարկեց Aditya-L1 առաքելությունը՝ առաջին տիեզերական հնդկական առաքելությունը, որն ուսումնասիրում է Արեգակը:

Կրիոգեն տեխնոլոգիա. 2003 թվականին հնդկական տիեզերական գործակալությունը հաջողությամբ փորձարկեց իր առաջին կրիոգեն շարժիչը: Հնդկաստանն այժմ այն վեց երկրներից մեկն է, որոնք մշակել են իրենց սեփական կրիոգեն շարժիչները:

Scramjet շարժիչներ. Scramjet շարժիչը կատարելագործված է ռամջեթ շարժիչի համեմատությամբ, քանի որ արդյունավետորեն գործում է հիպերձայնային արագությամբ և թույլ է տալիս գերձայնային այրում[410]:

Հնդկաստանի ձեռքբերումները միջուկային գիտության բնագավառում

Հնդկաստանն ատոմային էներգիայի վերաբերյալ իր ծրագրի պաշտոնական սկիզբը դրեց 1948 թվականին՝ ստեղծելով Ատոմային էներգիայի հանձնաժողով, իսկ 1957 թվականին՝ Ատոմային էներգիայի հիմնարկ, որը հետագայում վերանվանվեց Բհաբհա ատոմային հետազոտությունների կենտրոն (BARC): Դոկտոր Հոմի Բհաբհան 1950-ականներին ձևակերպեց Հնդկաստանի միջուկային էներգիայի եռաստիճան ծրագիրը:

Ափսարան՝ առաջին միջուկային տրոհման ռեակտորը, ստեղծվել է 1956 թվականին: Հետագայում Հնդկաստանում ստեղծվել են ատոմակայաններ և այլ ռեակտորներ:

Ներկայում Հնդկաստանն ունի 23 գործող տրոհման ռեակտորներ, որոնց ընդհանուր հզորությունը 6780 ՄՎտ է:

Հնդկաստանի ձեռքբերումները պաշտպանության ոլորտում

Հնդկաստանն աշխարհի ամենահզոր ռազմական տերություններից մեկն է:

- Հնդկաստանի հիմնական պաշտպանական արտադրական ընկ[illegible]թյուններից են՝ Bharat Earth Movers Ltd. (BEML), Bharat Electroni (BEL) և Hindustan Aeronautics Ltd. (HAL):

Հրթիռային համակարգ. Հնդկաստանն աշխարհի այն սակավաթիվ [illegible]ներից է, որն ունի սեփական զարգացած հրթիռային համակարգեր, ներառյալ այնպիսի կարևոր տեխնոլոգիաներ, ինչպիսիք են բալիստիկ հրթիռները:

Ինտեգրված ղեկավարվող հրթիռների զարգացման ծրագիրը (IGMDP) մեկնարկել է 1983 թվականի հուլիսի 26-ին: Ծրագրի արդյունքում ստեղծվել են մի շարք հրթիռներ, ներառյալ ռազմավարական Agni ինտեգրված հեռահարության բալիստիկ հրթիռը (IRBM), մարտավարական Prithvi, Akash և

[410] Achievements of India in Science and Technology, https://vajiramandravi.com/quest-upsc-notes/achievements-of-india-in-science-and-technology/

Trishul մակերևութային հրթիռները, «օդ» հրթիռները և «Նագ» հակատանկային կառավարվող հրթիռը:

BrahMos-ը գերձայնային թևավոր հրթիռային համակարգ է, որը կարող է գործել ցամաքից, ծովից կամ օդից:

2019 թվականին կառավարությունը հայտարարեց Հնդկաստանի «գոյատևման միջուկային եռյակի» ստեղծման՝ ցամաքային, օդային և ծովային հարթակներից միջուկային հարվածներ հասցնելու կարողության մասին: Սա Հնդկաստանին դասում է մի քանի երկրների շարքին, որոնք կարող են նախագծել, կառուցել և շահագործել Strategic Strike Nuclear Submarines (SSBN):

Հնդկաստանի կառավարությունը կենտրոնանում է նորարարական լուծումների վրա՝ հզորացնելու երկրի պաշտպանությունն ու անվտանգությունը «Նորարարություններ պաշտպանության գերազանցության համար» (iDEX) ծրագրի միջոցով:

Հնդկաստանն առաջատարի դիրքերում է այնպիսի առաջադեմ տեխնոլոգիաների ոլորտում, ինչպիսիք են 5G-ն, արհեստական բանականությունը, բլոկչեյնը, ընդլայնված և վիրտուալ իրականությունը, մեքենայական ուսուցումը և խոր ուսուցումը, ռոբոտները, բնական լեզվի մշակումը և այլն: MeitY-ի առաջադեմ տեխնոլոգիաների կիրառումը խրախուսելու և խթանելու համար: զարգացող տեխնոլոգիաների բաժինը պատասխանատու է ողջ երկրում

Կրիտիկական և զարգացող տեխնոլոգիաների վերաբերյալ նախաձեռնությունը մեկնարկել է 2023 թվականին, որը Հնդկաստանի և ԱՄՆ-ի կողմից հաստատված շրջանակ է՝ կարևոր և զարգացող տեխնոլոգիաների, այդ թվում՝ արհեստական բանականության, կիսահաղորդիչների, քվանտային հաշվարկների և անլար հեռահաղորդակցության ոլորտներում համագործակցության համար[411]:

Հնդկաստանն ունեցել է *Նոբելյան մրցանակի* ինը դափնեկիր 1913-ից 2023 թվականներին: Առաջին հնդիկը, որը հասավ այս հեղինակավոր պատվին, Ռաբինդրանաթ Թագորն էր, ով 1913 թվականին Նոբելյան մրցանակի արժանացավ իր բացառիկ հուզիչ, ինքնատիպ և նուրբ պոեզիայի համար: Ահա Հնդկաստանից Նոբելյան մրցանակի ինը դափնեկիրներն ըստ ոլորտների՝


- գրականություն՝ Ռաբինդրանաթ Թագոր (1913),
- ֆիզիկա՝ Ք.Վ. Ռաման (1930), Սուբրահմանյան Չանդրասեխար (1983),
- ֆիզիոլոգիա կամ բժշկություն՝ Հար Գոբինդ Խորանա (1968),
- խաղաղություն՝ Մայր Թերեզա (1979), Քայլաշ Սաթյարթի (2014),
- տնտեսագիտություն՝ Ամարտյա Սեն (1998), Արհիջիտ Բաներջի (2019)[412]:

[411] Achievements of India in Science and Technology, https://vajiramandravi.com/quest-upsc-notes/achievements-of-india-in-science-and-technology/

[412] Indian Nobel Laureates, Complete List (1913-2023), https://currentaffairs.adda247.com/list-of-indian-nobel-laureates/

Ներկայում Գիտության և տեխնոլոգիաների նախարարությունն է պատասխանատու Հնդկաստանում գիտության ոլորտի զարգացման, պետական քաղաքականության մշակման և իրականացման համար[413]:

Գիտության և տեխնոլոգիայի նախարարությունը պետական բյուջեից ստացել է 16361.42 մլն ռուփի հատկացում, որից 7931.05 միլիոնը բաժին է ընկել Գիտության և տեխնոլոգիաների դեպարտամենտին[414]:



Գծապատկեր 3.20

Հետազոտության և զարգացման (R&D) համար կատարված ծախսեր (ՀՆԱ-ում՝ %)[415]

Գծապատկեր 3.20-ից երևում է, որ 2020 թ. Հնդկաստանում հետազոտությունների և զարգացման համար կատարված ծախսերը կազմել են ՀՆԱ 0,65 տոկոսը, իսկ ՀՀ-ում՝ ընդամենը 0,21 տոկոսը:

Հնդկաստանը 75-րդ տեղն է զբաղեցրել 138 երկրների շարքում «Գիտելիքի գլոբալ ինդեքս – 2020» զեկույցում (GKI) և ունի 44,4 GKI միավոր, որը 46,7 համաշխարհային միջինից ցածր է:

Հնդկաստանն ունի 255 հետազոտող մեկ միլիոն բնակչության հաշվ
յը շատ ավելի քիչ է, քան ԱՄՆ-ի ցուցանիշն է, որն ունի 4245 հետազոտո
միլիոնի հաշվով: Հարավային Կորեայի դեպքում հարաբերակցությունը . .)8
է՝ մեկ միլիոն բնակչի հաշվով, Մեծ Բրիտանիայի պարագայում՝ 4341, իսկ Ճապոնիայի դեպքում՝ 5304:

Հնդկաստանը երրորդ ամենամեծ էկոհամակարգն ունի սկսնակ ձեռնարկությունների համար՝ ավելի քան 77,000 նորաստեղծ ձեռնարկություններով:

[413] Department of Science & Technology, https://dst.gov.in/introduction
[414] Budget 2023 | ₹16,361 crore allocated for Ministry of Science and Technology, https://www.thehindu.com/business/budget/budget-2023-ministry-of-science-technology-gets-16361-crore/article66458640.ece
[415] Research and development expenditure (% of GDP), https://data.worldbank.org/indicator/GB.XPD.RSDV.GD.ZS

Այնուամենայնիվ, կա ընդամենը 3000 խոր տեխնոլոգիաների ստարտափ, որոնցից միայն 400-ն է զբաղվում նորարարական տեխնոլոգիաներով[416]:

Ըստ Scimago Journal & Country Rank-ի՝ Հնդկաստանն աշխարհում 6-րդ տեղում է ըստ ինդեքսավորվող ամսագրերում հոդվածների քանակի՝ 2970196 հոդված: Առաջատարն ԱՄՆ-ն է, իսկ Հայաստանը 92-րդ տեղում է՝ 24346 հոդվածով: Ցուցանիշը ներառում է 1996–2023 թվականների տվյալները:

Աղյուսակ 3.2

Scimago Journal & Country Rank-ի առաջատար երկրներն ըստ հոդվածների և հղումների քանակի, 1996–2023 թթ.[417]

Դիրքը	Երկիր	Հոդվածների քանակը	Հղվող հոդվածների քանակը	Հղումներ	Ինքնահղումներ	Մեկ հոդվածին բաժին ընկնող հղումների քանակը	Հիրշի ինդեքս (H index)
1	ԱՄՆ	16047770	13969135	515339352	211154763	32.11	3051
2	Չինաստան	10372322	10180089	145875947	86501833	14.06	1333
3	Միացյալ Թագավորություն	4778980	3984194	142963939	29272921	29.92	1928
4	Գերմանիա	4104599	3741033	110076588	24142498	26.82	1690
5	Ճապոնիա	3482279	3308467	70350390	16354163	20.2	1301
6	Հնդկաստան	2970196	2700702	37700885	13122873	12.69	858
7	Ֆրանսիա	2784321	2561817	74641013	13665511	26.81	1514
8	Իտալիա	2525870	2269098	61745641	13429245	24.45	1333
9	Կանադա	2426840	2156112	74088684	11485690	30.53	1562
10	Ավստրալիա	2009795	1756807	57290179	10215117	28.51	1377
92	Հայաստան	24346	23387	457146	76694	18.78	235

52 հնդիկ գիտնականներ զբաղեցրել են աշխարհի լավագույն երկու տոկոսը AD Scientific Index 2023-ում: Հնդկաստանը զբաղեցնում է 21-րդ տեղը լավագույն 2 տոկոս գիտնականների ցանկում, որը գլխավորում է Միացյալ Նահանգները՝ աշխարհի լավագույն 4935 գիտնականներով: Ինդեքսում ընդգրկվել են 216 երկրների գիտնականներ, նրանցից 50245-ը հնդիկ գիտնականներն են[418]:

Մշակույթի ոլորտը Հնդկաստանում

Հնդկաստանում մշակույթի ոլորտի զարգացման և պետական քաղաքականության մշակման համար պատասխանատու է Մշակույթի նախարարությունը[419]:

[416] Number of researchers low in India, states have to step up efforts in R&D sector: Govt's science adviser, https://theprint.in/india/number-of-researchers-low-in-india-states-have-to-step-up-efforts-in-rd-sector-govts-science-adviser/1298887/
[417] Scimago Journal & Country Rank, https://www.scimagojr.com/countryrank.php
[418] 52 Indian scientists in world's top 2% in 2023, top ones study high energy particle physics, https://theprint.in/science/52-indian-scientists-in-worlds-top-2-in-2023-top-ones-study-high-energy-particle-physics/1166070/
[419] Ministry of Culture, https://indiaculture.gov.in/

Հնդկաստանն ունի երգերի, երաժշտության, պարի, թատրոնի, ժողովրդական ավանդույթների, կատարողական արվեստի, ծեսերի, նկարների և գրվածքների աշխարհի ամենամեծ հավաքածուներից մեկը, որը հայտնի է որպես մարդկության «Ոչ նյութական մշակութային ժառանգություն»: Այս տարրերը պահպանելու նպատակով Մշակույթի նախարարությունն իրականացնում է մի շարք ծրագրեր՝ ուղղված բեմական, տեսողական և գրական արվեստով զբաղվող անհատներին, խմբերին և մշակութային կազմակերպություններին ֆինանսական աջակցություն ցուցաբերելուն[420]:

Մշակույթի նախարարությանը տարեկան հատկացումները բյուջեից 2023–2024 թվականներին ավելացել են 12,97%-ով և կազմել 3,399.65 մլն ռուփի: 1102.83 միլիոն ռուփի հատկացվել է Կենտրոնական պահպանվող հուշարձանների/տեղանքների պաշտպանության, պահպանման համար[421]:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում Հնդկաստանից ներառված է 42 օբյեկտ, որից 34-ը մշակութային են[422], իսկ ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում ներառված է 15 տարր[423]:

Հնդկաստանի մշակույթը աշխարհում հնագույններից է. այստեղ քաղաքակրթությունը ձևավորվել է մոտ 4500 տարի առաջ: Շատ աղբյուրներ դա նկարագրում են որպես Sa Prathama Sanskrati Vishvavara՝ աշխարհում առաջին և գերագույն մշակույթը՝ ըստ All World Gayatri Pariwar (AWGP) կազմակերպության:

Ըստ Լոնդոնի Բարնեթ և Սաութգեյթ քոլեջի մարդաբան Քրիստինա Դե Ռոսիի՝ արևմտյան հասարակությունները ոչ միշտ են գնահատել Հնդկաստանի մշակույթը: Վաղ մարդաբանները ժամանակին մշակույթը համարում էին էվոլյուցիոն գործընթաց, և մարդկային զարգացման բոլոր ասպեկտները դիտվում էին որպես էվոլյուցիայի հետևանք: Այս տեսակետից՝ Եվրոպայից կամ Հյուսիսային Ամերիկայից դուրս գտնվող հասարակությունները, որոնք չէին հետևում եվրոպական կամ արևմտյան ապրելակերպին, համարվում էին պարզունակ և մշակութային առումով ստորադաս: Ըստ էության, սա ներառում էր բոլոր գաղութացված երկրներն ու մարդկանց, ինչպիսիք են [illegible] իկյան երկրները, Հնդկաստանը և Հեռավոր Արևելքը:

Այնուամենայնիվ, հնդիկները զգալի առաջընթաց գրանցեցին ճարտ[illegible] պետության (Թաջ Մահալ), մաթեմատիկայի (զրոյի գյուտը) և բժշկության (Այուրվեդա) ոլորտներում: Այսօր Հնդկաստանը շատ բազմազան երկիր է, ունի ավելի քան 1,4 միլիարդ բնակչություն: Լեզուն, կրոնը, խոհանոցը և արվեստը հնդկական մշակույթի տարբեր բաղադրիչներից միայն մի քանիսն են:

[420] Art & Culture, https://www.india.gov.in/topics/art-culture
[421] Ministry of Culture, https://pib.gov.in/PressReleasePage.aspx?PRID=1895562
[422] India, https://whc.unesco.org/en/statesparties/in
[423] India, https://ich.unesco.org/en/state/india-IN?info=elements-on-the-lists

Լեզու

Համաձայն Գուջարաթի Գերագույն դատարանի 2010 թվականի որոշման՝ Հնդկաստանում պաշտոնական լեզու չկա, թեև Hindi-ն կառավարության պաշտոնական լեզուն է: Հնդկաստանի Սահմանադրությունը պաշտոնապես ճանաչում է 23 պաշտոնական լեզու: Թեև Հնդկաստանում շատ մարդիկ խոսում են հինդի, Հնդկաստանի բնակիչների 59 տոկոսը խոսում է հինդիից տարբերվող այլ՝ բենգալերեն, թելուգու, մարաթի, թամիլերեն, ուրդու և այլ լեզուներով[424]:

Կրոն

Հնդկաստանը համարվում է հինդուիզմի և բուդդայականության երրորդ և չորրորդ ամենամեծ կրոնների ծննդավայրը: Բնակչության մոտ 84 տոկոսը նույնականացվում է որպես հինդու: Կան հինդուիզմի բազմաթիվ տարբերակներ և չորս գերակշռող աղանդներ՝ Շայվա, Վայշնավան, Շաքտեյա և Սմարտա:

Հնդկացիների մոտ 13 տոկոսը մահմեդական է, ինչը երկիրը դարձնում է աշխարհի ամենամեծ իսլամական պետություններից մեկը: Քրիստոնյաներն ու սիկհերը կազմում են բնակչության փոքր տոկոսը, իսկ բուդդիստներն ու ջայններն էլ ավելի քիչ են. 2,3 տոկոսը՝ քրիստոնյա, 1,7 տոկոսը՝ սիկհ, 2 տոկոսը՝ չճշտված[425]:

Ազգային խոհանոց

Տեխասի A&M համալսարանի տվյալներով, երբ Մուղալի կայսրությունը տասնվեցերորդ դարում ներխուժեց Հնդկաստան, նշանակալի հետք թողեց հնդկական խոհանոցում: Հնդկական խոհանոցը նույնպես շատ այլ երկրների ազդեցության տակ է եղել: Այն հայտնի է իր ճաշատեսակների մեծ տեսականիով և խոտաբույսերի ու համեմունքների ազատ օգտագործմամբ: Ըստ տարածաշրջանների՝ խոհարարության ոճերը տարբեր են:

Ցորենը, բասմատի բրինձը և չանայով (բենգալյան գրամ) ընդեղենը հնդկական սննդակարգի կարևոր բաղադրիչներն են: Մսունդը հարուստ է կարրիով և համեմունքներով, ներառյալ կոճապղպեղը, համեմը, հիլը, քրքումը, չորացրած կծու պղպեղը, դարչինը և այլն:

Շատ հինդուներ բուսակեր են, բայց ոչ բուսակերների հիմնական ճաշատեսակներում սովորական են գառն ու հավը: Հնդկաստանի բնակչության 20–40 տոկոսը բուսակեր է:

Հնդկական սննդի մեծ մասն ուտում են մատներով կամ հացով, որն օգտագործվում է որպես սպասք[426]:

[424] About Indian Culture, https://india.delaware.gov/about-indian-culture/
[425] Նույն աղբյուրը:
[426] Նույն աղբյուրը:

Ճարտարապետություն և արվեստ

Հնդկական ճարտարապետության ամենահայտնի օրինակը Թաջ Մահալն է, որը կառուցել է Մուղալ կայսր Շահ Ջահանը իր երրորդ կնոջ՝ Մումթազ Մահալի պատվին: Այն միավորում է իսլամական, պարսկական, օսմանյան թուրքական և հնդկական ճարտարապետական ոճերի տարրեր:

Հնդկաստանն ունի բազմաթիվ հնագույն տաճարներ:

Հնդկաստանը հայտնի է իր կինոարդյունաբերությամբ, որը հաճախ անվանում են Բոլիվուդ: Ըստ «Ոսկե գլոբուսի»՝ երկրի կինոպատմությունը սկսվել է 1896 թվականին, երբ Լյումիեր եղբայրները ցուցադրեցին կինոարվեստը Մումբայում: Այսօր ֆիլմերը հայտնի են իրենց մշակված երգով ու պարով:

Հնդկական պարի, երաժշտության և թատրոնի ավանդույթներն ավելի քան 2000 տարվա պատմություն ունեն: Հիմնական դասական պարային ավանդույթները՝ Բհարատա Նատյամը, Կաթակը, Օդիսին, Մանիպուրին, Կուչիպուդին, Մոհինիատամը և Կատակալիը, հիմնված են դիցաբանության և գրականության թեմաների վրա, ունեն ներկայացման կոշտ կանոններ[427]:

Հագուստ

Հնդկական հագուստը նույնացվում է գունավոր մետաքսե սարիների հետ, որոնք կրում են երկրի շատ կանայք: Տղամարդկանց համար ավանդական հագուստը դհոտին է՝ չկարված կտորը, որը կապվում է գոտկատեղին և ոտքերին: Տղամարդիկ հագնում են նաև քուրտա՝ լայն վերնաշապիկ, որը կրում են մինչև ծնկները: Հատուկ առիթների ժամանակ տղամարդիկ կրում են շերվանի կամ աչքան, որը օձիքով երկար վերարկու է:

Տոներ

Ըստ National Geographic-ի՝ Դիվալին Հնդկաստանի ամենամեծ և ամենակարևոր տոնն է: Այն հնգօրյա փառատոն է, որը հայտնի է որպես լույսերի փառատոն, քանի որ տոնակատարության ժամանակ վառված լույսերը խորհրդանշում են ներքին լույսը, որը պաշտպանում է նրանց հոգևոր խավարից: Հոլին՝ գույների փառատոնը, որը նաև կոչվում է սիրո փառատոն, նշվում է գարնան: Այն խորհրդանշում է բարու հաղթանակը չարի նկատմամբ, ինչպես գարնան գալուստը՝ որպես հույսի և վայելքի եղանակ[428]: Երկիրը նշում է Հանրապետության օրը (հունվարի 26), Անկախության օրը (օգոստոս 15) և Մահաթմա Գանդիի ծննդյան օրը (հոկտեմբերի 2)[429]:

Հնդկական ընտանիքները

Հնդկական ընտանիքների մեծ մասում սովորական երևույթ է մի քանի սերունդների միասին ապրելը, և կրթության կամ ամուսնության մասին որոշումները հազվադեպ են կայացվում առանց ընտանիքի այլ անդամների հետ

[427] Նույն աղբյուրը:

[428] Թովմասյան Գ., Փառատոները որպես մշակույթի արժևորման և զբոսաշրջության զարգացման գրավական, «Ամբերդ» տեղեկագիր, 2023/4, էջ 25-35, DOI: 10.52174/2579-2989_2023.4-25, https://asue.am/upload/files/amberd/2023-year-4/3.pdf

[429] About Indian Culture, https://india.delaware.gov/about-indian-culture/

խորհրդակցելու: Համայնքի այս զգացումը ձևավորում է Հնդկաստանի մշակույթը, և նշանակում է, որ մարդիկ, որքան հնարավոր է, շատ ժամանակ են անցկացնում տան անդամների հետ տանը, այլ ոչ թե մենակ: Բազմազավակ ընտանիքները նախկինում կանոնական էին Հնդկաստանում, բայց այժմ շատ քաղաքաբնակ ծնողներ նախընտրում են ունենալ միայն մեկ կամ երկու երեխա:

Հնդկաստանում ընտանիքի հավատարմությունը շատ կարևոր է: Ծնողները երեխաների համար ապահովում են ամեն ինչ, իսկ ընտանիքները հնդկական գոյության առանցքային կետն են: Կրթությունը, կարիերան և ամուսնությունները հաճախ որոշում են ծնողները: Դա պարտադրանք չէ, պարզապես ընդունված ապրելակերպ է, որ ծնողներն ավելի լավ կարող են որոշում կայացնել ապագայի հետ կապված, քան երեխաները: Ծնողները բավականին հավակնոտ են իրենց երեխաների նկատմամբ, քանի որ մրցակցությունը մեծ է:

Ընտանիքներում կամ ընկերների հետ հնդիկները կիսում են ամեն ինչ, ներառյալ սնունդը[430]:

Հնդկական պարեր

Հնդկաստանն առաջարկում է պարային ձևերի լայն տեսականի, որոնք տարբերվում են ըստ տարածաշրջանների: Պարային ձևերը ներկայացնում են դրամատիկ պատմություններ, որտեղ կատարողները պատմում են պատմություններ՝ հիմնականում դիցաբանությունից, ժեստերի և շարժումների միջոցով: Հնդկական ժողովրդական պարերը նույնպես հիմնված են պատմությունների վրա, որոնք փոխանցվել են սերնդեսերունդ: Այս պարերը տարածված են գյուղական վայրերում և ներկայացնում են գյուղացիների առօրյան[431]:

Այսպիսով՝ հնդկական մշակույթը հարուստ է և բազմազան՝ արտացոլելով երկրի հարուստ պատմությունն ու ավանդույթները: Այն ներառում է արվեստի, երաժշտության, պարի, ճարտարապետության և խոհանոցի տարբեր ձևեր: Ավանդական հնդկական փառատոները, ինչպիսիք են Դիվալին և Հոլին, ուշադրություն են գրավում իրենց բազմազանությամբ և տոնական տրամադրությամբ: Հնդկական մշակույթի կարևոր հայեցակետը նաև դրա հոգևոր ժառանգությունն է, որն արտացոլված է կրոնական պրակտիկայի, մեդիտացիայի և փիլիսոփայության մեջ:

[430] Exploring the Culture of India, https://www.afsusa.org/countries/india/

[431] 10 Customs and Traditions in Indian Culture, https://www.authenticindiatours.com/2021/02/10/10-customs-and-traditions-in-indian-culture/

ԳԼՈՒԽ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

4.1 Հնդկաստանի հետ Հայաստանի հիմնական առևտրային ուղղությունները. հեռանկարներ

Միջազգային կառույցներին անդամակցությունը թափանցիկ և կանխատեսելի է դարձնում երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները՝ կայուն նախադրյալներ ստեղծելով երկարաժամկետ համագործակցության համար: Հնդկաստանն ու Հայաստանը միաժամանակ անդամակցում են համաշխարհային առևտրային հարաբերությունները կարգավորող հետևյալ միջազգային կառույցներին.

- ***Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ, WTO),*** որին Հնդկաստանը միացել է ձևավորման իսկ պահից (1995 թ. հունվարի 1-ից), իսկ Հայաստանը՝ 2003 թ. փետրվարի 5-ից[432]: ԱՀԿ անդամ 164 երկրներին բաժին է ընկնում համաշխարհային առևտրի 98%-ից ավելին:
- ***Համաշխարհային մաքսային կազմակերպությանը (ՀՄԿ, WCO),*** որի անդամ 186 երկրում է կենտրոնացված համաշխարհային առևտրի 98%-ը: ՀՄԿ անդամների ¾-ը զարգացող երկրներն են, որոնց թվում են Հնդկաստանը (անդամակցել է 15.02.1971 թ.) և Հայաստանը (անդամ է 30.06.1992 թ.)[433]:

Ըստ Համաշխարհային բանկի 2023–2024 թթ. երկրների դասակարգման՝ Հնդկաստանը դասվում է միջինից ցածր եկամուտներ ունեցող (բնակչության 1 շնչին բաժին ընկնող համախառն ազգային եկամտի (ՀԱԵ) շեմը 1136-4465 ԱՄՆ դոլար է), իսկ Հայաստանը՝ միջինից բարձր եկամուտներ ունեցող (1 շնչին բաժին ընկնող ՀԱԵ-ի շեմը՝ 4466-13845 ԱՄՆ դոլար) երկրների շար՝ ՝ն[434]:

Հնդկաստանի արտաքին առևտուրը

Հնդկաստանն աշխարհի 16-րդ խոշոր արտահանողն է (452,7 մլրդ ԴՆ դոլար), որին բաժին է ընկնում համաշխարհային արտահանման 2%-ը (2022 թ.)[435]: Հնդկաստանի ներմուծումը կազմել է 732,6 մլրդ ԱՄՆ դոլար: Առևտրային հաշվեկշռի պակասուրդը 279,9 մլրդ ԱՄՆ դոլար է[436]:

---

[432] WTO, Members and Observers, https://www.wto.org/english/thewto_e/whatis_e/tif_e/org6_e.htm

[433] World Customs Organization, https://www.wcoomd.org/-/media/wco/public/global/pdf/about-us/wco-members/list-of-members-with-membership-date.pdf?db=web

[434] World Bank Group country classifications by income level for FY24 (July 1, 2023- June 30, 2024), NADA HAMADEH, CATHERINE VAN ROMPAEY & ERIC METREAU, JUNE 30, 2023, https://blogs.worldbank.org/en/opendata/new-world-bank-group-country-classifications-income-level-fy24#:~:text=The%20World%20Bank%20Group%20assigns,of%20the%20previous%20calendar%20year

[435] UNCOMTRADE, https://comtradeplus.un.org/TradeFlow

[436] Նույն տեղում:

Հնդկաստանի արտահանման գծով խոշորագույն գործընկերներն են ԱՄՆ-ն (17,7%), ԱՄԷ-ն (6,9%), Նիդեռլանդները (4,1%), Չինաստանը (3,3%), Բանգլադեշը (3,1%)[437]:

Ներմուծման գծով խոշորագույն գործընկերներն են Չինաստանը (14,0%), ԱՄԷ-ն (7,4%), ԱՄՆ-ն (7,1%), Սաուդյան Արաբիան (6,3%), Ռուսաստանի Դաշնությունը (5,5%)[438]: Աղյուսակ 4.1-ում և 4.2-ում ներկայացված է Հնդկաստանի արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը 2022 թվականին:

Աղյուսակ 4.1

Հնդկաստանի արտահանման ապրանքային կառուցվածքը, 2022 թ.[439]

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքախումբ	Ծավալը, մլրդ ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %
2710	Նավթ և նավթամթերք (բենզին, մազութ, նավթ, դիզելային վառելիք, յուղ)	94,4	20.9
7102	Ադամանդե քար	24,0	5.3
3004	Դեղամիջոց՝ բաղկացած առանձին նյութերից	17,4	3.9
7113	Ոսկերչական իրեր	12,3	2.7
8517	Հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասեր	10,9	2.4
1006	Բրինձ	10,8	2.4
7601	Ալյումին չմշակված	7,1	1.6
8708	Ավտոմեքենայի մասեր	6,7	1.5
8703	Ավտոմեքենա մարդատար	6,6	1.5
1701	Շաքար	5,7	1.3
-	Այլ	256,8	56.7

Աղյուսակ 4.1-ից երևում է, որ նավթը և նավթամթերքը նշանակալի տեղ են զբաղեցնում Հնդկաստանի արտահանման կառուցվածքում՝ 20.9%: Արտահանման մյուս խոշոր արտադրատեսակներ են ադամանդե քարերը (24 մլրդ ԱՄՆ դոլար), դեղամիջոցները (17.4 մլրդ ԱՄՆ դոլար), ոսկերչական իրերը (12.3 մլրդ ԱՄՆ դոլար), հեռախոսային և հեռագրային ապարատները (10.9 մլրդ ԱՄՆ դոլար):

Ներմուծման կառուցվածքում առաջատար ապրանքախումբն անմշակ նավթամթերքն է: 2022 թ. Հնդկաստանը ներմուծել է 173.5 մլրդ ԱՄՆ դոլարի նավթամթերք, որը կազմել է ընդհանուր ներմուծման 23.7%-ը: Առևտրի մեջ նավթամթերքի նշանակալի մասնաբաժինն արտացոլում է այս ոլորտում Հնդկաստանի վերամշակման հզորությունները: Միաժամանակ, Հնդկաստանը կախված է ինչպես նավթի արտահանումից, այնպես էլ ներմուծումից, ինչը ստեղծում է արտաքին առևտրից ստացվող եկամուտների անկայունության ռիսկեր:

---

[437] Նույն տեղում:

[438] Նույն տեղում:

[439] Հեղինակի հաշվարկները՝ UNCOMTRADE տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/TradeFlow

Աղյուսակ 4.2

Հնդկաստանի ներմուծման ապրանքային կառուցվածքը, 2022 թ.[440]

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքախումբ	Ծավալը, մլրդ ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %
2709	Անմշակ նավթ և նավթամթերք	173,5	23,7
2701	Քարածուխ	49,0	6.7
7108	Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի	36,6	5.0
2711	Բնական և հեղուկ գազ	32,4	4.4
7102	Ադամանդե քար	27,3	3.7
8542	Էլեկտրոնային ինտեգրալ և միկրոհավաքված սխեմա, մասեր	16,1	2.2
8517	Հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասեր	16,0	2.2
2710	Նավթ և նավթամթերք (բենզին, մազութ, նավթ, դիզելային վառելիք, յուղ)	14,8	2.0
1511	Արմավենու ձեթ	11,7	1.6
8471	Ավտոմատ հաշվիչ մեքենաներ, բլոկներ	11,1	1.5
-	Այլ	344.1	47.0

Հնդկաստանի ներմուծման կառուցվածքում մեծ մասնաբաժին ունեն քարածուխը (49 մլրդ ԱՄՆ դոլար), բնական և հեղուկ գազը (32.4 մլրդ ԱՄՆ դոլար), թանկարժեք քարերը՝ ոսկին և ադամանդը, էլեկտրոնիկան:

Հնդկաստան – Հայաստան առևտրային հոսքերը

2023 թ. վերջերից ակտիվացել են ԵԱՏՄ-ի և Հնդկաստանի միջև ազատ առևտրի գոտի ստեղծելու շուրջ քննարկումները: Հնդկաստանի համար ԵԱՏՄ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրի առաջնային առավելություններից մեկն անարգել մուտքն է մեծ և աճող եվրասիական շուկա: ԵԱՏՄ անդամ հինգ երկրների ընդհանուր բնակչությունը 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ ավելի քան 185.4 միլիոն մարդ է[441], իսկ 2023 թ. ՀՆԱ-ն՝ ավելի քան 2,3 տրիլիոն ԱՄՆ դոլար[442]: ԵԱՏՄ ազատ առևտրի գոտու շրջանակներում մաքսատուրքերի և այլ առևտրային (ոչ սակագնային) խոչընդոտների վերացումը կարող է հեշտացնել հնդկական ընկերությունների գործունեությունն ամբողջ արտադրաշրջանում, խթանել արտահանումը՝ ստեղծելով նոր տնտեսական հնարավորություններ: Միաժամանակ, ազատ տնտեսական գոտու ստեղծմամբ ԵԱՏՄ երկրները հնարավորություն կունենան ավելացնելու Հնդկաստան արտահանվող հումքի, հացահատիկի, պարարտանյութերի, քիմիական արտադրանքի և սարքավորումների արտահանման ծավալները:

[440] Հեղինակի հաշվարկները՝ UNCOMTRADE տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/TradeFlow

[441] Демография в цифрах. Статистика Евразийского экономического союза: 2018-2022 годы. Евразийская экономическая комиссия. М., 2023, с. 10, https://eec.eaeunion.org/upload/files/dep_stat/econstat/statpub/DEMOGR_2018-2022.pdf

[442] Евразийская экономическая комиссия, Национальные счета. Динамические ряды, https://eec.eaeunion.org/comission/department/dep_stat/union_stat/current_stat/national_accounts/series


Այդուհանդերձ, ըստ որոշ մասնագիտական գնահատականների, Հնդկաստանի և ԵԱՏՄ երկրների միջև առկա է փոխադարձ առևտրի հսկայական ներուժ, որն առայժմ չի հաջողվում իրացնել լոգիստիկ բարդությունների պատճառով[443]:

Հայաստանը ներմուծման գծով Հնդկաստանի 109-րդ, արտահանման գծով 148-րդ գործընկերն է: Պարզ է՝ հաշվի առնելով տնտեսությունների չափերը, Հայաստանը նշանակալի մասնաբաժին Հնդկաստանի տնտեսության մեջ ունենալ չի կարող:

2022 թ. Հնդկաստանը եղել է արտահանման գծով ՀՀ 11-րդ խոշոր գործընկերը, որին բաժին է ընկել ՀՀ արտահանման 1.9%-ը, իսկ ներմուծման գծով՝ 8-րդ խոշոր գործընկերը, որին բաժին է ընկել ՀՀ ներմուծման 3%-ը[444]:

2022 թ. Հնդկաստանի հետ ՀՀ ապրանքաշրջանառությունը կազմել է 358.4 մլն ԱՄՆ դոլար[445]: Նախորդ տարվա համեմատությամբ ապրանքաշրջանառությունն ավելացել է 65,9 տոկոսով:

Աճը պայմանավորված է եղել ներմուծման նշանակալի աճով. ներմուծումը 2022 թ., նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել է 190%-ով՝ 89,3 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 259 մլն ԱՄՆ դոլարի: Ի հակադրություն դրա՝ արտահանումը կրճատվել է 22%-ով: Արդյունքում՝ եթե 2021 թ. Հայաստանի առևտրային հաշվեկշիռը Հնդկաստանի հետ եղել է դրական, ապա 2022 թ. արդեն դարձել է բացասական:



Գծապատկեր 4.1

ՀՀ–Հնդկաստան առևտրի դինամիկան 2012–2022 թթ., մլն ԱՄՆ դոլար[446]

[443] Чистякова Е.А., Соколова О.Ю., Захарова С.В., Панюшкина Л.В., Перспективы создания зоны свободной торговли ЕАЭС и Индии, Вестник СГСЭУ, 2019, № 5 (79), ISSN 1994-5094, с. 24-27.

[444] Վերլուծությունը կատարվել է UNCOMTRADE տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/TradeFlow

[445] Վերլուծությունն ըստ նույն աղբյուրի տվյալների, https://comtradeplus.un.org/TradeFlow

[446] Հեղինակի հաշվարկները՝ UNCOMTRADE տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/TradeFlow

Գծապատկեր 4.1-ում ներկայացված է Հնդկաստանի հետ ՀՀ առևտրի դինամիկան, որից պարզ է դառնում, որ մինչև 2020 թվականը դեպի Հնդկաստան արտահանում գրեթե չի եղել, այնուհետև կտրուկ աճ է արձանագրվել: 2020 թ. արտահանումը կազմել է 73,4 մլն ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ նախորդ տարի արտահանվել է ընդամենը 3,5 մլն ԱՄՆ դոլարի արտադրանք: 2020 թ. հետո արտահանման նշանակալի ծավալները պահպանվել են: 2022 թ. արտահանվել է 99,4 մլն ԱՄՆ դոլարի արտադրանք:

Ինչպես արդեն նշել ենք, Հնդկաստանից ներմուծումը կտրուկ աճել է 2022 թ.՝ հասնելով ռեկորդային 259 մլն ԱՄՆ դոլար մակարդակի: Նշված ժամանակահատվածում առևտրային հաշվեկշիռը, բացառությամբ 2021 թ., եղել է բացասական:

Որպեսզի հասկանանք կտրուկ ընդլայնման պատճառները, դիտարկենք առևտրի ապրանքային կառուցվածքը 2019 և 2022 թթ.:

Աղյուսակ 4.3-ում ներկայացված են արտահանվող հիմնական արտադրատեսակները 2019 թ. և 2022 թ.: ՀՀ-ից Հնդկաստան արտահանումը երկու տարիներին խիստ կենտրոնացած է: Ընդ որում, արտահանման կառուցվածքը կայուն չէ: 2019 թ. արտահանման 87%-ը (3 մլն ԱՄՆ դոլար) կազմել է սև մետաղի ջարդոնը: Շատ քիչ ծավալներով արտահանվել են թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր, կաշի, աննշան ծավալների՝ թունդ ալկոհոլային խմիչքներ:

2022 թ. արտահանման 98%-ը կազմել է ոսկու արտահանումը՝ 97,5 մլն ԱՄՆ դոլար, որը Հայաստանի ամբողջ արտահանման 1,8%-ն է: Մինչև 2019 թ. Հայաստանից Հնդկաստան ոսկի ընդհանրապես չի արտահանվել: 2020 թ. սկսած՝ արտահանման աննախադեպ աճը հենց ոսկու արտահանումն է: 2022 թ. Հնդկաստան արտահանվող մյուս ապրանքատեսակներն են՝ չմշակված կապար, բժշկական, վիրաբուժական, ատամնաբուժական սարքեր, որոնց արտահանման ծավալները չեն հասնում մեկ մլն ԱՄՆ դոլարի: Աննշան ծավալներով արտահանվել են թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, ալկոհոլային խմիչքներ, կաշի: Պետք է նշել, որ ՀՀ-ն արտահանում է նաև բարձր տեխնոլոգիական ապրանքներ, ինչպիսիք են՝ օպտիկական մանրաթել, լարան, չտեղակայված ոսպնյակ, հայելի, պրիզմա և հսկման, չափման այլ սարքեր, մեքենա, մասեր, սակայն դրանց ծավալները չեն գերազանցում 100 հազ. ԱՄՆ դոլարը:

Աղյուսակ 4.3

ՀՀ-ից Հնդկաստան արտահանման ապրանքային կառուցվածքը 2019 թ. և 2022 թ.[447]

2022 թ.			2019 թ.		
ԱՏԳԱԱ	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	ԱՏԳԱԱ	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %
7108. Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի	97.5	98.1%	7204. Սև մետաղի ջարդոն և թափոն	3	87.0%
7801. Կապար չմշակված	0.7	0.7%	7102. Ադամանդե քար	0.1	2.9%
9018. Բժշկական, վիրաբուժական, ատամնաբուժական սարք	0.5	0.5%	8462. Մետաղամշակման մեքենա (ծռելու, կտրելու)	0.1	2.9%
7103. Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	0.2	0.2%	4104. Կաշի (խոշոր եղջեր. անասունի կամ ձիազգիների մորթուց)	0.07	2.0%
9001. Օպտիկական մանրաթել, լարան, չտեղակայված ոսպնյակ, հայելի, պրիզմա	0.1	0.1%	8479. Հատուկ նշանակության մեքենա՝ այլ տեղում չհիշատակված, մասեր	0.04	1.2%
9031. Հսկման, չափման այլ սարք, մեքենա, մասեր	0.1	0.1%	3808. Միջատասպան նյութ, հերբիցիդ, ռոդենտիցիդ, ֆունգիցիդ	0.03	0.9%
2208. Կոնյակ, ռոմ, ջին, օղի, լիկյոր	0.08	0.1%	9001. Օպտիկական մանրաթել, լարան, չտեղակայված ոսպնյակ, հայելի, պրիզմա	0.03	0.9%
4104. Կաշի (խոշոր եղջեր. անասունի կամ ձիազգիների մորթուց)	0.05	0.1%	8504. Էլեկտր. հոսանքափոխարկիչ, ինդուկցիոն կոճ, հակազդիչ	0.03	0.9%
2204. Խաղողի գինի, շամպայն	0.04	0.0%	7103. Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	0.02	0.6%
8481. Ծորակ, փական, կափույր և մասեր	0.03	0.0%	2208. Կոնյակ, ռոմ, ջին, օղի, լիկյոր	0.008	0.2%
Այլ	0.1	0.1%	Այլ	0.02	0.6%

Հնդկաստանից ներմուծումը համեմատաբար բազմազանեցված է և կայուն: Ադամանդե քարերի ներմուծումը կազմում է ամբողջ ներմուծման մոտ 40%-ը: Նշանակալիորեն աճել են «հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասեր» ապրանքախմբի ներմուծման ծավալը և տեսակարար կշիռը՝ 2019 թ. 0,90 մլն ԱՄՆ դոլարից (0.7%) 2022 թ. հասնելով 53,2 մլն ԱՄՆ դոլարի (20,5%): Նշանակալի են նաև տավարի մսի, ծխախոտի հումքի, դեղամիջոցների, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, ինչպես նաև պոլիացետալի և պելիկարբոնատի ներմուծման չափերը (աղյուսակ 4.4):

[447] Հեղինակի հաշվարկները՝ UNCOMTRADE տվյալների հիման վրա՝ https://comtradeplus.un.org/TradeFlow

Աղյուսակ 4.4

ՀՀ-ից Հնդկաստան ներմուծման ապրանքային կառուցվածքը 2019 թ. և 2022 թ.[448]

2022 թ.			2019 թ.		
ԱՏԳԱԱ	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %	ԱՏԳԱԱ	Ծավալը, մլն ԱՄՆ դոլար	Մասնաբաժինը, %
7102. Ադամանդե քար	104.2	40.3%	7102. Ադամանդե քար	58.8	45.8%
8517. Հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասեր	53.2	20.5%	2401. Ծխախոտի հումք և մնացորդ	25.2	19.7%
202. Տավարի միս (սառեցրած)	12.4	4.8%	202. Տավարի միս (սառեցրած)	8.8	6.9%
2401. Ծխախոտի հումք և մնացորդ	10.7	4.1%	3004. Դեղամիջոց՝ բաղկացած առանձին նյութերից	4.4	3.4%
3004. Դեղամիջոց՝ բաղկացած առանձին նյութերից	8.8	3.4%	3907. Պոլիացետալ և պելիկարբոնատ	3.4	2.7%
8429. Ավտոուղեհարթիչ, միաշերեփ բեռնիչ, տոփանիչ և այլն	5.9	2.3%	7103. Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	1.7	1.3%
7104. Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր՝ արհեստական	5.3	2.0%	3808. Միջատասպան նյութ, հերբիցիդ, ոդնենտիցիդ, ֆունգիցիդ	1.6	1.3%
7103 Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	5.2	2.0%	801. Կոկոսյան ընկույզներ	1.3	1.0%
6907. Հատակի և պատի երեսպատման չլաքապատված կավե սալիկ	3.4	1.3%	8517. Հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասեր	1.2	0.9%
3907 Պոլիացետալ և պելիկարբոնատ	2.5	1.0%	8474. Սարք՝ պինդ հանքանյութի տեսակավորման, լվացման, մանրացման, աղալու, խառնելու	0.9	0.7%
Այլ	47.3	18.3%	Այլ	20.9	16.3%

Թանկարժեք քարերի, մասնավորապես՝ ադամանդի հայ-հնդկական առևտրի տպավորիչ ծավալներն ամենևին էլ պատահական չեն: Երկու երկրներն ընդգրկված են չմշակված ադամանդի արտաքին առևտրով զբաղվելու իրավունք ունեցող աշխարհի սահմանափակ երկրների ցանկում: 2003 թվականի հունվարի 1-ից ադամանդի հումքի համաշխարհային առևտուրը կենտրոնացված է Քիմբերլի գործընթացի հավաստագրման ծրագրի (ՔԳՀԾ) մասնակից երկրներում, իսկ հումքի միջազգային մատակարարումների շղթայի բոլոր փուլերը (արտահանում, ներմուծում, ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար, տարանցիկ փոխադրում) ուղեկցվում են համապատասխան

[448] Հեղինակի հաշվարկները UNCOMTRADE տվյալների հիման վրա՝ https://comtradeplus.un.org/TradeFlow

Քիմբերլի գործընթացի հավաստագրերով (ՔԳՀ)[449], առանց որոնց ադամանդի հումքի արտահանում-ներմուծումը դիտարկվում է ապօրինի և ենթակա է առգրավման մաքսային մարմինների կողմից[450]:

2024 թվականի դրությամբ Քիմբերլի գործընթացին մասնակից 56 կողմ ներկայացնում է 82 երկիր (Եվրամիությունն անդամ 27 երկրներով հանդես է գալիս որպես մեկ մասնակից), որոնց բաժին է ընկնում ադամանդի համաշխարհային արտադրության 99,8%-ը[451]:

Հնդկաստանը թեև առանձին տարիների (2004–2006 թթ., 2009–2020 թթ.) ունեցել է նաև ադամանդի արտադրության որոշակի փորձ, այդուհանդերձ, երկրի մասնակցությունն առավել նշանակալի է ադամանդի հումքի համաշխարհային ներմուծման կառուցվածքում: 2020 թ. երկրում արտադրվել է ընդհանուր 3.1 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ շուրջ 22 հազ. կարատ ադամանդ (աղյուսակ 4.5), ինչը կազմում է ընդհանուր արտադրության ընդամենը 0.02–0.03%-ը:

Հնդկաստանը զգալի դերակատարում ունի Քիմբերլի գործընթացի ներքո իրականացվող չմշակված ադամանդի համաշխարհային առևտրում: Այսպես՝ 2022 թ. կարատներով արտահայտված ֆիզիկական ծավալներով չմշակված ադամանդի համաշխարհային առևտրում Հնդկաստանի մասնաբաժինը 8% է, մինչդեռ, արժեքային արտահայտությամբ՝ ընդամենը 3.5% է: Ներմուծման պարագայում պատկերն այլ է. Հնդկաստանն աշխարհի բացարձակ առաջատարն է ադամանդի ներմուծման ցուցանիշներով, ընդ որում, թե՛ կարատներով արտահայտված ֆիզիկական ծավալով (2022 թ. ապահովելով չմշակված ադամանդի համաշխարհային օրինական ներմուծման 42%-ը), թե՛ արժեքով (համաշխարհային ներմուծման 40%-ը)[452]: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ Հնդկաստանը մասնագիտացել է հատկապես ցածր արժեքով մեծածավալ ադամանդների ներմուծման և վերամշակման մեջ:

[449] Փախչյան Ա., Ադամանդի համաշխարհային առևտուրը Քիմբերլի գործընթացի մասնակից երկրներում. միտումներ և մարտահրավերներ, էջ 661-668 // Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ, Եր., «Տնտեսագետ», 2018, 780 էջ, (https://asue.am/upload/files/Gitajoxovi-nyuter.pdf)

[450] Փախչյան Ա., Հայաստանի Հանրապետությունը «ոչ կոնֆլիկտային ադամանդների» համաշխարհային շուկայում // «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդես, թիվ 3(31), 2013, Եր., «Տնտեսագետ» հրատ., էջ 118-132:

[451] Kimberley Process, https://www.kimberleyprocess.com/en/about

[452] Վերլուծությունն իրականացվել է Քիմբերլի գործընթացի վերաբերյալ վիճակագրական տվյալների հիման վրա՝ Kimberley Process Rough Diamond Statistics, Public statistics area, https://kimberleyprocessstatistics.org/public_statistics

Աղյուսակ 4.5

Չմշակված ադամանդի արտադրությունն ու առևտուրը Հայաստանում և Հնդկաստանում 2000–2022 թթ.[453]

Ցուցանիշներ		Հայաստան			Հնդկաստան		
		2020 թ.	2021 թ.	2022 թ.	2020 թ.	2021 թ.	2022 թ.
Արտադրություն	Ծավալ (կարատ)	0.00	0.00	0.00	22,044.61	0.00	0.00
	Արժեք (ԱՄՆ դոլար)	0.00	0.00	0.00	3,062,933.00	0.00	0.00
	ԱՄՆ դոլար / կարատ	0.00	0.00	0.00	138.94	0.00	0.00
Արտահանում	Ծավալ (կարատ)	276,111.66	357,784.22	2,093,656.01	18,927,834.50	37,843,961.04	26,062,069.18
	Արժեք (ԱՄՆ դոլար)	1,950,051.68	8,229,014.48	236,435,900.95	801,578,900.45	1,361,600,486.68	1,636,481,919.98
	ԱՄՆ դոլար / կարատ	7.06	23.00	112.93	42.35	35.98	62.79
Ներմուծում	Ծավալ (կարատ)	553,753.58	728,931.62	1,937,397.28	116,414,890.92	172,727,091.04	142,932,035.06
	Արժեք (ԱՄՆ դոլար)	46,609,278.90	67,353,367.89	52,545,960.56	9,725,750,361.09	17,863,695,408.48	18,801,699,020.90
	ԱՄՆ դոլար / կարատ	84.17	92.40	27.12	83.54	103.42	131.54
Քիմբերլիի համաձայնագրեր (KPC, հար)	Արտահանման	23	25	51	1,028	1,511	1,328
	Ներմուծման	52	64	138	17,694	28,720	27,007

[453] Kimberley Process Rough Diamond Public statistics area, https://kimberleyprocessstatistics.org/public_statistics

Հնդկաստան աստջատար դիտրեդում է նաև կիրճումնման հատկան թռոպկված քիմբերլի հակասոսագրերի բանակով. Հնդկաստանին է բաժին ընկել 2022 թ. նկրճումնման համար թոդարկված 45,648 KPC հակասոսագրերի 59%-ը:

Աճրուսակ 4.5-ի ուսուցիաակիրությունից պարզ է դառնում, որ աղամանդահանքագործության շահութաբերությունը շարունակում է 2022 թ. մնալ բավականին բարձր: Հնդկաստանին է բաժին ընկնում 1.9 մլն կարատ և աղամանդային ավելի քան 2 մլն կարատ աղամանդ, կանխորդ տարիա կիրճումնման ցուցանիշը գերազանցիով 2.7 անգամ կամ 166%-ով, իսկ արտահանման ցուցանիշը՝ 5.9 անգամ: Միաժամանակ, նկատի է՝ եթե 2020–2021 թթ. համեմատությամբ 2022 թ. կարտի կիրճել է նկրճումնքող արտադրվող 1 կարատի միջին գինը կազմել է 84.17 ԱՄՆ դոլար, 2021 թ.՝ 90.40 ԱՄՆ դոլար, իսկ 2022 թ.՝ 27.12 ԱՄՆ դոլար, ապա արտահանվող միջին գինը կազմել է 7.06 ԱՄՆ դոլար: 2020 թ. արտահանված միջին գինը կազմել է 112.93 ԱՄՆ դոլար, 2021 թ.՝ 23 ԱՄՆ դոլար, իսկ արդեն 2022 թ.՝ 7.06 ԱՄՆ դոլար կը, 2021 թ.՝ 23 ԱՄՆ դոլար, իսկ արդեն 2022 թ.՝ 112.93 ԱՄՆ դոլար:

Քանի որ քիմբերլի գործընթացի վերահսկողության չի ստորադրում միջազգային առևտրում ադամանդի միջին գինը, և միջազգային առևտրի մեջ ադամանդի մուտքի միջոցով ներմուծվող ադամանդի գինը կարող է տարբերվել, կարևոր է նկատել, որ Հայաստանում ներմուծվող ադամանդի գինը զգալիորեն ցածր է Հնդկաստանից ներմուծվող ադամանդի գնից: Ներմուծվող ադամանդի գների տարբերությունը կարող է պայմանավորված լինել տարբեր գործոններով, ինչպիսիք են ադամանդի որակը, չափը, կտրվածքը և շուկայական պայմանները: Հայաստանում ներմուծվող ադամանդի գինը, թեև ընդհանուր առմամբ ցածր է, կարող է արտացոլել ավելի բարձր որակի կամ ավելի մեծ չափի ադամանդների ներմուծումը: Նախորդ տարիների համեմատությամբ 2022 թ. ներմուծվող ադամանդի գինը զգալիորեն նվազել է, ինչը կարող է ցույց տալ ներմուծվող ադամանդների որակի կամ չափի նվազում կամ շուկայական պայմանների փոփոխություններ:

Ընդհանուր առմամբ, ադամանդի արտադրության, արտահանման և ներմուծման տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի ադամանդագործության ոլորտը ենթակա է զգալի տատանումների: Ոլորտի հետագա զարգացումը կախված կլինի տարբեր գործոններից, ներառյալ համաշխարհային տնտեսական պայմանները, ադամանդների պահանջարկը և կանոնակարգային փոփոխությունները:

4.2 Հայաստան–Հնդկաստան ռազմատեխնիկական համագործակցությունը

Թեև Հայաստանի ու Հնդկաստանի հարաբերությունները մշտապես բնորոշվել են որպես ջերմ, բարեկամական, այնուամենայնիվ, Արցախյան 44-օրյա պատերազմից հետո այդ հարաբերությունների զարգացումը մտել է նոր՝ ավելի պրագմատիկ, ավելի սերտ համագործակցության փուլ: Հարաբերությունների նման զարգացումը ամբողջովին տեղավորվում է Հնդկաստանի դիտանկյունից որպես աշխարհաքաղաքական գլոբալ դերակատարի դիրքավորման քաղաքականության շրջանակներում, իսկ Հայաստանի դիտանկյունից՝ ռազմատեխնիկական և ռազմատնտեսական համագործակցության ուղղությունների բազմազանեցման քաղաքականության շրջանակում, ուստի վերլուծաբանները նման համագործակցությունը գնահատում են որպես երկուստեք շահավետ: Առավել խոր վերլուծությունները պնդում են, որ 2023 թվականի Արցախի հայաթափումից և դրան հաջորդած Ռուսաստանի խաղաղապահ ուժերի տարածաշրջանից դուրս գալուց հետո տարածաշրջանում առաջացել է «գերիշխանության վակուում», որը լցնելու հավակնություններ ունեն տարածաշրջանի այլ խաղացողներ (օրինակ՝ Թուրքիան), ինչը նաև նպաստավոր պայմաններ է ստեղծում տարածաշրջանից դուրս խաղացողների՝ այս տարածաշրջանում ազդեցության որոշակի տիրույթ ձևավորելու համար: Հայաստանի հետ խորացող ռազմական, ռազմավարական և ռազմատեխնիկական համագործակցության աշխարհաքաղաքական կարևոր հիմնավորումներից մեկն էլ անվտանգային ընդհանուր մարտահրավերներն են, որոնք բխում են Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան ռազմավարական դաշինքից[454]:

Իրականում, Հայաստանը մշտապես գտնվել է Հնդկաստանի աշխարհաքաղաքական հետաքրքրությունների տիրույթում: Երկու պետությունների միջև կնքվել են բազմաթիվ համաձայնագրեր, արձանագրություններ, հուշագրեր ամենատարբեր (առևտրի, տնտեսության, ներդրումների, գիտության, տեխնոլոգիաների, կրթության մշակույթի, սպորտի, զբոսաշրջությ այլն) ոլորտներում համագործակցության և փոխըմբռնման վերաբերյս ւշտպանության ոլորտում առաջին փաստաթուղթը երկու պետությունն միջև 2003 թվականի մայիսի 23-ին ստորագրված հուշագիրն էր՝ «Հայաստանի պաշտպանության նախարարության և Հնդկաստանի պաշտպանության նախարարության միջև պաշտպանության բնագավառում համագործակցության

[454] Chalikyan N., Poghosyan B., Isanians V., Decemeber, 2024. The Geopolitical Aspects of the India-Armenia Partnership. ORF, Observer Research Foundation, Special Report, No 237, https://www.orfonline.org/public/uploads/posts/pdf/20241208153458.pdf

մասին»[455]: Այնուհետև՝ 2016 թվականի Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո, Անվտանգության խորհրդի քարտուղար Յուրի Խաչատուրովն ընդունել է Հայաստանում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Յոգեշվար Սանգվանին, ում հետ քննարկել են տարբեր ոլորտներում (այդ թվում նաև պաշտպանության և անվտանգության) հարաբերությունների զարգացման ներուժը[456]:

2017 թվականի մայիսին Հնդկաստան մեկնած ՀՀ պաշտպանության նախարարության պատվիրակությունը պայմանավորվածություններ է ձեռք բերել ռազմական, կրթական և ռազմատեխնիկական ոլորտներում համագործակցության վերաբերյալ[457]: 2017 թվականը Հնդկաստանի պաշտպանության նախարարության տարեկան զեկույցում բնութագրվում է որպես Հայաստանի հետ պաշտպանական համագործակցության ընդլայնման ժամանակաշրջան՝ նկատելով, որ 2017 թվականի դեկտեմբերի 20-22-ը Հնդկաստան այցելած Հայաստանի պաշտպանության նախարարության պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Պաշտպանական հետազոտությունների և մշակումների կազմակերպության և ՊՆ բարձրաստիճան պաշտոնյաների հետ, այցելել Հնդկաստանի պաշտպանական արդյունաբերության ձեռնարկություններ: Կողմերը որոշել են ընդլայնել 2003 թվականին ստորագրված Պաշտպանական համագործակցության մասին երկկողմ հուշագրի շրջանակը՝ անցնելով առավել գործնական քայլերի, ներառյալ ռազմական նշանակության արտադրանքի փոխանակումները, ռազմակրթական փոխգործակցությունը և համագործակցությունը պաշտպանական արդյունաբերության ոլորտում[458]:

2018 թվականի օգոստոսին արդեն հայկական լրատվամիջոցները, հղում անելով The Times of India-ին, տեղեկացրին, որ Հայաստանը հետաքրքրված է հնդկական Pinaka հրթիռային համակարգերով, որոնց փորձարկմանը ներկա է եղել Հայաստանի պատվիրակությունը[459]: Սակայն սպառազինությունների մատակարարման առաջին համաձայնագիրը Հայաստանի և Հնդկաստանի միջև կնքվեց զգալիորեն ուշ՝ 2020 թվականին, 40 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով հնդկական արտադրության SWATHI տեսակի չորս հակամարտկոցային ռադարների համար[460], որոնք Հայաստանին մատակարարվեցին միայն 2021 թվականի սկզբին:

[455] Աղբյուրը՝ Հայաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք՝ https://www.mfa.am/hy/bilateral-relations/in

[456] Nazaryan H., Military - Technical Cooperation Between the Republic of Armenia and the Republic of India. The POLITNOMOS Journal of Political and Legal Studies 1(1), 2023, pp. 21-32.

[457] Նույն տեղում, սկզբաղբյուրը՝ Սարոյան Ն., Հայաստանի և Հնդկաստանի ՊՆ-ները պայմանավորվել են տարբեր ոլորտներում համագործակցության շուրջ, https://razm.info/102670

[458] Annual Report 2017–2018, Ministry of Defence, Government of India, https://mod.gov.in/sites/default/files/AR1718.pdf, p. 165.

[459] Տե՛ս Արմենպրես, Հայաստանը հետաքրքրություն է ցուցաբերել հնդկական Pinaka հրթիռային համակարգերի նկատմամբ. Timesofindia, 2018, օգոստոսի 25, https://armenpress.am/hy/article/944948

[460] India-Armenia Relations, https://www.drishtiias.com/printpdf/india-armenia-relations

2021 թվականը վերլուծաբանները գնահատում են որպես հայ-հնդկական հարաբերությունների նոր դարաշրջանի մեկնարկ, որը նշանավորվեց Հնդկաստանի արտաքին գործերի նախարար Սուբրամանյամ Ջայշանկարի Հայաստան այցով և դրան հաջորդած՝ Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի Հնդկաստան այցերով[461]: Հայաստանի բարձրաստիճան ռազմաքաղաքական ղեկավարության այցերը Հնդկաստան՝ տարբեր միջոցառումների մասնակցելու համար, այնուհետև իսկապես բավական հաճախակի դարձան՝ Անվտանգության խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյան (2022 թ. նոյեմբեր, 2023 թ. օգոստոս), արտգործնախարար Ա. Միրզոյան (2022 թ. ապրիլ, 2023 թ. մարտ), պաշտպանության նախարար Ս. Պապիկյան (2022 թ. հոկտեմբեր), ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Է. Ասրյան (2023 թ. մարտ)[462]: Գրեթե բոլոր այցերի ժամանակ քննարկվել են երկրների միջև համագործակցության խորացման հնարավորությունները՝ առավելապես կենտրոնանալով ռազմական և ռազմատեխնիկական ուղղությունների վրա[463]: Որպես արդյունք՝ 2024–2025 թթ. ֆինանսական տարում Հայաստանի կողմից հնդկական արտադրության սպառազինության գնումների ընդհանուր ծավալը հասել է 600 մլն ԱՄՆ դոլարի: Այս մասին նշել են տարբեր աղբյուրներ՝ հղում անելով Հնդկաստանի ֆինանսների նախարարի խոսքին[464]:

Խաղաղության հիմնախնդիրների հետազոտման ստոկհոլմյան ինստիտուտի (SIPRI) տվյալների համաձայն՝ 2024 թվականի դրությամբ Հայաստանը Հնդկաստանի հետ ունի 4 տեսակի սպառազինությունների մատակարարման պայմանագրեր: Բացի արդեն հիշատակված SWATHI հակամարտկոցային ռադարներից՝ Հայաստանը պատվիրել է նաև 24 հատ Pinaka 214 mm հրթիռային մազարկային կրակի ռեակտիվ համակարգ, Akash SAMS հակաօդային պաշտպանության զենիթահրթիռային համակարգ և հրթիռներ[465]: 90 հատ ATAGS (կատարելագործված քարշակային հրետանային համակարգերի) մատակարարման պայմանագրերի (ընդհանուր 155.5 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ) մասին տեղեկանում ենք այլ աղբյուրներից: Մասնավորապես՝ «Սպուտնիկ Արմենիային» տված հարցազրույցում Հնդկաստանի պաշտպանական հետազոտությունների և վերլուծության ինստիտուտի գլխավոր տնօրեն Սուդան Չինոյը նշում է, որ նախապես մատակարարված 6 միավոր հնդկական ATAGS հաուբիցներից գոհ մնալուց հետո Հայաստանը պատվիրել է ևս 84 միավոր[466]: Նույն աղբյուրից տեղեկանում ենք նաև Pinaka համազարկային ռեակտիվ կայանքների պատվերի ընդհանուր արժեքի մասին՝ 250 մլն ԱՄՆ դոլար[467]: Ըստ որոշ աղբյուրների՝ այդ 250 մլն ԱՄՆ դոլարը ներառում է ոչ միայն 4 հաշվարկ Pinaka կայանքների արժեքը, այլ նաև NAG հակատանկային կառավարվող հրթիռների արժեքը[468]: Մինչդեռ, պարզ հաշվարկները (Pinaka կայանքի մեկ հաշվարկի արժեքը գնահատվում է մոտ 55 մլն ԱՄՆ դոլար, հրթիռներինը՝ մոտ 80 հազ. ԱՄՆ դոլար՝ յուրաքանչյուրը) ցույց են տալիս, որ դրանց համար նախատեսված ֆինանսական հատկացումները ներառված չեն 250 մլն ԱՄՆ դոլարի կազմում:

Բացի թվարկվածներից՝ Հայաստանը դիտարկում է նաև Հնդկաստանից ԱԹՍ-ների և պարեկող զինամթերքի որոշ տեսակների (Tata Advanced Systems Limited և Solar Industries-ի կողմից) ձեռքբերման հնարավորությունը[469]: Իսկ 2024 թվականի հունիսի դրությամբ Հնդկական պաշտպանական հետազոտությունների կազմակերպության տվյալներով Հայաստանը հետաքրքրված է նաև հնդկա-իսրայելական համատեղ արտադրության MR-SAM միջին հեռահարության «ցամաք-օդ» տեսակի հրթիռների ձեռքբերմամբ[470]:

Ներկայումս Հայաստանն արդեն իսկ հայտնվել է Հնդկաստանից սպառազինություններ ներմուծող երկրների առաջին եռյակում (ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հետ միասին[471]): Ակնկալվում է, որ առաջիկայում սպառազինությունների նոր մատակարարումներ կլինեն, քանի որ, որոշ աղբյուրների փոխանցմամբ, 2020 թվականին ստորագրված պաշտպանական ոլորտում համագործակցության պայմանագիրը նախատեսում էր մոտ 2 մլրդ ԱՄՆ դոլարի ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումներ[472]: Սակայն պետք է նկատել, որ Հայաստան–Հնդկաստան ռազմատեխնիկական հարաբերությունների զարգացման ներուժը սխալ է դիտարկել միայն Հնդկաստանից մատակարա-

---

461 Chalikyan N., Poghosyan B., Isanians V., Decemeber, 2024. The Geopolitical Aspects of the India-Armenia Partnership. ORF, Observer Research Foundation, Special Report, No 237, https://www.orfonline.org/public/uploads/posts/pdf/20241208153458.pdf

462 Աղբյուրը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք, https://www.mfa.am/hy/bilateral-relations/in

463 Տե՛ս, օրինակ, Ateet Sharma. Armenians make their presence felt at defence expo as military ties with India soar, https://www.indianarrative.com/world-news/armenians-make-their-presence-felt-at-defence-expo-as-military-ties-with-india-soar-63640.html

464 Տե՛ս, օրինակ, Syed Fazl-e-Haider. India Becomes Armenia's Largest Defense Supplier. Eurasia Daily Monitor Volume: 21 Issue: 131, https://jamestown.org/program/india-becomes-armenias-largest-defense-supplier/

465 Աղբյուրը՝ https://armstransfers.sipri.org/ArmsTransfer/TransferData

466 Indian Defence Research Wing-ի փոխանցած մանրամասների համաձայն՝ նոր խմբաբանակում փոփոխություններ են կատարվել՝ զնդերը հայ զինվորականների հատուկ պահանջներին համապատասխանեցնելու համար: Աղբյուրը՝ https://idrw.org/armenian-army-successfully-tests-indian-supplied-atags-artillery-systems/

467 Աղբյուրը՝ https://arm.sputniknews.ru/20240912/80546790.html

468 Yeghia Tashchyan. Armenia–India Relations: From Politics to Arms Trade, https://armenianweekly.com/2022/10/05/armenia-india-relations-from-politics-to-arms-trade/

469 Snehesh Alex Philip. Armenia eyes Akash missile, loitering munitions from India amid conflict with Azerbaijan. The print, https://theprint.in/defence/armenia-eyes-akash-missile-loitering-munitions-from-india-amid-conflict-with-azerbaijan/1173468/

470 Աղբյուրը՝ https://idrw.org/after-akash-ads-armenia-eyes-more-air-defense-system-from-india/

471 Pandit R., US, France & Armenia Top Three Buyers of Indian Defence Exports | India News," *Times of India*, October 27, 2024, https://timesofindia.indiatimes.com/india/us-france-armenia-top-three-buyers-of-indian-defence-exports/articleshow/114666748.cms

472 Syed Fazl-e-Haider. India Becomes Armenia's Largest Defense Supplier. Eurasia Daily Monitor Volume: 21 Issue: 131, https://jamestown.org/program/india-becomes-armenias-largest-defense-supplier/

րումների համատեքստում: Հայաստանը չպետք է թույլ տա այնպիսի իրավիճակի կրկնություն, ինչպիսին եղել է Ռուսաստանից ռազմական մատակարարումներից կախվածության ժամանակ: Ինչպես արդեն նկատել ենք, հնդկական սպառազինություններն աչքի չեն ընկնում տեխնոլոգիական նուրբ մշակվածությամբ և հաճախ զիջում են համաշխարհային շուկայում առկա նմանակներին: Հայաստանը, որը շարունակում է տեխնոլոգիական ոլորտում պահպանել որոշակի մրցակցային առավելություններ, Հնդկաստանին կարող է առաջարկել ռազմատեխնիկական համագործակցության շրջանակներում տեխնոլոգիական ներուժի արդյունավետ ուղղորդման սցենարներ համատեղ սպառազինությունների մշակման ուղղությամբ:

4.3 Լոգիստիկ ենթակառուցվածքներում Հայաստանի և Հնդկաստանի համագործակցության հնարավորությունները

1990-ական թվականներից ի վեր Հայաստանի տնտեսական և քաղաքական անկախության ձևավորման գործում հիմնաքարային դեր են ունեցել և ունեն միջտարածաշրջանային և համաշխարհային առևտրի կազմակերպման հիմնախնդիրները: Հարևան երկու երկրների կողմից սահմանային և տնտեսական շրջափակման պայմաններում ավելի քան 30 տարի չի օգտագործվել ՀՀ 1570 կմ երկարությամբ սահմանի 1301 կմ հատվածը: Փաստորեն, ՀՀ-ն շրջափակման պատճառով արտաքին աշխարհի հետ կապ է ունեցել պետական սահմանի երկարության միայն 17,1%-ի միջոցով[473]: Ըստ էության, 1993 թվականից ցայսօր Հայաստանը արտաքին աշխարհի հետ կապվում է չորս ցամաքային սահմանադռներով՝ Բավրայի, Գոգավանի և Բագրատաշենի անցակետերով՝ վրացական հատվածում, և Ագարակի կամրջով՝ իրանական հատվածում:

Հայաստանի տրանսպորտային համակարգը բաղկացած է չորս տեսակից՝ ավտոմոբիլային, երկաթուղային, օդային և խողովակաշարային: ՀՀ բոլոր մարզերը, քաղաքները և գյուղերն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են այս եղանակներից առնվազն երկուսով: Գործող անցակետերը Հայաստանում յոթն են՝ 4 ավտոմոբիլային, 1 երկաթուղային (Այրումի) և 2 օդային, որոնք ԵԱՏՄ տարածքում իրենց թվով ամենաքիչն են:

Միաժամանակ, ցամաքային տեղադիրքը և ՄԱԿ-ի դասակարգմամբ՝ ծովային ելք չունեցող զարգացող երկրի (Landlocked developing countries - LLDC) կարգավիճակին բնորոշ մեկուսացվածությունը հիմնական շուկաներից, հա-

[473] Ադրբեջան՝ 996 կմ, Վրաստան՝ 219 կմ, Իրան՝ 44 կմ, Թուրքիա՝ 311 կմ, https://www.cia.gov/the-world-factbook/countries/armenia/

րևան երկրներից տարանցման կախվածությունը, մաքսային ընթացակարգերի բարդությունն ու դրանցից բխող խոչընդոտներն էապես սահմանափակում են Հայաստանի միջազգային մրցունակությունը[474]:

Հնդկաստանը զբաղեցրած տարածքով աշխարհի յոթերորդ, իսկ բնակչությամբ արդեն առաջին երկիրն է, հարավում շրջապատված է Հնդկական օվկիանոսով, հարավ-արևմուտքում՝ Արաբական ծովով, իսկ հարավ-արևելքում՝ Բենգալյան ծոցով: Արևմուտքում սահմանակից է Պակիստանին, հյուսիս-արևելքում Չինաստանին, Նեպալին և Բութանին, իսկ արևելքում՝ Մյանմային և Բանգլադեշին: Հնդկաստանը և վերջինիս հարակից Անդամանյան և Նիկոբարյան կղզիները ծովային սահման ունեն Շրի Լանկայի, Մալդիվների, Թաիլանդի և Ինդոնեզիայի հետ:

Ի հակադրություն Հայաստանի՝ Հնդկաստանն ունի նավարկելի ջրային ուղիների հսկայական ցանց. վերջինիս ափերը ողողում են ավելի քան 7517 կմ երկարությամբ ձգվող ափամերձ ջրերը, որտեղ տեղակայված է 226 մեծ ու փոքր նավահանգիստ, որոնցից 12-ը՝ հիմնական[475]:

Հնդկաստանի նավահանգստային ենթակառուցվածքները կարևոր դեր են խաղում ոչ միայն երկրի արտաքին առևտրաշրջանառության, այլև տարածաշրջանային լոգիստիկ կապերի ձևավորման գործում: Հիմնական նավահանգիստներից առանձնանում են՝ Jawaharlal Nehru Port (Nhava Sheva, JNPT), Mundra, Deendayal (Kandla), Mumbai, Chennai, Visakhapatnam, Kolkata (Haldia) և Tuticorin (V.O. Chidambaranar):

Այս նավահանգիստները բաժանվում են ըստ աշխարհագրական դիրքի՝

- **Արաբական ծովի ափի նավահանգիստներ**՝ JNPT, Mundra, Kandla, Mumbai, որոնք հիմնականում սպասարկում են Մերձավոր Արևելք և Աֆրիկա ուղղությունները: Ջավահարլալ Ներուի նավահանգիստը (Nhava Sheva, JNPT) Հնդկաստանի ամենամեծ կոնտեյներային նավահանգիստն է, որը տարեկան սպասարկում է ավելի քան 5 մլն TEU476 բեռ: Այն հանդիսանում է Միջազգային Հյուսիս-Հարավ Տրանսպորտային (INSTC) միջանցքի հիմնական ելակետը՝ կապ ապահովելով Չաբահար (Chabahar) նավահանգստի հետ:

[474] Ծովային ելք չունեցող երկրների միջազգային մրցունակության հիմնախնդիրները (ՀՀ օրինակով): Մենագրություն/ Գրիգոր Նազարյան, Դավիթ Հախվերդյան, Աշոտ Եղիազարյան, Արմեն Գրիգորյան, Աննա Փախչյան, Արաքս Աբրահամյան: Մասնագիտ. խմբ.՝ Ատոմ Վարդանյան, Եր., «Տնտեսագետ», 2014, 112 էջ («Ամբերդ» մատենաշար - 13), https://asue.am/upload/files/amberd-competition/Nazaryan.pdf, էջ 5-6:

[475] Government of India, Ministry of Road Transport and Highways, Annual Report 2022-23, New Delhi, 15th August, 2022, https://morth.nic.in/sites/default/files/MoRTH%20Annual%20Report%20for%20the%20Year-%202022-23%20in%20English.pdf, p. 13.

[476] TEU-ն (twenty-foot equivalent unit) կամ քսան ոտնաչափ համարժեք միավորը, համաշխարհային կոնտեյներային փոխադրումների չափման ստանդարտ միավորն է: Դասական նավագնացության կոնտեյները լինում է 2 չափի՝ 20 ոտնաչափ (1 TEU) կամ 40 ոտնաչափ (2 TEU):

- **Բենգալյան ծոցի ափի նավահանգիստներ**՝ Chennai, Visakhapatnam, Kolkata, որոնք առավելապես կապ են ապահովում Հարավարևելյան Ասիայի և Հեռավոր Արևելքի երկրների հետ:

Բեռնատար նավերի մեծ մասը, որոնք նավարկում են Արևելյան Ասիայի և Ամերիկայի, Եվրոպայի և Աֆրիկայի միջև, անցնում են Հնդկաստանի տարածքային ջրերով: 2022 ֆինանսական տարում Հնդկաստանի բոլոր հիմնական նավահանգիստները սպասարկել են շուրջ 650,52 միլիոն տոննա (MT) ծավալի բեռնափոխադրումներ[477]: Եվ սա այն դեպքում, երբ Հնդկաստանի նավահանգիստներն աշխատում են ոչ ամբողջ թողունակությամբ. 2021–2022 թթ. հնդկական նավահանգիստներն աշխատել են իրենց բեռների թողունակության ընդամենը 45.1%-ի չափով[478]:

Համաձայն Ճանապարհային տրանսպորտի և մայրուղիների նախարարության 2022–2023 թթ. հաշվետվության՝ Հնդկաստանն ունի աշխարհում երկրորդ խոշոր ճանապարհային ցանցը՝ մոտ 63,32 լախ[479] կմ[480]:

Հնդկաստանն աշխարհում 6-րդ երկիրն է՝ շուրջ 68,988 կմ ձգվող երկաթուղային ցանցի երկարությամբ, երկրում գործող օդանավակայանների թիվը 122 է[481]:

Վերջին տարիներին **լոգիստիկ** արդյունավետությունը կարևորվել է որպես արտաքին առևտրում երկրների կտրուկ զարգացման հիմնական նախադրյալներից մեկը: Միայն 2023 թվականին լոգիստիկայի համաշխարհային շուկան կազմել է 8.96 տրիլիոն ԱՄՆ դոլար, և ակնկալվում է, որ մինչև 2033 թվականն այս ցուցանիշը կգերազանցի 21.91 տրիլիոնը[482]: Ահա թե ինչու է կարևոր հնարավորինս արագ հասնել շուկայում ներդրումների բարձր մակարդակի:

Միայն Հնդկաստանի լոգիստիկ շուկան 2022 թվականին գնահատվել է շուրջ 274 միլիարդ ԱՄՆ դոլար: Ըստ կանխատեսումների՝ 2030 թվականին

477 Ports and Shipping Industry in India, ClearIAS, October 20, 2023, https://www.clearias.com/ports-shipping-industry-india/

478 Government of India, Ministry of Ports, Shipping & Waterways, Annual report 2022-23, New Delhi, p. 35-36, https://shipmin.gov.in/sites/default/files/Annual%20Report%202022-23%20English.pdf

479 Լախը (Lakh, կրճատ՝ L) հնդկական համարակալման համակարգի միավոր է, որը հավասար է հարյուր հազարի (100,000): Թվանշանների խմբավորման հնդկական «2,2,3» ձևաչափում այն գրվում է 1,00,000 տեսքով: Օրինակ՝ Հնդկաստանում 350,000 ռուփին դառնում է 3,5 լախ ռուփի, որը գրվում է՝ 3,50,000 INR: Այն լայնորեն օգտագործվում է Աֆղանստանում, Բանգլադեշում, Բութանում, Հնդկաստանում, Մյանմայում, Նեպալում, Պակիստանում և Շրի Լանկայում:


480 Government of India, Ministry of Road Transport and Highways, Annual Report 2022-23, New Delhi, 15th August, 2022, https://morth.nic.in/sites/default/files/MoRTH%20Annual%-20Report%20for%20the%20Year%202022-23%20in%20English.pdf, p. 7.

481 WorldData.info, Transport and infrastructure in India, https://www.worlddata.info/asia/india/transport.php#google_vignette.

482 Logistics Market (By Transportation Type: Airways, Waterways, Railways, Roadways; By Logistics Type: First Party, Second Party, Third Party; By End User: Industrial and Manufacturing, Retail, Healthcare, Oil & Gas) - Global Industry Analysis, Size, Share, Growth, Trends, Regional Outlook, and Forecast 2024-2033, https://www.precedenceresearch.com/logistics-market

այս շուկան կաճի մինչև 563 միլիարդ դոլար՝ 9,4 տոկոս տարեկան աճի տեմպով: Հնդկաստանի լոգիստիկ ծախսերն ավելի բարձր մասնաբաժին ունեն ՀՆԱ կառուցվածքում՝ 14%, քան BRICS-ի միջին ցուցանիշը՝ 11%[483]:

Համաշխարհային բանկի կողմից 2007 թվականից հաշվարկվող լոգիստիկ արդյունավետության համաթվի՝ ԼԱՀ-ի (Logistics Performance Index (LPI)) գնահատականները Հայաստանի և Հնդկաստանի համար էապես տարբերվում են. Հնդկաստանում լոգիստիկ գործընթացներն անհամեմատ արդյունավետ են: Լոգիստիկ արդյունավետության համաթվի 2007–2023 թթ. հրապարակումներում Հնդկաստանը տարբեր տարիներին դասակարգվել է 35–54-րդ դիրքերում, մինչդեռ Հայաստանի լավագույն դիրքը 92-րդ է (2014 թ. և 2018 թ.), իսկ վատագույնը՝ 141-րդը (2016 թ.)՝ 160 երկրների շարքում: Այդուհանդերձ, թե՛ Հայաստանի, թե՛ Հնդկաստանի լոգիստիկ արդյունավետության կատարողականը տատանողական միտում է դրսևորում. աճի միտումները շարունակաբար փոխարինվում են անկումներով, և ընդհակառակը (գծապատկեր 4.2):



Գծապատկեր 4.2

Հայաստանի և Հնդկաստանի լոգիստիկ արդյունավետության համաթվի շարժընթացը 2007–2023 թթ.[484]


Բնականաբար, երկրների լոգիստիկ կատարողականի տատանումները ոչ միշտ են պայմանավորված ներքին գործընթացների անարդյունավետությամբ: LPI համաթվի անկումները հնարավոր են նույնիսկ այդ ուղղությամբ երկրի նկատելի ջանքերի դեպքում, քանզի աշխարհի մնացած երկրները ևս «տեղում չեն դուփում»: Թերևս, դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ 2017 թվականից Հնդկաստանում իրականացված բարեփոխումներն, ի հեճուկս ակնկալիքների, չեն ապահովել երկրի լոգիստիկ արդյունավետության համաթվի 2018 և 2023 թվականների գնահատականների զգալի աճ:

483 Statista, Size of logistics market in India between 2022 and 2030 (in billion U.S. dollars), Published by Shangliao Sun, Dec 18, 2023, https://www.statista.com/statistics/1288177/india-size-of-logistics-market/

484 Կազմել են հեղինակները՝ Համաշխարհային բանկի ԼԱՀ-ի տվյալների շտեմարանի հիման վրա, https://lpi.worldbank.org/international/global

Հայաստանը «ԼԱՀ – 2023» զեկույցում[485] զբաղեցրել է 97-րդ հորիզոնականը, որով 2018 թվականի համեմատությամբ թուլացրել է դիրքը 5 հորիզոնականով (92-րդ հորիզոնականից)՝ շուրջ 0.11 միավորով նվազեցնելով բացարձակ համաթվի մեծությունը: ԼԱՀ-ի 6 բաղադրիչներում առավել մեծ հիմնախնդիրներ են հատկապես միջազգային բեռնափոխադրումների մրցունակությունը և բեռների շարժին հետևելու ու հետագծելու ունակությունը: Այս առումով, Հայաստանն իրականացնում է մաքսային ընթացակարգերի պարզեցում Վրաստանի սահմանային անցակետերում և բանակցություններ վարում միասնական մաքսային կետ հիմնելու ուղղությամբ: Դե, իսկ առավել կայուն դիրքերը պահպանվել են մաքսային ծառայությունների քվինտիլներում:

Միաժամանակ, ըստ գծապատկեր 4.3-ի՝ 2023 թվականին լոգիստիկ արդյունավետության համաթվի 6 բաղկացուցիչներից Հայաստանում առավել խնդրահարույց են միջազգային բեռնափոխադրումների մրցունակությունը, առևտրային և տրանսպորտային ենթակառուցվածքների որակը, լոգիստիկ ծառայությունների մատուցման կարողունակությունն ու որակը, ինչպես նաև բեռների շարժին հետևելու ու հետագծելու սահմանափակ հնարավորությունները: Հնդկաստանի 2023 թ. լոգիստիկ արդյունավետության համաթվի բաղադրիչներից առավել ցածր կատարողական է ապահովվել մաքսազերծման արդյունավետության, ենթակառուցվածքների որակի և բեռներին հետևելու ու հետագծելու ունակության մասով:



Գծապատկեր 4.3 **Հայաստանի և Հնդկաստանի 2023 թ. լոգիստիկ արդյունավետության համաթվի համեմատականը**[486]

485 World Bank, Logistics Performance Index (LPI), Global Ranking 2023, https://lpi.worldbank.org/international/global

486 Կազմել են հեղինակները՝ Համաշխարհային բանկի ԼԱՀ-ի տվյալների շտեմարանի հիման վրա, https://lpi.worldbank.org/international/global

Այդուհանդերձ, Հնդկաստանում ևս առկա են լոգիստիկ արդյունավետության ակնհայտ թերացումներ, որոնց հիմքում, ի թիվս այլ գործոնների, բեռների սպասարկման թերզարգացած ենթակառուցվածքներն են: Պահեստային տնտեսությունը խիստ անկազմակերպ է՝ մեծաթիվ փոքր, մասնավոր և չկանոնակարգված պահեստների առկայությամբ, որոնք մեծացնում են պահեստավորման, բեռնաթափման և, ի վերջո՝ մատակարարման շղթայի ծախսերը:

Բրիտանական գաղութային լծից ազատագրումից (1947 թ.) ի վեր Հնդկաստանի խոշորագույն հարկային բարեփոխումը փոխակերպել է լոգիստիկ արդյունավետությունը երկրում, որտեղ մինչ այդ նահանգների և միացյալ տարածքների[487] միջև ապրանքների տեղափոխումը վարչարարության առումով համարժեք էր միջպետական սահմանների հատմանը: 2017 թ. հուլիսի 1-ից ապրանքների և ծառայությունների նոր հարկի (Goods and services tax - GST) ներդրումը մեծածավալ փոփոխությունների պատճառ է դարձել՝ վերացնելով Հնդկաստանի 29 նահանգում և 7 միացյալ տարածքում մինչ այդ կիրառվող հարկերի և տուրքերի տարբերակված կառուցվածքի պատճառով ստեղծված անհարմարությունները[488]: Միասնական հարկը փոխարինել է շուրջ տասն անուղղակի հարկատեսակների, այդ թվում՝ մաքսատուրք, ակցիզային հարկ, ծառայության տուրք, վաճառքի կենտրոնական հարկ, հավելավճար և լրացուցիչ հարկ, ԱԱՀ, ժամանցային հարկ, շքեղության հարկ, մուտքի հարկ և վիճակախաղի հարկ[489]:

Միասնական հարկատեսակի ներմուծումը, հարկման ընթացակարգերի պարզեցումից զատ, ազատականացրել է լոգիստիկ ոլորտը, քանզի մինչ այդ Հնդկաստանի 2 տասնյակից ավելի նահանգների միջև սահմանների հատման գործընթացն ուղեկցվում էր ապրանքների տեղաշարժի նկատմամբ ֆիզիկական սահմանային հսկողությամբ, փաստաթղթերի լրացման համար միջնահանգային մաքսային անցակետերում գոյացող հսկայական հերթերով: Ավելին, փոխադրողներից ու ստացողներից պահանջվում էր յուրաքանչյուր նահանգում ունենալ անհատական հարկային հաշվառման համար (individual tax ID)՝ բեռների փոխադրման և պահեստավորման գործառույթների իրականացման նպատակով[490]:

487 Միացյալ տարածքները (union territories) Հնդկաստանի վարչատարածքային բաժանման միավորներն են: Հնդկաստանը բաժանվում է 8 միացյալ տարածքի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր մայրաքաղաքը, պաշտոնական և ոչ պաշտոնական լեզուները, տվյալ տարածաշրջանին բնորոշ թղթադրամը, կենդանին, ծառն ու ծաղիկը: Բնական է, որ նման տարբերակումների դեպքում պետք է տարբերվեին նաև առանձին վարչական տարածքներում կիրառվող իրավական և տնտեսական քաղաքականությունները, ներառյալ՝ հարկային վարչարարությունները:

488 Reuters, GST roll out: New Tax Reform set to transform face of Indian logistics industry, New Delhi, June 30, 2017, https://www.financialexpress.com/business/industry-gst-roll-out-new-tax-reform-set-to-transform-face-of-indian-logistics-industry-742089/

489 Agility Mid-Year Emerging Markets Review 2017, https://ti-insight.com/agility-emerging-markets-mid-year-review-2017/, p. 4.

490 Agility Mid-Year Emerging Markets Review 2017, https://ti-insight.com/agility-emerging-markets-mid-year-review-2017/, p. 7-10.

Հնդկաստանում GST-ից առաջ գործող հարկային ռեժիմը ընկերություններին խրախուսում էր լոգիստիկ ծախսերի նվազեցման նպատակով ամեն նահանգում ունենալ պահեստ. յուրաքանչյուր խոշոր ընկերություն երկրի տարածքում ուներ 20–30 պահեստ: Հարկային բարեփոխման արդյունքում ակնկալվում է, որ ամենաշոշափելի օգուտները կդրսևորվեն հատկապես Հնդկաստանի լոգիստիկ ոլորտում՝ միջնահանգային սահմանային վարչարարության արդյունքում գոյացող հերթերի վերացման և պահեստներում բեռնատարների անցկացրած օրերի կրճատման շնորհիվ լոգիստիկ արդյունավետության նշանակալի բարելավմամբ: Ըստ նախնական գնահատականների՝ GST միասնական հարկատեսակի կիրառմամբ ակնկալվում է, որ պահեստավորման, բեռնափոխադրման և հարակից ծախսերը կնվազեն գրեթե 20%-ով, ինչը երկարաժամկետ հատվածում կհանգեցնի Հնդկաստանի ներքին առևտրի 29%-ով և արտաքին առևտրի 32% աճի[491]:

2017 թվականին Հնդկաստանի կառավարությունը Ասիական զարգացման բանկի աջակցությամբ ամբողջ երկրում գործարկել է 35 բազմամոդալ լոգիստիկ պարկերի (Multimodal Logistics Parks - MMLPs) մշակման ծրագիր, որը միտված է լոգիստիկ գործընթացների բարելավմանն ու ծախսերի կրճատմանը[492]: Ակնկալվում է, որ MMLP-ները կհեշտացնեն բեռների համախմբումը և բաշխումը, բազմամոդալ բեռնափոխադրումները, ինտեգրված պահպանումն ու պահեստավորումը:

Գլոբալացման գործընթացներում երկրների ներգրավվածության, ինչպես նաև դրանց լոգիստիկ հնարավորությունների գնահատման յուրօրինակ գործիք է միջազգային խոշոր լոգիստիկ ընկերության՝ DHL-ի կողմից մշակված գլոբալ փոխկապվածության համաթիվը (Global Connectedness Index, GCI), որը չափում է առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց միջազգային հոսքերի խորությունն ու լայնությունը[493]:

2001 թվականից հաշվարկվող DHL-ի գլոբալ փոխկապվածության GCI (Global Connectedness Index) համաթվի 2024 թվականի դասակարգման ցանկում ընդգրկվել է աշխարհի 181 երկիր, որոնք միասին ապահովում են համաշխարհային ՀՆԱ 99.7%-ը և կենտրոնացնում աշխարհի բնակչության 98.7%-ը[494]:

Ըստ DHL-ի գլոբալ փոխկապվածության համաթվի 2024 թվականի հատականների (աղյուսակ 4.6)՝ Հնդկաստանի և Հայաստանի զբաղ

[491] Նույն տեղում, էջ 2, 12:

[492] ADB, Developing Multimodal Logistics Parks in India, ADB BRIEFS NO. 142, June 2020, DOI, http://dx.doi.org/10.22617/BRF200189-2 / https://www.adb.org/sites/default/files/publication/614876/adb-brief-142-multimodal-logistics-parks-india.pdf, p. 1.

[493] Փախլյան Ա., Աշխարհի փոխկապվածության մակարդակը՝ DHL-ի գնահատմամբ // «Ամբերդ» տեղեկագիր № 4(23), 2023, էջ 43-51, DOI: 10.52174/2579-2989_2023.4-43, https://asue.am/upload/files/amberd/2023-year-4/5.pdf

[494] DHL, DHL Global Connectedness Report shows why globalization remains strong despite turbulent times, https://www.dhl.com/global-en/delivered/globalization/global-connectedness-index.html

դիրքերը բավական մոտ են. աշխարհի 181 երկրի վարկանշային դասակարգմամբ Հնդկաստանը համաթվի 52.3 միավորով 62-րդն է, իսկ Հայաստանը՝ 64-րդը (52.2 միավորով): Միաժամանակ, մնացյալ աշխարհի հետ երկրների փոխկապակցման հնարավորությունների տարբերություններն առավել ակնհայտ դրսևորվում են համաթվի առանձին բաղադրիչներում: Այսպես՝ Հայաստանը Հնդկաստանի համեմատությամբ լուրջ առաջընթաց ունի համաթվի խորության (որով Հայաստանը 63-րդն է, իսկ Հնդկաստանը՝ 161-րդը), իսկ Հնդկաստանի առավելությունը դրսևորվում է համաթվի լայնության (Հայաստանը 80-րդ տեղում է, իսկ Հնդկաստանը՝ 16-րդ) ցուցանիշով: Սա նշանակում է, որ Հայաստանն առավել ակտիվ է փոխազդում մնացյալ աշխարհի հետ կամ առավել խոր ներգրավվածություն ունի առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց միջազգային փոխանակության մեջ՝ դրանց ներպետական հոսքերի համեմատությամբ, մինչդեռ Հնդկաստանում, ընդհակառակը, ներպետական հոսքերը նկատելիորեն գերազանցում են առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց միջազգային հոսքերը, ինչը, նախևառաջ, պայմանավորված է երկրի մեծությամբ և բնակչության թվով: Միաժամանակ, Հնդկաստանում, ի տարբերություն Հայաստանի, համեմատաբար լայն է առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց հոսքերի աշխարհագրական բաշխվածությունը (բազմազանեցում) գործընկեր երկրների միջև, այսինքն՝ երկրի առևտրային և այլ կապեր չեն սահմանափակվում միայն մերձավոր հարևան երկրներով, ինչն էլ իր հերթին ենթադրում է առավել բարձր և արդյունավետ ներգրավվածություն միջպետական լոգիստիկ շղթաներում:


Գլոբալ փոխկապվածության GCI համաթվի առանձին ենթաբաղադրիչներով Հնդկաստանն առաջատար է առևտրի և կապիտալի հենասյուների մասով, իսկ Հայաստանի դիրքերն առավել ամուր են տեղեկատվության և մարդկանց հոսքերի հենասյուներում:

Աղյուսակ 4.6

Աշխարհին փոխկապակցման մակարդակի բնութագրիչները Հայաստանում և Հնդկաստանում՝ ըստ DHL-ի GCI 2024[495] համաթվի

Ցուցանիշներ	Հայաստան		Հնդկաստան	
	Դիրք	Միավոր	Դիրք	Միավոր
Գլոբալ փոխկապվածության համաթիվ	64 / 181	52.2 / 100	62 / 181	52.3 / 100
Խորություն	63 / 181	53.8 / 100	161 / 181	41.3 / 100
Լայնություն	80 / 181	50.6 / 100	16 / 181	66.5 / 100
Առևտրի հենասյուն	65 / 181	52.4 / 100	64 / 181	52.5 / 100
Կապիտալի հենասյուն	80 / 159	48.4 / 100	35 / 159	53.0 / 100
Տեղեկատվության հենասյուն	61 / 161	52.8 / 100	65 /161	52.0 / 100
Մարդկանց հենասյուն	49 / 114	51.1 / 100	65 / 114	47.5 / 100

[495] DHL-ի GCI 2024 համաթիվը հաշվարկվել է 2022 թվականի տվյալների հիման վրա:



1	Ռուսաստան (29%)	6	Միացյալ Թագավորություն (2%)
2	Հնդկաստան (15%)	7	ԱՄԷ (2%)
3	Վրաստան (7%)	8	Սիրիայի Արաբական Հանրապետություն (2%)
4	ԱՄՆ (5%)	9	Սաուդյան Արաբիա (2%)
5	Իրանի ԻՀ (4%)	10	Ադրբեջան (2%)

Քարտեզ 1[496]

Արտաքին աշխարհին Հայաստանի կապվածությունը բնութագրող քարտեզ՝ ըստ DHL-ի GCI 2024 համաթվի[497]

Հայաստանի կապվածությունն արտաքին աշխարհին առավել պատկերավոր արտացոլված է քարտեզ 1-ում, որտեղ հիմնական գործընկեր երկրները համարակալված են ըստ Հայաստանի արտաքին տնտեսական հոսքերում ունեցած նշանակության, մինչդեռ երկրների գույներն առանձնացված են ըստ կիզակետային երկրի՝ տվյալ երկրում Հայաստանի՝ այդ երկրների միջազգային հոսքերում ունեցած մասնաբաժնի: Դեղինի և մոխրագույնի տարբեր երանգները բնութագրում են Հայաստանի հետ արտաքին տնտեսական գործառույթների մասնաբաժինն այդ երկրներում, որտեղ մուգ դեղին գույնով ընդգծված են հատկապես սերտ կապեր ունեցող երկրները, իսկ մոխրագույնով՝ ընդհակառակը: Հատկանշական է, որ արտաքին աշխարհին Հայաստանի կապվածությունը բնութագրող քարտեզում դեղինի մուգ ու բաց երանգներով են նշված Վրաստանը, Ռուսաստանը, Հնդկաստանը, Իրանը, Սիրիայի Արաբական Հանրապետությունը և Ադրբեջանը (ենթադրաբար՝ Արցախը). սրանք այն երկրներն են, որոնց համար ՀՀ-ի հետ արտաքին հոսքերը համեմատաբար նշանակալի են: Մոխրագույնով ներկված երկրների համար

[496] Քարտեզում գործընկեր երկրների իրական չափսերը փոփոխված են՝ հաշվի առնելով դրանց մասնաբաժինը երկրի առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց միջազգային հոսքերում:


[497] Altman S.A. and Bastain C.R., DHL Global Connectedness Report 2024: An in-depth analysis of the state of globalization, DHL, https://group.dhl.com/content/dam/deutschepostdhl/en/media-center/media-relations/documents/2024/dhl-global-connectedness-report-2024.pdf, p. 115.

(ԱՄՆ, Միացյալ Թագավորություն) Հայաստանի հետ առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց հոսքերն աննշան են՝ տատանվելով ընդհանուրի նկատմամբ 0–0.2 %-ի միջակայքում:

Գլոբալ համաթվի նախորդ հրապարակումից ի վեր էական փոփոխություն է կրել ինչպես Հայաստանի խոշոր գործընկեր երկրների ցանկը, այնպես էլ դրանց մասնաբաժինը ՀՀ արտաքին գործառնություններում: Անկախ ակնհայտ նվազման միտումներից՝ Հայաստանի արտաքին հոսքերի գերակշիռ մասը՝ 29%-ը, այդուհանդերձ, կապված է Ռուսաստանի հետ (2022 թ. այդ ցուցանիշը հասնում էր 43%-ի)[498], առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց հոսքերով Հայաստանի հետ փոխկապակցվածության 15% ցուցանիշով (2022 թ. 4%-ի փոխարեն) երկրորդ նշանակալի երկրի դերում հայտնվել է Հնդկաստանը, հաջորդիվ գալիս են Վրաստանը, ԱՄՆ-ն և Իրանի ԻՀ-ն, համապատասխանաբար՝ 7%, 5% և 4% մասնաբաժիններով: Տասնյակում ներառված մյուս երկրներից (Միացյալ Թագավորություն, ԱՄԷ, Սիրիայի Արաբական Հանրապետություն, Սաուդյան Արաբիա, Ադրբեջան (ենթադրաբար՝ Արցախ)) յուրաքանչյուրին Հայաստանի առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց հոսքերում բաժին է ընկնում 2-ական %: Հարկ ենք համարում հստակեցնել, որ Հայաստանի հետ առնվազն երեք տասնամյակ որևէ դիվանագիտական և առավել ևս տնտեսական հարաբերություն չունեցող Ադրբեջանը Հայաստանին առավել փոխկապակցված երկրների ցանկում հայտնվել է միայն շնորհիվ այն բանի, որ, մինչև 2023 թ. Արցախի հայաթափման և բնակչության բռնի տեղահանման իրադարձությունները, վերջինիս կապը Հայաստանի հետ սերտ է եղել...

Քարտեզ 2-ն արտացոլում է Հնդկաստանի՝ արտաքին աշխարհին կապվածությունը, որի համաձայն՝ Հնդկաստանն առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց առավել ակտիվ փոխանակում է իրականացնում ԱՄՆ-ի (20%), ԱՄԷ-ի (7%), Միացյալ Թագավորության (5%), Նեպալի (5%), Չինաստանի (4%), Սինգապուրի (3%), Բանգլադեշի (3%), Գերմանիայի (2%) և Ավստրալիայի (2%) հետ: Հատկանշական է, որ Հնդկաստանի արտաքին հարաբերություններում առավել մեծ նշանակություն ունեն հեռավոր երկրները, մինչդեռ Հնդկաստանի հետ փոխկապվածությունն առավել էական է մոտ տարածության վրա գտնվող և նույն լոգիստիկ շղթայի մաս կազմող Նեպալի և Բանգլադեշի համար:

[498] Փախսյան Ա., Աշխարհի փոխկապվածության մակարդակը՝ DHL-ի գնահատմամբ // «Ամբերդ» տեղեկագիր № 4(23), 2023, DOI: 10.52174/2579-2989_2023.4-43, https://asue.am/upload/files/amberd/2023-year-4/5.pdf, էջ 49-50:



1	ԱՄՆ (20%)	6	Սաուդյան Արաբիա (3%)
2	ԱՄԷ (7%)	7	Սինգապուր (3%)
3	Միացյալ Թագավորություն (5%)	8	Բանգլադեշ (3%)
4	Նեպալ (5%)	9	Գերմանիա (2%)
5	Չինաստան (4%)	10	Ավստրալիա (2%)

Քարտեզ 2[499]

Արտաքին աշխարհին Հնդկաստանի կապվածությունը բնութագրող քարտեզ՝ ըստ DHL-ի GCI 2024 համաթվի[500]

Հայ-հնդկական առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման գործում մեծ է տրանսպորտային ենթակառուցվածքների դերը, հատկապես միևնույն տրանսպորտային-լոգիստիկ շղթայի մաս կազմելու հեռանկարները:

Հայաստանը մոտ է հիմնական լոգիստիկ խաչմերուկներին իր առանձնահատուկ աշխարհագրական դիրքի շնորհիվ: Չնայած Հայաստանում Եվրոպան և Ասիան կապող բազմաթիվ շղթաների և հնարավորությունների առկայությանը, տարածաշրջանային հակամարտությունները, տարածքային շրջափակումը, արտաքին անբարենպաստ միջավայրը և ներքին ենթակառուցվածքների թերզարգացվածությունը խոչընդոտներ են ստեղծում մրցունակ լոգիստիկ գործառնությունների իրականացման համար:

Հայաստանի և Հնդկաստանի լոգիստիկ համագործակցության հեռանկարները: Չնայած աշխարհագրական հեռավորությանը և Հայաստ դեպի ծով ելք չունենալու հանգամանքին՝ Հնդկաստանն ու Հայաստան կարող են գտնել լոգիստիկ համագործակցության եզրեր՝ ներգրա ելով տարբեր տարածաշրջանային ծրագրերում:

499 Քարտեզում գործընկեր երկրների իրական չափսերը փոփոխված են՝ հաշվի առնելով դրանց մասնաբաժինը երկրի առևտրի, կապիտալի, տեղեկատվության և մարդկանց միջազգային հոսքերում:

500 Altman S.A. and Bastain C.R., DHL Global Connectedness Report 2024: An in-depth analysis of the state of globalization, DHL, DHL Connectedness Report 2024 – An in-depth report on the state of globalization, p. 182.

Աղյուսակ 4.7

Տարածաշրջանային միջազգային տնտեսական միջանցքները և շահառու երկրները

Լոգիստիկ ծրագրեր	*Շահառու երկրներ*
Մետաքսի ճանապարհ, Միջին միջանցք և Տրանսկովկասյան երկաթուղի	Չինաստան, Ռուսաստան, Ղազախստան, Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա, ԵՄ
Հյուսիս-հարավ	Հնդկաստան, Իրան, Ռուսաստան, Կենտրոնական Ասիայի երկրներ (օրինակ՝ Ղազախստան, Թուրքմենստան), ԵՄ, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան
Սև ծով - Պարսից ծոց	Իրան, Հայաստան, Վրաստան, Սև ծովի ավազանի երկրներ (օրինակ՝ Բուլղարիա, Ռումինիա), Արևելյան Եվրոպայի երկրներ
Կարս - Նախիջևան – Իրան - Ադրբեջան	Հնդկաստան, Մերձավոր Արևելք, Ադրբեջան, Թուրքիա, Իրան, ԵՄ
Ռաշտրա - Աստրա	Հնդկաստան, Իրան, Ադրբեջան, Ռուսաստան
Բաքու - Իջևան – Գյումրի - Կարս	Հայաստան, Ադրբեջան, Թուրքիա, Հնդկաստան, Չինաստան, Կենտրոնական Ասիա

Հայաստանի տարածքով են անցնում հնդկական «Հյուսիս-հարավ»-ը և իրանական «Պարսից ծոց-Սև ծով» տրանսպորտային միջանցքները: Թեև այստեղ համընկնում են Հայաստանի, Ռուսաստանի, Իրանի և Հնդկաստանի շահերը, տրանսպորտային նախագծերի իրագործումը հատկապես կարևոր է Հայաստանի համար, քանզի դրանք կարող են մեծացնել վերջինիս դերը տարածաշրջանում:

Հայաստանի և Հնդկաստանի միջև առևտրատնտեսական կապերի հիմնական ուղղությունը ձևավորվում է Իրանի տարածքով՝ International North–South Transport Corridor (INSTC) կամ «Հյուսիս-Հարավ» միջանցքի շրջանակում: Այս բազմամոդալ երթուղին (ծովային և ցամաքային երթուղիների համադրմամբ) հնարավորություն է տալիս Հնդկաստանից բեռնափոխադրումներ իրականացնել դեպի Իրան, այնուհետև ցամաքային ճանապարհով՝ դեպի Հայաստան և Եվրասիական տարածաշրջան: Հնդկաստանի արևմտյան նավահանգիստներից՝ հիմնականում JNPT (Nhava Sheva), Mundra և Kandla, իրականացվում են ուղիղ նավարկություններ դեպի Իրանի Chabahar և Bandar Abbas նավահանգիստներ: Չաբահար (Chabahar) նավահանգիստը, որտեղ Հնդկաստանը ունի համատեղ ներդրումներ, ռազմավարական նշանակություն ունի՝ որպես Հնդկաստան–Իրան–Հայաստան միջանցքի ելակետ: Այն թույլ է տալիս շրջանցել Պակիստանի տարածքը և ուղղակի մուտք է ապահովում դեպի Կասպից ծով և Հարավային Կովկաս: Միաժամանակ, Իրանի հիմնական միջազգային բեռնային հանգույց հանդիսացող Բանդար Աբբաս (Bandar Abbas) նավահանգիստը կապում է ծովային և երկաթուղային ցանցերը դեպի հյուսիսային ուղղություններ: Հաջորդիվ՝ Իրան-Հայաստան ցամաքային հաղորդակցությունը և բեռնափոխադրումները կարող են անցնել երկու հիմնական ուղղությամբ՝

- Չաբահար/Բանդար Աբբաս – Թեհրան – Մեղրի – Երևան,

• Չաբահար/Բանդար Աբբաս – Թավրիզ – Ջուլֆա – Մեղրի – Երևան:

Այս երթուղիները համատեղում են ավտոմոբիլային և երկաթուղային հատվածները՝ հնարավորություն ընձեռելով ձևավորել արդյունավետ փոխադրումների համակարգ և նվազեցնել ժամանակային ծախսերը՝ համեմատած Սևծովյան միջանցքի հետ:

Հյուսիս-հարավ միջանցքը միացնում է Հնդկական օվկիանոսը և Պարսից ծոցը Սև ծովով՝ Իրանի տարածքով, իսկ աշխարհագրորեն տարածաշրջանային շրջափակման մեջ գտնվող Հայաստանի համար հասանելի է դառնում Հյուսիսային Եվրոպան՝ Ռուսաստանի տարածքով: Երթուղու առանցքային առավելությունն այն է, որ վերջինս հնարավորություն է տալիս Հայաստանին շրջանցելու Ադրբեջանի և Թուրքիայի տարածքով անցնող երթուղին[501]:

«Պարսից ծոց–Սև ծով» տրանսպորտային և տարանցիկ միջանցքի ձևավորման ուղղությամբ կատարվող աշխատանքներն առաջնահերթ կարևորություն ունեն հայ-հնդկական լոգիստիկ համագործակցության ընդլայնման տեսանկյունից, քանզի «Պարսից ծոց–Սև ծով» տրանսպորտային միջանցքը Հայաստանը կկապի համաեվրոպական տրանսպորտային ցանցերի հետ: «Պարսից ծոց–Սև ծով» ծրագրի շրջանակներում առաջին եռակողմ խորհրդակցություններն արդեն սկսվել են ՀՀ-ի, Իրանի և Հնդկաստանի միջև: Այս համատեքստում, բացի վերջին երկրներից, ծրագրի իրական շահառուներն են նաև Հյուսիսային Աֆրիկայի, Մերձավոր Արևելքի երկրները, հատկապես ԱՄԷ-ն: «Պարսից ծոց-Սև ծով» տրանսպորտային միջազգային միջանցքը «Հյուսիս-հարավ» միջազգային լոգիստիկ միջանցքի մի մասն է կազմում: Հանձնաժողով, Հնդկաստան-Մերձավոր Արևելք-Եվրոպա (IMEC) տնտեսական միջանցքում Թուրքիայի բացակայության պատճառը երկրում երկաթուղային համակարգի անկատարությունն է՝ երկրորդային երկաթուղիների բացակայությունը, երկրի հարավարևելյան հատվածում ենթակառուցվածքային կապերի բացակայությունը Կարսի հետ: Բացի այդ, Հնդկաստանը և Իրանը դեպի Եվրոպա անցնող ճանապարհը տեսնում են հայկական և վրացական երթուղիներով Սև ծովն օգտագործելու նպատակահարմարությամբ, մինչդեռ Թուրքիայի՝ իր տարածքով արտահանելու հնարավորությունն իրագործելի է Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթգծի օգտագործմամբ միայն արգելք չէ երկրների համար, սակայն պակաս մրցակցություն է ստեղծում տարանցիկ նաև Նոր մետաքսի ճանապարհի նախաձեռնությանը[502]: Բացի այդ, Հնդկաստանի և Իրանի առաջնահերթություններից է նաև մուտքը դեպի ՌԴ շուկա Ռաշտրա-Աստրա ճանապարհով (Իրանի և Ադրբեջանի տարածքով անցնող, 165 կմ երկարությամբ), քանի որ դա ուղիղ ճանապարհ է նախատես-

[501] Հայաստան-Չինաստան տնտեսական համագործակցության հեռանկարները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի շրջանակներում / Աթոյան Վ. և-ուրիշներ, Եր., «Տնտեսագետ», 2021, 118 էջ («Ամբերդ» մատենաշար 49), էջ 20:

[502] Shabnam Dadparvar, Vali Kaleji, The Persian Gulf-Black Sea International Transport and Transit Corridor: Goals and Constraints: Journal of Balkan and Near Eastern Studies: Vol 26 , No 2, 10 Jul 2023.

սում վերջինիս հետ, սակայն միաժամանակ հետ է պահում եվրոպական շուկաներ հասնելուց, ինչը կարելի է իրագործել հայկական երթուղիներն ընտրելու միջոցով: Վերջինս հնդկական կողմի համար պարունակում է մի շարք աշխարհաքաղաքական ռիսկեր՝ դեպի ՌԴ շուկա հասնելու տեսանկյունից:

Թուրքական քաղաքականության խնդիրն է՝ մեկ երթուղում և՛ Մետաքսի ճանապարհի նախաձեռնության, և՛ Հնդկաստան - Մերձավոր Արևելք – Եվրոպա միջանցքի նախագծերի միավորումը, մինչդեռ Հնդկաստանի նպատակն այլընտրանքային՝ այլ ուղղություններից անկախ լոգիստիկ հզոր ներուժի զարգացումն է՝ միևնույն ժամանակ խուսափելով Սուեզի ջրանցքից օգտվելու և Ռուսաստանի Դաշնության հետ կապեր հաստատելու համար հնարավոր պատժամիջոցներից: Հնդկաստանը՝ որպես աշխարհում հաջորդ խոշորագույն արտահանող երկիր, ավելի նպատակային է համարում լոգիստիկ շղթաների առանձնացումը չինական Մետաքսի ճանապարհից՝ մրցակցային մի շարք ռիսկերից խուսափելու նպատակով:

Դեռևս 1990-ականներից պլանավորված և մեծ ներդրումների պահանջի պատճառով երկար տարիներ որպես առաջնահերթություն չդիտարկվող Հյուսիս-հարավ նախագիծը 2022 թվականից հետո վերահիմաստավորվել և ռազմավարական կարևորություն է ստացել Ռուսաստանի համար: Կախվածությունն արևմտյան լոգիստիկ շղթաներից ռուս-ուկրաինական պատերազմի պայմաններում վերածվել է տնտեսական անվտանգության սպառնալիքի. բազմաթիվ ապրանքներ Ռուսաստան մատակարարման արգելքը, ԵՄ ճանապարհներով բեռնափոխադրումների սահմանափակումը, օդանավակայանների և ծովային նավահանգիստների փակումը Ռուսաստանի դրոշի ներքո երթևեկող նավերի և օդանավերի առջև ի վերջո ստիպեցին հայացքը թեքել դեպի հարավ: Ռուսաստանի առևտրային հարաբերություններում կառուցվածքային տեղաշարժեր են գրանցվում. արդիականություն են ձեռք բերել Պարսից ծոցի, Հնդկաստանի և Արևելյան Աֆրիկայի երկրները, հետևապես՝ Սանկտ Պետերբուրգից Մումբայ տանող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքը[503]: Հայաստանի շահերն այս դեպքում համընկնում են:

Այսպիսով՝ ոչ միայն անհրաժեշտ է վերահիմաստավորել **Հյուսիս-հարավ նախագծի** տնտեսական նշանակությունը, այլև մոտեցնել վերջինիս իրացման ժամկետը, որով կկապվի նաև Պարսից ծոց–Սև ծով ավտոմոբիլային ճանապարհը երկաթուղու կառուցման ներդրումային ծրագրի իրականացման հեռահար նպատակին զուգահեռ: Այս պայմաններում իրանական երկաթուղին Կովկասին և Հայաստանին միացնելը և Սև ծովի վրացական ափերին Հայաստանի Հյուսիս-հարավ մայրուղու և Անակլիա նավահանգստի կառուցումը կարող են ընդլայնել Պարսից ծոց–Սև ծով միջանցքի կարողությունները: Դրանք կարող են նաև ուժեղացնել Սևծովյան ընդարձակ տարածաշրջա-

[503] Никитин Д., «Север – Юг»: как западные санкции толкают Россию к созданию главного конкурента Суэцкого канала, https://rtvi.com/stories/sever-yug-kak-zapadnye-sankczii-tolkayut-rossiyu-k-sozdaniyu-glavnogo-konkurenta-sueczkogo-kanala/

նը և Սևծովյան տնտեսական համագործակցությունը (ՍԾՏՀ):



Քարտեզ 3 **Բաքու-Թբիլիսի-Կարս տնտեսական միջանցք**[504]

Ադրբեջանի ֆինանսավորմամբ կառուցվել է Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթուղային միջանցքը (քարտեզ 3)՝ Տրանսկովկասյան երկաթուղին կամ Տրանսեվրոպական երկաթուղային ցանցի մի հատվածը, որով փոխադրումներ իրականացնելու թույլտվությամբ ադրբեջանական **Բոյուկ Քեսիկ** ցանցը հայկական բեռնատար երկաթուղային վագոնների մուտքը միջանցքի որևէ հատված արգելելու լիազորություն ունի: Նշանակում է՝ այս երթուղին հասանելի չէ հայկական բեռնափոխադրումների համար:

Հաշվի առնելով իր շահավետ աշխարհագրական դիրքը՝ Թուրքիան համագործակցում է Չինաստանի հետ մի քանի ներքին և միջազգային երկաթուղային նախագծերի շրջանակներում: Նման նախագծերից է 30 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ Էդիրնեն և Կարսը կապող բարձր արագությամբ երկաթգծի ցանցը: Այդ ծրագիրը կարող է վերաբերել նաև Հայաստանին, եթե կանգնվի Գյումրի-Կարս երկաթուղային կապը: 2016 թվականի հունվարին ստեղծվել է Լյանյունգանգից Ստամբուլ բեռնափոխադրումների նոր միջանցքը, որը հատում է Կենտրոնական Ասիայի երեք երկրներ և երկու ծովային տարանցիկ հատվածներ: Հայաստանը շրջանցող Տրանսկովկասյան երկաթուղով բեռնարկղերով (կոնտեյներ) առաջին երկաթուղային փոխադրումը Չինաստանից մինչև Չեխիա սկսվել է 2015 թվականից, և դրանից հետո միջին

[504] Աղբյուր՝ https://www.azernews.az/analysis/218250.html լրատվական կայք, դեկտեմբերի 1, 2023 թ.:

միջանցքը (այդ թվում՝ ԲԹԿ երկաթուղին) մշտապես երկրների կողմից հաջողությամբ օգտագործվում է: Տրանսկասպյան միջազգային ճանապարհը՝ «միջին միջանցքը», միացնում է Չինաստանը ԵՄ երկրներին՝ Ղազախստանի, Ադրբեջանի և Վրաստանի միջոցով:

Այս նախագծի և Կարս-Էդիրնին բարձր արագությամբ երկաթգծի շնորհիվ Հարավային Կորեայից մինչև Թուրքիա երկաթուղային ճանապարհով հնարավոր է հասնել 15 օրվա ընթացքում: Նախագիծը ոչ միայն հակահայկական՝ Տրանսկասպյան արևելք-արևմուտք միջանցքի հյուսիսային հատվածի մի մասն է, այլև հավակնում է լինել չինական նոր «Մետաքսի ճանապարհի» միջոցառման գլխավոր ուղղություններից մեկը: Տրանսկասպյան միջանցքը եվրասիական տրանսպորտային միջանցքների ցանցի կենտրոնական միջանցքներից է: Կենտրոնական միջանցքը հայտնի է աշխարհամասերը կապող իր ավելի արագընթաց ճանապարհներով, մեծ շուկաներով և բնակչությամբ, որով Չինաստանի և Եվրոպայի հետ լոգիստիկան 45–62 օրից կրճատվում է մինչև 12–15 օր: Փաստորեն, Հայաստանն իր ամբողջ տարածքի մակերեսով դուրս է մնում այս գլոբալ եվրասիական տրանսպորտային միջանցքների ցանցից: Այժմ, երբ տեսնում ենք, որ իրանական և հնդկական լոգիստիկ նախագծերը հակված են շրջանցել Թուրքիան (Իրանը առաջնահերթությունը տալիս է հայկական և վրացական, իսկ Հնդկաստանը՝ Էգեյան ծովում հունական ուղղություններին), հայկական հարավային երկաթուղային և ավիոմոբիլային ճանապարհային ցանցը ձեռք է բերում առավել կարևոր նշանակություն: Այս ծրագրի ուղղությամբ Թուրքիան ակտիվ աշխատանքներ է տարել բոլոր հնարավոր հարթակներում՝ Հնդկաստանի հետ համատեղ բանակցություններում հաջողության հասնելու նպատակով: Թուրքական ծովային գործերի և կապի նախարարությունը ծրագրում է թուրք-ադրբեջանական ցամաքային կապի հաջորդ՝ Իգդիր-Դիլուջու-Նախիջևան (Սադարակ շրջանով) - Կարսի միջով մինչև Իրան, ապա Պակիստան, Հնդկաստան և Չինաստանի հարավ անցնող հեռատեսական երթուղու կառուցման նախագիծը[505]: Սրանով Հայաստանը երկու հարևան երկրների կողմից ամբողջապես առնվում է լոգիստիկ շրջափակման մեջ: Թուրքական կողմին միայն Կարս-Նախիջևան երկաթգծի համար անհրաժեշտ է լինելու 1,5 միլիարդ ԱՄՆ դոլարի ներդրում, սակայն շինարարությունը չի կարող սկսվել առանց կողմերի համաձայնության, որին դեռևս չի արձագանքում իրանական կողմը: Կարելի էր սպասել, որ ադրբեջանական կողմը կաջակցի Հայաստանը շրջանցող երկաթուղային գծերի բարդ ցանցի ստեղծմանը, որը, ըստ էության, «Պարսից ծոց-Սև ծով» նախագծի այլընտրանքային՝ երկաթուղային, նշանակում է՝ ավելի արդյունավետ տարբերակն է դառնալու:

[505] Eurasian Research Institute, Recent developments in the Baku Tbilisi- Kars railway project, Link https://www.eurasian-research.org/publication/recent-developments-in-the-baku-tbilisi-kars-railway-project/

Մի կողմից՝ Հնդկաստանը Իրանի և Հայաստանի հետ եռակողմ համագործակցության արդյունքում շահագրգռված է իրացնել «Պարսից ծոց - Սև ծով» երթուղին, մյուս կողմից էլ անհրաժեշտ է համագործակցել հունական ընկերությունների հետ՝ ի հակադրություն Թուրքիայի՝ ստեղծելով լոգիստիկ մրցակցային պայքար ոչ միայն վերջին երկու երկրների, այլև Սևծովյան երթուղիներն օգտագործող երկրների՝ Հայաստանի և Ադրբեջանի, Բուլղարիայի և Սերբիայի, այլ շահառուների միջև[506]:

Հայաստանի և Հնդկաստանի միջև ռազմավարական գործակցությունն արտահայտվում է նաև օդային հաղորդակցության բնագավառում: Մասնավորապես՝ 2024 թ. մարտին Հնդկաստանը հաստատեց հատուկ օդային միջանցք դեպի Հայաստան՝ ռազմավարական նշանակության ապրանքների արտահանումների համար[507]: Հնդկաստանի ավիացիոն արդյունաբերության և բեռնափոխադրումների ոլորտում ընդգրկված Hindustan Aeronautics Limited (HAL) և Container Corporation of India (CONCOR) ընկերությունների համատեղ HALCON ծրագիրը մեկնարկեց ռազմավարական նշանակության օդային բեռների արտահանում դեպի Հայաստան՝ երկրների միջև գործակցությանը հաղորդելով առանձնակի կարևորություն:

Լոգիստիկ ենթակառուցվածքների զարգացվածությունը և տրանսպորտային հաղորդակցության հնարավորությունները Հայաստանում և Հնդկաստանում թեև խիստ տարբեր են, այդուհանդերձ, երկրներն ունեն համընկնող շահերի և հետաքրքրությունների որոշակի շրջանակ, ինչը պարարտ հիմքեր է ստեղծում դրանց միջև տնտեսական հարաբերությունների հետագա խորացման համար:

Հնդկաստանի և Հայաստանի միջև տրանսպորտային և լոգիստիկ համագործակցությունը շարունակում է ամրապնդվել, քանի որ երկու կողմերն էլ գիտակցում են այս ոլորտում համագործակցության ռազմավարական առավելությունները: Աշխարհաքաղաքական ձևախեղումներն ու երրորդ երկրների լոգիստիկ ենթակառուցվածքներից կախվածության թուլացման ձգտումները փոխշահավետ նախադրյալներ են ձևավորում նույնիսկ ծովային ելք չունեցող Հայաստանի և նավարկելի ափամերձ ջրերով ողողված, աշխարհում երկրորդ խոշոր ճանապարհային ցանցն ունեցող Հնդկաստանի համագործակցության համար:

[506] Greek City Times, India is breaking Turkey's monopoly on East-West trade routes, by Paul Antonopoulos, September 23, 2023, https://greekcitytimes.com/2023/09/23/indias-is-breaking-turkeys-routes/


[507] Индия перекинула в Армению через Иран воздушный мост «стратегического экспорта», EurAsia Daily, 12 марта 2024, https://eadaily.com/ru/news/2024/03/12/indiya-perekinula-v-armeniyu-cherez-iran-vozdushnyy-most-strategicheskogo-eksporta

4.4 Ծառայությունների ոլորտում համագործակցություն (աութսորսինգ)

Հայաստանի և Հնդկաստանի միջև ծառայությունների ոլորտում համագործակցության հնարավորություններն ուսումնասիրելու համար նախևառաջ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ ծառայություններ են ներկայումս արտահանվում, որ երկրներն են ամենաշատն արտահանում ծառայություններ, և Հայաստանն ու Հնդկաստանն ինչ դեր ունեն ծառայությունների համաշխարհային շուկայում: Ծառայությունների շուկան աշխարհում ամենաարագ զարգացող տնտեսության ճյուղերից է, և շատ երկրներ մասնագիտանում են ծառայության այս կամ այն տեսակի արտահանման մեջ, որը դառնում է երկրի տնտեսության շարժիչ ուժը: Որոշ երկրներ մասնագիտանում են ճանապարհորդական ծառայությունների արտահանման մեջ և դառնում ճանապարհորդական կենտրոններ, մյուսները՝ SS ծառայությունների արտահանման մեջ՝ աշխարհին առաջարկելով նորարարական տեխնոլոգիաներ: Տնտեսության զարգացվածության ներկա փուլում ծառայությունները դարձել են ինչպես անհատների կյանքի անբաժան մասը, այնպես էլ երկրների արտաքին առևտրաշրջանառության զգալի հատվածը:

Այսպիսով՝ ո՞ր ծառայություններն են ամենաշատն արտահանվում: Գծապատկեր 4.4-ում ներկայացված են 2022 թվականին ամբողջ աշխարհում արտահանված ծառայությունները:

Հերթականությամբ ուսումնասիրենք ամբողջ աշխարհում արտահանվող ծառայությունները: Ամենաիոքր տեսակարար կշիռն ունեն հասարակական նշանակության ծառայությունները, որոնց ծավալները 2022 թվականին կազմել են ամբողջ արտահանման 1,1 տոկոսը: Հասարակական նշանակության ծառայությունների աութսորսինգ է իրականացվում կառավարությունների կողմից: Նման ծառայություններից են աղբահանությունը, ճանապարհների սպասարկումը, պետական հատվածի աշխատողների վերապատրաստումները և այլն: Այդպիսի ծառայություններ ամենաշատն արտահանում են ԱՄՆ-ն, ՄԹ-ն և Գերմանիան, իսկ ամենաշատը ներմուծում են ԱՄՆ-ն, ՄԹ-ն և Սաուդյան Արաբիան: Երկրորդ ամենաիոքր տեսակարար կշիռն ունեն պահպանության և վերականգման ծառայությունները, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր արտահանման մեջ 2022 թվականին կազմել է 1,29 տոկոս: Սրանք ներառում են տարբեր տեսակի մեքենասարքավորումների պահպանության և վերականգման ծառայություններ: Վերջին տարիներին մեծ թափ է հավաքում ինքնաթիռների պահպանությունն ու վերականգնումն արտասահմանյան ընկերություններին աութսորսինգ իրականացնելը: Նման ծառայություններ ամենաշատն արտահանում են ԱՄՆ-ն, Ֆրանսիան և Գերմանիան, իսկ ամենաշատը ներմուծում են Գերմանիան, Ֆրանսիան և Ճապոնիան:



Գծապատկեր 4.4 **Ամբողջ աշխարհում արտահանված ծառայությունների ծավալները 2022 թվականին (մլն ԱՄՆ դոլար)[508]**

Երրորդ ամենափոքր տեսակարար կշիռն ունեն շինարարական ծառայությունները, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր ծառայությունների արտահանման մեջ 2022 թվականին կազմել է 1,38 տոկոս: Այս ծառայությունները ներառում են ճարտարապետական նախագծման և պլանավորման, կառուցվածքային ճարտարագիտության, նախագծերի կառավարման, շինարարության քանակական հետազոտության, շինարարության փաստաթղթավորման


[508] Internation Trade Center, World Trade Map, Services exported in the World, 2022.

և շինարարության որակի վերահսկողության աշխատանքներ: Այս ծառայությունները ամենաշատն արտահանում են Չինաստանը, Կորեայի Հանրապետությունը և Ճապոնիան, իսկ ամենաշատը ներմուծում են Չինաստանը, Ռուսաստանը և Ճապոնիան:

Հաջորդը անձնական և մշակութային ծառայություններն են, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր ծառայությունների արտահանման մեջ 2022 թվականին կազմել է 1,43 տոկոս: Դրանք ներառում են կրթական, առողջապահական և մշակութային ծառայություններ: Նման ծառայություններ ամենաշատն արտահանում են ԱՄՆ-ն, Շվեդիան և ՄԹ-ն, իսկ ամենաշատը ներմուծում են ԱՄՆ-ն, ՄԹ-ն և Գերմանիան: Արտադրական ծառայությունները նույնպես փոքր տեսակարար կշիռ ունեն ծառայությունների ընդհանուր արտահանման մեջ: 2022 թվականին դրանց արտահանման տեսակարար կշիռը կազմել է 1,83 տոկոս: Դրանք ներառում են այնպիսի արտադրական ծառայություններ, ինչպիսիք են՝ մշակում, հավաքագրում, պիտակավորում, փաթեթավորում և այլն: Այս ծառայությունները ամենաշատն արտահանում են Չինաստանը, Գերմանիան և Ֆրանսիան, իսկ ամենաշատը ներմուծում են Ֆրանսիան, Իռլանդիան և Նիդեռլանդները: Հաջորդը ապահովագրական ծառայություններն են, որոնց տեսակարար կշիռը ծառայությունները ընդհանուր արտահանման 2,46 տոկոսն է կազմել: Ապահովագրական ծառայություններ ամենաշատն արտահանում են ԱՄՆ-ն, ՄԹ-ն և Իռլանդիան, իսկ ամենաշատը ներմուծում են ԱՄՆ-ն, ԱՄԷ-ն և Չինաստանը: Մյուս տեսակը մտավոր սեփականության լիցենզավորման ծառայություններն են, որոնց տեսակարար կշիռը ծառայությունների ընդհանուր արտահանման մեջ 2022 թվականին կազմել է 6,26 տոկոս: Այս ծառայությունները ամենաշատն արտահանում են ԱՄՆ-ն Գերմանիան և Ճապոնիան, իսկ ամենաշատը ներմուծում են Իռլանդիան, ԱՄՆ-ն և Չինաստանը: Համեմատաբար ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն ֆինանսական ծառայությունները, որոնք կազմում են ընդհանուր արտահանման 8,64 տոկոսը: Ֆինանսական ծառայությունները ներառում են ֆինանսական հաշվապահություն, ֆինանսական վերահսկողություն, խորհրդատվություն և այլն: Նման ծառայություններ ամենաշատն արտահանում են ԱՄՆ-ն, ԱՄՆ-ն, ՄԹ-ն և Լյուքսեմբուրգը, իսկ ամենաշատը ներմուծում են ԱՄՆ-ն, Լյուքսեմբուրգը և Գերմանիան: Ընդհանուր արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն նաև հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայությունները, որոնց տեսակարար կշիռը ընդհանուրի 13,11 տոկոսն է կազմում: Այս ծառայությունները ներառում են հաճախորդների սպասարկման և SS ծառայություններ: Այս ծառայություններն ամենաշատն արտահանում են Իռլանդիան, Հնդկաստանը և Չինաստանը, իսկ ամենաշատը ներմուծում են ԱՄՆ-ն, Գերմանիան և Չինաստանը: Ճանապարհորդական ծառայությունները նույնպես մեծ տեսակարար կշիռ ունեն ծառայությունների ընդհանուր արտահանման մեջ. կազմում են դրա 15,42 տոկոսը: Ճանապար-

հորդական ծառայություններ ամենաշատն արտահանում են ԱՄՆ-ն, Իսպանիան և ՄԹ-ն, իսկ ամենաշատը ներմուծում են Չինաստանը, ԱՄՆ-ն և Գերմանիան: Տրանսպորտային ծառայությունները կազմում են ընդհանուր արտահանման 20,7 տոկոսը: Դրանք ներառում են ծովային, օդային, երկաթուղային և բեռնատարներով տրանսպորտային ծառայությունները, ինչպես նաև փոստային ծառայությունները: Ամենաշատն այս ծառայություններն արտահանում են Չինաստանը, Գերմանիան և Սինգապուրը, իսկ ամենաշատը ներմուծում են Չինաստանը, ԱՄՆ-ն և Գերմանիան: Ծառայությունների ընդհանուր արտահանման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն բիզնես ծառայությունները, որոնց տեսակարար կշիռը կազմում է 23,85 տոկոս: Այս ծառայությունները ներառում են բիզնես խորհրդատվություն, բիզնես հաշվապահություն, հետազոտական ծառայություններ (R&D) և այլն:

Գծապատկեր 4.5-ում ներկայացված են ամենաշատ ծառայություններ արտահանած երկրների արտահանման ծավալները 2022 թվականին:




Գծապատկեր 4.5 **Ծառայությունների արտահանման ծավալները 2022 թվականին ըստ երկրների (մլն ԱՄՆ դոլար)**[509]

Ըստ գծապատկերի տվյալների՝ 2022 թվականին ծառայություններ ամենաշատն արտահանել է ԱՄՆ-ն՝ ընդհանուր արտահանման ավելի քան 13 տոկոսը: ԱՄՆ-ին հաջորդում են ՄԹ-ն և Չինաստանը, համապատասխանաբար՝ 7 և 6 տոկոս: Հնդկաստանը 7-րդ ամենաշատ ծառայություն արտահանող երկիրն է: 2022 թվականին Հնդկաստանն արտահանել է 309.4 միլիոն դոլարի ծառայություններ, որը կազմել է ընդհանուր արտահանման 4,36 տոկոսը: Հնդկաստանը նաև ծառայությունների խոշոր ներկրող է: 2022 թվականին

[509] Internation Trade Center, World Trade Map, Services exported in the World by country, 2022.

Հնդկաստանը ներկրել է 250 միլիոն դոլարի ծառայություններ, որը կազմել է ընդհանուր արտահանման 3,5 տոկոսը[510]:

Հնդկաստանը համեմատական առավելություններ ունի պրոֆեսիոնալ ու կառավարչական խորհրդատվության և համակարգչային ծառայությունների առումով: Որոշ ծառայությունների մասով Հնդկաստանը նոր է սկսում զարգացնել իր համեմատական առավելությունները, ըստ որոնց՝ լուրջ զարգացման հնարավորություններ կան Հնդկաստանում: Դրանցից են ապահովագրական, շինարարական և հետազոտական ծառայությունները: Որոշ ծառայությունների մասով Հնդկաստանը չունի համեմատական առավելություններ, սակայն ունի ներքին պահանջարկ այդ ծառայությունների նկատմամբ: Դրանցից են ծովային և օդային տրանսպորտը, տեխնիկական, բիզնես ու այլ առևտրային ծառայություններ, կրթական, առողջապահական, ֆինանսական միջնորդության և մտավոր սեփականության լիցենզավորման ծառայությունները:



Գծապատկեր 4.6 **RSCA համաթվի արդյունքները Հայաստանի ծառայությունների ոլորտի համար 2022 թվականին**

Հասկանալու համար, թե որ ծառայությունների մասով Հնդկաստանը և Հայաստանը կարող են համագործակցել, անհրաժեշտ է ուսումնասիրել նաև Հայաստանից արտահանվող ծառայությունների համեմատական առավելությունները: Գծապատկեր 4.6-ում ներկայացված են Հայաստանից արտահանվող ծառայությունների համեմատական առավելությունները՝ հաշվարկված RSCA համաթվով RSCA համաթվով ՝ 2022 թվականին:

[510] Internation Trade Center, World Trade Map, Services imported by India, 2022.

RSCA համաթվի արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանը մի քանի ծառայությունների մասով ունի համեմատական առավելություններ: Դրանցից են ճանապարհորդական (0.85), համակարգչային (0.27), բեռնատարներով տրանսպորտային (0.75), առողջապահական (0.98), կրթական (0.57), ապահովագրական (0.65) և տեղեկատվական (0.12) ծառայությունները: Իսկ որոշ ծառայությունների մասով Հայաստանը չունի համեմատական առավելություններ, ինչպես օրինակ՝ հետազոտական (-1), փոստային (-0.91), շինարարական (-0.5), պահպանման և վերանորոգման (-0.85), մշակութային (-0.69), հեռահաղորդակցական (-0.69) և պրոֆեսիոնալ ու կառավարչական (0.97):

Այսպիսով՝ ո՞ր ծառայությունների տեսակների մասով կարող են համագործակցել Հայաստանը և Հնդկաստանը: Ինչպես արդեն նշվեց, Հնդկաստանը պահանջարկ ունի կրթական և առողջապահական ծառայությունների մասով: Այս ծառայությունների առումով համեմատական առավելություններ ունի Հայաստանը: Հետևաբար՝ սրանք այն ծառայություններն են, որոնք Հայաստանը կարող է արտահանել Հնդկաստան: Կրթական ծառայությունները որոշ չափով արդեն արտահանվում են Հայաստանից Հնդկաստան: Այսպես՝ 2022/23 թվականներին Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում է սովորել 2072 հնդիկ ուսանող, որը կազմել է Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող օտարերկրյա ուսանողների ընդհանուր թվի ավելի քանի 37 տոկոսը[511]: Այս առումով Հայաստանը և Հնդկաստանը կարող են էլ ավելի խորացնել իրենց համագործակցությունը կրթական ծառայությունների առևտրում: Առողջապահական ծառայությունների առևտուրը Հայաստանի և Հնդկաստանի միջև նույնպես զարգացման լուրջ ներուժ ունի: Հայաստանում արդեն իսկ ձևավորվել են առողջապահական որոշ ուղղություններ, որոնք զարգանալու լուրջ հիմքեր ունեն: Մասնավորապես՝ ատամնաբուժությունը, պլաստիկ վիրաբուժությունը, մազերի պատվաստումը, սիրտ-անոթային վիրահատությունները և այլն: Սրանք առողջապահական այն ուղղություններն են, որոնք արդեն արտահանվում են Հայաստանից և կարող են առողջապահական ծառայությունների առևտրի զարգացման հիմք դառնալ:

Պրոֆեսիոնալ և կառավարչական խորհրդատվության և շինարա ·ն ծառայությունների առումով Հայաստանը չունի համեմատական առ ու-թյուններ, իսկ Հնդկաստանն ունի: Հետևաբար՝ այս ծառայությունները կ ·լող են հիմք դառնալ Հնդկաստանից դեպի Հայաստան առևտրի զարգացման համար: Պրոֆեսիոնալ և կառավարչական խորհրդատվությունը վերաբերում է բիզնես գործընթացներին, տվյալների հավաքագրմանն ու վերլուծությանը, մարդային ռեսուրսների կառավարմանը և աշխատակիցների կրթությանը: Այսինքն՝ այս ծառայությունները հիմնականում վերաբերում են կազմակեր-

[511] ՀՀ ՎԿ կայքէջ, Տարեգիրք. կրթություն և մշակույթ, 2023:

պությունների աշխատանքի արդյունավետության ապահովմանը: Հնդկաստանից նշված ծառայությունների ներմուծումը հնարավորություն կտա զարգացնելու հայկական ընկերությունների կառավարչական ունակությունները, կնպաստի մարդկային կապիտալի որակի բարելավմանը, հետևաբար նաև աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Շինարարական ծառայությունները ևս կարող են արտահանվել Հնդկաստանից դեպի Հայաստան: Հայաստանում վերջին տարիներին շինարարության ոլորտը գերծանրաբեռնված է, և գոյություն ունի պահանջարկ, որը հայկական ընկերությունները չեն կարողանում կամ չեն հասցնում բավարարել: Բացի դրանից, կան բազմաթիվ պետական կապիտալ ծրագրեր, որոնք հիմնականում իրականացվում են արտասահմանյան ընկերությունների կողմից: Դրանք հիմնականում մեծ կապիտալ ծրագրերն են՝ Հյուսիս-հարավ միջպետական ճանապարհահատվածը, Վեդու ջրամբարը: Նման մեծ ծրագրերը հիմնականում պատվիրվում են արտասահմանյան ընկերություններին, և մրցույթներին կարող են մասնակցել նաև հնդկական ընկերությունները:

Կան ծառայությունների տեսակներ, որոնց մասով և՛ Հնդկաստանը, և՛ Հայաստանը ունեն համեմատական առավելություններ: Դրանցից են համակարգչային ծառայությունները, որոնք հիմնականում վերաբերում են համակարգչային ծրագրային ապահովմանը: Այս ոլորտում Հնդկաստանը դարձել է աշխարհում երկրորդ ամենաշատն արտահանող երկիրը[512]: Համակարգչային ծառայությունների ոլորտում համագործակցությունը կարող է էականորեն նպաստել ինչպես Հայաստանում այս ոլորտի զարգացմանը, այնպես էլ երկու երկրների միջև ծառայությունների առևտրաշրջանառության մեծացմանը: Մեկ այլ կարևոր ուղղություն են հետազոտական ծառայությունները: Այս ոլորտում թե՛ Հնդկաստանը, թե՛ Հայաստանը չունեն համեմատական առավելություններ, սակայն այս ծառայությունների նկատմամբ պահանջարկը մեծ է ամբողջ աշխարհում: Այդ է պատճառը, որ Հնդկաստանը, չունենալով համեմատական առավելություններ այս ծառայությունների մասով, կարողանում է արտահանել այն: Այս ծառայությունների մասով երկու երկրների միջև համագործակցությունը հնարավորություն կտա համատեղելու ուժերը՝ ոլորտը զարգացնելու համար, որը կարևոր նշանակություն ունի երկու երկրների տնտեսությունների համար:

Այսպիսով՝ գոյություն ունեն մի շարք ծառայությունների տեսակներ, որոնց մասով Հնդկաստանը և Հայաստանը կարող են ընդլայնել իրենց համագործակցության շրջանակները: Ներկայիս տեխնոլոգիական զարգացման պայմաններում կան բազմաթիվ ուղիներ և մեխանիզմներ երկու երկրների միջև համագործակցության հաստատման համար: Այսօր համագործակցության ուղիները ինչպես խոշոր, այնպես էլ փոքր և միջին ընկերություններին փոխ-

[512] Internation Trade Center, World Trade Map, Services exported by India, 2022.

համագործակցելու հնարավորություն են տալիս: Այդ ուղիները կարող են լինել ինչպես միջպետական մեծ ցուցահանդեսների և փառատոների, այնպես էլ ուղղակի ֆրիլանս (ազատագործ) կայքերի միջոցով:

Ներկայում ամբողջ աշխարհում ծառայությունների ոլորտում համագործակցության ամենատարածված մեխանիզմը աութսորսինգն է: Տնտեսագիտական շրջանակներում «աութսորսինգը» սահմանվում է որպես ռազմավարական կառավարման մոտեցում, որի միջոցով կազմակերպություններն իրենց ոչ հիմնական գործառնությունները պատվիրակում են արտաքին կազմակերպություններին, որոնք մասնագիտացած են այդ գործառնությունները իրականացնելու մեջ[513]: Ռազմավարական այս որոշումը կազմակերպությունները իրականացնում են սեփական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և ռեսուրսների օպտիմալացման համար՝ հնարավորություն ստանալով կենտրոնանալու իրենց հիմնական իրավասությունների՝ այնպիսի գործունեության վրա, որոնք նրանց մրցակցային առավելություն են տալիս շուկայում[514]:

Աութսորսինգի ստեղծման համար հիմք է հանդիսացել ընկերությունների ծախսերի կրճատման և արդյունավետության բարձրացման ցանկությունը՝ որոշ ոչ հիմնական գործառնություններ արտաքին կազմակերպություններին պատվիրելու միջոցով: Այս գործառույթները վստահելով մասնագիտացված ծառայություններ մատուցողներին՝ կազմակերպությունները կարող են օգտագործել այդ արտաքին կազմակերպությունների մասշտաբի էֆեկտը և փորձը, ինչը կարող է հանգեցնել ծախսերի խնայողության, ծառայությունների որակի բարելավման և նորարարական մոտեցումների հասանելիության, որոնք դժվար հասանելի կամ ծախսատար կլինեն, եթե կազմակերպությունը ինքնուրույն փորձի հասնել դրանց[515]:

Համաշխարհային տնտեսության ավելի լայն համատեքստում աութսորսինգը դարձել է առանցքային գործիք, որը վերափոխում է միջազգային առևտուրը և աշխատուժի բաշխումը: Այն ծառայում է որպես տնտեսական ինտեգրման կատալիզատոր՝ խթանելով աշխատանքի բաժանումը աշխարհի տարբեր ծայրերում, որը համահունչ է տարբեր տարածաշրջանների համեմատական առավելություններին[516]: Գործառնությունների այս գլոբալ վերաշխումը նպաստում է տնտեսական արդյունավետության բարձրացմ ապտիմալացնելով ռեսուրսների բաշխումը համաշխարհային մասշտաբ

[513] Franceschini F., Galetto M., Pignatelli A., Varetto M., Outsourcing: guidelines for a structured approach, Benchmarking: An International Journal, Vol. 6(1), 2003.
[514] Ben L. Kedia, Somnath Lahiri, International outsourcing of services: A partnership model, Journal of International Management N13, 2007.
[515] Edvardsson I. R., Durst S., Oskarsson G. K., Strategic outsourcing in SMEs, Journal of Small Business and Enterprise Development, Vol. 1(1), 2019.
[516] Lee R. P., Kim D., Implications of service processes outsourcing on firm value, Industrial Marketing Management, Vol. 39, 2010.

Ներկայումս համաշխարհային տնտեսությունում բազմաթիվ կազմակերպություններ աութսորսինգի ավանդական մոտեցումներից անցում են կատարում ռազմավարական աութսորսինգի մոդելներին: Եթե ավանդական աութսորսինգի ժամանակ կազմակերպությունները ուղղակի որևէ ոչ հիմնական գործառույթ պատվիրակում էին արտաքին կազմակերպությանը, ապա ռազմավարական աութսորսինգի մոդելների դեպքում կազմակերպությունները արտաքին գործընկերներին ավելի խորն են ինտեգրում իրենց արժեքային շղթաների մեջ, որի միջոցով ավելացնում են նորարարություններ ներգրավելու իրենց հնարավորությունները, շուկայական փոփոխություններին արագ արձագանքելու ունակությունները և հնարավորություն են ստանում կենտրոնանալու հիմնական գործառույթների վրա[517]:

Ռազմավարական աութսորսինգի մոդելներին անցումն ընդգծում է աութսորսինգի՝ որպես կազմակերպությունների ռազմավարական լծակի վերափոխումը, այլ ոչ թե դրա՝ որպես զուտ ծախսերի կրճատման միջոցի օգտագործումը: Այս փաստը ցույց է տալիս, որ մրցակցային առավելությունը համաշխարհային շուկայում ավելի ու ավելի է կախված կազմակերպության ներքին և արտաքին կազմակերպչական կարողություններից[518]: Հետևաբար՝ աութսորսինգ իրականացնելու որոշման վրա մեծապես ազդում են ռազմավարական մոտեցումները, ներառյալ նոր տեխնոլոգիաներ գործադրելու, նոր շուկաներ մուտք գործելու և մրցակցային ճնշումներին դինամիկ արձագանքելու անհրաժեշտությունը:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ կազմակերպությունների կողմից աութսորսինգ իրականացնելու որոշման վրա կարող են ազդել մի շարք գործոններ: Դրանք են՝

- **Ծախսերի արդյունավետություն:** Աութսորսինգի որոշումները էականորեն պայմանավորված են ծախսերի արդյունավետության ապահովման ձգտմամբ: Ընկերությունները ջանում են օգտագործել արտաքին ծառայություններ մատուցողների մասնագիտացված հմտությունները՝ հասնելու մասշտաբի էֆեկտին և օգուտ քաղելու ծախսային առավելություններից, որոնք հասանելի չեն լինի, եթե կազմակերպություններն իրենք իրականացնեն այդ ծառայությունները: Սա հատկապես կարևոր է ոչ հիմնական գործունեության համար, որտեղ արտաքին մատակարարները կարող են ավելի արդյունավետ ծառայություններ առաջարկել՝ շնորհիվ մասնագիտացված հմտությունների, տեխնոլոգիայի կամ ցածր աշխատուժի ծախսերի[519]:

[517] Merino F., Rodriguez D., Business services outsourcing by manufacturing firms, Industrial and Corporate Change, Vol. 16(6), 2007.
[518] Zitkienė R., Dude U., The impact of outsourcing implementation on service companies, Entrepreneurship and Sustainability Issues, 6 (1), 2018.
[519] Franceschini F., Galetto M., Pignatelli A., Varetto M., Outsourcing: guidelines for a structured approach, Benchmarking: An International Journal, Vol. 6(1), 2003.

- **Կազմակերպության չափերը և աշխատավարձային ճնշումները:** Փոքր ընկերությունները կարող են գտնել աութսորսինգի ավելի նպաստավոր տարբերակ՝ ծախսերի արդյունավետության առումով: Ընդհակառակը՝ ավելի մեծ ընկերությունները երբեմն կարող են ինքնուրույն իրականացնել ծառայությունների մատուցումը մասշտաբային առավելությունների շնորհիվ: Ավելի բարձր աշխատավարձի հավելավճարներ ունեցող ընկերությունները կարող են ընտրել աութսորսինգ՝ նվազեցնելու աշխատուժի ծախսերի ճնշումը, հատկապես ավելի ցածր մասնագիտացում պահանջող առաջադրանքների համար[520]:
- **Կազմակերպությունների ռազմավարական մոտեցումները:** Կազմակերպության ռազմավարական մոտեցումները գործունեության մի շարք հարցերի շուրջ կարող են ազդել աութսորսինգ իրականացնելու որոշման վրա: Այդպիսի հարցերից կարող են լինել հիմնական և ոչ հիմնական գործառնությունների վրա կենտրոնացման աստիճանը, ռազմավարական առաջնահերթությունները և կազմակերպչական կառուցվածքը[521]:
- **Շուկայի պահանջների փոփոխություններին արձագանքելը և հարմարվողականությունը:** Ընկերությունները կարող են օգտագործել աութսորսինգը որպես ռազմավարություն՝ մեծացնելու ճկունությունը և արձագանքելու շուկայի փոփոխություններին: Աութսորսինգի միջոցով որոշ գործառույթների իրականացումը ընկերություններին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու պահանջարկի տատանումներին՝ օպտիմալացնելով ռեսուրսների օգտագործումը և նվազեցնելով պահանջարկի անկայունության հետ կապված ռիսկերը[522]:

Բացի վերոնշյալ գործոններից, աութսորսինգ իրականացնելու որոշում կայացնելուն նպաստում է նաև կազմակերպության հարևանությամբ համապատասխան ծառայություններ մատուցող ընկերությունների առկայությունը[523], քանի որ աութսորսինգ արվող մի շարք գործառնություններ պահանջում են ծառայություն իրականացնողի ֆիզիկական ներկայությունը: Սակայն գոյությունն ունեն նաև այնպիսի ծառայություններ, որոնց դեպքում ֆիզիկական ներկայություն չի պահանջվում: Նման դեպքերում հիմնականում օգ ւնի արտասահմանյան ընկերությունների ծառայություններից: Կան մ ւնի հատկանիշներ, որոնց առկայություն դեպքում տվյալ գործառույթը հնարավոր

520 Merino F., Rodriguez D., Business services outsourcing by manufacturing firms, Industrial and Corporate Change, Vol. 16(6), 2007.

521 Edvardsson I. R., Durst S., Oskarsson G. K., Strategic outsourcing in SMEs, Journal of Small Business and Enterprise Development, Vol. 1(1), 2019.

522 Kedia Ben L., Lahiri S., International outsourcing of services: A partnership model, Journal of International Management N13, 2007.

523 Liu R., Feils D. J., Scholnick B., Why are different services outsourced to different countries? Journal of International Business Studies , Vol. 42, 2011.

է լինում պատվիրակել արտասահմանյան ընկերությանը: Երբ որևէ գործառույթ իրականացնելու եղանակները սովորական են և հաստատուն, ավելի հեշտ է լինում որոշակի պայմանագրային կետերի միջոցով սահմանելը, որը հեշտացնում է ինչպես արտասահմանյան ընկերությանը գործառույթի իրականացման ձևը բացատրելը, այնպես էլ այդ գործառույթի իրականացման վրա վերահսկողություն սահմանելը[524]: Մեկ այլ կարևոր հատկանիշ է նաև գործառույթի բարդության աստիճանը: Բարդ գործառույթներն ավելի դժվար է աութսորսինգ իրականացնել արտերկրում, քանի որ դրանք հաճախ պարունակում են լռելյայն տեղեկատվություն, որը դժվար է կոդավորել և հստակեցնել պայմանագրով, ինչը հանգեցնում է գործարքների ավելի բարձր ծախսերի[525]: Մյուս հատկանիշը, որն ազդում է գործառույթի աութսորսինգն արտերկրում իրականացնելու որոշման վրա, փոխգործակցության անհրաժեշտությունն է: Երբ գործառույթը պահանջում է բազմաբնույթ փոխհարաբերություններ ծառայություններ մատուցողի և հաճախորդի միջև, մեծանում է գործարքային ծախսերի հավանականությունը հնարավոր թյուրիմացությունների պատճառով: Հետևաբար՝ նման գործառույթների աութսորսինգ ավելի քիչ է իրականացվում արտասահմանում:

Իսկ ի՞նչ սկզբունքով են ընկերությունները որոշում, թե իրենց գործառույթները ո՛ր երկրներն աութսորսինգ իրականացնեն: Կան մի քանի գործոններ, որոնք մեծապես ավելացնում են ծառայություններ արտահանելու երկրի մրցակցային առավելությունները: Այդպիսի գործոններից են աշխատուժի վրա կատարվող ցածր ծախսերը: Այն երկրները, որտեղ աշխատավարձերի մակարդակն ավելի ցածր է, ավելի նպաստավոր են համարվում աութսորսինգ իրականացնելու համար[526]: Այդպիսի երկրներից են Հնդկաստանը, Պակիստանը և Չինաստանը, որտեղ կան բազմաթիվ որակավորված մասնագետներ, որոնք պահանջում են համեմատաբար ցածր աշխատավարձ որևէ ծառայություն իրականացնելու համար, քան արևմտյան զարգացած երկրներում: Մեկ այլ կարևոր գործոն է տվյալ երկրի տնտեսական քաղաքականությունը: Մի շարք երկրներում վարվող հարկային քաղաքականությունը ավելի մեղմ է մյուս երկրների համեմատությամբ, որը թույլ է տալիս տվյալ երկրում գործող ընկերություններին ավելի ցածր գին առաջարկել շուկայում: Սա հնարավորություն է տալիս մրցակցային առավելություններ ստանալու տվյալ ծառայությունների մատուցման համաշխարհային շուկայում: Մեկ այլ կարևոր գործոն է բնակչության կրթական մակարդակը: Երբ բնակչության շրջանում մեծ է լինում որևէ ծառայության մատուցող որակավորված մասնագետների թիվը,

524 Zitkienė R., Dude U., The impact of outsourcing implementation on service companies, Entrepreneurship and Sustainability Issues, 6 (1), 2018.

525 Edvardsson I. R., Durst S., Oskarsson G. K., Strategic outsourcing in SMEs, Journal of Small Business and Enterprise Development, Vol. 1(1), 2019.

526 Andersson F., Jordahl H., Josephson J., Outsourcing Public Services: Contractibility, Cost, and Quality, CESifo Economic Studies, 2019.

տվյալ երկիրը համեմատական առավելություն է ունենում այդ ծառայությունը համաշխարհային շուկա արտահանելու համար: Կարևոր գործոն է նաև երկրի ինստիտուցիոն զարգացվածության աստիճանը: Երբ որևէ երկրում ինստիտուտները զարգացած են լինում, ծառայությունների աութսորսինգ իրականացնելու գործարքային ծախսերը նվազում են՝ ի հաշիվ անորոշության նվազման: Հետևաբար՝ այդ երկրները ավելի նպաստավոր են համարվում ծառայությունների աութսորսինգ իրականացնելու համար: Որոշ տնտեսագետներ համոզված են, որ մշակութային նմանությունները նույնպես ազդում են աութսորսինգ իրականացնելու որոշման վրա: Աութսորսինգ իրականացնելու հավանականությունն ավելի մեծ է լինում այն երկրների միջև, որոնց մշակույթները միմյանց մոտ են: Մշակութային նմանությունները նվազեցնում են հնարավոր թյուրիմացությունների հավանականությունը, մեծանում է վստահությունը, բարելավվում է հաղորդակցությունը երկու կազմակերպությունների միջև[527]:

Ամփոփելով կարելի է նշել, որ Հայաստանի և Հնդկաստանի միջև ծառայությունների ոլորտում համագործակցությունն ունի զարգացման լուրջ հիմքեր, և երկու երկրների միջև շարունակական աշխատանքի շնորհիվ հնարավոր կլինի էլ ավելի մեծացնել ծառայությունների ոլորտում առևտրաշրջանառությունը:

4.5 Գիտության, կրթության և մշակույթի ոլորտներում համագործակցության հեռանկարները

Հայերը Հնդկաստան են մտել հիմնականում Իրանից, այն էլ գլխավորապես Նոր Ջուղա քաղաքից: Նրանք Իրանի Նոր Ջուղա քաղաքում բնակություն էին հաստատել Շահ Աբասի օրոք, երբ 1604 թվականին տեղահան արվեցին Հին Ջուղայից և Պարսկաստանի խորքերը քշվեցին: Հնդկաստանում հայերը շատ շուտով աչքի ընկան: Նրանք առաջին հերթին սկսեցին դպրոցներ կառուցել, եկեղեցիներ հիմնել, թերթեր հրատարակել, գրքեր տ[illegible] ժամանակի ընթացքում հայերը լայն մասնակցություն ցուցաբերեցին [illegible]աստանի տնտեսական կյանքի շատ ոլորտներում: Երկար ժամանակ [illegible]անք հնդիկներին օգնում էին անգլիական գաղութարարների դեմ պայքարում: Մի շարք հայ զորավարներ (օրինակ՝ Գորգին խանը) գլխավորեցին անգլիացիների դեմ մղվող հնդկական պայքարը: Հայկական առաջին գաղութը ստեղծվեց Աքբարի մայրաքաղաք Ագրայում: Դրանից հետո հայկական համայնքներ ձևավորվեցին Հնդկաստանի տարբեր կենտրոններում՝ Սուրաթում, Լահորում, Դելիում, Հայդարաբադում, Բոմբեյում, Մադրասում, Կալկաթայում, Սահդարադում, Չինապուրում, Դաքայում և այլ տեղերում:

[527] Նույն տեղում:

Հնդկաստանում հաստատված հայերը լավ արհեստավորներ էին, հատկապես ոսկերիչներ և գոհարեղենի հմուտ մշակողներ: Հնդկական համեմունքների, կերպասի, քաշմիրի շալի արտահանումը Հնդկաստանից Եվրոպա մեծ մասամբ կատարվում էր հայերի միջոցով: Հայերը զգալի դեր խաղացին նաև շելլակի, ինդիգոյի և ջութի մշակման ու արտահանման գործում:

Հնդկաստանի հայ գաղութը 18-րդ դարում տնտեսապես ամենից զորեղը դարձավ և աշխարհի հայ գաղութների մեջ առաջնակարգ տեղ գրավեց: Հետագայում հայ տարրը այստեղից անցավ նաև Հարավարևելյան Ասիայի երկրներ՝ Սինգապուր, Սուրաբայա (Ջավա) և այլն:

Հնդկահայ գաղութները աշխարհագրական տեսակետից կարելի է բաժանել չորս խմբի: Դրանք են՝ հյուսիսային, արևմտյան, արևելյան և հարավային: Ագրան և Լաքնաուն եղել են հյուսիսում, Սուրաթը և Բոմբեյը՝ արևմուտքում, Սահդաբաղը, Չիչրան և Կալկաթան՝ արևելքում, իսկ Մադրասը՝ հարավում:

Հնդկական հողում, ամենից շատ երկու քաղաքում՝ Մադրասում և Կալկաթայում, հայերը կարողացան ամուր դիրք գրավել: Իսկ ամենից նշանավորը՝ իր անցյալով, եղավ Մադրասը: Նրա պատմությունը հայ ժողովրդի տարեգրության կարևոր էջերից է:

Հնդկաստանի տարբեր քաղաքներում, տարբեր ժամանակներում տպագրվել են տասից ավելի ամսագրեր և պարբերականներ, որոնցից են՝ «Ազդարար» (1794 թ., Մադրաս), «Հայելի» (1820 թ., Կալկաթա), «Շտեմարան» (1822 թ., Կալկաթա), «Ազգասեր» (1845 թ., Կալկաթա), «Ազգասեր Արարատյան» (1848 թ., Կալկաթա), «Ուսումնասեր» (1849 թ., Սինգապուր), «Եղբայրասեր» (1862 թ., Կալկաթա)[528]:

Այժմ Բենգալյան նահանգում կան հինգ հայկական կանգուն եկեղեցիներ, որոնցից երեքը գտնվում են քիչ թե շատ հայաշունչ Կալկաթա քաղաքում: Դրանց մեջ է նաև Կալկաթայի ամենահին քրիստոնեական՝ 300-ամյա Ս. Նազարեթ եկեղեցին՝ 190-ամյա Հայոց մարդասիրական ճեմարանով և փոքրագույն հայությամբ: Այսօր Հնդկաստանի տարածքում, հատկապես Կալկաթայում, բացի եկեղեցիներից և Մարդասիրական ճեմարանից, հայապատկան այլ կառույցներ կամ տարածքներ գրեթե չեն պահպանվել, կան մի քանի առանձին շինություններ, գերեզմանատներ, մարզական ակումբ և այլն:

Եկեղեցիներից շատերն այսօր վերանորոգված են, գործում և գտնվում են բարվոք վիճակում: Կան նաև եկեղեցիներ, որոնց գտնվելու կամ դրության մասին մանրամասն տեղեկություններ չեն պահպանվել: Ստորև ներկայացված են Հնդկաստանի տարածքում այսօրվա առավել հայտնի և գործող եկեղեցիները.

1. Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցի (1707 թ.),
2. Կալկաթայի Ս. Գրիգոր եկեղեցի (1906 թ.),

[528] Ավետիսյան Կ.Մ., Ավետիսյան Ա.Ա., Հայրենագիտական էսյուդներ: «Սովետական գրող» հրատ., Եր., 1979, http://armenianhouse.org/avetisyan/india.html

3. Տինգրայի Ս. Երրորդություն եկեղեցի (1867 թ.),
4. Չինսուրայի Ս. Հովհաննես եկեղեցի (1695 թ.),
5. Սեյդաբադի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցի (1758 թ.),
6. Բոմբեյի Ս. Պետրոս եկեղեցի (1796 թ.),
7. Մադրասի Ս. Աստվածածին եկեղեցի (1712 թ.):

Երբեմնի հայաշատ գաղութն այսօր գրեթե հայազրկվել է, տեղաբնակ հայության թիվն այսօր Հնդկաստանում 150–200 է, մեծ մասը մեծահասակներ են, բազմաթիվ են խառն ամուսնությունները, ցավոք, շատ քչերն են տիրապետում մայրենի լեզվին: Ի տարբերություն անցյալի՝ այսօր Հնդկաստանի հայությունը առանձնապես աչքի չի ընկնում իր նշանավոր, հայտնի անձանցով:

18-րդ դարի ընթացքում հնդկահայ գաղթօջախում ազգային ինքնագիտակցությունը զարթոնք է ապրել: 1794 թ. տպագրվում է հայկական առաջին տպագիր թերթը՝ «Ազդարարը»: Գրեթե նույն ժամանակահատվածում ի հայտ է գալիս Հակոբ Շահամիրյանի «Որոգայթ փառացը», որն ուրվագծում է անկախ հայոց պետության ապագա Սահմանադրությունը՝ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ դնելով «Սահմանադրական հանրապետություն» հասկացությունը:

Տարաբնույթ հասարակական և տնտեսական հանգամանքներով պայմանավորված՝ Մեծ Բրիտանիայի կողմից Հնդկաստանի գաղութացմանը զուգահեռ, հնդկահայ գաղութն անկում է ապրում 19-րդ դարի ընթացքում:

Ներկայումս Կալկաթայում և Չեննայում կան հայկական փողոցներ: 2009 թ. սեպտեմբերին Նյու Դելիում բացվել է Հայաստանի փողոցը[529]:

Հայաստանի Հանրապետությունը մեծապես կարևորում է Հնդկաստանի Հանրապետության հետ բարեկամական ու փոխշահավետ կապերի ամրապնդումն ու համագործակցային նոր հարաբերությունների կայացումը:

Հայաստանի և Հնդկաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1992 թ. օգոստոսի 31-ին: Այս տարիների ընթացքում կնքվել են կրթության, գիտության, մշակույթի ոլորտներին վերաբերող հետևյալ համաձայնագրերը.

- ՀՀ և Հնդկաստանի կառավարությունների միջև մշակույթի, ս ւտի, կրթության, տուրիզմի, սպորտի և զանգվածային լրատվությա ջոց- ների բնագավառներում համագործակցության վերաբերյալ ... դեկտեմբերի 1995 թ.):
- ՀՀ և Հնդկաստանի կառավարությունների միջև առևտրային, տնտեսական, գիտական, տեխնոլոգիական, կրթական և մշակութային բնագավառներում համագործակցության միջկառավարական հանձնաժողովի ստեղծման մասին (26 հուլիսի 2001 թ.):

Իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- Հայաստանի Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության

[529] Հնդկաստանի հայ համայնք, https://india.mfa.am/hy/community-overview/

կառավարությունների միջև գիտության և տեխնոլոգիաների բնագավառում 2003–2005 թթ. համագործակցության մասին (3 հոկտեմբերի 2002 թ.):

- ՀՀ և Հնդկաստանի կառավարությունների միջև կրթության ոլորտում համագործակցության փոխանակման ծրագիր (3 հոկտեմբերի, 2002 թ.):
- Հայաստանի Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության կառավարությունների միջև մշակույթի, արվեստի, գրահրատարակչության և սպորտի բնագավառներում 2003–2006 թթ. փոխանակման ծրագիր (22 մայիսի 2003 թ.):
- ՀՀ և Հնդկաստանի մշակույթի նախարարությունների միջև 2011–2012 թթ. մշակութային ոլորտում համագործակցության մասին (11 նոյեմբերի 2010 թ.):
- ՀՀ և Հնդկաստանի կառավարությունների միջև գիտության և տեխնոլոգիայի բնագավառներում 2012–2015 թթ. համագործակցության մասին (1 նոյեմբերի 2011 թ.):
- Հայաստանի և Հնդկաստանի մշակույթի նախարարությունների միջև 2017–2020 թթ. մշակութային համագործակցության մասին գործնական ծրագիր (25 ապրիլ 2017 թ.)[530]:

2022 թ. ապրիլի 1-ին *«Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի է ունեցել «Ռասամանջարի» (թարգմանաբար՝ «Ծաղկունք») խորագրով միջոցառումը՝ նվիրված Հնդկաստանի անկախության 75-ամյակին, Հայաստանի և Հնդկաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին և «Հայ-հնդկական բարեկամություն» ՀԿ հիմնադրման 10-ամյակին:*

«Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հնդկաստանի Հանրապետության մշակույթի նախարարության միջև 2021–2024 թթ. մշակութային համագործակցության մասին» ծրագրով ընդգծվում են անհրաժեշտ քայլերը և նշվում, որ երկու երկրների միջև հարաբերությունները զարգացման մեծ ներուժ ունեն[531]:

«Հնդկա-հայկական բարեկամություն» ՀԿ-ն (INDO-ARMENIAN FRIENDSHIP) շահույթ չհետապնդող, անկուսակցական, ոչ կառավարական կազմակերպություն է՝ պաշտոնապես գրանցված Հայաստանում, որը պարտավորվում է ուղենշել Հնդկաստան-Հայաստան հարաբերությունները աշխարհի քարտեզում՝ միաժամանակ հանդես գալով որպես Հնդկաստանի և Հայաստանի միջև կապող «Կամուրջ»՝ խթանելու մարդկանց միջև հարաբերությունները, ամրապնդելու մշակութային, սոցիալ-տնտեսական կապերը և առևտրային ներգրավվածությունը՝ հանուն բարգավաճ ապագայի՝ երկկողմ ներգրավվածության մեծ շեշտադրմամբ[532]:

[530] Երկկողմ հարաբերություններ, Հնդկաստան, https://www.mfa.am/hy/bilateral-relations/in
[531] «Գիտության, կրթության ու մշակույթի բնագավառներում հայ-հնդկական հարաբերությունները զարգացման մեծ ներուժ ունեն». Արթուր Մարտիրոսյան, https://escs.am/am/news/12043
[532] *About IAF, https://www.india-armenia.com/about-us*

Հայ-հնդկական հարաբերությունները բժշկագիտության ոլորտում 35 տարվա պատմություն ունեն: Այսօր ԵՊԲՀ-ում 33 երկրից 2000 ուսանող է բժշկական կրթություն ստանում: Նրանց մեծ մասը Հնդկաստանից է: 2022 թ. բժշկական բուհում բացվեց Հնդկաստանի ազգային առաջնորդ, անվանի պետական, քաղաքական, ազգային-ազատագրական գործիչ Մահաթմա Գանդիի անունը կրող լսարան, որը վերանորոգվել է Հայաստանում Հնդկաստանի դեսպանատան ֆինանսական աջակցությամբ[533]:

Հնդիկ ուսանողների թիվը ՀՀ-ում 2022–2023 ուսումնական տարում 2072 է:

Աղյուսակ 4.9

Հնդիկ ուսանողների թվաքանակը ՀՀ-ում[534]

	2019/2020	2020/2021	2021/2022	2022/2023
Օտարերկրյա ուսանողների թվաքանակը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում (առաջին աստիճան)	4923	5896	5681	5586
Այդ թվում՝ Հնդկաստանից	1568	2123	2006	2072

Ուսանողների մեծ մասը սովորում է բժշկական համալսարանում:

Վերջին տարիներին աճել է նաև Հնդկաստանից Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը:

Աղյուսակ 4.10

Հնդկաստանից զբոսաշրջային այցելությունները ՀՀ, 2020–2023 թթ.[535]

	2020	2021	2022	2023
Ներգնա զբոսաշրջիկներ	360338	870308	1665658	2316666
Այդ թվում՝ Հնդկաստանից	2920	17980	18194	34687

Չնայած զբոսաշրջիկների թվաքանակի ավելացմանը, այնուամենայնիվ, բացարձակ թվով այդ ցուցանիշը դեռ շատ փոքր է՝ հաշվի առնելով Հնդկաստանի բնակչության թիվը:

Հիմք ընդունելով Հայաստանի և Հնդկաստանի վաղեմի բարեկամական կապերը և համագործակցության խոր արմատները՝ կարող ենք փաստել, որ հնարավոր է ընդլայնել համագործակցությունը տարբեր ոլորտներում, այդ թվում՝ գիտության, կրթության, մշակույթի, զբոսաշրջության: Նշված ոլորտներում համագործակցության հետագա ընդլայնման նպատակով կարելի է իրականացնել հետևյալ քայլերը.

533 ԵՊԲՀ-ն տարածաշրջանում ամենալավ բժշկական հաստատություններից է. Հնդկաստանի արտաքին գործերի նախարարության Արևմտյան ուղղության քարտուղար, https://ysmu.am/norutyunner/epbh-n-taratsashrjanum-amenalav-bzhshka/

534 Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2023, էջ 183, https://armstat.am/file/doc/99541063.pdf

535 ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-դեկտեմբերին, https://armstat.am/file/article/sv_12_21a_421.pdf,
ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-դեկտեմբերին, https://armstat.am/file/article/sv_12_23a_421.pdf

- կրթական համատեղ ծրագրերի իրականացում բժշկության և այլ ոլորտներում,
- գիտության և տեխնոլոգիայի ոլորտում համատեղ ծրագրերի և գիտահետազոտական նախագծերի իրականացում,
- ժամանակակից գիտական թեմաներով համատեղ գիտաժողովների, սեմինարների և աշխատաժողովների անցկացում,
- գիտական կադրերի և ուսանողների փոխանակում համատեղ հետազոտական նախագծերի վրա աշխատելու համար,
- մշակութային համատեղ միջոցառումների կազմակերպում, ներառյալ՝ ցուցահանդեսներ, համերգներ, փառատոներ և մշակութային այլ ծրագրեր,
- մշակութային համատեղ փառատոնի անցկացում ՀՀ-ում՝ ցուցադրելու երկու երկրների մշակութային հարուստ ժառանգությունը՝ հնդիկ զբոսաշրջիկների ներգրավման նպատակով,
- հնդկական և հայկական ֆիլմերի ցուցադրություն երկու երկրներում և համագործակցություն կինոարտադրության ոլորտում,
- զբոսաշրջային երթուղիների մշակում հնդիկների համար:

Այսպիսով՝ Հայաստանի և Հնդկաստանի միջև մշակույթի, գիտության, կրթության և զբոսաշրջության ոլորտներում համագործակցության հեռանկարները շատ են: Մշակույթի ոլորտում փորձի փոխանակումը և համատեղ միջոցառումների կազմակերպումը, ինչպիսիք են փառատոները, ցուցահանդեսները և համերգները, կօգնեն ամրապնդել ժողովուրդների միջև փոխըմբռնումը: Գիտության և կրթության ոլորտում համատեղ հետազոտական նախագծերը կարող են նպաստել գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանակմանը: Զբոսաշրջության ոլորտում համատեղ մարքեթինգային և գովազդային արշավները, ինչպես նաև զբոսաշրջային երթուղիների և ծրագրերի մշակումը ավելի շատ հնդիկ զբոսաշրջիկների կգրավի՝ նպաստելով փոխըմբռնմանը և մշակութային փոխանակմանը:

4.6 Հնդկաստանի հետ համագործակցությունը բարձր տեխնոլոգիաների ոլորտում

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանի և Հնդկաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են դեռևս 1992 թ.: Մինչ օրս կնքվել են մի շարք համաձայնագրեր և հուշագրեր՝ առևտրատնտեսական, գիտատեխնիկական, կրթության, մշակույթի և այլ ոլորտներում համագործակցության վերաբերյալ, ինչպես նաև իրականացվել են բազմաթիվ ծրագրեր: Հատկապես բարձր տեխնոլոգիաների ոլորտում հայ-հնդկական համագործակցությունն ունի զարգացման մեծ ներուժ: Դեռևս 1994 թ. Հայաստանի և

Հնդկաստանի միջև գիտատեխնիկական համագործակցության, 2001 թ.՝ առևտրային, տնտեսական, գիտական, տեխնոլոգիական, կրթական և մշակութային բնագավառներում համաձայնագրեր են ստորագրվել, 2003 թ. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության (ներկայիս Էկոնոմիկայի նախարարություն) և Հնդկաստանի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության միջև տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայությունների բնագավառում համագործակցության մասին հուշագիր է ստորագրվել[536]: Սակայն մինչև 2009 թ.՝ Հայ-հնդկական տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն հիմնելու մասին հուշագրի կնքումը, որևէ այլ շոշափելի, գործնական ձեռքբերում չի արձանագրվել: Վերջինս Հայաստանի և Հնդկաստանի կառավարությունների համատեղ ծրագիրն է, որն իրականացվում է «Զեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (Հայաստան) և C-DAC կենտրոնի (Հնդկաստան) կողմից: Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնի հիմնական գործունեությունն է SS ոլորտի դասընթացների կազմակերպումը տարբեր թիրախային խմբերի՝ ուսանողների, դասախոսների, մասնագետների և ցանկացած այլ անձանց համար, ովքեր ցանկանում են մասնակցել դրանց: Ուսումնական գործունեության հետ մեկտեղ կենտրոնն իրականացնում է նաև արդի գիտահետազոտական աշխատանքներ համապատասխան ծրագրային ապահովման սարքավորումներով (ներառյալ՝ ՊԱՐԱՄ գերհամակարգիչ) զինված լաբորատորիայում, բարձր արտադրողականության հաշվողական տեխնոլոգիայով (ԲԱՀՏ) հետազոտություններ, տրամադրում է դասընթացների նյութեր և ուսումնական գրքեր. կենտրոնում առկա է SS ոլորտի 6000 գրքից բաղկացած գրադարան[537]:

2011 թ. նոյեմբերին կազմվել է ՀՀ և Հնդկաստանի կառավարությունների միջև գիտության և տեխնոլոգիայի բնագավառներում 2012–2015 թթ. համագործակցության մասին ծրագիրը: Այնուհետև իրականացվել են հայ-հնդկական գործարար ֆորումներ: 2019 թ. այդպիսի մի ֆորումի շրջանակներում Հնդկաստանի առևտրատնտեսական կազմակերպության և Զեռնարկ ն-ների ինկուբատոր հիմնադրամի միջև կնքվել են հուշագրեր՝ ուղղվա ս-նոլոգիական ոլորտում երկու երկրների միջև համագործակցության ն-մանը: Մասնավորապես՝ կնքվել է հուշագիր Բարաթիյա ինժեներական, գիտական և տեխնոլոգիական նորարական համալսարանի հետ, որի շրջանակում նախատեսվել է համագործակցություն թվային և տեխնոլոգիական ոլորտում, ինչպես նաև գիտակրթական ծրագրերի փոխանակման կազմակերպում: Մեկ այլ հուշագիր է կնքվել Հնդկաստանի AUTO ELECTRIC MOBILITY PVT LTD կազմակերպության հետ, որի շրջանակում նախատեսվել է կրթական փոխանակման ծրագրերի, սիմպոզիումների իրականացում: Նախատեսվել է նաև, որ Հնդկաստանում ստեղծվող էլեկտրական տրանսպորտային միջոցների հետազոտական ծրագրերը Զեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի աջակցությամբ անցկացվեն Ինժեներական քաղաքում, ինչի արդյունքում պետք է զարկ տրվի առանց վարորդի էլեկտրական մեքենաների ստեղծման ուղղությամբ համատեղ աշխատանքներին[538]:

Ոլորտում երկկողմ համագործակցության վերաբերյալ մեկ այլ հուշագիր՝ «Թվային փոխակերպումների համար բնակչության մասշտաբով իրականացված հաջող թվային լուծումների փոխադարձ տրամադրման ոլորտում համագործակցության մասին», ստորագրվել է 2023 թ.՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Հնդկաստանի էլեկտրոնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիայի նախարարության միջև: Հաշվի առնելով նախորդ գլխում նկարագրված՝ Հնդկաստանի մասշտաբային թվայնացման հաջողված փորձը և Հայաստանի թվայնացման ռազմավարությունից բխող ծրագրերը, կարող ենք պնդել, որ փորձի փոխանակումը երկուստեք օգտակար կլինի:

Հնդկաստանում Հայաստանի դեսպան Նիլակշի Սահա Սինհայի գնահատմամբ SS և բարձր տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության հեռանկարներ կան: Հղում անելով այն համաձայնագրին, որը 2021 թվականին ստորագրվել է Ներդրումների աջակցման կենտրոնի («Enterprise Armenia») և «Invest India»–ի միջև, դեսպանը մատնանշել է Հայաստանի ենթակառուցվածքների զարգացման մեջ հնդկական ներդրումների անհրաժեշտությունը[539]:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտի հնդկական Zen Technologies ընկերությունը, որն անօդաչու սարքերի համար ՀՕՊ համակարգեր է արտադրում, 2023 թ. հայտարարել էր Հայաստանում ներկայացուցչություն կամ մասնաճյուղ բացելու մտադրության մասին: Մասնավորապես՝ ընկերության խորհրդի արձանագրության մեջ նշվում է. «Հայաստանում ներկայացուցչության/մասնաճյուղի ստեղծում՝ այդ երկրում բիզնեսի հեռանկարները/հնարավորությունն օգտագործելու համար, ներառյալ վաճառքը, աջակցությունը և սպասարկումը»[540]: Հայաստանում ընկերության մասնաճյուղի բացումը ոչ միայն հնարավորություն կտա ՀՀ պաշտպանության համար ձեռք բերելու անօդաչուների դեմ պայքարող ՀՕՊ համակարգեր, այլև տեխնոլոգիաների փոխանցման և ոլորտում նոր աշխատատեղերի ձևավորման հնարավորություն կստեղծի:

536 Հնդկաստանում Հայաստանի դեսպանության կայքէջ, https://india.mfa.am/hy/bilateral-in/
537 Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոն, https://www.armindia.am/arm/home/about-aitc/
538 Հայաստանն ու Հնդկաստանը կխորացնեն հարաբերությունները տեխնոլոգիական ոլորտում, https://hetq.am/hy/article/108963
539 Հայաստանն ու Հնդկաստանն աշխատում են ուղիղ ավիահաղորդակցություն բացելու ուղղությամբ, https://arm.sputniknews.ru/20230508/hajastann-u-hndkastann-ashkhatum-en-ughigh-aviahaghvordakcutjun-bacelu-ughghutjamb-despan-59322867.html
540 Zen Technologies ընկերության 2023 թ. հոկտեմբերի 28-ի խորհրդի նիստի արձանագրություն, https://www.zentechnologies.com/assets/uploads/files/outcome-of-the-board-meeting-held-on-28-october-2023.pdf

Հնդկաստանը հավակնություններ ունի դառնալու կիսահաղորդչային չիպերի առաջատար արտադրող: Հաշվի առնելով էլեկտրական մեքենաների աճող տարածվածությունն ու արտադրությունը Հնդկաստանում՝ կանխատեսվում է, որ կիսահաղորդիչների օգտագործումը անվտանգության, էլեկտրաֆիկացման, հաղորդակցման և ցանցային ոլորտներում կաճի: 2024 թ. միացյալ միջանկյալ բյուջեում Հնդկաստանը 130%-ով ավելացրել է կիսահաղորդչային արտադրության աջակցության ծրագրի բյուջեն՝ հասցնելով այն 690.3 միլիոն ռուփիի (83.28 միլիոն ԱՄՆ դոլար): Հնդկաստանի կիսահաղորդչային շուկան 2023 թ. հասել է 34.3 միլիարդ ԱՄՆ դոլարի և նախատեսվում է, որ 2032 թ. կհասնի 100.2 միլիարդ ԱՄՆ դոլարի՝ ապահովելով 20.1% համակցված տարեկան աճ (CAGR) 2023–2032 թթ. կանխատեսման ընթացքում [541]: Nasscom-ը՝ Հնդկաստանի SS արդյունաբերական հիմնական մարմիններից մեկը, գնահատել է, որ երկրում մոտ 600,000 SS մասնագետների պակաս կա[542]: Այս պակասը կարող է ստիպել հնդկական ընկերություններին՝ վերանայելու աշխատողներ ընդունելու իրենց ռազմավարությունը՝ համաշխարհային շուկայից տաղանդների ներգրավելու կամ բարեկամ երկրներում, որտեղ առկա է նման աշխատուժ, մասնաճյուղեր բացելու հնարավորություններն օգտագործելու համար: Հաշվի առնելով, որ Հայաստանում կիսահաղորդիչների արտադրության հաջողված փորձ կա, հետագայում այս ոլորտում ևս հնարավոր է համագործակցություն, երբ խոշոր հնդկական ընկերությունները, բացի ներքին շուկայից, նաև երկրից դուրս ընդլայնվելու անհրաժեշտություն ունենան:

Դեռևս 2023 թ. The Economic Times-ը հոդված էր հրապարակել՝ «Հայաստանի «Սիլիկոնային հովիտը» փնտրում է հնդկական համագործակցություն» վերնագրով[543], որտեղ անդրադառնում էր Հայաստանի SS արդյունաբերության զգալի աճին, զարգացմանը, տեղական ստարտափներին, ներառյալ արհեստական բանականությամբ զբաղվող ընկերությունները, և նշում, որ հայկական ընկերություններն ակտիվորեն փնտրում են համագործակցություն հնդկական գործընկերների հետ և ձգտում ընդլայնվել Հարավային Ասիայի ամենամեծ շուկայում: Հատուկ անդրադարձ կար Synopsis և Krisp ընկերություններին: Ընկերություններից առաջինի ղեկավար Երվանդ Ֆարսը պարբերականին տրված հարցազրույցում նշել էր, որ Synopsis-ն արդեն մեծ ներկայություն ունի Հնդկաստանում, իսկ Krisp-ի ղեկավար և համահիմնադիր

[541] PM Narendra Modi Virtually Inaugurates the 3 New Semiconductor Units on March 13, India Briefing, https://www.india-briefing.com/news/indias-semiconductor-sector-welcomes-three-new-manufacturing-units-31434.html/#:~:text=With%20the%20launch%20of%20these,million%20(US%2483.28%20million).

[542] The 600,000 IT job shortage in India and how to solve it, The Times of India, https://timesofindia.indiatimes.com/blogs/blue-sky-thinking/the-600000-it-job-shortage-in-india-and-how-to-solve-it/

[543] Armenia's Silicon Valley seeks Indian partnership, The Economic Times, https://economictimes.indiatimes.com/news/india/armenias-silicon-valley-seeks-indian-partnership/articleshow/104742975.cms?from=mdr

Դավիթ Բաղդասարյանն ասել էր, որ ցանկանում են ընդլայնել իրենց ներկայությունը Հնդկաստանում և բանակցություններ են վարում այլ գործընկերների հետ, ներառյալ տիեզերական տեխնոլոգիաների ոլորտում: Այսպիսով՝ ի դեմս մի շարք ընկերությունների, Հայաստանի SS ոլորտն ամուր կապեր է ստեղծում Հնդկաստանի Բանգալորի «Սիլիկոնային հովտի», ինչպես նաև Հայդերաբադի և Դելիի NCR տարածաշրջանի հետ:


Ամփոփելով կարող ենք նշել, որ հայ-հնդկական հարաբերությունները SS ոլորտում դեռևս իրենց ողջ ներուժով չեն գործում, թեև վերջին տարիներին որոշակի աշխուժություն է նկատվում: Եթե նախկինում համագործակցությունը հիմնականում ոլորտի կրթական, հետազոտությունների ձևավորման շուրջ էր, ապա այժմ այստեղ փոխադարձ ներկայության ընդլայնման իրական հնարավորություններ են ստեղծվել: Երկկողմ համագործակցության զարգացման խորշեր են ստեղծվել արհեստական բանականության, կիսահաղորդիչների, ինչպես նաև տիեզերական տեխնոլոգիաների ոլորտներում:

4.7 Հնդկաստանից միգրացիոն հոսքը դեպի ՀՀ

Միգրացիան յուրահատուկ դրսևորում է, որ միավորում է պետություններն ու ազգերը՝ ստեղծելով սոցիալական, տնտեսական, հոգեբանական, մշակութային և քաղաքական կապեր երկրների միջև: 21-րդ դարը կարելի է համարել միգրացիայի դար, քանի որ մինչ այդ երբևէ այս երևույթը քաղաքական, տնտեսական և հասարակական նման հնչեղություն չէր ստացել: Այս համատեքստում, մեծ նշանակություն ունի մարդկանց տեղաշարժի ուսումնասիրությունը, ինչը ստիպում է բացահայտել այն խորքային պատճառները, որոնք հանգեցրել են միջազգային միգրացիայի այսպիսի մասշտաբների: Հաշվի առնելով անընդհատ ընդլայնվող հոսքերը՝ միջազգային միգրացիան շարունակում է մնալ երկրների տնտեսության զարգացման ապահովման հնարավորություն և սպառնալիք: Այս մոտեցումն իրատեսական է և՛ ավելցուկային աշխատանքային ռեսուրս ունեցող երկրներում, և՛ այն երկրներում, որտեղ աշխատուժը չի կարողանում քանակապես ու որակապես բավարարել աշխատուժի պահանջները: Միգրացիան հսկայական ազդեցություն ունի երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական, էթնիկ, կրոնական, մշակութային պատկերի վրա: Առանց միգրացիոն հոսքերի հստակ հաշվառման՝ հնարավոր չի լինի կանխատեսել մի շարք սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, իսկ միգրանտների դրամական փոխանցումները բազմաթիվ երկրներում (այդ թվում՝ Հայաստանում) համախառն ներքին արդյունքի և բնակչության իրական եկամուտների զգալի մասն են:

Հատկապես վերջին մի քանի տարիներին, պայմանավորված աշխարհաքաղաքական իրադարձություններով (COVID-19 համավարակ, ռուս-ուկրաինական ընթացիկ հակամարտություն, 2020 թվականի 44-օրյա պատերազմ,

2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի ներխուժում Արցախ, որի հետևանքով ավելի քան 100 հազար բռնի տեղահանված արցախահայերի մուտք Հայաստան և այլն), Հայաստանի միգրացիոն համայնապատկերը բավական շատ է փոփոխվել: Այս ամենին զուգահեռ, վերջին տարիներին տեսանելի է նաև հնդիկ միգրանտների տեսակարար կշռի ավելացումը Հայաստանում:



Գծապատկեր 4.11

ՀՀ ընդհանուր սահմանահատումները և Հնդկաստանի քաղաքացիների սահմանահատումները, 2015–2023 թթ.[544]

Համաձայն ՀՀ ՎԿ տվյալների՝ սահմանային գրանցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2015–2023 թվականների ընթացքում Հնդկաստանի անձնագրով ՀՀ է մուտք գործել, միջին հաշվով, 17,446 մարդ, իսկ տարեկան աճի միջին տեմպը կազմել է 104.6%: Այս տվյալները վկայում են, որ Հնդկաստանի քաղաքացիների ներհոսքը դեպի ՀՀ զգալիորեն աճել է տվյալ ժամանակահատվածում, ինչը պայմանավորված է Հայաստանի աշխատանքի շուկայում առկա առաջարկի և պահանջարկի խրոնիկ անհավասարակշռությամբ, որը համալրվում է հնդիկ միգրանտների միջոցով:

Ընդ որում, 2023 թվականին, 2015 թվականի համեմատությամբ, Հայաստանի անձնագրով ՀՀ մուտք գործած անձանց թիվն ավելացել է մոտ 5 անգամ՝ կազմելով 18,811 սահմանահատում: Սա ցույց է տալիս, որ Հայաստանի

---

544 ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, «Սահմանահատումների քանակը 2023 թվականին» վիճակագրական հաշվետվություն, https://migration.am/content/pdf/%D5%BD%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4_2023%D5%AF%D5%AB%D5%BD%D5%A1%D5%B4%D5%B5%D5%A1%D5%AF-I-I.pdf
ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2023, https://armstat.am/file/article/demog_2023_7.pdf, էջ 157, -
Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-նոյեմբերին, https://armstat.am/file/article/sv_11_23a_510.pdf, էջ 151, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2018, https://armstat.am/file/article/demog_2018_7.pdf, էջ 145:

նկատմամբ Հնդկաստանի քաղաքացիների հետաքրքրությունը զգալիորեն աճել է վերջին տարիներին:

Հնդկաստանի քաղաքացիների հետ ՀՀ ելքային սահմանահատումների մասով պատկերը 2015–2023 թթ. հետևյալն է. 2015–2023 թթ. Հնդկաստանի անձնագրերով ՀՀ սահմանը հատել է միջինում 16,466 մարդ, իսկ տարեկան աճի միջին տեմպը կազմել է 61.6%: Այս ցուցանիշները վկայում են, որ Հնդկաստանի քաղաքացիների մեծ մասը այցելությունից հետո դուրս է գալիս երկրից, սակայն ելքերի աճի տեմպը ավելի փոքր է, քան մուտքերինը: 2015 թվականի համեմատությամբ ցուցանիշը 2022 թվականին ավելացել է 3.6 անգամ՝ կազմելով 14,156 սահմանահատում: Սա կարող է մատնանշել, որ որոշ Հնդկաստանի քաղաքացիներ մնում են Հայաստանում ավելի երկար ժամանակահատվածով կամ բնակության համար:

Համեմատելով մուտքերի և ելքերի տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ Հնդկաստանի քաղաքացիների որոշ մասը մնում է Հայաստանում, ինչը կարող է ազդեցություն ունենալ երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Նմանատիպ միտումները կարող են նպաստել մշակութային բազմազանության զարգացմանը, ինչպես նաև պահանջել համապատասխան քաղաքականության մշակում օտարերկրյա քաղաքացիների ինտեգրման և նրանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

